

ISSN 2579-2733

УНИВЕРСИТЕТ
ГРИГОР НАРЕКАЦИ



UNIVERSITI
GRIGOR NAREKATSI

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴՊՐԱՏՈՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՆԴԵՍ

1 (11)-2021

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴՊՐԱՏՈՒՆ

Հասարակական գիտությունների

հանդես

2021-1 (11)

-

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

*Գլխավոր խմբագիր՝ ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ
Պատասխանատու քարտուղար՝ ԱՄԱԼՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ*

*Главный редактор: ВАРДАН АКОПЯН
Ответственный секретарь: АМАЛИЯ ГРИГОРЯН*

*Chief Editor: VARDAN HAKOBYAN
Executive Secretary: AMALYA GRIGORYAN*

© Հանդեսում գետեղված հեղինակներ, 2021
© Ստեփանակերտի «Գր. Նարեկացի» համալսարան, 2021
© «Դիզակ պլյուս» հրատարակչություն, 2021

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱՎԱԳՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԱՐՄԵՆ – բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող

ԱՎԱՆԵՍՅԱՆ ՎԱԼԵՐԻ – պատմական գիտությունների դոկտոր, ԱրՊՀ պրոռեկտոր

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ԼԻԼԻԹ – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի ռեկտոր

ԲԱԲԱՅԱՆ ԴԱՎԻԹ – պատմական գիտությունների դոկտոր, ԱԳ նախարար

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի Արևմտահայերենի, հայագիտության գիտահետազոտական Լուտովիկա և Յակոբ Այնթապլեան կենտրոնի տնօրեն, Որակի ապահովման պատասխանատու

ԴԵՎՐԻԿՅԱՆ ՎԱՐԴԱՆ – բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱԶԱՏ – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայ-ռուսական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ

ԹՈՎՍԱՍՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի օտար լեզվի դասախոս

ՀԱԿՈԲՅԱՆ ՍԵՎԱԿ – իրավաբանական գիտությունների թեկնածու, Արցախի Հանրապետության նախագահի ներկայացուցիչ՝ հատուկ հանձնարարությունների գծով

ՀՈՎՍԵՓՅԱՆ ԳԱՅԱՆԵ – մանկավարժական գիտությունների թեկնածու, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի օտար լեզուների ամբիոնի վարիչ

ՄԱՆԱՍՅԱՆ ԱԼԵԽՍԱՆԴՐ – փիլիսոփայական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ԵՊՀ տեսական փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի պրոֆեսոր

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԻՐԱՆՈՒՇ – բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական քարտուղար

ՄԿՐՏՁՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս

ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ՀՈՎԻԿ – բանասիրական գիտությունների դոկտոր, ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնի դասախոս

ՄՈՒՐԱՂՅԱՆ ՍԱՄՎԵԼ – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ ակադեմիկոս Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի վարիչ

ՆԻՎՈՂՈՍՅԱՆ ԱՐՔՄԵՆԻԿ – բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող

МУСАЕЛЯН ОВИК – доктор филологических наук, преподаватель кафедры литературы и журналистики АрГУ

НИКОГОСЯН АРКМЕНИК – кандидат филологических наук, старший научный сотрудник
литературного института имени М. Абегяна НАН РА

ОСИПЯН ГАЯНЕ – кандидат педагогических наук, заведующая кафедрой иностранных языков
Степанакертского университета "Григор Нарекаци"

ТОВМАСЯН ЛУСИНЕ – кандидат филологических наук, доцент, преподаватель кафедры языков
Степанакертского университета «Григор Нарекаци».

EDITORIAL COUNCIL

ARTSRUN AVAGYAN - Doctor of Philology, Professor, Dean of the Faculty of Philology of YSU.

ARMEN AVANESYAN - Candidate of Philological Sciences, Senior Researcher at the Institute of Literature after M. Abeghian of NAS of RA.

VALERI AVANESYAN - Doctor of Historical Sciences, ASU Vice-rector.

LILIT ARZUMANYAN - Doctor of Philology, Professor, Rector of Yerevan State Institute of Theatre and Cinematography.

DAVIT BABAYAN - Doctor of Historical Sciences, Minister of Foreign Affairs

AMALYA GRIGORYAN - Candidate of Philological Sciences, Docent, Director of Lutovica and Agob Aintablean Western-Armenian and Armenology Research Centre at Stepanakert «Grigor Narekatsy» University, in charge of Quality Assurance.

VARDAN DEVRIKYAN - Doctor of Philosophy, Rector at the Institute of Literature after M. Abeghian of NAS RA.

AZAT EGHIAZARYAN - Doctor of Philology, Professor, Head of the Armenian Language and Literature Chair at Armenian-Russian University.

LUSINE TOVMASYAN - Candidate of Philological Sciences, Associate, Lecturer of Foreign Language at Stepanakert «Grigor Narekatsy» University.

SEVAK HAKOBYAN - Candidate of Law Sciences, of the President of the Republic of Artsakh on special assignments.

GAYANE HOVSEPYAN - Candidate of Pedagogical Sciences, Head of the Foreign Languages Chair at Stepanakert "Grigor Narekatsy" University.

ALEXANDR MANASYAN - Doctor of Philosophy, Corresponding Member of NAS RA, Professor of the Chair of Theoretical Philosophy and Logic of YSU.

SIRANOUSH MARGARYAN - Candidate of Philological Sciences, Scientific Secretary at the Institute of Literature after M. Abeghian of NAS RA.

EDUARD MKRTCHYAN - Doctor of Philology, Professor, Lecturer of Armenian Language and Literature Chair at Stepanakert "Grigor Narekatsy" University

HOVIK MUSAELYAN - Doctor of Philosophy, Lecturer of the the Literature and Journalism Chair at ASU.

SAMVEL MURADYAN – Doctor of Philology, Professor, YSU, Head of the History of Armenian Literature Chair named after Academician Hr. Tamrazyan.

ARQMENIK NIKOGHOSYAN - Candidate of Philological Sciences, Senior Researcher at the Literature Institute after M. Abeghian of NAS of RA.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գրականագիտություն

Ամայա Գրիգորյան

Ժամանակի նկարագիրն ու պատկերը Վ. Հակոբյանի «Օրորոցագողի վերջին այցը» հուշագրական արձակ պոեմում 12

Զինաիդա Բալայան

Դիզակի Մելիք Ավանի կերպարը
Լեոյի «Մելիքի աղջիկը» պատմավեպում 20

Սոկրատ Խանյան

Էդվարդ Միլիտոնյանի արձակը..... 31

Ելենա Գրիգորյան

Աննա Բալայան

Հայաստանը Սերգեյ Գորոդեցկու և Վասիլի Գրոսմանի աչքերով 50

Լեզվաբանություն

Մհեր Քումունց

Հնդեվրոպական շերտի բառերը Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարում 56

Լիանա Սանթրյան

Դ. Վարուժանի և Հ. Թումանյանի լեզվագիտական
հայացքների զուգադրական քննություն 62

Մանկավարժություն

Էլլադա Բադրասարյան

Ստորումներ կրթության արդի հիմնախնդիրների շուրջ 69

Հարություն Գրիգորյան

Հեռավար կրթության առանձնահատկությունները
համավարակի պայմաններում 77

Պատմություն

Վահրամ Բալայան

Դիզակի բերդապահ գյուղերը (Խծաբերդ, Սպիտակաշեն, Արփագետիկ, Հին Թաղեր, Խանձաձոր)..... 84

Մայիկ Թելունց

Մոսկվայի և Կարսի պայմանագրերի կնքման պատմաիրավական
հանգամանքներն արդիական որոշ իրողությունների լույսի ներքո:
Պատմաիրավական համառոտ վերլուծություն 97

Բրավագիտություն

Վլադիմիր Հովսեփյան

Ուլքե ը են արցախցիները՝ ժողովու ըդ, թե ը քնակչություն 104

Սոնա Համբարձումյան

ԼՂՀ անկախության իրավական հիմքերը 111

Հասմիկ Ստեփանյան

Հարություն Գրիգորյան

Կրթության իրավունքի երաշխավորման արդիական սկզբունքները 117

Թատերագիտություն

Անի Համբարձումյան

Բոսալական ազգային թատրոնի ավանդույթի արտահայտումը
Լուիջի Պիրանդելլոյի «Վեց պերսոնաժ հեղինակ որոնելիս» պիեսում 126

СОДЕРЖАНИЕ
Литературоведение

АМАЛИЯ ГРИГОРЯН

Описание времени и образа в автобиографическом воспоминании В. Акопяна
"Последний визит похитителя колыбели" 12

ЗИНАИДА БАЛАЯН

Образ дизацкого Мелика Авана в
историческом романе Лео "Дочь Мелика" 20

СОКРАТ ХАНИЯН

Проза Э. Милитоняна 31

ЕЛЕНА ГРИГОРЯН

АННА БАЛАЯН

Армения глазами Сергея Городецкого
и Василия Гроссмана 50

Языкознание

МԴԵՐ ԿՄԱՄԱՆՇ

Индоевропейские слова в лексике Сюникско-Арцахского диалекта 56

ЛИАНА САНТРИАН

Сравнительный анализ лингвистических взглядов
Д. Варужана и О. Туманяна 62

Педагогика

ЭЛЛАДА БАГДАСАРЯН

Размышления об основных проблемах современного образования 69

АРУТЮН ГРИГОРЯН

Особенности дистанционного обучения в условиях пандемии 77

История

ВАГРАМ БАЛАЯН

Очерки истории форпостных сел Дизака (Хцаберд, Спитакашен, Арпагетик,
Хин Тахер, Хандцадзор) 84

МАЛИК ТЕЛУНЦ

Историкоправовые обстоятельства заключения Московского и Карсского
договоров 1921 года в свете некоторых современных событий 97

Юриспруденция

ВЛАДИМИР ОСИПЯН

Кто арцахцы: народ или жители? 104

СОНА АМБАРЦУМЯН

Основы правовой независимости НКР 111

АСМИК СТЕПАНИЯН

АРУТЮН ГРИГОРЯН

Актуальные принципы обеспечения права на образование 117

Театроведение

АНИ АМБАРЦУМЯН

Отражение традиции итальянского национального театра
в драме Л. Пиранделло «Шесть персонажей в поисках автора» 126

CONTENT

Literary Criticism

AMALYA GRIGORYAN

*The description and image of time in V. Hakobyan's Memoir prose poem
"The Cradle Thief's Last Visit" 12*

ZINAIDA BALAYAN

The character of Melik Avan of Dizak in the Leo's historical novel "Melik's daughter" 20

SOKRAT KHANYAN

The Prose of Edward Militonyan 31

YELENA GRIGORYAN

ANNA BALAYAN

Armenia Through the Eyes of Vasily Grossman and Sergey Gorodetsky 50

Linguistics

MHER KUMUNTS

Words of Indo-European Layer in Syunik-Artsakh Dialectal Vocabulary 56

LIANA SANTRYAN - Comparative Examination of Linguistic Views D. Varuzhan

and H. Tumanyan 62

Pedagogy

ELLADA BAGHDASARYAN

Thoughts on Modern Problems of the Education 64

HARUTYUN GRIGORYAN

Features of Distance Education in Condition of Pandemic 77

History

VAHRAM BALAYAN

*Essays on the History of Outpost Villages of Dizak (Khsaberd, Spitakashen, Arphagetik,
Hin Tagher, Khandzadzor) 84*

MALIK TELUNTS

*Historical and Legal Circumstances of Signing the Moscow and Kars Agreements under
THE Light of Some Nowadays Facts-Historical and Legal Brief Analysis 97*

Jurisprudence

VLADIMIR HOVSEPYAN

Who are Artsakhians? People or Population? 104

SONA HAMBARDZUMYAN

The Legal bases of NKR Independence 111

HASMIK STEPANYAN

HARUTYUN GRIGORYAN

Current principles of Guaranteeing the Right to Education 117

Theatrical science

ANI HAMBARDZUMYAN

*The Reflection of the Tradition of the Italian National Theater in L. Pirandello's
"Six Characters in Search of an Author" Drama 126*

**ԺԱՄԱՆԱԿԻ ՆԿԱՐԱԳԻՐՆ ՈՒ ՊԱՏԿԵՐԸ
Վ. ՀԱԿՈԲՅԱՆԻ «ՕՐՈՐՈՑԱԳՈՂԻ ՎԵՐՋԻՆ ԱՅՑԸ»
ՀՈՒՇԱԳՐԱԿԱՆ ԱՐՁԱԿ ՊՈԵՄՈՒՄ**

Հողվածում քննության է առնված Վարդան Հակոբյանի «Օրորոցագողի վերջին այցը» արձակ պոեմը, որում խտացված ենք տեսնում հեղինակի մանկության, պատանեկության տարիների հուշիկները: Պոեմում նա հյուսել է երկիր-ծննդավայրի առասպելը՝ կենդանության նոր շունչ հաղորդելով երբեմնի աշխույժ ու ծաղկուն բնակավայրին: Հետաքրքիր դրվագներով գրողը պատկերում է մի իրականություն, որտեղ անցել են իր կյանքի ամենամիջակա պահերը: Իրականն ու երեւակայականը միաձուլված է գեղարվեստական համոզիչ հնարանքների միջոցով, որը չի խանգարում իրական դեպքերի հավաստիությանը:

Գործը արժեւորվում է նաև նրանով, որ նրանում ներկայացվում է մի ամբողջ դարաշրջան, գրողը լույս է սփռում պատմական ժամանակների, տիրող բարքերի, սոցիալ-քաղաքական իրավիճակների, մարդկանց մտածելակերպի, նիստուկացի վրա: Մի քանի բառով հեղինակը քանդակում է գյուղաշխարհի մարդկանց ամբողջական կերպարներ: Պատումի գործողությունները՝ ժամանակատարածքային ընկալումների ու ընդգրկումների առումով, կատարվում են անցյալի ու ներկայի զուգորդմամբ:

Ստեղծագործության մեջ մեծապես ընդգծվում է արցախցու բարոյահոգեբանական նկարագիրը, որը եւ, բնականաբար, առնչվում է ազգային ու համամարդկային հոգևոր արժեքներին: Այս պատումի մեջ Հակոբյանը նոր դիտանկյունից է մոտենում Հարարի պատմությանը, խորը կսկիծով ու ցավով խոսում արցախյան ազատագրական պատերազմում մեր ժողովրդի կրած կորուստների մասին, միաժամանակ, իհարկե, առաջին պլան է մղում այն հաղթանակները, որոնց շնորհիվ երկիրը կանգուն է ու անպարտելի:

Բանալի բառեր՝ արձակ պոեմ, ինքնակեսագրական- հուշագրական պատում, քնարական հերոս, էքզիստենցիալ տրամադրություն, հայրենի եզերք, բնության գեղագիտություն, ներհայեցողություն, աշխարհատեսություն, Հարար, դրամատիկ շեշտադրումներ, ժամանակի կենսագրություն:

Ամենին պատահական չէ, որ Վարդան Հակոբյանն ընթերցողի սեղանին դրել է մի երկ, որի ստեղծման շարժառիթը մերօրյա մարդու՝ առավել քան երբևէ, վտանգված ներկան է ու աղոտ վաղը: Աշխարհը պատուհասած համաճարակն, ասես, կազմաքանդման է տանում ժամանակակից քաղաքակրթության մոդելը, նորովի գնահատել տալիս կյանքը, ունեցածն ու անցած ուղին: Եվ ակամայից հիշում ես Բելինսկու խոսքը. «Մենք դիմում և հարցաքննում ենք անցյալը, որպեսզի նա բացատրի մեր ներկան և ակնարկի մեր ապագայի մասին»¹: Հիրավի, ստեղծված

¹ hy.wikipedia.org

ծայրահեղ սահմանային իրավիճակը, հոգեբանական առումով մղում է երեւոյթների վերաբերման, կենսափորձից բխած փիլիսոփայական հետաքրքիր ընդհանրացումների, և գրողի հենման կետը դառնում է մանկության վերհուշը: Առհասարակ, ժամանակակից մարդն օտարվել է ինքն իրենից, ոչինչ առաջվանը չէ, Հակոբյանը նկատում է. «Մեկը կորել է բոլորի մեջ: Բոլորը քեզ հասկանում են, բայց ոչ ոք, ոչ մեկը ոչինչ չի հասկանում»²: Գրողը, ներկայում սփոփանք ու ներշնչանք չգտնելով, խորշելով մոայլ ու տագնապոտ իրականությունից, ինչպես նաև էքզիստենցիալ տրամադրությունները թողափելու միտումով, իրեն նետում է հիշողության երանելի գիրկը, որն ապրեցնող զգացողություններ է պարգևում, որտեղ նա իրեն ամբողջական է գգում, հասկացված ու ներդաշնակ թե ինքն իր, թե աշխարհի հետ:

Ստեղծագործական մտասկզբունքներում Վ. Հակոբյանը հաճախ է վերադառնում սեփական ակունքներին, և դա ոչ միայն սոսկ կարոտի ու հայրենաբաղձության դրսևորում է, այլև ինքն իրեն վերագտնելու արտահայտություն, ճանապարհը ճիշտ ըմբռնելու ձգտում: Հայրենի եզերքը գրողի համար տիեզերքի առանցքն է, ներշնչման աղբյուրը, այն իր հիմնարար տեղն ունի հակոբյանական գեղագիտության մեջ: Եվ, անընդհատ քննելով բնաշխարհը, գրողը նորովի է բացահայտում նրա առեղծվածայնությունը, ոգեղենությունն ու գույլալությունը: Մի եզերք, որ մեզ ներկայանում է արարչաստեղծ նախնականությամբ, Հակոբյանի միտումը, թերևս, այդ ամենին մոտ լինելու տեսչանքն է, թեկուզև՝ հոգեպես:

Բավական ուշագրավ երկ է Վարդան Հակոբյանի «Օրորոցագողի վերջին այցը»: Այն իր բնույթով ինքնակենսագրական-հուշագրական է և, ըստ էության, ժամանակի առանձնահատկությունները բացահայտող ստեղծագործություն: Հեղինակը անմիջական մասնակիցն է իրադարձությունների: Քնարա-էպիկական այս տիրույթում խտացված ենք տեսնում մանկության, պատանեկության տարիների հուշիկները: Ավելին, նա հյուսում է երկիր-ծննդավայրի առասպելը՝ կենդանության նոր շունչ հաղորդելով երբեմնի աշխույժ ու ծաղկուն բնակավայրին: Հետաքրքիր դրվագներով գրողը պատկերում է մի իրականություն, որտեղ անցել են իր կյանքի ամենանվիրական պահերը, որտեղ նա առաջին անգամ «հանդիպել» է հայոց մեծերին՝ Թումանյանին, Տերյանին, Շիրազին, Սահյանին, Մաթևոսյանին, Բեգլարյանին: Առանց հուզմունքի հնարավոր չէ կարդալ Թումանյանի հետ հանդիպմանը նվիրված տողերը՝ Մըհրսուրոսեն թումբում: Հեղինակը իրականն ու երեւակայականը միաձուլում է գեղարվեստական համոզիչ հնարանքների միջոցով, որը չի խանգարում իրական դեպքերի հավաստիությանը: Հայտնի ճշմարտություն է, որ գեղագետի կազմավորման, աշխարհընկալման, հոգեկերտվածքի ու արժեհամակարգի ձևավորման վրա անվիճելիորեն մեծ ներգործություն է ունենում այն միջավայրը, որտեղ նա ծնվել ու մեծացել է, կարևոր դերակատարություն են ստանձնում կենսագրական ու իրադարձային այն գործոնները, որոնք նրա կայացման գործում ունեցել են էական ու վճռորոշ նշանակություն:

² Հակոբյան Վ., *Օրորոցագողի վերջին այցը*, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., Ստեփանակերտ, 2020թ., էջ 4:

Գեղարվեստա-հուշագրական այս գործն, ըստ ամենայնի, հետաքրքրական է ոչ միայն իբրև ինքնատիպ մտահղացում, այլև՝ որպես ժանրային ձևային: Հեղինակն այն կոչել է արձակ պոեմ՝ նկատի ունենալով ստեղծագործության բովանդակային եւ գաղափարական կառույցի առանձնահատկությունները, նրա ներքին քնարականությունը: Եվ ասելիքը, բնականաբար, հեղինակին հուշում է նոր մտածողություն ու ոճ. «Ծաղիկն ավելի շատ ծաղիկ է, թե ծաղիկն ավելի շատ ծաղիկ չէ» (76), կամ, ասենք՝ «Քարն ավելի շատ քար է, թե քարն ավելի շատ քար չէ» (76) ... Հողի, մարդու, ծաղկի, թռչնի, մի խոսքով՝ մարդու եւ բնության ներդաշնակության գաղափարը հեղինակը ներկայացնում է «ներքին աչքի» համադրական դիտարկումներով, եւ այդ հարցադրումները կրկնվում են մի քանի անգամ՝ ապահովելով մտքի ու գաղափարի համանվագայնությունը:

Այս կենսապատումը, կարելի է ասել, մի յուրօրինակ ճամփորդություն է դեպի արմատները, ուր ամեն ինչ անփոփոխ է, կուսական ու ապրեցնող, ինչն էլ ոգեշնչման, նորովի ինքնաճանաչման ու ինքնապեղման է տանում, ինքն իր ինքնամարտին ձեռնոց նետած հեղինակին: Գործը արժեւորվում է նաև նրանով, որ նրանում ներկայացվում է մի ամբողջ դարաշրջան, գրողը լույս է սփռում պատմական ժամանակների, տիրող բարքերի, սոցիալ-քաղաքական իրավիճակների, մարդկանց մտածելակերպի, նիստուկացի վրա: Մի քանի բառով հեղինակը քանդակում է գյուղաշխարհի մարդկանց ամբողջական կերպարներ: Պատումի գործողությունները՝ ժամանակատարածքային ընկալումների ու ընդգրկումների առումով, կատարվում են անցյալի ու ներկայի զուգորդմամբ:

Գրականագետ Սերգեյ Սարինյանը, քննելով Հակոբյանի գեղագիտական համակարգը, գրել է. «Իր հայտնությամբ Վարդան Հակոբյանն ընդլայնեց մեր քնարերգության աշխարհայացքը թե՛ իբրև ձևային, և թե՛ որպես հոգեզգացական խոհագրություն հայրենի եզերքի երագունակ հայեցողականությամբ տոգորված տարաշխարհիկության կարոտաբաղձությունը համահունչ դարձնելով գոյի և անգոյի համամարդկայինի հղումներին»³:

Արձակ պոեմում հեղինակը վերակերտում է հայրենի բնօրրանը հոգու նրբերանգներով: Ընթերցողին լսելի է դառնում անգամ նկարագրվող քարի շնչառությունը: Եվ պատահական չէ, որ երկի հերոսները՝ Շահինն ու Ավիկն, իրենց մանկական օրորոցների աչքահուլունքները տանում, կախում են թռչնաբնի գլխավերելում: Հայրենի եզերքը Վարդան Հակոբյանի արյան հիշողության մեջ է՝ որպես մշտական ներկայություն, որին անվերապահորեն ապավինում է գրողը՝ փորձելով փրկել այն կորստյան ու մոռացումի սպառնալիքից:

Նկատենք՝ գյուղաշխարհի մարդկանց ճակատագրի ու գործունեության համապատկերի վրա ստեղծագործության մեջ մեծապես ընդգծվում է արցախցու բարոյափոխության նկարագիրը, որը եւ, բնականաբար, առնչվում է ազգային ու համամարդկային հոգևոր արժեքներին: Այս պատումի մեջ Հակոբյանը նոր դիտանկյունից է մոտենում Հարարի պատմությանը, խորը կսկիծով ու ցավով խոսում

³ www.artsakhtert.com

արցախյան ազատագրական պատերազմում մեր ժողովրդի կրած կորուստների մասին, միաժամանակ, իհարկե, առաջին պլան է մղում այն հաղթանակները, որոնց շնորհիվ երկիրը կանգուն է ու անպարտելի:

Կերպավորելով հայրենի եզերքը՝ հեղինակը ստեղծում է բնության իր գեղագիտությունը: Նրա բնապաշտությունը վեր է սովորական պանթեիզմից: Պատահական չէ, որ երկի բոլոր հերոսները միաձուլված են հանդ ու սարին: Անքակտելի հարազատություն կա նրանց եւ ամեն մի քարի, թփի, խոտի, լեռան միջեւ: Ընդհանրապես, դա աշխարհի հետ հարաբերվելու հակոբյանական բնորոշ կերպ է. «Եթե ես գնում եմ քարի մոտ, ես չեմ գնում քարի մոտ, քարն է գալիս ինձ մոտ: Սա միայն իմ ու քարի հարաբերությունը չէ, այլ իմ ու աշխարհի»⁴: Մտերմիկ գրույց-խոհ մարդու և քարի, որը հավերժական հիշողության մեջ պահում-պահպանում է իր ծնած ու սնած զավակների կյանքի պատմությունները, ամենաանվերադարձ ակնթարթները:

Ուշագրավ է բնաշխարհի տեղանունների վավերագրումը՝ Արփագետուկա սարը, Մասրա քարը, Ապրեսին քարը, Ափուն քարը, Իվանատափը, Ջաղացի ձորը, Մեծ ձորը, Դերին աղբյուրը, Միքսրոտեն թումբը, Մանեն խութը, Հուռումսիմին խութը... Դրանք լուռ վկաներ են, որոնց հայացքներում ամեն ինչ պահպանվում է անխաթար և նրանց հետ են կապված հեղինակի ամենաթանկ հուշերը: Ահա թե ինչու, հեղինակը գրում է, որ, ինչպես ամեն մարդ, այնպես էլ ամեն քար այստեղ իր անունն ունի: Նա դիմում է երևույթներն ու տեղանքները անձնավորելու գեղարվեստական հնարանքին՝ նրանց հետ երկխոսության մտնելու միջոցով: Հատկապես Մասրա քարը դառնում է հեղինակի ուղեկիցը, խոհակիցն ու ապրումակիցը: Ահավասիկ. «Հիմա, երբ մայրս չկա, Մասրա քարն իր ջերմությամբ ինձ անվերջ քաշում է իր մոտ՝ ուր էլ լինեմ: Ավելի անկեղծ լինելու համար, որքան էլ ծիծաղելի թվա, չեմ կարող չասել, որ ծննդավայրից հեռու, տարբեր քաղաքներում ու իրավիճակներում, երբ հոգնում եմ ամեն ինչից, մտքիս մեջ գլուխս դնում եմ Մասրա քարին, ու սկսվում է հեքիաթը»⁵:

Քարի խորհրդանշական պատկերի մեջ հեղինակը տեսնում է հավերժության մնայուն ու անփոփոխ արժեքների շարունակականությունը: Պատումի մեջ տեղի ունեցող դեպքերն ու հանդես եկող դեմքերը իրական են: Դրանք մեզ հայտնի ու անհայտ մարդիկ են, որոնք այս կամ այն չափով իրենց մասնակցությունն են ունեցել ժամանակի կենսագրության կերտմանը: Գրողն անկեղծ, անկաշկանդ ու անբռնազրուս ոճով է վերարտադրում եղելություններն ու զգացողությունները, ստեղծում է կզոտիկ պատկերներ ու դրվագներ, որոնք այնքան համոզիչ ու բնական են, որ առաջին իսկ պահից իրենց անմիջականությամբ վարակում են ընթերցողի հոգին:

«Օրորոցագողի վերջին այցը» գործը գեղարվեստականի ու վավերագրականի մի բացառիկ համադրություն է: Սակայն, չնայած խիստ անձնական շեշտադրումներին՝ գրողը հանգում է նշանակալի ընդհանրացումների ու համամարդկայինը վերծանելու մղումների. «Բնչո՞ւ է մարդը սպանվում ամենուր, նույնիսկ այնտեղ, որտեղ չի

⁴ Հակոբյան Վ., Օրորոցագողի վերջին այցը, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., Ստեփանակերտ, էջ 7:

⁵ Նույն տեղում, էջ 47:

սպանվում»⁶:

Դրվագային պատումներով իրար են հաջորդում հեղինակի մանկությունը, դպրոցական տարիները, ապա՝ պատանեկությունը, առաջին սիրո թրթիռը, առաջին բանաստեղծական մտորումները, ծննդավայրից հեռանալը:

Պատումը բաղկացած է երկու տրամաբանորեն իրար հետ շաղկապված մասերից և վերջաբանից՝ «Վերջակետ դնելուց առաջ»: Առաջինում՝ «Թրթունջուկի բուրմունքը», կյանքի վաղ շրջանն է պատկերված, իսկ երկրորդում՝ «Ես՝ ինձանից դուրս, կամ ոչնչի արքան» ներկայացված է պատանեկան տարիների իրականությունը՝ Հին Թադեր-Բաքու, նորից Հին Թադեր ու կրկին՝ Բաքու խաչուղիների վրա. դպրոց, ուսանողական տարիներ, նամակագրություն ու ծանոթություն Շիրազի հետ, այնուհետև աշխատանքի անցնելը՝ Ստեփանակերտի «Մովեստական Դարաբաղ» թերթի խմբագրությունում:

Երկի քնարական հերոսը՝ Ավիկը, աչքի է ընկնում իր անսահման պարզությամբ ու բարությամբ, սրամտությամբ, չարաճճիությամբ, նրբանկատությամբ ու խիզախությամբ, հանգամանք, որն ավելի դինամիկ է դարձնում իրադարձությունների ծավալումն ու գեղարվեստական նյութին հաղորդում հետաքրքրություն: Այս գրվածքում եւս հեղինակը «գործողության մեջ» է պահում իր մտածողությանը հատուկ մեղմ հումորը, որը եւ նպաստում է մտքի ու զգացումի տրամաբանական խորության դյուրընկալմանը: Այսպես՝ Ավիկը հարցնում է Սաթենիկ այսպին, թե՝ ե՞ս էլ եմ մեռնելու, եւ պատասխանը լսելուց հետո այնպիսի մի լաց է սկսում, որ, «եթե երբեւէ մեռնի եւ հանկարծ ոչ մի սգացող չլինի, դա իրեն լի ու լի կհերքի» (12):

Առանձնապես խորին պատկառանքով է հեղինակը խոսում բազմաշնորհ Խաչի պապի ու Սաթենիկ այսյի մասին, որոնք մարմնավորում են հայի տոհմիկ ազնվականությունը, խիզախությունն ու իմաստնությունը: Նրանց գումարվում են ուսուցիչ հոր խստակյացությունն ու բարոյապաշտությունը, մոր պատմած հեքիաթները, որոնք եւ կերտեցին գրողին ու նրա աշխարհայացքը: Սերը բնության, կենդանիների, առհասարակ՝ աշխարհի հանդեպ հենց այդպես է ձևավորվել: Հիշենք ձիերի, թռչունների, ուլիկի հետ նրա անսովոր մտերմությունը: Դեռ փոքրուց Վ. Հակոբյանը ներհայելու ու աշխարհատեսության յուրահատուկ հակում ուներ: «Ամեն հավք մեր հանդերում,- գրում է հեղինակը,-աչքիս Հազարան բլուր է»⁷: Ավելին՝ բնագանգականին զուգահեռ, նա խորամուխ է եղել բնության երևույթների օրինաչափությունների դիտարկմանն ու ընկալմանը: «Նկատել ենք,- գրում է հեղինակը,- որ ամեն զարնան թռչունները նոր բույն են հյուսում, հներին ոչ միայն ձեռք չեն տալիս, այլ կողքով էլ չեն անցնում...Ոչ մի հավք հին բնից մի շուղ կամ մի ծեղ չի վերցնում, ամբողջ «շինանյութը» հայթայթում է անձամբ՝ կտուցի վրա համտեսելով ծոցտի կամ չոր խոտի բույրը, որակը, տեսակը, քնքշությունը, ջերմացման հնարավորությունը, կայունությունը՝ ժամանակի մեջ, երևի էլի շատ բան, որ մենք չգիտենք: Հավքն ուրիշի

⁶ Նույն տեղում, էջ 169:

⁷ Նույն տեղում, էջ 48:

բնի երբեք չի մոտենում, իսկ եթե մարդու մատ անգամ դիպչի իր բնին, առավել ևս՝ ձվերին, ինքն իր և՛ բնից, և՛ ձվերից խռովում է, դա զգում է հոտից: Մտածում ես՝ երևի շատ կարևոր մի հաղորդակցություն աստղերի հետ մարդիկ կորցրել են, իսկ թռչունները, փառք Աստծո, պահում են»⁸:

«Օրորոցագողի վերջին այցը» գործի մեջ հեղինակը առանձնահատուկ սիրով է խոսում մանկության ընկերների, հատկապես՝ Շահինի մասին:

Առանձին հետաքրքրությամբ է ընթերցվում Վադինի և Ամինի սիրո միաստիկ պատմության դրվագը, որի շուրջ էլ ծավալվում են ողբերգական գործողությունները՝ կապված Հարարում թուրքերի կատարած վայրագությունների հետ:

Երկրորդ գլուխը սկսվում է խոհափիլիսոփայական մտորումներով՝ կյանքի, աշխարհի, բնության, մարդու ճակատագրի վերաբերյալ: Հաճախ հեղինակը խորհրդապաշտական բացատրություններով է մեկնում իրերի ու երևույթների առեղծվածները: «Ես շատ եմ փորձել գտնել իմ ու քարի կենսաբանական կապը, հասել մինչև կանաչ երկինք, մինչև Ցուլի համաստեղությանը և արդեն ինձ համար շատ բան բացատրելի է»⁹, - գրում է հեղինակը: Կերպարների հասունացումը հենց այս հատուկությամբ է տեղի ունենում: Այստեղ նա արդեն Բաքվում սովորող ուսանող է, ակտիվ ստեղծագործող: Դրանից ընդամենը կես տարի առաջ էր Շիրազը կնքել նրան Վարդան գրական անվամբ, այստեղ նա առաջին անգամ հանդիպեց Պարույր Սևակին ու Սերգեյ Սարիյանին: Թեև Բաքվում էր սովորում, բայց մշտապես «ուշքն ու միտքը Երևանում էր»: Հետո պիտի ինքն իր այդ «ընտրության» համար գղջար:

Պետք է ասել, որ ստեղծագործության մեջ նկատելի են դրամատիկ շեշտադրումները: Դա կենսաբանական վերհուշի անդարձ կարոտն է, որ թախծի ու տխրության միաստիկական երանգ է հաղորդում նրա խոհերին:

Նկատենք՝ եզրափակիչ տողերում տեսանելի են հեղինակի հիասթափության ու ինքնադժգոհության դրսևորումները: Այդ երևույթն, առհասարակ, հատուկ է մեծերի, ասենք՝ Նիցշեի, Շոպենհաուերի մտածողությանը, փիլիսոփաներ, ովքեր աշխարհը փորձում են տեսնել ավելի իրատեսությամբ՝ առանց գունագարդումների: Անշուշտ, հեղինակի տեսահորիզոնն ընդգրկում է, եւ հավատում ես, որ վերջիններիս Մըհրըստրոտում լինելը նույնպես հավանական է, որը և նոր իմաստ է հաղորդում գոյության սուբստանցին: Հակոբյանի խոստովանության մեջ աշխարհը եւ Մըհրըստրոտեն թումբը համադրվում են ուրույն գույներով ու մոտեցումներով, եւ հեղինակը Մասրա քարին հաշվետվություն տալու պես է խոսում՝ ապավինելով նրա տիեզերական նախնականությանը. «Ես չափազանց դժգոհ եմ ինձանից ու իմ ապրածից: Կարծես թե ամեն ինչ իմ ուզածի պես է ընթանում ու գեղեցիկ, բայց իմ կյանքն ու նկարագիրն ինձ համար անընդունելի են: Ամեն ինչ լավ է, սակայն լավ ոչինչ չկա...»¹⁰:

Պատումը հարուստ է պատկերավորման և լեզվառճական արտահայտչամիջոցներով: Ամենուր հակոբյանական պարադոքսի փիլիսոփայությունն է տիրա-

⁸ Նույն տեղում, էջ 78:

⁹ Նույն տեղում, էջ 76:

¹⁰ Նույն տեղում, էջ 163:

պետողը՝ «Մանկությունը տարիք չի ունենում, թեպետ յուրաքանչյուր տարիք ունենում է իր մանկությունը», «Ամեն ինչ լավ է, սակայն լավ ոչինչ չկա»...

Փիլիսոփայական հետաքրքիր դիտարկումներով է խոսքը համեմվում երկի գրեթե բոլոր էջերում: «Մանկությունը սկսվում է ոչ թե ծնվելուց, գրում է Հակոբյանը, այլ այն պահից, երբ հայրդ ու մայրդ առաջին անգամ ժպտում են իրար» (8), կամ «Ճակատագրի քմահաճույքն անկանխատեսելի է, այն ամենատարբեր տարիքում էլ մարդկանց ստիպում է կյանքի միանգամայն նոր այբուբեն սովորել» (24), «քայլերը կարևորվում է ոտքի տակի հողով», «Ճշմարտությունը, ցավոք, շատ հաճախ կույր է լինում և պետք է ձեռքը բռնած տանել» (63) և այլն:

Հեղինակն իր նուրբ ու դիպուկ ներհայեցողությամբ ու աշխարհատեսությամբ, կորստյան ցավով, կարոտի անհուն զգացումով, կենսափորձից ծնված իմաստասիրական ընդհանրացումներով, նրբանուրբ քնարականությամբ ու արցախյան բառուբանով գեղարվեստորեն վերարտադրել է իր կյանքի, մանկական-պատանեկան նախափրությունների, սերերի, բանաստեղծական ներշնչումների, ապրած ժամանակի, հայրենի եզերքի պատմությունը: Կգրվի^o, արդյոք, նաև երկրորդ գիրքը. դա թողնենք հեղինակին: Ուղղակի ասենք, որ արծարծված նյութը շարունակություն է ուզում:

Ահավասիկ, ստեղծվել է մի գիրք, որը շատ բան ունի տալու ընթերցողի մտքին ու հոգուն և, որ կարևոր է, կրճատում է այն տարածքները, որ կան մարդու և մարդու միջև:

ОПИСАНИЕ ВРЕМЕНИ И ОБРАЗА В АВТОБИОГРАФИЧЕСКОМ ВОСПОМИНАНИИ В. АКОПЯНА "ПОСЛЕДНИЙ ВИЗИТ ПОХИТИТЕЛЯ КОЛЫБЕЛИ" - АМАЛИЯ ГРИГОРЯН - В статье исследуется прозаическая поэма В. Акопяна "Последний визит похитителя колыбели", где мы видим воспоминания детских и юношеских лет. В поэме он сплел миф о родной земле, передавая новое дыхание жизни когда-то оживленным и цветущим жилищам. Занимательными эпизодами писатель изображает ту реальность, в которой прошли самые его искренние жизненные эпизоды. Эстетической убедительностью сливаются реальное и воображаемое, что не исключает правдивость реальных событий. Работа ценна еще и тем, что в ней представлена целая эпоха. Писатель освещает исторические времена, нравы, социально-политическую обстановку, человеческие мышления, быт. Автор использует несколько слов для создания целостности образов деревенского быта. Действия рассказа протекают в сочетании прошлого и настоящего. В произведении подчеркивается нравственно-психологический образ арцахца, который переплетается с национальными духовными ценностями. В этом рассказе Акопян по-новому видит повествование Арара, с глубокой болью говорит о потерях нашего народа в арцахской освободительной войне, на первый план выдвигая победы, благодаря которым и непобедима страна.

Ключевые слова: стихотворение в прозе, автобиографическое воспоминание, лирический герой, экзистенциальное настроение, родная страна, эстетика природы, созерцательность, мировидение, Арар, драматические акцентирования, биография времени.

THE DESCRIPTION AND IMAGE OF TIME IN V. HAKOBYAN'S MEMOIR PROSE POEM "THE CRADLE THIEF'S LAST VISIT" - AMALYA GRIGORYAN - The article examines Vardan Hakobyan's prose poem "The Cradle Thief's Last Visit", in which we see the condensed memories of the author's childhood and adolescence.

In the poem, he weaves the myth of the birthplace, giving new life to the once lively and prosperous settlement. The interesting episodes of the writer depict a reality where the most cherished moments of his life have passed. The real and the imaginary are intertwined through persuasive artistic tricks that do not interfere with the authenticity of real events.

The value of the work lies on its depiction of the whole era. The writer sheds light on historical times, prevailing morals, socio-political situations, people's way of thinking, sitting. In a few words, the author sculpts complete images of rural people. The narrative actions, in terms of spatial perceptions and inclusions, are done in combination with the past and the present.

The work greatly emphasizes the moral and psychological portrait of Artsakhian people, which, of course, is related to the national and universal values. In this story, Hakobyan approaches the story of Harar from a new perspective, speaking with deep sorrow and pain about the losses of our nation during The Artsakh liberation war, at the same time, of course, pushing forward the victories that make the country stand and invincible.

Key words: *prose poem, autobiographical-memoir story, lyrical hero, existential mood, native edge, natural aesthetics, insight, worldview, Harar, dramatic accents, biography of time.*

**ԴԻԶԱԿԻ ՄԵԼԻՔ ԱՎԱՆԻ ԿԵՐՊԱՐԸ
ԼԵՈՅԻ «ՄԵԼԻՔԻ ԱՂԶԻԿԸ» ՊԱՏՄԱՎԵՊՈՒՄ**

Լեոն քննողաբար, վիպական շերտերով փաստագրել է Մելիք-Շահնազարյան մելիք Հուսեինի անսպասելի մահվանից հետո օսմանցիների վայրագ երեսից անհուսալի վիճակի մեջ հայտնված, հպատակության, արյան և պղծության, ավերի, կոտորածների ենթարկված երբեմնի շեն ու անհաղթ Վարանդա երկրի ներքին, խախուտ կյանքը, ապա վարպետությամբ գեղարվեստականացրել թշնամու դեմ 1733 թ. զարնանազալին՝ մի գիշերվա մեջ, վարանդացիների բարձրացրած ապստամբական դրոշը և կռած աներևակայելի հաղթանակը:

***Բանալի բառեր՝** Լեո, Վարանդայի մելիքություն, մելիքանիստ Ավետարանոցը, «Մելիքի աղջիկը», Մելիք-Շահնազարյան մելիք Հուսեին, Գայանե, ավանդության, մելիք Ավան, պատմավեպ, Արցախ:*

Դիզակի մելիքություն, Մելիք-Ավանյան մելիք Ավան

Պատմական աղբյուրներում, եկեղեցական մատյաններում, վիմագիր արձանագրություններում, հիշատակարաններում նաև՝ մելիք Եկ(զ)ան. Արցախի գահերեց իշխան, բեկլերբեկ

1733 թ. օսմանցիների դեմ կազմակերպած ապստամբությունից 2 տարի անց 1735 թ. Եղվարդի ճակատամարտից հետո Իրանի Նադիր շահը հանգամանքների բերումով իրեն զինակից և աջակից դարձած Մելիք-Ավանյան մելիք Ավանին Արցախի մելիքությունների վրա **իշխանաց իշխան, խան և բեկլերբեկ** է նշանակում, որը ոչ ժառանգական պաշտոն էր: Այդ մասին հետևյալ մեկնաբանությունն է տալիս Գ. Աթայանը. «.... **«մել-մելիքությունը» (փաստորեն՝ բեկլերբեկ)** արքունիքի կողմից նշանակովի, բայց ոչ ժառանգական պաշտոն էր, և չի բացառվում, որ «Իրանի պատմության այդ ամենամոռայ» ժամանակահատվածում, «մել-մելիք» նշանակված Եզանի իրավունքը, որպես Ղարաբաղի մելիքությունների ընդհանուր կառավարչի՝ «բեկլար-բեկի», չի հաստատվել Շահ Սուլեյմանի կողմից....»¹: Դա նշանակում է, որ իրենց պաշտոններում հին գահակալների կողմից ֆարմաններով հաստատված անձինք պետք է հաստատվեն նաև նոր գահակալների կողմից նոր հրամանագրերով...

Խոսելով Դիզակի մելիքների տոհմաբանության, գործունեության տարբեր առանցքների, վարած պաշտոնների, քաղաքական ճակատագրի, Զալալիներից հասած հարձակումների և ավերումների, դեպի Վրաստան կատարած գաղթի ու վերադարձի, մելիք Ավանի երկակի անվան ու այլ հարցերի մասին՝ Մ. Բարխուդարյանն իր «Պատմություն Աղուանից» գրքում, շարադրելով Դիզակի մելիքների տոհմաբա-

¹ Աթայան Գ., *Տոդ բերդաքաղաքի պատմություն, Երևան, «Գասպրինո» հրատարակչություն, 2010, էջ 50:*

նությունը, գրում է. «.... Վախճանվում է Մելիք-Բախտամ Ա., և տեղակալում է Մելիք-Ավան Բ., Ղուկաս վարդապետի որդին, որ վերջին ծայր վշտացած լինելով վրացուց չարանախանձ հակառակություններից, կալուածական կոիւններից, վերադառնում է Դիզակ 1716-ին իր ժողովրդով միասին և վերստին ժառանգում այդ երկիրը: Մելիքս իւր բնակութիւնը հաստատում է Դոդ անունում և իւր հայր Ղուկաս վարդապետը, յաճութեանը Աղուանից կաթողիկոսին, վանահայր է հաստատում Գտիչ վանքում, նորոգելով վանքի կաթողիկէն և խուցերը: Բայց Պարսից շահերից մին չգիտեմ թէ Օսմանցուց փաշաներից սորա Մելիք-Աւան անունը փոխում են Եկան, այսուհետև կոչում է Մելիք-Եկան»²:

Արցախի գահերեց իշխան, Դիզակի մելիք Ավան-Եգանը («Մելիքի աղջիկը» երկում՝ միայն մելիք Ավան) պատմավեպում գործող միակ ակտիվ հերոսն է, չհաշված Աննա խաթունը, ում ուսերին ծանրացած է Արցախի ճակատագիրը, քանզի մահացած էր Վարանդայի մեծ հայրենասեր մելիք Հուսէինը, իսկ գործելու հիմնական պատմա-աշխարհագրական վայրն, ըստ ավանդության, Վարանդան էր:

Ավանդավեպի հերոսներից Սուլեյման բեկի խոսքերը շատ բնութագրական են Արցախի քաջ ու երևելի մելիքներից մեկի՝ Դիզակի Մելիք-Ավանյան մելիք Ավանի քաջությունն ու արժանապատվությունն ընդգծելու օրինակում. «Տողի Մելիք-Ավանին տեսնողը կասէ, թէ օսմանցիները նրա հպատակներն են: Հպարտ, գոռոզ, մեզ չէ ուզում նայել, չգիտեմ ինչից է այդքան փքվել: Քանի անգամ եմ ուզեցել ցույց տալ նրան, թէ դատարկ, ոչինչ բան է նա: Ասում են, թէ շատ քաջ մարդ է նա: Թող ինձ էլ ցույց տա այդ քաջությունը»³:

Ոչ միայն վիպական, այլ պատմական փաստերն են վկայում մելիք Ավան-Եգանի վաստակած մեծ պատվի ու խառնվածքային գծերի, մարդկային բարձր հատկանիշների՝ քաջության, խոհեմության, քաղաքական պահվածքի մասին: Ըստ ակադեմիկոս Հրանտ Ավետիսյանի՝ ռուսական արխիվներում գտած մինչ այդ պատմությանը անհայտ տվյալների, մելիք Ավան-Եգանին Ավստրիայի (Հռոմեական սրբազան կայսրություն) կայսեր կողմից շնորհվել է բարոնի տիտղոս՝ Иоган фон Джиовани անվամբ, իսկ Ռուսական կայսրությունից ստացել է գեներալ-մայորի կոչում, մասնակցել Ելիզավետա Պետրովնա կայսրուհու թագադրման արարողությանը: Ինը որդիներից միայն Արամն է կոչվել բարոն, որը փորագրված է մելիք Ավան-Եգանի ապարանքի դարպասի դիմացի շինության ճակատամասում՝ «Բարոն Արամ»:

Մելիք Ավանի դիմային տեսանելիությունը տիպական է տրվում Լեոյի կողմից. մելիքի դեմքն անվանում է «լուրջ ու խելոք», «վառվռուն, գեղեցիկ աչքերը՝ հափշտակող»⁴, բնավորության ու խառնվածքային գծերը՝ «մտածող», «չափող», «կշռող» (էջ 196) և այլն, ով արհամարհում է ցանկացած արգելք, անհաջողություն և զարգացող

² Մակար եպիսկոպոս Բարխուտարեանց, Պատմութիւն Աղուանից, հտ. Բ, Թիֆլիս, 1907, էջ 37-38: «Եկեան՝ Ատրապատականի ռճով նշանակում է քենակալ ըստ վկայութեան Բազմաց, Բայց թէ ի՞նչ մտօք որոշմած են այս անունը սորա վերայ, անիմանալի է մեզ», նշում է հեղինակը:

³ Լեո, Մելիքի աղջիկը, տես Լեո, ԵԺ 10 հատորով, հ. 7, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1983 (այսուհետև՝ Լեո, Մելիքի աղջիկը), էջ 133:

⁴ Նույն տեղում, էջ 168:

հարաբերությունների մեջ կարևորում է քաղաքական հասուն պահվածքը, ուղիներ փնտրում հայրենիքը ազատելու Սարը Մուստաֆա փաշայի լծից:

Պատմական աղբյուրներում մեղիք Ավանի կերպարը հետաքրքիր բնութագրումներով էր անմահացած, ինչպես օրինակ՝ «Հայ մեղիքների հետ միաբան», «սերված է հին Արցախի տեր Առանշահիկ բնից», «հմուտ դիվանագետ», «հարգված և ռուսաց կառավարության կողմից», Նադիրի կողմից՝ «շահի բաբալը»- թուրք.՝ հայրացու, «Եգանի խնդրանքով Նադիրը ազատ է արձակել հազարավոր հայ գերիների», «անունը պսակած հակաթուրքական անվեհեր սխրանքներով», «խմաստուն իշխանավոր», ամենաբնութագրականը իր իսկ մեղիք Ավանի վավերացմամբ՝ «Ես թողեցի ոչ՝ Հայաստանս եսիր գնալու» (Ես չթողեցի, որ Հայաստանից գերի գնան). այն փորագրված է իր ապարանքի գլխապատի վրա:

Ահա թե ինչպիսի բարձր գնահատական է տալիս Բ. Ուլուբաբյանը մեղիք Ավան-Եգանի ասված խոսքերին ու նրա սերնդակիցների, ժառանգորդների քաղաքական խիզախումներին. **«Ես թողեցի ոչ Հայաստանս եսիր գ[ն]ալու»**, - միայն գեղեցիկ խոսք չէ, որ զարդարում է այս կամ այն գործչին: Դա արդար գնահատականն է մեղիք Եգանի ու նրա փառավոր դասակիցների գերմարդկային ջանքերի, միաժամանակ և վերջապես, ինքնահանգստացման այն հպարտ գիտակցությունը, թե իրենց՝ այդ անվեհեր մարդկանց, հաջողվեց կատարել գերմարդկայինը, սովորական մահկանացուի ուժերից վեր, անեզրոք են հերոսականն ու հայրենասիրականը՝ մի դարում, երբ հերոսությունը գործվում էր ոչ միայն ռազմի դաշտում, այլև հարևան բռնատիրությունների և ներքին չար ու բարի ուժերի հյուսած քառսի մեջ, քաղաքական ու դիվանագիտական մշուշոտ խաչուղիներում:

«Ես թողեցի ոչ՝ Հայաստանս եսիր գնալու»: Սա սրբազան խոստովանանք է ու ինքնագնահատականի հպարտ կանչ և զարդարում է ճակատն այն հերոսապատումի, որ գրեցին հայ մեղիքներն ու նրանց անվեհեր զինվորությունը իրենց դառն ու դժվար դարում⁵: Սա իրավամբ վերաբերում է նաև «Մեղիքի աղջիկը» հերոսական էպոպեա-ասքապատումի բոլոր հերոսներին՝ մեղիք Ավանի զինվորության անխտիր, Գայանեի զարմանահրաշ բանակին-կուսակիցներին, երդում տվածներին, առավելապես իր տեսակի մեջ անգերազանց ռազմագյուտարար Գայանեի՝ Վարանդայի և Դիզակի մեղիքական տների ժառանգորդ-մեղիքների բնավորության և խառնվածքային գծերի ձուլը իր կերպարում ամփոփած հերոսուհու նկարագրին: Այդ ամենի խոսուն վկայությունը մեղիք Ավան-Եգանի տապանաքարի վրա փորագրված հիշատակագիրն է.

*«Այս է տապան քաջ իշխանին
Եկան անուն Մեծ Մեղիքին,
Որ է որդի բարեպաշտին
Հուկաս անուն վարդապետին,
Եղև սիրեցալ ամենայնին
Նատիր անուն թագաւորին:
Տիրապետեաց սայ ի երկրին
Ի Աղուանից ի նահանգին*

⁵ Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Ե., 1994, էջ 179:

*Յոյժ պատուեցաւ պարսից ազգէն
Քան զիշխանս Հայոց երկրին. ՌՃՂԳ: (1744)»⁶:*

Յավով պետք է նշենք, որ հետագայում այս հզոր, փառապանծ ու քաջակորով մելիքի՝ նույնքան քաջ ու իմաստուն հաջորդներից ոմանց Իբրահիմ խանը խարդախությամբ, հազար ու մի որոգայթներով հավատափոխեց՝ իր իսկ հայրենակիցների գլխին դարձնելով թշնամուց էլ վատթար անդառնալի չարիք (Ասլանովներ, XX դար և այլն):

Իսկ վիպական անցքերն Արցախի քաղաքական ճակատագրի դրամատիկական այլ երանգներ են արձանագրում....

Չափելով Արցախի քաղաքական դաշտում ստեղծված անհուսալի վիճակը, անհնարին ընդունելով անգույթ, ավազակաբարո օսմանցիների վայրենությունների ու ծրագրածի հետ հաշտվելու միտքը՝ մելիք Ավանն Ասլանին դիմում է հետևյալ մտորումներով (**խոսակցությունը նաև Թահմազից՝ Իրանի ապագա գահակալից, Նադիր շահից սպասվող հնարավոր օգնությանն է վերաբերում**, ընդգծ.՝ Ջ. Բ.). «.... - Ես ինքս էլ թեթևամիտ, սնապարծ մարդկանց թշնամին եմ, պահանջում եմ, որ ամեն գործի մեջ լինի խելք, հեռատեսություն: Բայց էլի կրկնում եմ. հաշտություն՝ դա ծիծաղելի, մի անմիտ ձայն է մի այսպիսի երկրում: Հաշտվել՝ նշանակում է գլուխ իջեցնել այն բոլոր իրողությունների առաջ, որոնք կատարվել են այստեղ, կատարվում են և պիտի կատարվեն: **Մեզ օգնություն պիտի ուղարկեն, բայց փոխարենը խորհուրդներ են ուղարկում** (ընդգծ.՝ Ջ. Բ.)...

- Օգնություն չկա, գոնե շուտով չի լինի: Ամբողջ Պարսկաստանը գիտե, որ Թահմազի աչքը Մեֆեվիների գահին է հառած: Իսկ այդ գահին նստելը հեշտ բան չէ....,- ասում է Ասլանը, ով լավ էր ճանաչում հարևան երկրները, ով մելիքի տարբեր հանձնարարականներով՝ օգնության դրոներ գտնելու-բացելու պահանջով, համառորեն չափչփում էր աշխարհի ճանապարհները: Լեռն քաղաքական վերլուծությունների տեղեկատվական-բնութագրական հետաքրքիր շրջանակ է բացում Արցախի ճակատագրով շահագրգիռ երկու հերոսների երկխոսություններում.

- Պետրոս թագավորը իր հետ գերեզման տարավ մեր բոլոր հույսերը. այժմ ռուսները չեն նայում դեպի մեր կողմերը, թեև շարունակ հույս են տալիս.... Մենակ ենք, ուր որ գնում ենք, ճակատներս խփում ենք քարերին»⁷, - դրանով ընդգծվում է նոր թշնամու՝ օսմանցիների վայրագ էությունը և Ղարաբաղի ծանր վիճակը՝ ոչ մի տեղից օգնության, հույսի նշույլ իսկ չունենալու փաստը: Հյուսիս ու հարավ, արևելք, արևմուտք՝ բոլոր կողմերից փակ են օգնության դրոները, թշնամին էլ նստած արցախցիների, հատկապես՝ վարանդացիների տներում, մելիքանիստ Ավետարանոցում. «Գյուլիստանը, Ջրաբերդը, Դիզակը և դրանց հետևելով նաև Խաչենը կարող էին մոտ հինգ հազար մարդ հանել: Բայց ո՞ւր է կովի դաշտը: Օսմանցիները նստած են մեր տներում. դուրս հանել նրանց չի կարելի, իսկ կովելու համար մենք պետք է, որ դրսից

⁶ Մակար եպիսկոպոս Բախտատրեանց, Աղուանից երկիր և դրացիք, Արցախ, էջ 198-199: Հմմտ., Դիվան հայ վիմագրության, պրակ V, Արցախ, էջ 178:

⁷ Նույն տեղում, էջ 168-169:

սկսենք և սրով ու հրով գնանք մեր տների վրա... Բացի դրանից, Վարանդան.... Թշնամին շատ պինդ է նստել այնտեղ և մեզ միշտ կջարդե»⁸:

Գայանեն, մտքում հայրենիքի փրկության համար **անհավատալի ծրագիր (Լեոն այն համարձակ է համարում է, ընդգծ.՝ Ջ. Բ.)** հղանալով, մորը հորդորելով՝ չվախենալ, հայտարարեց, որ սիրահարված է Սուլեյման բեկին ու համաձայն է նրան կնության գնալ: Ամբողջ Վարանդան ապշել էր, այդ մասին էր միայն խոսում, քննում աղջկան հագար կողմերով: Ասլանը նկատում է. «- Վարանդան կորած է, Մելիք-Հուսեինի ժառանգը կդառնա Սուլեյման բեկը:

.... - Չափազանցները հատուկ է վախկոտ մարդկանց, իսկ դու դրանցից չես: Ես հավատում եմ այդ պատմության, որովհետև ճանաչում եմ իմ քրոջ աղջկան: Պապերի խոսք է, որ անսովոր երեխան կուտե իր գլուխը: Եվ իրավ, զարմանալի խելոք, շնորհալի երեխայից պետք է սպասել կամ երևելի գործ, կամ մեծ հիմարություն: Թողնենք երեխային. նրա արածը ընտանեկան պատվի հարց է և ոչ ավելի. այդ ընտանիքում ներկա են և իմ սպիտակած մազերը»⁹:

Մելիք Ավանի խոսքերի մեջ զգացվում է նաև մի այլ համոզմունք. հնարավոր է, այդ լուրը այլ նպատակ ու պատճառներ ունի: Հետագա դեպքերը եկան ու հաստատեցին մելիքի այդ ներքին համոզմունքը, ապա դառնալով կարևոր հարցադրումների, նկատի ունենալով Թահմազից սպասվելիք հնարավոր օգնությունը՝ Ասլանին ասում է. «Խեղդվողը հարդից էլ է բռնում. մենք էլ պիտի բռնենք ամեն մի շյուղից, որ կարող է օգնել մեզ: Հասկացրու այս բոլորը. մտիք Թահմազի մոտ, անձամբ խոսիք նրա հետ իմ անունից, խոսիք համարձակ: Մի ժամանակ ինքը Թահմազն էր մարդ ուղարկում ինձ մոտ, ինքն էր առաջարկում միանալ օսմանցիների դեմ: Այժմ... հաջողությունը մարդուն գոռոզություն է տալիս, ես ոչինչ չունեմ դրա դեմ.... Բավական է, որ մի քանի արշավանք գործեն օսմանցիների դեմ, մեր գործը կհեշտանա: Պետք է մի կերպ դուրս անել օսմանցիներին մեր տնից... Այնուհետև մենք էլ կկռվենք.... **Ղարաբաղը ինձ է նայում, ինձանից է հարցնում, թե ինչ կլինի վերջը: Եվ ես չեմ խոսում...**»¹⁰. չի խոսում, որովհետև դեռևս օգնության դուռ չի տեսնում՝ Սարը Մուստաֆա փաշայի դեմ ճակատ ստեղծելու համար:

Ինչպիսի դերակատարություն ուներ մելիք Ավանը Լեոյի օգտագործած և սկզբնաղբյուր հանդիսացած ավանդության (շարադրված հաստ տետրակում) մեջ, որում երկար մանրապատումներով ներկայացվում էր Ավետարանոց մելիքանիստում կատարված մի հերոսական երևույթի մասին՝ կապված պատմական փաստի՝ 1733 թ. մելիք Հուսեինի տիկնոջ՝ Աննա խաթունի և դստեր՝ Գայանեի գլխավորությամբ, վարանդացիների կողմից օսմանցիների դեմ կազմակերպված զինված պայքարին սպանողի հետ, չգիտենք, բայց Լեոն, վիպապատմական հնարանքներով Արցախի մելիքությունների ընդհանուր համապատկերում կռվի միասնական ազատագրական դաշտ է ստեղծում, որում մեծ դերակատարություն է վերապահված նաև Աննա խաթունի եղ-

⁸ Նույն տեղում, էջ 170:

⁹ Նույն տեղում, էջ 170:

¹⁰ Նույն տեղում, էջ 171:

բորը՝ Դիզակի մելիք Ավանին՝ որպես Արցախի գահերեց իշխանի և որպես Վարանդայի մելիքական տան ազգակցական բարեկամի, որպես հայրենի երկրի՝ Արցախի ճակատագրի համար անհանգստացողի և նրա ազատության համար ճանապարհներ որոնող առաջին պետական գերագույն մարմնի: Այդ են վկայում նաև Գայանեի աղաչանքներն իր մորեղբորը՝ իրեն հավատալու, օգնելու իր ծրագիրը իրագործելու գործում. «Քեռի՛, սիրելի քեռի, դու ամենքի մեծն ես, դու աշխարհի տերն ես, քո խոսքը հրաման է ամենքի համար: Մի բարերարություն արա **մեզ**, մի՞թե հիմա էլ չես խղճա...(**մեզ. խոսքը վերաբերվում է իր գլխավորությամբ Ավետարանոցի և այլ վայրերի աղջիկներին, որոնց երդվեցրել է ավետարանի վրա՝ իր ծրագրին մասնակցելու համար, ընդգծ.՝ Զ. Բ.**)»¹¹ :

Մելիք Ավանի ու Բրանի սարսափազդու Նաղիր շահի միջև հաստատված էր հարաբերությունների, զինվորական համագործակցության լայն շրթա: Երկրի խաղաղությամբ մտահոգ Մելիք Ավանի անհանգստությունների ու Նաղիրի առ հայեր ունեցած վերաբերմունքի մասին Առ. Կոստանդյանցը գրում է. «Մեծ նախարարն Մելիք Եկան հանապազ շահեր զմիտս թագաւորին Պարսից յաղագս խաղաղութեամբ պահելոց գերկիրն և զագգս Հայոց. բազում անգամ Հայկազուն զօրօք հասեալ է յօգնութիւն ի նեղութեան Ժամանակի Նաղիր շահին ի պաշարմանէ արտաքին թշնամեաց պատերազմի. և արարեալ զբազումս քաջութիւնս և յաղթութիւնս ի ձեռն քաջակորով Հայկազեան զօրաց: Նաև ի սղութեան Ժամանակի զօրացն պարսից վասն կերակրոյ և այլ ինչ, կարևոր ինչ պիտոյից հասուցեալ անդ ի նեղութեան զօրաց զցորեան և զգենելիս: Մանաւանդ ի մեծի տօնի պարսից սովորութեան և ի յաւուրս ուրախութեան գնացեալ մեծամեծ ընծայիւք ծանրագին իմն պարգևօք յայնքան երկայնաձիգ ճանապարհի ի տեսութիւն շահին Պարսից յաղագս խաղաղութեամբ և խնամարկութեամբ պահպանելոյն զագգս մեր»¹²:

Բրանի շահ Նաղիրը, կարևորելով Արցախի մելիքների համախմբվածությունը, հատկապես՝ մելիք Ավանի բազմապիսի նվիրվածությունները, քաջությունը, շնորհները վերջինիս նշանակեց հնգյակին գահերեց, Արցախի վեց գավառների՝ Թալիշի, Չարաբերդի, Խաչենի, Վարանդայի, Քոչիզի, Դիզակի վրա գերագույն կառավարիչ-բեկլերբեկ (իշխանաց-իշխան) ապա նրան Մելիք-Ավան-խան կոչեց, ընդգծ.՝ Զ. Բ. :

Թախմազը՝ Բրանի միահեծան հրամանատարը, ուներ երկրորդ անունը՝ Նաղիր: Ասլանի միջոցով վերջինիս հետ (վերջինս էլ իր կողմից էր դիմել մելիք Ավանին այդ հարցով) փորձում է բանակցել մելիք Ավանը՝ միասնական ճակատ ստեղծելու՝ ընդդեմ օսմանցիների (**Առաքել Կոստանդյանցի վերոնշյալ հղումն այդ է վկայում, ընդգծ.՝ Զ. Բ.**): Ասլանը խստագույնս էր կատարում իր պաշտոնը. լավագույնս էր հասկանում ժամանակի տիրապետող ոգին, տեղյակ էր Արցախի հարևանությամբ գործող տիրակալների քաղաքական խաղերին ու նրանց հեղինեղուկ, վայրենի

¹¹ Նույն տեղում, էջ 202 :

¹² **Առաքել վարդապետ, Դիզակի մելիությունը, Վաղարշապատ, 1913 (այսուհետև՝ Առաքել վարդապետ, Դիզակի մելիությունը) էջ 21-22 :**

խառնվածքին, նվաճողական քայլերին, տիրապետում էր տարբեր լեզուների, տարբեր ժողովուրդների ու նրանց առաջնորդների բնավորության գծերին: Նա դիզակցի է, մեղիքի մոտ ազգականը, նրա աջ թևը, քաջարի, գաղտնապահ ու անչափ վստահելի, քաղաքականապես հասուն ու հավատարիմ երիտասարդ զինակիցը:

«Ո՞ւր է այժմ Ասլանը.... Օգնություն չեկավ, թող բացվեն գերեզմանները: Հողի տակ շատերը կան, որոնք ընկել են անհավասար կռվի մեջ. թող նրանք իմանան, որ անհավասար կռիվը հասցրեց վերջին, և վերջը կատարյալ եղավ....»

Բայց մինչև ծիծեռնակները ժամանակ կա, և ո՞վ գիտե... աշխարհը անակնկալ բաների ասպարեզ է: Ո՞վ էր սպասում, թե օսմանցիները կհաղթեն Ղարաբաղը, և ո՞վ էր սպասում, թե այս երկիրը հանկարծ այսքան մոռացված, անօգնական կմնա: Ո՞վ կկարծեր, թե աղետները լրացնելու համար կմեռներ Մելիք-Հուսեինը և, մանավանդ, ո՞վ կկարծեր, թե այժմյան մեծ աղետի ժամանակ նրա աղջիկը փոքրիկ խենջար կպահեր իր ծոցում...»¹³: Այո', Ասլանի գրած հրաշքը երևում է, այն առաջին հերթին Մանասի մի բուռ քաջերն էին և նրանցից էլ պետք էր սկսել:

Հետ կանչել Ասլանին, այդ մտքով շարժվել դեպի Արցախի հինգ մելիքություններ, առաջինը՝ Ավետարանոց: Մի ամբողջ երեկո մելիքը քրոջը՝ Աննա խաթունին, ու Գայանեին բացատրում էր իր ծրագիրը, նրանց անելիքները հստակեցնում: Թող լինի այդ միտքը՝ արյունոտ հարսանիքը՝ միակ հույսը, բայց հարսանիքին կմասնակցեն բոլորը՝ մեծից փոքր, կին թե տղամարդ. ամեն մեկը թող լավ ճանաչի իր զոհին, նրան սպանելու արհեստը սովորի. ամենքը, ամեն տեղ պետք է սովորեն սպանել իրենց տան անկոչ հյուրերին ու մինչ այդ լինեն աչալուրջ և պատրաստ... դավադրությունը պետք է զլուխ գա, առաջին հերթին Վարանդայում, որովհետև այդտեղ է թշնամին մեծաքանակ ուժերով կենտրոնացած. այլապես թշնամին կոչնչացնի բոլորին: **Ղարաբաղը աչք է դրել Մելիք Հուսեինի տան վրա, այս դեպքում ծանրությունն ամբողջապես ընկնում է Աննա խաթունի և դստեր՝ Գայանեի վրա, կարգադրողները կլինեն միմիայն նրանք** (ընդգծ.՝ Զ. Բ.): Երկուսն էլ իրենց դերերը պետք է կատարեն բարձր պատասխանատվությամբ:

Մելիք Ավանին Ավետարանոցում սպասում էր Գայանեի հանդուգն ծրագիրը, որով բացվեց վերջինիս մոգոնած սիրտ պատմության առեղծվածը. «Հավատա՛, քեռի: Ես սիրահարված եմ ճիշտ այնպես, ինչպես փոքրիկ սարդը սիրահարվում է իրանից հինգ անգամ մեծ ճանճի վրա: Չե՞ս տեսել, թե ինչպես մի խեղճ, փոքրիկ միջատ ընկնում է իրանից մեծի ետևից, հալածում է նրան, ծածուկ և հարմար թուլեի է սպասում նրան սպանելու համար: Ես սիրահարված եմ... Վկա է այս հրաշալի խենջարը, որ իմ ծոցում է ապրում, որին ես ուխտ եմ արել, իբրև մի սրբության: Մա ինձ հաստատ խոսք է տվել, որ ինձ կուղարկի գերեզման, եթե իմ ձեռքը դողա այն ահավոր թուլեին, և թուրքը ազատվի սրա բերանից: Մա պողպատի երդումն է կերել՝ թույլ չտալ, որ պիղծ ձեռք դիպչի Մելիք-Հուսեինի աղջկան»¹⁴:

Լավագույնս է կերտված մելիք Ավանի կերպարը՝ համոզիչ, սառը, կշռադատ,

¹³ Լեն, Մելիքի աղջիկը, էջ 214 :

¹⁴ Նույն տեղում, էջ 202 :

հեռուն գնացող քաղաքականությամբ և ապագան ծանր ու թեթև անող վարքով: Այժմ էլ ապշած է քրոջ աղջկա խնդրանք-աղաչանքից՝ ամեն տեղերից նման փոքրիկ խենջարներ ճարել և պատվիրել նորերը պատրաստել, թույլատրել Սոնային, Գյուլ-Ջահանին ու Մանիշակին (մելիքի և նրա եղբոր աղջիկները) ևս քույր գրվել, Ավետարան համբուրել և երդվել, մեծ հարսանիք կազմակերպել, բոլոր երդված աղջիկներին մեկ օրում թուրքերին տալ՝ մեկ գիշերվա մեջ պահապան խենջարները նրանց կրծքերը ցցելու անսասան երդումով: Մելիք Ավանի սառնությունը կոտրվեց, աստիճանաբար վարակվեց Գայանեի մոգոնած հրաշալի, բայց և վտանգավոր, հանդուգն ծրագրով: Միաժամանակ խեղճացած էր այդ մտքից՝ «... Աղջիկներն ազատեն մեզ»¹⁵. նրա մեջ խոսում էր տղամարդու վիրավորված ինքնասիրությունը..., բայց նա կարծես նորից գտավ իր նախկին Գայանեին՝ հրաշագեղ ու կրակ, նորից տրվեց նրան զգվելուն և հավատալուն:

Մելիք Ավանը Ասլանից նամակ ստացավ՝ ճանապարհ չկա փրկության, բայց և նկատի ունենցավ լեռներում իր քաջերով տեղակայված Մանասին՝ որպես խավարի մեջ մի փոքրիկ կայծի:

Խենթ Նազլուն էլ իր աչքերը բացեց, գուժեց իմացածը՝ թշնամին մինչև գարուն կսպասե, գարնանը մեծ կոտորած կլինի և... «Հրաշքն արդեն երևում է, Ասլանը հաստատում է խենթ աղջկա ասածները: Հրաշք է, իհարկե, որ մեզ քնից զարթնեցնում են և ցույց են տալիս մեզ համար պատրաստած զարհուրելի թակարդը: Մենք քուն էինք, իսկ մեր թշնամիները սրում էին իրանց սրերը... Ա՛հ, հիմա մենք չենք քնի...

Նա տանում էր իր հետ մի հսկայական, մի հանդուգն միտք:

Այժմ օգնության աչք դնելը երեխայություն էր երևում: Այժմ նա հասկանում էր, որ մինչև օտարը իր սրտի մեջ համակրության մի աննշան կաթիլ կպատրաստե մի արնաքամ երկրի համար, վերջինս կարող էր մի օրում զոհ գնալ մի ահեղի աղետի, կարող է անսպասելի կերպով մի անձայր գերեզմանատուն դառնալ»¹⁶, - ի վերջո ճշմարիտ համոզման է գալիս մելիքը:

Մելիք Ավանը ուշ, բայց զարթնեց լեթարգիական քնից: «Կա մի այլ տեսակ կռիվ՝ թույլերի, անօգնականների կռիվ: Դա ատամներով, ճանկերով, թակարդներով կռվելն է, մի կռիվ, որ մղվում է գիշերները, ծածուկ ու անլույս տեղերում, անակնկալ, խաբուսիկ միջոցներով... Այդպիսի մի կռվի միտքն էր տանում մելիքը»¹⁷:

Հայրենիքին պատած օրհասը փոթորկում էր մելիք Ավանի ներաշխարհը, խոռվահույզ հոգին հարցումներ էր առաջադրում՝ պատասխաններ չակնկալելով:

Մելիք Ավանը, չնայած լուրջ հաղթանակին, այդուամենայնիվ մտորումների մեջ էր. նրա ծրագրածը կատարյալ վերջաբան ունեցավ, սակայն ձեռք բերած հաղթանակն ուներ իր վտանգավոր կողմերը, որոնք դարձան մելիքի մտահոգության առարկան: Պետք էր ամեն գնով կարողանալ պահպանել հաղթանակը. «Սարը-Մուստաֆա

¹⁵ Նույն տեղում, էջ 202:

¹⁶ Նույն տեղում, էջ 202:

¹⁷ Նույն տեղում, էջ 223:

փաշան հազիվ էր կարողացել մի բուռ մարդկանց հետ փախչել Գանձակից և ազատվել կոտորածից, որին գոհ գնաց նրա ամբողջ բանակը.... Ազատությունը նվաճված էր, բայց դա բավական չէր. նրան պետք էր և պահպանել.... **Նրանց (օսմանցիներին, ընդգծ.՝ Զ. Բ.)** դիմադրելն այլևս անհնարին չէր. պետք էր միայն ռամիկ ուժեր հավաքել, տեղավորել սահմանների վրա և արթուն մնալ:

Ահա այդ նոր գործն էր նա այժմ գլուխ բերում, կրկնապատկելով իր հոգսերը....

Ղարաբաղի հյուսիսային կողմերը նա հանձնել էր Զրաբերդի Մելիք-Հաթամին, իսկ ինքը գործում էր Արաքսի ձախ ափին: Զենքի պակասություն չկար. այժմ հայերի ձեռին էին օսմանցիների թնդանոթներն անգամ: Ատամներով կոպելու ժամանակն անցել էր, և հիմա Ղարաբաղը ցույց կտար, որ երեք տարվա գերությունը չէր մոռացել կանոնավոր պատերազմ մղելու ճարտարությունը»¹⁸:

Ընդհանրության մեջ Լեռնին հաջողվել է գեղեցիկ ու համոզիչ կերպավորել մե- լիք Ավանի՝ Արցախի գահերեց իշխանի հարուստ, ներքին զարգացումներ ներկայաց- նող կերպարը՝ երկրի համար ճակատագրական այդ դժվար ժամանակաշրջանում լի- նել պայքարի կիզակետում. նոր թշնամուն առերես ընդունելով, հպատակություն ցույց տալով, հոգու ամբողջ կորովն ու իմաստությունը ժողովելով՝ փորձել ամեն մի փոքրիկ, աննշան թվացող քայլ՝ ներսից գործելով՝ ամեն կերպ ձգտել գտնելու օգնու- թյան, ազատության ճանապարհ՝ փրկելու ժողովրդին վերջնական կործանումից:

Մելիք-Ավանյանների-Եզանյանների տոհմային առաքինությունների պսակն ամբողջացնող փաստ է տոհմային զինանշանի խորհուրդը: Մելիք Ավանն ունեցել է ռուսական կողմնորոշում, ըստ այդմ էլ նա իր զինանշանը ռուսականի ձևով է պատ- կերել, բայց մի տարբերությամբ... Ռուսական զինանշանի արծիվը մի թագ է կրում՝ Ռուսական կայսրության թագը և արծվի թևերն էլ տարածված վիճակում են ...¹⁹:

Պատմաբան Գեղամ Աթայանն իր արժեքավոր «Տող բերդաքաղաքի պատ- մություն» աշխատության մեջ անդրադառնում է Մելիք-Ավանյանների տոհմային զինանշանին՝ գրելով. «Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Մելիք-Եզանյանների տոհմային զինանշանը, որն Արցախում Եզանի գրաված դիրքին և կարողություններին արժանի զինանշան էր: Նրա օրինակը պահպանվել է Իշխանագետի ստորին հոսանքի աջակողմյան հատվածի բարձրաբերձ լեռան գագաթին, Եզանի կողմից 1742 թ. կա- ռուցված **Կավաքավանքում (Կավաք սարի անունից, ընդգծ.՝ Զ. Բ.):** Զինանշանի վրա երկզվիսանի արծիվ է, որի իրանը վահանաձև տեսք ունի, գլուխները պսակված են եռաձայր թագերով, որոնք հենված են եռանկյունաձև պոչի վրա: Մարմիններին ու պո- չին համաչափ դեպի ներքև են իջնում սրաձայր թևերը, ձախ ոտքի ճանկերով արծիվը սեղմած ունի արքայազավազանը (գայիսոնը), իսկ աջ ոտքի ճանկերի մեջ խաչն է՝ հոգևոր իշխանության խորհրդանիշը»²⁰:

Մելիք Ավանն ոչ միայն հզոր հայրենասեր է, հայրենապահ, քաղաքագետ, այլև

¹⁸Նույն տեղում, էջ 259-260:

¹⁹Տե՛ս «Советский Карабах», 20 դեկտեմբերի, 1989 (թիվ 291):

²⁰ Աթայան Գ., Տող բերդաքաղաքի պատմություն, Երևան, «Գասպրինտ» հրատարակչություն, 2010, էջ 68:

բարեգութ է, ժողովրդասեր, հոգատար իշխող, ոգով՝ աներեր, խիզախ, միաբան: Առաքել Կոստանդյանցը գրում է. «Նաև բազում մանկունս և աղջկունս ազատել ի պարսից տերութենէ և բերեալ յերկիրս մեր: Քանզի ունէր բնական գութ և սէր հայրախնամ առ յազգս իւր. մանաւանդ՝ տնանկաց, արեաց և որբոց:

Դարձեալ զբազում էին քայքայեալ եկեղեցիս վանորայս նորոգեալ և ի յաղքատ բնակութիւնսն Հայոց գնորս կառուցեալ շինէր և զգեստս կամ զխաչս և այլ սրբազան արարողութեամբ պատկանելի սպասս ընծայէր մերկ աղքատ եկեղեցեաց: Նաև առաքել ի հեռաւոր ուխտատեղիս ընծայս և պարգևս վանականաց և կրօնավորաց. բաց ի սոցունց այլև զանազան բարեգործութիւնս արարեալ յազգս մեր»:

Դիզակի մելիք Ավանի կերպարում մարմնավորված ու խտացված են Արցախի փառապանձ մելիքների առաքինությունները, ավանդական վարքն ու բարքը, անկոտրում ու ազատասեր ոգին, բնավորության խիզախ ու արիական, հերոսական գծերը՝ հայրենասիրությունը, ազատասիրությունն ու քաջությունը, խոհեմությունը, քաղաքական հասուն միտքը, ազգային գաղափարաբանությունն ու հոգեկերտվածքը պահելու, դրանց հետևելու, Արցախի ու արցախցու բարոյական նկարագիրը անխաթար տեսնելու մտահոգությունը, ժողովրդի հոգսերը հոգալու, նրան շենացնող տեսնելու ու պահելու պատվասիրությունը, հպատակասիրությունը, ազգի շահերին անմնացորդ ծառայելու, նրան գիշատիչ ոսոխներից ազատ պահելու սրբազան ուխտը: Վանդակում հայտնված առյուծի նման պատեպատ է խփվում նա, ելք փնտրում վերջին շնչում գտնվող հայրենիքի համար, զգուշաբար ու գաղտնի իր դրոշի տակ հավաքում ոգու ամրությունը պահպանած մարտիկներին, որպեսզի որոշված ժամին իջեցնեն վճռական հարվածը:

*ОБРАЗ ДИЗАКСКОГО МЕЛИКА АВАНА В ИСТОРИЧЕСКОМ РОМАНЕ ЛЕО "ДОЧЬ МЕЛИКА" – **ЗИНАИДА БАЛАЯН** - Лео исследовательски зафиксировал зверское лицо османов и жизнь непокорной процветающей страны **Варанды**, оказавшейся в безвыходном положении и подвергнутой резне после внезапной смерти Мелика Хусейна Мелик- Шахназаряна. Кроме того мастерски изобразил знамя повстанцев, поднятое варандцами за одну ночь весной 1733г. и их невероятную победу.*

***Ключевые слова:** Лео, меликство Варанды, крепость Аветараноц, "Дочь Мелика", Мелик Шахназарян, Мелик Хессейн, Гаяне, традиция, Мелик Аван, **исторический роман**, Арцах.*

THE CHARACTER OF MELIK AVAN OF DIZAK IN THE LEO'S HISTORICAL NOVEL "MELIK'S DAUGHTER"– ZINAIDA BALAYAN - Leo critically documented in epic layers, appearing in a hopeless situation by the ferocious Ottomans: subordination, bloodshed, destruction, massacre victims, once prosperous and invincible **Varanda**: fragile inner broken life of the country, after the sudden death of Melik-Shahnazaryan Melik Hussein, whereat he masterfully depicted rebellion flag raised against the enemy by the Varandans and their incredible victory during one night in the spring of 1733.

Key words: Leo, Varanda Melik, Avetaranots fortress, “Melik’s daughter”, Melik-Shakhnazaryan Melik Hussein, Gayane, tradition, Melik Avan, **the historical novel**, Artsakh.

ԷՂՎԱՐԴ ՄԻԼԻՏՈՆՅԱՆԻ ԱՐՁԱԿԸ

Սույն հոդվածում ներկայացվում է անվանի բանաստեղծ, մանկագիր, բազմաթիվ միջազգային և հայրենական մրցանակների դափնեկիր Էդվարդ Միլիտոնյանի արձակը՝ «Քարկապ» ժողովածուում գետեղված պատմվածքների վերլուծությամբ և արժևորմամբ: Ընդգծվում է, որ հռչակավոր գրողի արձակը գաղափարական հագեցվածությամբ, կոմպոզիցիոն ձևերի բազմազանությամբ, կերպարավորման արվեստով, լեզվատճական առանձնահատկություններով նոր երևույթ է արդի հայ գրականության հարուստ գանձարանում:

Բանալի բառեր՝ Էդվարդ Միլիտոնյան, պոեզիա, արձակ, «Քարկապ» ժողովածու, ավանդույթ, նորարարություն, ինքնատիպություն, գեղագիտական իդեալ, պատկերավորություն:

Որ Էդվարդ Միլիտոնյանը աստվածաշնորհ մանկագիր բանաստեղծ է, գիտեինք, սակայն չգիտեինք, որ նաև տաղանդավոր արձակագիր է, ընթերցողներին թևավորող գեղագետ: Նրա առանձին արձակ գործեր կարդացել էի մամուլի, առանձնապես «Գրական թերթ»-ի էջերում, համոզվել, որ արձակը ևս թարմաշունչ է ու դարապատկեր, ինչպես չափածոն: Ու չէի սխալվել: Կարդալով ու վերընթերցելով նրա «Քարկապ» ժողովածուն՝ հաճույքի և ուրախության զգացումով պարուրվեց մեր սիրտը, և դա բնական է, քանզի մեր գրչեղբայրը կշեռքի հավասար նժարներին էր դրել իր բարձրարվեստ չափածոն ու արձակը: «Քարկապ»-ը բացվում է «Մարմնանկարչության հմայանքը» ստեղծագործությամբ, որը գրվում է ոչ միայն ժանրային հայաբնույթ առանձնահատկությամբ, այլև թեմայի աննախադեպ նորությամբ: Հայ արձակի զարգացման ու հարստացման ընթացքում թեմայի նման հումորախառն նկարագրությամբ երկի դժվար է հանդիպել: Իհարկե, Վահան Թոթովենցը մեզ հմայել էր «Բաց կապույտ ծաղիկներ» բարոյահոգեբանական պատմվածքով, Պորտաքար ձևությամբ հոլովվել էր առանձին գրողների ստեղծագործություններում, սակայն թեմայի նման պաննոյացված բացահայտման առաջնությունը պատկանում է Էդ.Միլիտոնյանին, որին հաջողվել է կերտել աստվածապատկեր-աստվածասիրտ-ազգանվեր հայրուհու կերպար՝ բռնկված մայրանալու երազանքով հանուն օջախի պահպանման, ազգի հավերժացման:

Մեծ Լոռեցու «Ոչ թե ինչ-ը, այլ ինչպես-ը» պահանջի առումով Միլիտոնյանի այս պատումն այնքան է ինքնատիպ և այնպես է համեմված երգիծանքի ազգաբնույթ հնարանքներով, որ ծիծաղը դարձել է կերպարներից մեկը՝ հայածին, սրամիտ ընդգրկումներով ու ընդգծումներով: Կերպարների ազգաբնորոշ մի խոսուն ջոկատ է հանդես բերված՝ ազգային սովորույթների, կենցաղավարության դարակազմի շերտերի երանգավորմամբ:

Ստեղծագործության բովանդակությունը ներկայացված է սրամիտ ու համոզիչ, սրտամոտ ու վարակիչ այնպիսի պատկերներով, որ ընթերցողը վերանում ու

երևակայությամբ դառնում է նկարագրվող երևույթների ու մարդկային փոխհարաբերությունների ականատեսն ու մասնակիցը: Եվ դա՝ հոգեբան-ազգագրագետ Միլիտոնյանի վարպետության շնորհիվ:

Բազմաշերտ ու բազմաբնույթ երկ է «Մարմնականության հմայանքը»: Հիմքում մարդու և Աստծո փոխհարաբերության հիմնախնդիրն է: Աստված նախաստեղծել է Եվային՝ մայրանալու, մարդկային ցեղը բազմացնելու նպատակով: Ու պատահական չէ, որ որոշ ժամանակ երեխա ունենալու հնարավորությունից զրկված կանայք Աստծո օրհնանքով կապվում են մայր բնության արարող ուժի հետ: Այդ Արարիչ ուժը հայ իրականության մեջ համարվել է Պորտաքարը, որը սովորական չէ, այլ՝ Աստծո կողմից օրհնված մի այնպիսի խորհրդանիշ, որ կանանց պարզևուրեք է մայրանալու Աստվածահաճո երջանկություն: Եվ շտապենք ասել, որ Էդվարդ Միլիտոնյանին հաջողվել է Պորտաքարը կերպավորել որպես Աստծո ներշնչանքով կանանց մայրանալու կարողություն պարզևուրեք սրբասուրբ ուժ:

Պատմվածքի պատկերներից մեկը պատմում է այն մասին, թե ինչպես է դաշտում բանջար հավաքող կանանցից մեկը, որ ամուսնանալուց յոթ տարի էր անցել, բայց երեխա չէր ունենում, մենակ մոտենում Պորտաքարին, աննկատ իջեցնում անդրավարտիքը, հարազատի պես գրկում նրան «այնպես, որ քարի» ելուստը գրկվի ագոմեջով: Այդ պահին նա էլ այն ամաչկոտ կին Արուսը չէր, բանջար հավաքող սիսականցին չէր, նա անորոշ շնջացող կակաչ էր, շրջագզեստը՝ կարմիր, ներսը՝ երկար չիդիացողի թավշյա սև» (Էդվարդ Միլիտոնյան, «Քարկապ», Պատմվածքներ, պիեսներ, Ե., «Օրծեռնակ» հրատ., 2017, էջ 4):

Շարունակվում է միլիտոնյանական հումորախառն պատումը. «Աշխարհի չբերների աչքի լույս Պորտաքար: Այնքան երեխաներ ծնվեցին, որ երկրագունդը մարդկային ծանրությունից դանդաղեցրեց պտույտը: Հենց դրանից ձանձրացած Միսանում պաշտոնավորները որոշեցին բացել նկարչության դպրոց: Առաջին աշակերտը Աշոտն էր, Արուսի տղա Աշոտը, նկարիչ ծնվածը: Բնածին տաղանդ լինելուն չէր խանգարում մի քիչ նկարչական ուսում: Լույս ու ստվերի գաղտնիքներին առնչվելով՝ Աշոտը հասկացավ, որ դպրոցի պատերից դուրս է լողում իր հոգին՝ դեպի լեռները, դաշտերը, քարանձավները» (էջ 4-5):

Ինչպես հատուկ է Միլիտոնյանի պատկերավոր մտածողությանն ու պատմելու առիթնող ուժին, ներկայացվում է Աշոտի նկարչական գործունեությունը: Ընթերցողը հանդիպում է բնապաշտ Աշոտին, թշնամու դեմ պատերազմող Աշոտ-հայորդուն: Բարեհաջող ավարտված կովից վերադարձած ու վերջնականապես հուժկու տղամարդ դարձած Աշոտը չէր նկարում: Նա լուռ նայում էր լեռների, դաշտերի, ձորերի կողմը, այնքան խաղաղ, որ ասես կով լիներ:

Օրերի հետ հանդես են գալիս նոր մարդիկ, տեղի են ունենում նոր իրադարձություններ: Տարածվում է Պորտաքարի համբավը: Նրա մոտ կրկին հայտնվում են աշխարհի տանջահար չբերներ: Նրանց մեջ կային այնպիսիք, որ մերկանում էին լրիվ ու, մերված բնության հոսքերին, տրվում էին Պորտաքարի արևից տաքացած ջղոտ էությունը: Ամոթը նահանջում էր երեխա ունենալու հզոր ցանկության դեմ:

Գրող Էդ. Միլիտոնյանի հումորախառն բազմերանգ պատմելաոճին ծանոթանալու միտումով ավելորդ չհամարեցինք վերլուծական այս հոդվածում անփոփոխ բերել հետևյալ պատկերը. «Մի ամառային գուլալ օր Աշոտն իր նկարակալով հայտնվեց դաշտում: Նկարակալի ոտքերը բացեց, կանգնեցրեց խոտերի վրա, ասես հարթակ լինե՞ր, Աշոտը ժպտաց և իր իմացած ժլատ անգլերեն-ռուսերեն լեզուներով հասկացրեց, որ սիրով նկարի մերկ մարմինների վրա ինչ ուզեն, կամ ինքն ինչ ուզի: Արտասահմանցի չբերներից ումանք, հատկապես արդեն մերկացածներն այնքան ուրախացան, որ նրանց թվաց, թե սա էլ Պոլտաքարի գործությանն օժանդակող ծես է: Հերթ գոյացավ: Նրանց մարմինների վրա գունավոր ժայռապատկերներ ու բնանկարներ երևացին: Աշոտն այնպիսի նրբությամբ ու երևակայությամբ էր նկարում, որ աղջիկների ու կանանց կրծքերի բլուրներով ցած վազեն հովազիկներ, նրանց ազդրերով վեր խոյանան վիշապաձկներ, նրանց հետույքների թմբերի վրա աճեն անմոռուկներ, անթառամներ և այլ զարմանահրաշ ծաղիկներ, իսկ փոքրիկ հարթ ու տաք բացատներում վազվզում էին շիկամորթ աղվեսներ, նոխազներ և մեկ-մեկ էլ հրաքաշ առյուծիկներ: Նրբագեղ ոտնաթաթերի վրա ծլում էին բզեզի թևիկներ, գատիկները քայլում էին թիկունքներն ի վեր, նախշագարդ օձն էր պարուրվում գոտկատեղերին: Կային կանայք, որ պատվիրում էին այս ու այն պատկերներ, ցույց էին տալիս այն տեղերը, որ հարմար են ցանկացած պատկերների համար: Շատերն էին ցանկանում վիշապաձկների նկարներ իրենց աջ ու ձախ ազդրերի վերնամասերում, հեշտոցներին մերձ: Եվ կային էակներ, որ պատվիրում էին արստրակտ թեմաներ, բայց որոնց մեջ պարզորոշ ուրվագծվեր հղիացման պահը, օրգազմի սարսուռը»: (էջ 5-6)

Էդ. Միլիտոնյան-արձակագիրը հանդես է գալիս նաև որպես բնապաշտ-բնագետ: Նա հաստատում է այն դիտարկումը, որ Հայաստանի բնությունը խտացված է իր գրկում ծնված հայի մեջ: Ասել է թե՝ մեր բնությունը հայապատկեր հայ է, հայը՝ Արարատված բնություն:

Էդ. Միլիտոնյան գրողի «Մանրանկարչության հմայանքը» պատմվածքը կարելի է համարել վիպակ այն առումով, որ նրանում պատկերված իրադարձություններն ու կերպարների ներաշխարհն այնքան են խտացված, որ երկրորդական է համարվում երկի ծավալը: Մնայուն հայաշունչ ու հայաբնույթ կերպարներ են Աշոտը, մայրը՝ Արուսը, հայրը, Վարդո տատիկը, չորրորդ հարկի Հրանուշ տատը, երկրորդ հարկի Մառան, Աշոտի կինը՝ Մարուշը... Նշված այս կերպարները ներկայացնում են երկու հակադիր աշխարհ, հակադիր՝ իրենց կենսահայեցողությամբ, մի կողմից սրբազործված համեստ սովորություններ պահպանողները, մյուս կողմից՝ նորերը:

Մարմանակարիչ Աշոտի մասնագիտությունը անընդունելի է Արուսի հարևանների համար: Հեռուստացույցի հաղորդումներից ու ցուցադրումներից հետո Վարդո տատին դիմում է Աշոտի մորը.

- Արուս ջան, տղադ ամոթ չունի՞, երեխատեր մարդ է, էդ ի՞նչ գործով է զբաղվում:

Ու երբ գործից անտեղյակ Արուսը հարցնում է Վարդոյի տված ամոթանքի պատճառը, նա պատասխանում է.

- Չես տեսե՞լ, Արո՛ւս, չփլաղ բոգերի վրա է նկարում. բա իր կնկանից չի ամաչո՞ւմ... Տո, ուրիշ բան չի կարող անի՞, Արուս ջան, խայտառակեց մեր գյուղի անունը:

Վարդո տատիին արձագանքում են հարևանուհիները: Չորրորդ հարկի Հրա-նուշը զարմացած վրա է բերում.

- Հա, Աշոտը հերոս տղա է, բոլորիս սիրելին, համա էդ բանը պտի չաներ:

Արուսը ծանր ապրումների մեջ է ընկնում: Նա չէր սպասում, որ Աշոտը կարող էր նկարել կանանց մարմինների վրա: Արուսն ավելի է նեղսրտում, երբ չորրորդ հար-կի Հրանուշ տատին բարձրաձայնում է.

- Ո՞վ չի տեսել, Արուս ջան, ամբողջ Սիսանն է խոսում. էնքան մարդ է զանգել մեր տուն, էնքանից շատ...

Իսկ երկրորդ հարկի Սառան մրմնջում է.

- Ամոք էր... աղջիկ երեխեք ունենք, վաղը որ նրանց վրա նկարի, թո՛ւ...

Նույն օրվա երեկոյան Աշոտը զանգում է տուն, լսում մոր ամոթանքը իր հան-դեպ: Աշոտը հասկանում էր շրջապատին, զիտեր, որ լինելու են դժգոհություններ, բայց ամաչելու պատճառ չունի, որովհետև մարմնանկարչությունը բացառում է ամոթի ու նախնադարյան աբոուի գունաշերտը:

Հավատարիմ կյանքի սրընթաց փոփոխվող կենցաղավարության օրենքներին ու աշխարհընկալումներին՝ Միլիտոնյանը հաստատում է Աշոտի նվիրվածությունը մարմնանկարչական արվեստին, որը բարձր է գնահատվում աշխարհում, ուրա-խացնում նաև Աշոտի մորը:

- Պառավնե՛ր,- ասում է նա,- տղես աշխարհին հայտնի է դարձել, ամբողջ երկիրն է խոսում նրա մասին:

Նա հայտնում է, որ Ամերիկայից զանգել են, որ բոլորը հպարտ են Աշոտով: Ապա զանգում է որդուն.

- Տղա ջան, մերդ ցավդ տանի, չուզողի աչքը հանի... Երեխեքդ ո՞նց են, հերդ գնաց հեծանիվ առնելու, Արամին էլ պուճուր ավտո:

Պարզվում է, որ պապիկը թոռների համար իր թոշակով գնել է հեծանիվ ու խաղալիք ավտո: Դժվար չէ նկատել, որ գրողը, հավատարիմ մեր պապերի սրբա-գործված օջախապաշտության հավերժական զգացումին, ստեղծել է նաև պապիկի գե-ղարվեստական կերպարը:

Հայոց կյանքի մեջ նոր երևույթի նկարագրություն է նաև մտավորական հայու-հու՝ Աշոտի կնոջ՝ Մարուշի թևավորող վերաբերմունքը ամուսնու հանդեպ:

Աշոտի հարցին, թե է՞լ ովքեր են զանգել ու շնորհավորել իրեն, կինը պատաս-խանում է.

- Ընկերուհիներս հոգուս հետ խաղացին՝ էդ ոնց է, որ չեմ խանդում, աշխարհի բերանն է ընկել քո նոր մարմնանկարչությունը:

- Ինչ ասացի՞ր,- հենց այնպես հարցրեց Աշոտը:

- Ասում եմ, որ սա գյուտ է, նոր արվեստ,- հպարտ պատասխանում է կինը՝ Մարուշը:

Գոհունակությամբ կարելի է շեշտել, որ մարմնական արջության նոր արվեստի հմայքն իր նոր գեղարվեստական պատկերն է գտել Միլիտոնյանի հոյակապ պատմվածքում:

Էդ. Միլիտոնյանի ստեղծագործական նախասիրություններում նկատելի է Չեխովյան արվեստի ազդեցությունը՝ առանձնապես կյանքի երկրորդական թվացող երևույթների գեղարվեստական պատկերավորման առումներով: Որպես վկայություն մեր այս դիտարկումի կարող ենք բերել գրողի «Երկու քարհանգույց մի կոշկաթելին», «Մալևիչի «Մն քառակուսին», «Արեգակնային համակարգ» և այլ պատմվածքներ: Նշենք, սակայն, որ մանրուք թվացող այդ նյութերի գեղարվեստականացման ընթացքում հեղինակը կատարում է կենսափիլիսոփայական ընդհանրացումներ:

Մարդկային կյանքի ընթացքն արդյո՞ք քարահանգույցների շարան չէ: Լսենք հեղինակին. «Ո՞վ չգիտի՝ աշխարհում ամենասոսկալի հալածանքը կրում ես չընկալված խոսքից, մտքումդ թաքտացող մոռացված բառը հիշվելու փորձից թեթևորեն խույս է տալիս ու ձկան բերանով ժպտում քո համառ փորձերի վրա» (էջ 11):

Կին խմբագրի մի խորհուրդը «փախած» բառի առնչությամբ պատմվածքի հերոս-հեղինակի մոտ վերածվում է արվեստի նկատմամբ խստապահանջ լինելու հրամայականի, որի մտրակված շառաչի տակ կատարում է իմաստուն ընդհանրացում. «Ոչ բոլորին է տրված գրելու տանջանք»: «Ոչ բոլորին է տրված գրելու հրճվանք» (էջ 12):

Ասացվածքի թևավոր իմաստ պարունակող ընդհանրացումները պատմվածքում կարելի է շարունակել հոգուտ հեղինակի:

Այստեղ կարևոր ենք համարում մեջբերել դասականների ստեղծագործական արվեստը շարունակելու և ինքնության դաշտ դուրս գալու խոստուն մի օրինակ պատմվածքից. «Կարծեն Չեխովն է ասել, որ լուցկու մասին էլ կարող է պատմվածք գրել»: Ահա Միլիտոնյան արձակագրի լուրջ ու մտրակող խոստովանությունը. «Ես Անտոն Պավլիչ չեմ, ինձ ոչ ոք չի թողնի Չեխով լինել, լուրջ բաներ գրելու ժամանակն է, աշխարհը գլորալացվում է, ջերմաստիճանը բարձրանում է բնեղների սառցահալքին զուգահեռ, կողքից ու վրայից էլ հայրենական հազար ու մի ժառանգական հիվանդություն» (էջ 13): Հիրավի հենց այս ժառանգական հիվանդությունն է հենց մեզ՝ հայերիս խանգարում մեր երազած առաջընթացն ապահովելուն:

Խորիմաստ ու տարողունակ պատում է «Երկու քարհանգույց մի կոշկաթելին» երկը: Նրանում գրողը բացում է մերօրյա կյանքի ստվերոտ կողմերի վարագույրը և զգուշացնում ահա այսպես. «Տաթևիկին երկու օր պահեցին հիվանդանոցում, կաթիլալին սնուցումը զգալի կազդուրել էր: Ոչ մի լուրջ անհանգստացնող բան չէին հայտնաբերել: Վերջում կրկնակի նկարեցին սիրտը: Այս երկու օրը տղաս հասկացել էր, որ ինչքան անորոշ է հիվանդությունը, այնքան բազմանում են վճարովի ծառայությունները՝ ստուգում, կարդիոգրամա, հետազոտություններ մասնակի և համալիր» (էջ 15): Ու վերջապես հեղինակի ընտրած «փախած» թեմայի տողատակի իմաստուն խորհուրդը. «Մեծագույն խեղճությունը ինքդ քո դեմ խեղճանալն է, քո աչքերով նայողի ճակատագրի առջև ընկրկելը: Չդառնալ բեռ ամենասիրելի մարդկանց ու հողի վրա» (էջ 7):

Այս իմաստությունը, որ մեր ժողովրդի պատմության ընթացքում դառել է

ապրելու Աստվածահաճո բանաձև, մեր օրերում նույնպես հնչում է իբրև դաս ու խորհուրդ նոր սերունդների համար: Հայրս, որ յոթ արհեստի տեր հմուտ հայ էր, դիմում էր Աստծուն, որ բեռ չդառնա իր երեխաների ուսերին:

Գիտական հայտնագործությունների հոլովմամբ կենսական հարցեր են շոշափված Միլիտոնյանի «Մալինիչի «Մև քառակուսին» պատմվածքում, որի նկատմամբ ընթերցողն ապրում է հաճույքի մեծ զգացում: Պատումի վերջին ընդհանրացումը ևս ժողովրդածին մի ասացվածք-խորհուրդ է Վահրամ Փափազյանի շուրթերով հնչեցված ճշմարիտ խոսքը. «Տղա՛ս, ամեն սև բան Օթելլո չէ» (էջ 21):

Ընթերցելով գրքի «Մարինկան» պատմվածքը՝ համոզվում ես, որ Էդ. Միլիտոնյանը արվեստագետի նախանձելի տեսողություն ու խորաթափանց դիտողականություն ունի կյանքի հանդեպ: Նա ոչ միայն նկատում է ամենօրյա հաճելի ու տհաճ երևույթները մարդկային փոխհարաբերություններում, այլև կարողանում է վարպետ գրչով ստեղծել ժամանակաշրջանի տիպական պատկերը և այդ համապատկերի շրջանակներում՝ մարդկային բնավորությունների խաթարումը: «Մարինկա» պատմվածքն այդ երևույթի խոսուն հյուսվածք է: Մարինկան, որ քննություններից հավաքելով 17 միավոր, իսկ անցողիկը 18 էր, երկու ամիս մասնակցում է դասերին և իրեն դրսևորում որպես Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ամենաաչքի ընկնող աղջիկը, ինչպես գրողն է նկատում, «աչքերը սև ու խոշոր ու կլոր, կրծքերը հասուն ու կլոր, կոնքերը կլոր (շրջագգեստն ավելի էր ընդգծում դա), գերող ու կլորավուն, սրունքները ազդեցիկ ու կլոր: Ինքը մեզնից բարձր հասակով, սպիտակաթույր, դեմքը հին հունական մարմարե մաքրությամբ, փարթամ էր ու փարթամաշուք: Կարծես վերոնշյալ բարեմասնությունները քիչ էին, Մարինկան ուներ նաև ծովածուփ, ներկայանալի, տղամարդու սիրտը խլխլացնող մազեր, որոնք մերթ թափվում էին փափուկ ուսերին ու գիրգ մեջքին, մերթ հավաքվում հպարտ գլխին: Բարձրակրունկների վրա շորորվում էր ինքնավստահ, ծանր: Սակայն հենց խոսում էր, ամբողջ վեհության մի մասը կորչում էր անմիջապես, թլու էր, բառերը կլոր-կլոր էին» (էջ 22):

Հիրավի մի գեղանկար: Եթե բառային այս պատկերը լիներ Մինաս Ավետիսյանի կամ Արցախյան հռչակված նկարիչ Սամվել Գաբրիելյանի ձեռքին, անշուշտ, կստեղծվեր հայտնու անկրկնելի, մեր սարերի պես վեհաշուք, հմայիչ պատկերը:

Նման գերող գեղապատկերից հետո հեղինակը հոգեբանի նրբանկատությամբ շարունակում է Մարինկայի կենսագրության ընթացքը: Մարինկան, որ լավ էր սովորում, ավարտելուց հետո բանասեր դառնալու փոխարեն դառնում է ո՛չ լրագրող, ո՛չ գիտնական, ո՛չ էլ գործիչ, ուղղակի աշխատում է կոմկուսի գլխավոր թերթի խմբագրությունում... և շատ կարևոր էր իրեն պահում:

Էդ. Միլիտոնյանը, իբրև հումորի վարպետ, ներկայացնելով Մարինկա-հայտնու հմայքը, միաժամանակ ակնարկում է հեռուն չտանող բնավորության սովերային կողմերը, որ անհարիր են հայտնու ազգապահպան ընկալմանն ու վարքին:

Լսենք գրողին. «Տարիներն անցնում էին, և Մարինկային ոչ մի տղա ու տղամարդ չէր մոտենում, ո՞վ կփորձեր թռչել անդունդի վրայով: Մարինկան ավելի էր շքե-

դացել, աղջկական շուքին գումարվել էր ինքնավստահ երիտասարդ կնոջ վեհանձն կեցվածքը, ավելին, դրան գումարվել էր նաև գլխավոր կուսակցական թերթի ողջ ամենագոր խորությունը: Նրան գաղտնի սիրահարվում և գաղտնի մերժվում էին: Այդպիսիների շարքերը երկարում էին, նրանց մեջ կար մեկը, որը բարձր պաշտոնյա էր, ապա՝ տնօրեն հրատարակչական հզոր հիմնարկում» (էջ 23):

Հեղինակը նշում է, որ այդ հրատարակչությունում էին տպագրվում բոլոր թերթերն ու ամսագրերը: Մարինկան տեղափոխվել և աշխատում էր այդ կառույցում: Տնօրենը՝ Վազգենը, անտարբեր չէր նրա հանդեպ: Մինչդեռ Մարինկան չէր արձագանքում նրան, դեռ ավելին, գյուղում հասակ առած Վազգենի կոպիտ առաջարկին Մարինկան պատասխանել էր յուրովի կոպտությամբ, ուժգին հարվածով:

Հայաստանի անկախացումից հետո շատ բաներ փոխվեցին: Ինչպես գրողն է ասում, ամեն ինչ փոխվեց ըստ նոր կացության՝ անգամ կոմկուսի տպարանն է խեղճանում: Ամեն ինչ փոխվում էր, միայն Մարինկան չէր փոխվում: Նույն շքեղն էր ու ազդեցիկը, անձեռնմխելին: Նա տեղափոխվեց Մոսկվա և աշխատանքի անցավ արտասահմանցիների օֆիսում: Այդ ընթացքում տնօրեն Վազգենը բավականին հարստացել էր ու բիզնես-կապեր հաստատել Մոսկվայի գործընկերների հետ: Թուղթ էր բերում, օղի էր արտադրում և այլն, և այլն: Մոսկվայի Գորկու փողոցում Վազգենը պատահականորեն հանդիպում է Մարինկային, նույնիսկ ռիսկ էր արել ու պաչել նրա ձայնը, մի քիչ ետ էր հրվել, բայց ոչ վերջնական. հույսի ծվենը բռնած, առաջարկել էր գնալ ռեստորան: Պայմանավորվելով՝ երեկոյան ժամը 7-ին «Կարուսել» ռեստորան է ներկայանում Մարինկան իր շեֆ իտալացի Անտոնիոյի հետ:

Ինչպես պահանջում է տղամարդու ասպետականությունը, Վազգենը հյուրասիրում է Մարինկային ու Անտոնիոյին: Վազգենն ըմբռնում է, որ Անտոնիոն ու Մարինկան կապված են միմյանց ինչ-որ ջերմ թելերով: Գինարբուքի ընթացքում Վազգենն սկսում է մտածել, որ Անտոնիոն երևի իտալացի չէ, ռուս է: Մարինկան խաբում է, որ կարևոր թվա: Մարինկայի ու Անտոնիոյի ռուսերենը մի քիչ իտալերեն էր, ավելի շատ թլոլ և ավելի շատ՝ հումորիկ:

Ռեստորանում երեքի հանդիպման անսովոր ընթացքի նկարագրությամբ գրողը բացահայտում է Մարինկայի աղավաղված, տհաճ, համեստ հայուհուն ոչ վայել բնավորությունը:

Էդ. Միլիտոնյանի «Մարինկա» պատմվածքը նոր թարմ երևույթ է արդի հայ արձակի գանձարանում:

Աշխարհասփյուռ հայության շարունակվող կարոտի ու ցավի հրաշալի և համոզիչ մի պատկեր է «Ասք 8-րդ հարկի կնոջ մասին» էսսեն: Կինը, որ 8-րդ հարկի պատշգամբից նայում է Ֆրանսիայի կողմը, որտեղ ապրում է իր փոքր տղան, որն ամուսնացած է և ունի երկու աղջիկ, խորհում է. «Երանի մի տղա ունենար, - մտածում է մայրը ու լացում անձայն, միաժամանակ մոկտում է սիրտը, որ «մեղք է Ֆրանսիան» ու շարունակում լացել անձայն: Ապա նորից պատշգամբից նայում է դեպի Բելգիա, ուր ապրում է մեծ տղան, որը կին ունի, ու պիտի երեխա ծնվի: Երագում է՝ երանի տղա լինի: Նա շարունակում է լացել մեղք ու կրակ Բելգիայի համար: Գիշերը քնելուց առաջ

կինը գնում է պատշգամբ ու նայում Ամերիկայի կողմը, որտեղ ապրում է ընկերուհին: Դարձյալ սիրտը մղկտում է խեղճ Ամերիկայի համար: Շարունակվում է հայապատկեր պատումը: Կինը հայացքն ուղղում է դեպի Ռուսաստան, դեպի Լեհաստան... Ապա ներս է գալիս ու ամուսնուն աչքալուսանք տալիս, որ իրենց տղան տղա է ունենալու: Եվ երկուսով խմում են աշխարհի կենացը, մինչդեռ կինը տեսիլքների երկնակամարում որդիներին է տեսնում, շոյում թոռներին, ուշագնաց լինում, սրտաճաք անում ամուսնուն: Հարևանները հասնում և ուշքի են բերում կնոջը՝ Անահիտ դիցուհու անունով:

Պատումի վերջում Միլիտոնյանը կատարում է նովելային այնպիսի մի ընդհանրացում, որ արցունքներ է բերում ընթերցողի սրտից:

Պատումն ավարտելուց հետո արցունքներդ մի կերպ խեղդելով՝ շնջում ես հայ ժողովրդի ծանր ճակատագրի լեզենդը ու ավելացնում՝ բաժանումի ու կորստի ցավը քիչ էր, հիմա էլ ավելացավ Հայկ նահապետի թոռ Առան նահապետի պաշտպանած Արցախի կորուստը: Աստվա՜ծ իմ, ինչպե՞ս ենք դիմանում կորուստների այս ցավին: Միաժամանակ հարցնում ես՝ «Ո՞վ է մեղավոր...»: Պատասխանը ելնում է հոգուդ խորքից. մեղավորը մեր անպատասխանատու ղեկավար տղերքն են՝ ուրիշ ոչ մեկը: Ապա սրտապնդելով ինքդ քեզ՝ արտաբերում ես Մեծն Համո Սահյանի տողը. «Թող Աստված եղածը պահի»:

Էդ. Միլիտոնյան գրողի մտածողությունը տիպիկ հայկական է՝ ճշմարիտ-սրտամոտ, ազգաբնույթ-կծու, սակայն ի վերջո՝ խիզախ-ազգապահպան, ինքնադատափետող-լավատես, դժգոհ-գալիքամետ: Փոքրածավալ մի պատմվածք, խորքով՝ անհուն, տողատակ՝ երգիծանքի գորելեն, միտումով՝ ինքնամաքրող: Ճիշտն ասած, Երևանի Հանրապետական հրապարակում Լենինի արձանի տեղափոխման կամ ոչնչացման մասին քիչ գործեր չեն գրվել, սակայն Էդվարդի «Ինչ դնել Հանրապետության հրապարակում Լենինի արձանի տեղը» հումորեսկը միակն է թեմայի արծարծման հարուստ կուտակումներում: Հեղինակը մի կողմից հպարտությամբ մատնանշում է մեր պատմության հերոսական, պատվաբեր էջերը, ազգանվեր գործիչների սրբագործված անունները, մյուս կողմից՝ ազնվորեն բացում այն դավթարը, որը հյուսված է նախանձի թելադրանքով ու ինքնաժխտման հոլովությամբ:

Պատումի հենց սկզբնամասում շառաչում է Միլիտոնյան-գեղագետի խոսքի մտրակը: Երբ ճարտարապետներից մեկը ներկայացնում է Հաղթակամար որպես մեր բոլոր հաղթանակների խորհրդանիշ, քննարկման ժամանակ հանձնաժողովի մի անդամ ասում է. «Լավ չէ՞ր լինի պարտությունների հուշակամար լինել, որ մեր սխալներից մի բան սովորենք, թե չէ կրկնում ենք հռոմեացիներին, ֆրանսիացիներին, ռուսներին» (էջ 38): Հեղինակի հումորախառն ակնարկը հասկանալի է:

Քննարկումը շարունակվում է: Մերժվում է Սասունցի Դավթի, Տիգրան Մեծի հուշարձանների տեղադրման առաջարկը: Քննարկման վերջում միջահասակ մի ճարտարապետ, որ հայտնի էր կծու լեզվով, մրթմրթում է. «Էսքան հուշակոթող, հաղթակամար և օբեկիսկ ու արձան, որ առաջարկել են, չեն ամաչո՞ւմ, մի բան

մտածեին, ասենք՝ մեր հին ֆալլոսներից մեկը դնեին, ու վերջ, կամ եթե ավելի ճիշտն էք ուզում, խնդրեմ. խորովածի շիշ, ուղիղ դնենք, սուր ծայրը՝ երկինք, բռնակը՝ հավերժական կրակից վերև, շշին մսակտորների նման շարված մեր բոլոր թագավորությունները, որ ախորժակով կերան հարևան քոչվոր ցեղերը» (էջ 39):

Այդպես առաջարկելով ու մերժելով բոլոր լուրջ ու ինքնամերժող նախագծերը՝ հանձնաժողովը ցրվում է: Ինչպես նկատում է հեղինակը, «Լենինի արձանի տեղում խոտ է աճում: Կառավարական, պետական վարչական շենքերը մեկ-մեկ վերածվում են հյուրանոցների, ռեստորանների» (էջ 39):

Սրամիտների հումորախառն առաջարկներով և հեղինակի ճշմարիտ ու ազգապատկեր ընդհանրացումով չի ավարտվում պատմվածքը: Շարունակվում է գրողի քննադատական խոսքը մեր իսկ անլուրջ մտածելակերպի նկատմամբ: Բերենք պատմվածքի ընդհանրացումը. «Մեր այն կծու ճարտարապետը մի քիչ ծերացել է, բայց էլի նույն ոգով մրթմրթում է. «Է, ճիշտ չէի՞ ասում, Լենինի տեղը խորովածի շիշ դնեինք... Հիշտ է թե սխալ՝ ապագան կորոշի» (էջ 39):

Պատահում է՝ կարդում ես Միլիտոնյանի որևէ ստեղծագործության վերնագիրը, թվում է, թե հեղինակն ընտրել է դժվարամարս կամ կյանքի հետ կապ չունեցող թեմա: Մինչդեռ ըմբռնվելով՝ համոզվում ես, որ նրա ընկալումներում մարդկային կյանքի խաչմերուկված շերտերն են, ողջունում ես, որ նրա գրական երկերի հիմնական օբյեկտը մարդն է: Այսպես, «Արեգակնային համակարգ» մեկ էջանոց պատումի մեջ արծարծված է կենսափիլիսոփայական մի այնպիսի հիմնախնդիր, որ հաճախ լուսաբանվում է ծավալուն երկի սահմաններում: Ընթերցում ես պատումի մուտքը Արևի և մարդկանց փոխհարաբերության մասին, որտեղ ընդգծված է. մարդկանց «ստվերներով իր տեղն ու ձևը ճշտելու» (էջ 40) միտումը: Եվ Արևը «այդպես հանդուրժում է Երկիր կոչվածին: Ու էլի մի քանի այլ մոլորակների» (էջ 41):

Իսկ ինչո՞ւ է հանդուրժում: Համոզիչ պատասխանը տալիս է հեղինակը՝ «Գուցե և չընկալելով, որ ինքն էլ կախված է նրանցից, և բոլորն իր մեջ փնտրում են սև բծեր ու ստվերներ» (Նույն տեղում): Մինչդեռ գիտական հայտնի այս թեզն ընթերցողին անմիջապես ուղեկցում է դեպի կյանք, որտեղ «Արեգակնային համակարգության նկարիչը լույս ու ստվերի արտահայտման դասին չգիտի որն է առավել կարևորը՝ լո՞ւյսը, թե՞ ստվերը»: «Բոլորը միասին,- մի օր բղավեց նա: ... Ու նրա ձայնից խլացած՝ մի այլ համակարգություն վեր թռավ ու դժգոհեց. - Չի թողնում քնենք այդ մողեռնիստը» (էջ 40): Եվ ի՞նչ: Մի՞թե գրողի միտումը հենց այդ դժգոհությունն է: Իհարկե՝ ոչ: Գրողը քայլ է քայլում դեպի կյանք, ուր ժամանակի տեսադաշտում հանդես են գալիս կյանքին ոչինչ չբերող արվեստագետներ, որոնք խոսում են ո՛չ լույսի, ո՛չ ստվերի մասին, ոչ էլ անգամ «բոլորը միասին»: Հենց նման արվեստագետներն են, որ քարանձավի նման խոյանում են իրենց մեջ և անասելի մի բան հայտնաբերած՝ անունը դնում են նոր համակարգություն, որը դեռևս ծանոթ չէ հորինողներին: Ցավոք, նմանների երթը շարունակվում է առայսօր:

Մենք համոզված ենք, որ եթե Էդվարդ Միլիտոնյանին հարցնենք, թե ով է նրա նախընտրած վարպետ դասականը, նա անպայմանորեն կնշի մի շարք

համաշխարհային դասականների անուններ, բայց վերջում կբարձրաձայնի՝ Չեխով: Եվ դա ոչ թե ինքնության ժխտում է, այլ այն ճշմարտությունը, որ ժամանակին արժևորել է Հովհաննես Թումանյանը ռուս հայտնի արվեստաբան Յուրի Վեսելովսկուն տված պատասխանի մեջ, որտեղ նա Պուշկինին ու Լերմոնտովին համարել է իր ուսուցիչները, որոնցից սովորել է ժողովրդական կյանքի պատկերման կարևորությունը, միաժամանակ նշել ազդեցությունից շուտ ձերբագատվելու ճգտումը: Չմոռանանք, որ ժամանակին Ստեփան Զորյանը Չեխովին համարել է իր մեծ ուսուցիչը:

Այս մտորումների հետքերով գնում ես դեպի Միլիտոնյանի «Արմենակի ծոցատետրը» պատմվածքը, կարդում հաճույքով, սեղմում գլխավոր հերոսի՝ Արմենակի ձեռքը ու կամա-ակամա շնջում՝ Արմենակն էլ մեր չեխովյան Ակակի Ակակիինիչն է, բայց՝ հայկական բնավորությամբ, միջավայրով Քնարիկի, Պողոսի, Աղասու, Անդոյի, Մինասի հայաբնույթ ընկերներով:

Ամեն դեպքում Միլիտոնյանը ընթերցողին ներկայանում է լեզվառճական իր համակարգով, կերպավորման սեփական հմտությամբ:

Հայ գրականության գրեթե բոլոր մեծերը հանդես են եկել իրենց ճամփորդական նոթերով, հուշերով, ակնարկներով ու այնքան առինքնող և հետաքրքիր, որ դրանցով հարստացրել են և՛ իրենց ստեղծագործությունը, և՛ ազգային գրականությունը: Միլիտոնյանի «Վիտորիոն» հուշապատումը գեղարվեստական հնարանքներով մնայուն արժեք է: Նրանում մի կողմից ծանոթանում ես ժամանակի իրադարձություններին, գլխավոր կերպարի՝ բանաստեղծի հուզաշխարհին ու նպատակամղումներին, որոնք պատումի մեջ հասցված են գեղարվեստական մակարդակի: Երևանից Վիեննա, Վիեննայից Լայպցիգ՝ Գրոդնեի միջազգային համաժողովին մասնակցելու առիթով, նկարագրությունը ընթերցողի առջև բացում է մի աշխարհ Վիեննա հոլովույթով, որը Հռոմից հետո կարելի է համարել հրաշալիքների քաղաք ճարտարապետական կոթողներով ու դասական երաժշտության հոգեպարար ծփանքներով:

Ընդհանրության մեջ հուշապատումը վկայում է Էդ. Միլիտոնյանի գրական նրբանկատությունը, որը հատուկ է եղել մեր ժողովրդական հեքիաթ հորինողներին:

Վերջին տարիներին Հայաստանում թե Արցախում առանձին մտավորականներ ուշադրության կենտրոն են բերել Տոհմաճառի հոլովման անհրաժեշտությունը: Եվ դա լավ է, քանի որ քաղաքակիրթ մի շարք երկրներում արդեն ստեղծել են ոչ միայն մարդկանց սեփական, այլև ազգային տոհմաճառը: Գրում են, որ այդ տեսակետից օրինակելի է Անգլիան:

Ուշադիր կարդալով Էդ. Միլիտոնյանի «Հիշողության հուշապատում» տոհմաճառը՝ չեմ թաքցնում, գերագույն հաճույքի զգացումը ոչ միայն շոյեց սիրտս, այլև մտքով տեղափոխվեցի Հաղբուրթի շրջանի իմ ծննդավայր Ակնաղբյուր գյուղը: Էդվարդի հուշապատումի երանգները այնքան շոշափելի, խորաբմատ ու հայկական են, որ որոշեցի անմիջապես զանգել իրեն գոհունակությունս հայտնելու, միաժամանակ ընդգծելու. «Էդվարդ, եթե քո հուշապատումի հարազատ հերոսների

անունները փոխեմ ու գրեմ մեր ընտանիքի ներկայացուցիչների անունները, կստացվի իմ հիշողության տոհմածառը: Եվ պիտի մատնանշեի, թե այս ի՞նչ ժողովուրդ ենք, Աստված, մեր բոլորի արմատները մեկ, տենչերը մեկ, կենցաղը մեկ, ցավը մեկ, հույսը՝ մեկ»: Նաև պիտի ասեի՝ «Էդիկ ջան, Հայրենական մեծ պատերազմը որ սկսվեց, ես 11 տարեկան էի: Այն բոլոր անցուդարձերը, որ դու նկարագրում ես քո հուշապատումի մեջ, ես ապրել եմ անձամբ: Ավագ եղբայրս՝ մանկավարժ-բանաստեղծ Սուրեն Խանյանը, 19 տարեկանում մեկնեց պատերազմ, չվերադարձավ, նրա «սև թուղթն» ստացանք, հորեղբորս տղաները՝ Սերյոժան, Կոլյան, Մեխակը, չվերադարձան... Սուգ ու լաց էր գյուղի բոլոր տներում: Էդիկ ջան, փոքրիկ մի գյուղ, որ ուներ ընդամենը 300 շունչ, 120 հոգի զինվորագրվեցին այդ ահեղ պատերազմին: 120 հոգուց 66-ը չվերադարձան: Բնչո՞ւ անսպասելիորեն իմ այս հուշը բերեցի քո պատմվածքի վերլուծության մեջ: Որպեսզի քո երկի ընթերցողը կրկին ու կրկին ձեռքը դնի կրծքին ու շնչաւ մի անտիկյան փոքրաթիվ ազգ ենք՝ արմատները մեկ, տենչերը մեկ, կենցաղը մեկ, ցավը մեկ, հույսը՝ մեկ»:

Հիրավի, Միլիտոնյանի այս հուշապատումը լայնահուն ու բազմաշերտ գործ է, որի հասարակական արժեքն անմիջական է իր ճանաչողական, դաստիարակչական ու գեղագիտական առումներով: Նախ, տեղին ներկայացնելով, որ գոյություն ունեն անհատական, ընտանեկան, տոհմային և ազգային ու համայն մարդկության հուշեր, հեղինակը նշում է, որ իր համար առիթնալի են մոր, ապա ավագ եղբոր հուշերը, քանզի նրանց պատմածները մերվել են իր հոգուն, ու թվում է՝ ինքն է ապրել այդ ամենը՝ իր ծննդից առաջ:

Վերը նշեցինք, որ Մեծ հայրենականի ծանր օրերի ականատեսն ու կրողը եղել է նաև իմ սերունդը: Միլիտոնյանի գրքում նկարագրված բոլոր դեմքերը, անցքերը, հերոսները եղել են իմ ժամանակակիցները: Էդիկի Միրանույշ մորաքույրը իմ Արուսյակ մորաքույրն է, որ առաջին անգամ մայրս 1942-ին այցելել է Բաքու՝ խուրճինի մեջ պանիր, յուղ, սիսեռ, լոբի և այլ մթերքներ: Արուսյակը մորս ավագ քույրն էր, բայց միշտ լսում էր մորս: Արուսյակ մորքուրս նույնպես ծոխ պես փոքրիկ էր ու միշտ կոկիկ: Ուներ երեք աղջիկ՝ Էմման, Օլյան, Վերան: Ամառները միշտ գալիս էին մեր գյուղը, մեր տունը լցվում էր հայաջերմ ծիծաղով, ուրախությամբ, ցնծությամբ: Տանը ավագ քույրս էր՝ Օլյան, ես էի, կրտսեր եղբայրս էր՝ Արտաշեսը և փոքրիկ քույրս՝ Գրետան: Ճիշտ է, պատերազմ էր, ավագ եղբորիցս լուր չկար, մորս աչքերում թախծի հետքեր էին... Մորաքրոջս աղջիկները և մենք ձգտում էինք փարատել մորս թախիծը: Ե՛վ ստացվում էր, և՛ չէր ստացվում:

1941-1942թթ. մեր գյուղում ևս հացը պակաս էր: Գիշերվա կեսին մեր մայրերի, ավագ քույրերի հետ գնում էինք շրջկենտրոն, հերթի կանգնում ու մի կերպ ամենքս մի բուխանկա առած, վերադառնում գյուղ: Ուրախությունից պարում էինք, ոնց Էդիկի Հայկո մայրն է պարել հացի հերթում:

Էդիկի ավագ եղբոր գլխովը եկածը ես եմ կրել: Այդ նույն թոնրատանը երդիկից իջած լույսը մեր հարազատ գյուղում էր: Այդ ես էի, որ հորեղբորս աղջկա՝ Թամարայի հետ գյուղական դեսից-դենից տանում էինք հարևան գյուղ՝ տատիկիս քրոջ համար:

Ճանապարհին մի կերպ գայլերից փրկվել ենք:

Ես, ինչպես Ռազմիկը, հաճախակի էի գնում աղբեջանական շրջկենտրոն Ֆիզուլի, որտեղ վարսավիր Գրիշա քեռիս էր աշխատում: Այնտեղ, քեռուս արհեստանոցում թուրքեր էին գալիս, ածիլվում, գլուխները քաչալացնում: Քեռիս հումորով ձեռ էր առնում նրանց և ասում. «Մի ամբողջ տարի որ գլուխներդ չլվանաք, էլ ոջիլ չի լինելու»:

Միլիտոնյանի մոր և հոր փոխհարաբերություններն ասես իմ ծնողներինն են: Հյուսն հայրս 60-ին մոտ էր, բանակ չտարան: Մայրս ասում էր՝ շատ պիտի աշխատենք, որ պատերազմ մեկնած մեր հարազատների երեխաներին օգնենք, սոված չմնան:

Այն գերմանացի գերին, որին հանդիպել է Ռազմիկը, ես հանդիպել եմ մեր Հաղորթ շրջկենտրոնում: Անցնում էի մոտով, նա ծխախոտ խնդրեց, ես չէի ծխում: Խղճացի, թեկուզ կասկածում էի՝ գուցե հենց նա է կրակել եղբորս վրա:

Ընթերցողի համբերությունը չչարաշահենք: Միայն շեշտենք, որ Էդվարդ Միլիտոնյանն իր «Հիշողության տոհմածառ» երկով մանրակերտել է Հայրենական մեծ պատերազմի ահավոր տարիները, որում ներկայացված հերոսները ես եմ, դու ես, նա է, մենք ենք՝ ազգովի: Եվ ոչ միայն այդ: Մեր Էդիկը իսկ և իսկ իմաստասեր է: Ապա լսենք նրա փիլիսոփայական խորհուրդները. «Շունը շան միս պիտի չուտի, թե սովորեն իրար միս ուտելուն, կանցնեն մարդկանց» (էջ 68): «Գետնին ընկած հացը վերցրու, համբուրի ու դիր բարձր տեղ, թռչունների համար» (էջ 70): «Հարձակվող, ուժեղ երկրները տխուր երգեր չունեն» (էջ 72):

Հա՛, խոսքս չերկարացնեմ, ուղղակի դիմեմ ընթերցողին. «Եթե կարդաք Էդվարդ Միլիտոնյանի սույն հուշապատումը, ինքներդ տեսնելու եք ձեզ, ձեր անցած ճանապարհը, ձեր անցնելիք ուղին»: Իսկական գեղարվեստական երկի արժեքը հենց այդ երևույթի մեջ է:

Էդվարդ Միլիտոնյանի հուշապատումները դարաբնույթ ու դարապատկեր հյուսվածքներ են: Խոսքը խորհրդային տարիների բնութագրական էությունը ներկայացնող երկերի մասին է: Նշենք, որ խորհրդահայ գրականության ստեղծման ողջ ընթացքում սովետական կարգերը պատկերացվել են որպես ժողովուրդների երջանկության հավերժական հասարակական կացութաձև: Սոցիալիստական շինծու ռեալիզմը հնարավորություն ընձեռեց գրողներին կյանքը պատկերել որպես երջանկաբեր նվեր: Հասարակարգի որոշ թերություններ կարելի էր քննադատել, սակայն սոցիալիստական համակարգը վերջ ի վերջո պետք է հաստատվեր որպես կոմունիզմ տանող նախահիմք: Չէ՞ որ սոցիալիստական ռեալիզմը հաստատող մեթոդ է համարվել:

Սովետական կարգերի փլուզումից հետո առանձին սովետական նախկին գրողները, այդ թվում և հայ գեղագետները ստեղծեցին երկեր քննադատական երանգներով: Առանձնապես ընդգծենք Գ. Մահարու, Մ. Արմենի և այլոց երկերը սիբիրյան անմարդկային կյանքի մասին: Էդ. Միլիտոնյանի «Հավաքնի պատուհանը» պատմվածքը սովետական համակեցության ճշմարտացի պատկերման հիանալի

օրինակ է: Տաղանդավոր գրողի անմիջական խոսքի միջոցով ընթերցողի աչքերի առջև շոշափելի պատկերավորությամբ երևում են այն անմարդկային օրենքները, որոնց պատճառով էլ հենց փլուզվեց սովետիզմը: Քաղաքացին, որ ուզում էր հավաքուն սարքել փոքրիկ պատուհանով, ներկայանում է ֆինբաժնի գործակալը և հոխորտում մասնավոր աշխատանքն արգելելու անվան տակ: Ինչպես գրում է հեղինակը. «Մարի թաղի տղամարդիկ հիմնականում արհեստավոր էին՝ հյուսն, կոշկակար, դերձակ, մետաղե մահճակալ սարքող...»:

Աշխարհի տարբեր երկրներից հայրենադարձները բացի այս արհեստներից պատրաստում էին բաստուրմա ու սուջուխ: Նրանցից տեղացիները շատ բան էին սովորում, հիմնականում՝ արտասահմանից բերած որակով ու խղճով աշխատելու վարպետությունը:

Այս ֆինբաժնի գործակալն ահ ու սարսափ էր տարածում, նա իր պապկայի միջից ինչ-որ կնիքներով կնքած թղթեր էր հանում, ստիպում ստորագրել ու սպառնում Սիբիր քշել:

Արհեստավորների մի մասը թքում էր ու թողնում աշխատելը, մյուս մասը գիշերն էր գործում: Մի քանիսը քթի տակ մրթմրթում էին. «Ախպար, այս ո՞ր եկանք: Աշխատելու համար Սիբիր քշե՞ն»:

...Նրանք սարսափում էին «Սիբիր» անունից, նրանց թվում էր՝ այնտեղ գորշ արջերը սպասում են հայրենադարձ արհեստավորներին (էջ 79-90):

Էդ. Միլիտոնյանը պատումի մեջ ռեալիստական գույներով քննադատում է սովետական անմարդկային օրենքները՝ աշխատավորության անունից ուղղված հենց աշխատասեր աշխատավորության դեմ:

Բանը հասնում է նրան, որ ֆինբաժնի գործակալը վերցնում է հավաքնի համար պատրաստված պատուհանը և դեմ տալիս տիրոջ դռնին ու հոխորտում. «Ուրեմն դու բանի տեղ չե՞ս դնում պետությանը, շարունակում ես տանը գործ անել» (էջ 80): Ապա ավելացնում է. «Մա կահույք է, սա հանցանք է, ինձ ե՞ս ձեռ առնում»:

Ահա այն հակաժողովրդական-անիմաստ օրենքը, որ ժամանակին իրա-գործվել է աշխատավոր արհեստավորների դեմ:

Բովանդակալից երգիծանքի խոսուն օրինակ է «Համարակալում և հաշվառում» պատմվածքը: Ինչպես ներկայացնում է հեղինակը, երկար ժամանակ համարակալում և հաշվառում ծառայությունների ղեկավարներն ու աշխատակիցները քաղաքի պատերի տակ կամ այլուր վիճում էին, թե որի ծառայության գործունե-ությունն է առավել կարևոր պետության ու ժողովրդի կյանքում: Ու ելնելով այդ երկրակործան գործառնությունից՝ Միլիտոնյանը իրեն հատուկ սրամտությամբ խարազանում է այդ երևույթը՝ բերելով այնպիսի շրջաբերականներ, որ կարող է արարել միայն ծիծաղի վարպետ հեղինակը: Թիվ 1 շրջաբերականը հայտարարում է. «Երկրի մարդահամարն ավելի առարկայական ու մանրամասն կատարելու համար աջ ու ձախ ոտքերի կոշիկների համարները տարբերակված մակնշել: Ներառյալ մանկահասակ երեխաների փափուճները» (էջ 84):

Թիվ 2 շրջաբերականը զգուշացնում է. «Երկրի բնապահպանական վիճակի

ճշմարիտ պատկերը գրանցելու համար հաշվառել կենդանիների ու մարդկանց (մինչև սույն թվականի դեկտեմբերի 31-ը՝ միայն երկոտանիների քթերի վրայի ու քթանցքների մազերը» (էջ 86): Ապա թիվ 98 շրջաբերականը.

«Երկրի խաղաղ գիշերային հանգիստն ապահովելու նպատակով հաշվառել և համարակալել մարդկանց երազները: Ցերեկային երազները հաշվառել և համարակալել միայն մասնավոր դեպքերում, եթե քնածը գիշերային հերթափոխի աշխատող է և մեկ էլ, եթե երազողը ծանր անկողնային հիվանդ է» (էջ 87):

Եվ հետևանքն այն եղավ, որ ինչպես եզրակացնում է հեղինակը, երկրում իրարանցում ընկավ, մարդիկ դժվարությամբ էին թույլ տալիս հաշվառողներին մուտք գործել իրենց երազների գորշ ու մասամբ գունավոր աշխարհը: Հաշվառողները բաց չթողեցին ոչ մի երազ, անգամ եթե նրա տերը չգո էր: Եվ ինչ: Երկրի սոցիոլոգը, որ նաև հոգեբան էր, եզրակացրեց՝ երազողների մեծ տոկոսը դավաճան է, փոքր տոկոսը՝ մեռած, իսկ ավելի քիչ տոկոսը՝ երջանիկ:

Պատումը շարունակվում է: Սովետական երկրում իրականացվող ՀՀՕ (Հաշվառման ու համարակալման ծառայություն) գործունեությունը ծավալվում է նաև Հայաստանում: Եվ սոցիոլոգ հոգեբանը, հիշելով մեր էպոսի հերոս Սասունցի Դավիթին, նրա երազը, եզրակացնում է. «Մեր շատ տղաների երազներ գալիս են Սասնա ծռերից, կրում են հզոր լիցք, և հենց դա պիտի արտահանել» (էջ 89):

Փոքրածավալ մի պատմվածք, որը խտացված պատկերներով ներկայացնում է մի ամբողջ դարաշրջանի խոցելի կողմերը:

Երգիծանքի թարմ ու ինքնատիպ պատում է «Մի բան կա, որը չի վաճառվում» պատմվածքը: Նրանում շոշափված է մեր ժամանակներում ազգային շահերի պաշտպանության, հպարտության, արժանապատվության գգացումի կորուստը հանուն արծաթի ու ոսկու, «հայ» բառի փոփոխումը «փայ» բառով և այդպես շարունակ:

Հեղինակը, բերելով «Որտեղ հաց, այնտեղ կաց» ասույթը, հումորի ամենախոցող ուժգնությամբ արժանանում է, որ «գաղափար» բառն արդեն գրում են «փարագաղ»: Ասպիրանտները, մագիստրոսները, բանասիրական գիտությունների թեկնածուները հպարտ, մարտական կեցվածքով բարձրաձայնում են, որ իրենք փարագաղական ասպարեզի գիտնականներ են:

Եվ ոչ միայն այդ: Որոշում են «հեղափոխություն» բառը կարդալ «հեղափողություն»:

Պատումն այնքան է հագեցած սրամիտ, երգիծանքով համեմված օրինակներով, որ դժվար է այդ ամենը ներառել մի գրախոսականում: Միայն ավելացնենք, որ հեղինակի ծիծաղը, կատակը, ինքնահեգնանքը փայլում են ծիծառնի նրբերանգներով, որոնք ափամեջ են դնում մերօրյա արատավոր կողմերը հանուն ազգային կյանքի առողջացման:

Էդ. Միլիտոնյանի արձակին հատուկ է կոմպոզիցիոն ձևերի բազմազանությունը: Գիրքն ընթերցելիս երբեք պատումների նման մուտքերի չես հանդիպում: Ասես բացում ես ծաղկանոցների նոր դռներ՝ ճաշակով ու հայամուտք նախշերով: Իմ այս դիտարկումը ինձ հուշեց «Սանասարի մոմը» պատմվածքը, որի սկզբնամասը

ձեռքիցդ բռնած տանում է մի աշխարհ, որը քո առջև բացում է հայաշունչ-հայապատկեր-սրտապարար այն միջավայրը, որտեղ հասակ ես առել, շփվել հարազատներիդ հետ, ճանաչել այն մարդկանց, ում շնորհիվ մեր կյանքը ստացել է ազգային իր դիմագիծը՝ նահապետական-մերօրյա-գալիքամետ:

Ո՞վ է Սանասարը, որի վառած մոմը իր հմայքով հրավիրել է Միլիտոնյան-գեղագետին՝ տաքացնելու ոչ միայն մատները, այլև սիրտը, հոգին: Կարդանք ու լսենք հենց իրեն՝ Էդվարդին. «Աշխարհում ամեն մարդ ունի «կյանք» կոչված իր բանաձևը, իհարկե, երբեմն որոշ սրբագրումների է ենթարկվում բանաձևը՝ կախված կյանքի փոփոխական եղանակի անակնկալների հետ: Կա մարդ, որ երբեք չի ծոմոել իր գնահատականը, այսինքն՝ լրջորեն չի էլ մտածել ինչ է ասում, ինչի համար, երբեք չի կարևորել, ուղղակի ասում է այն, ինչ մտածում է: Այդպիսիներից է Սանասար մարդը: Նա միշտ ասել է. «Կյանքը էս է» (էջ 103):

Այս մուտքից հետո Միլիտոնյանն ընտրում է իր հերոսի դիմանկարի կերտման միջոցը: Եվ ընթերցողն զգուշանում է՝ եթե փորձի մանրամասնել, Սանասարը կհայիոյի շատ թունդ, որովհետև նա իր և՛ հարգանքը, և՛ սերը մարդկանց հանդեպ համեմունք է հայիոյանքով, ու նրա հայիոյանքը հասցեական է. մի մասը՝ կյանքին, մյուսը՝ գրուցակցին, ով էլ լինի՝ կին, տղա, հարս, հարևան կամ անծանոթ: Նա չի հայ-հոյում միայն աշխատավայրի կանանց մոտ, տղամարդ պաշտոնակիցներին սիրով է նախշում, խնայում է միայն պետին, ոչ թե վախենում է, ուղղակի զսպում է փողկապը, պետն էլ է միշտ փողկապով:

Սանասարն անցնում է թռչակի, բայց նրան մի կես դրույքով պահում են որպես հարգանքի նշան:

Եվ ոչ միայն այդ: Ինչպես գրում է հեղինակը. «Գործատեղի երրորդ հարկի սրահի պատին կից դրված է հիշատակի հուշարձան՝ Արմեն Սանասարի Աբելյան (1972-1994): Սանասարի որդին աշխատել է նույն հիմնարկում և 1994 թվականին զոհվել Հայաստանի սահմանամերձ գյուղի պաշտպանության դիրքում» (էջ 103):

Այս դիմանկարային մուտքից հետո Միլիտոնյանը ներկայանում է ոչ միայն որպես նրբանկատ գրող, այլև ժողովրդի ցավը, վիշտը սրտի մեջ կրող օրինակելի որդի: Ու թախծի, միաժամանակ սփոփանքի ներկայանակի երանգներով ներկայացնում է իր գրական հերոսին. «Սանասարը ճանաչում է բազում զոհվածների ծնողներին ու այրիներին: Նա Եռաբլուրի ծնողկոմիտեի անդամ է. «Որ ճիշտն ասեմ՝ փոխել եմ իմ հերոսի անուն, հայրանուն, ազգանունը, նաև՝ նրա զոհված որդու անունը: Սակայն ով կարդա այս պատմվածքը, գուցե ճանաչի ճշմարիտ հերոսին, որովհետև նրա մասին ֆիլմ կա, կան հաղորդումներ, հոդվածներ, նամանավանդ Եռաբլուր այցելող յուրաքանչյուր ոք մշտապես տեսնում է ճաղատ, փութաջան, փողկապով, կեսժպիտ-կեսհարգանք շուրթերի եզրին, ծերացած մարդուն» (էջ 103-104):

Հայ տառապած ու փառապանծ հայրերի խտացված կերպար է Սանասարը: Պատմվածքը կարդալիս ես Սանասարի կերպարով տեսնում էի իմ Պետրոս քեռուն, որ գյուղի սրամիտ, աշխատասեր, օրինակելի տղամարդկանցից մեկն էր: Զրուցակիցների հետ խոսքը համեմունք էր հայիոյանքով: Ոչ ոք չէր դժգոհում, որովհետև նրան գիտեին

որպես արժանապատիվ հայ, նվիրյալ հայր, ծանրակշիռ ամուսին, որովհետև երբ խոսք էր բացվում Մեծ հայրենականում զոհված համագյուղացիների մասին, առաջին հերթին արտաբերում էին նրա 6 որդիների անունները, որոնք իրենց գլուխներն են դրել հիտլերյան ֆաշիզմի դեմ մղված պայքարի զոհասեղանին ու փոքրիկ գյուղի 66 զոհյալների հիշատակին կառուցած հուշարձանին փորագրված անունների շարքում իմ Պետրոս քեռու զոհված տղաների անուններն են՝ Գրիգորյան ազգանվամբ:

Կարդալով Միլիտոնյանի սույն պատմվածքը՝ հանձին Սանասարի, ես տեսնում եմ իմ Պետրոս քեռուն: Իսկ երբ պատմվածքը կարդացել էր հարևան գյուղի իմ դասընկեր, քիմիայի ուսուցիչ Սանթրիկը, աչքերը ջրակալած ասաց՝ Միլիտոնյանի Սանասարը իմ հորեղբայր Ալեքսանն է:

Այս նշանակում է, որ Էդ. Միլիտոնյանը Սանասարի կերպարով ներկայացրել է բոլոր այն հայերին, որոնցից յուրաքանչյուրը մի Սանասար է: Իսկ այն ո՞ր հայն է, որ ամբողջ կյանքում չի աճեցրել ծառ ու ծաղիկ, ով իր տնամերձը չի դարձրել երկրային դրախտ, ով չի դժգոհել Աստծուց, որ ժայռոտ երկիր է նվիրել հայերին, միաժամանակ չի խաչակնքել ու շնորհակալություն հայտնել Աստծուն, որ հային նվիրել է իմաստության ծով խելք, արարող ձեռք, չիղզնող ուժ, անկոտրում կամք:

Պատմվածքում Սանասարը սարերի մարդ է, սարերի պես վեհ, սարերի պես աստղոտ: Հենց դրա շնորհիվ է, որ նա հարևանին ասում է. «Կտեսնես, մի երեք տարում այս չուր կծաղկի, մաքուր օդը կխփի քթիդ» (էջ 104): Ինչպես հաստատում է հեղինակը, այդպես էլ լինում է: Սանասարը տնկում է նաև տարաշխարհիկ ծառեր՝ արքայախնձոր, նաև հայեցի ծիրանիներ, թթենիներ, խնձորենիներ, տանձենիներ, պնդուկի թփեր և այլն: Ու հեղինակի պատկերավոր արտահայտմամբ «Դրախտի այգի եղավ, ու Սանասարի ճաղատն արդեն ծածկվում էր կանաչ սաղարթներով» (էջ 105):

Սանասարը թեպետ ունեցավ շաքարախտ, դիմեց բժիշկներին, սակայն հավատարիմ իր իսկ ընկալմանը, ուղղակի բարձրաձայնեց. «Բժիշկն ասաց՝ «Ջերմուկ քիչ խմի, ես էլ ջրի տեղ եղ անտերն եմ խմում, տո բժշկի մերն էլ, հերն էլ, է՛ս մի կեր, է՛ն մի խմի, բա ապրում եմ ինչի՞՞ համար, կյանքն էս է, պիտի խաղող էլ ուտեմ, թուր էլ, տանձ էլ, հլա պիտի թթի օղի էլ խմեմ, հարևան ջան, արի, Արցախից են ուղարկել, մի՛ մի բաժակ կոնծենք, բժշկի հերն էլ, մերն էլ» (էջ 106):

Համարձակորեն կարող ենք ասել, որ Միլիտոնյանը կերպար ստեղծելու արվեստում յուրացնելով դասականների փորձը, դարձել է մերօրյա վարպետներից մեկը: Միայն Սանասարի կերպարը հերիք է, որ հաստատվի մեր կարծիքը: Սանասարի կին ընտրելու պահը, որդիների ու հարսների մոտ իր բնավորության համաձայն «մերով» նախշելը, նաև հայրական ազնիվ խորհուրդները, իր օջախասիրությունը և այլ բարեմասնություններ զարդարում են նրա բազմաշերտ-գեղեցիկ հոգին:

Սանասարը, հակառակ իր կամքի, հիվանդանում է: Մնում էր ատամնաբույժ որդու՝ Վազգենի գնած խրուշչովյան երկու սենյականոց բնակարանում: Հարսն ու տղան՝ Վազգենը, հորդորում են, որ տեղափոխվի իր կառուցած տունը: Նա որդու թախանձանքին պատասխանում է. «Չէ, Վազգեն ջան, էս մերա... տեղում ինձ լավ եմ

զգում, վառարանը կփոխեն ու թթի արադս կլիմեն, ինձ էլ ոչ մի բան պետք չէ»։ Այս խոսքի վրա միջամտում է կինը.

«- Ա՛յ մարդ,- փորձեց համոզել Աիդան, բայց խոսքը կտրեց Սանասարը.

- Դու քեզ տեր կանգնիր, ես՝ հեչ, գնացեք, թե չէ պիտտալետս կհանեն» (էջ 107):

Կինն ու որդիները հաստատ գիտեին՝ գրպանումն է զենքը, որ ասաց՝ կանի ու կկրակի երկինք:

Սանասարն իր նախանձելի բնավորության մեջ ունի նաև սրամտելու կարողություն: Երբ որդին՝ Վազգենը, տեղի տալով հոր որոշմանը, ասում է. «Լավ, կգանգենք, հեռախոսը մոտդ պահի, բան լինի՝ շտապ գանգի», Սանասարը պատասխանում է. «Հա, որ մեռնեմ, կգանգեմ, ձեր մերը... Ուշ է, գնացեք» (էջ 108):

Սանասարը վայելում է հարևանների սերն ու հարգանքը: Նա ազգային արժանապատվությունն ամեն ինչից վեր է դասում: Ինչպես վկայում է գրողը, մի անգամ քիչ է մնացել, որ Սանասարը կրակի նոր թաղամասի բնակիչ Լենդրոշի վրա: Եվ ինչո՞ւ: Լենդրոշը, որ Բաքվից էր եկել, նոր ծանոթացել Սանասարի հետ և փորձել էր ներկայացնել իր կյանքի փառապանծ էջերը, երբ հասել է Ադրբեջանի՝ իրենց գյուղին մոտ, կառավարական տան հանգստյան տան այգեպան եղած իր կյանքի հատվածին, բերկրանքով հիշել է Հեյդար Ալիևին, որն այն ժամանակ Սովետական Ադրբեջանի կոմկուսի առաջին քարտուղարն էր, ասել է. «Ալիևն առավոտը զարթնում էր ու շատ էր սիրում իմ պահած այգին, ընկերաբար թփթփացնում էր ուսիս ու գովում՝ «Լենդրոշ, քեզնից լավ այգեպան չունենք» (էջ 109):

Լենդրոշը մեղմ ժպտալով, աչքերը պլպլացնելով պատմել էր այդ հուշը և երանությամբ նշել նրա թողած ազդեցությունը: Մեկ էլ Սանասարը վեր է թռել. «Ես քու մերը, ես քու եղած-չեղածը,-քրֆելը շարունակելով մտել է տնակ, դուրս եկել ատրճանակով ու պահել աթոռին քարացած Լենդրոշի ճակատին,- էլի կպատմե՞ս էդ էշությունը, տո դու մոռացել ե՞ս ոնց են քեզ դուրս գցել քո այգուց, շուն-շանորդի, էլ ինձ չպատմես, քո մերը...» (էջ 109):

Լենդրոշը վեր է կացել, քթի տակ մրմնջալով ճողուպրել Սանասարի այգուց:

Սանասարը ազնվասիրտ է, բարի, նա չի հանդուրժում գողությունը, սիրում է կրկնել. «Ավելի լավ ա դու ունենաս՝ ուրիշը գողանա, ուրիշին տաս, քան դու գողանաս կամ մուրաս ուրիշից (էջ 109):

Սանասարը արդարամիտ է, թեպետ չի ըմբոստանում, պետականամետ է, բայց չի ընդունում պետական այրերի ոչ ժողովրդանպաստ որոշումները: Օրինակ, Սանասարի նոր այգին քաղաքապետարանը վաճառել է ու գնել է ինքը: Գումարը տվել է ավագ որդին: Մի օր Սանասարը տրտնջում է. «Տղես գոհվեց, որ իր պահած երկրի հողը ես փողով առնեմ, բա սա խիղճ է՞: Հըր քաղաքապետարանում մի բոգ ինձնից էնքան թուղթ պահանջեց, որ քիչ էր մնում լուսամուտից դուրս գցեմ, է՛հ, որ բողոքեի, մերը կշինեին, բայց ամոթ չի՞, որ ես բողոքեմ, ասի՝ ա՛յ լիրբ, չափդ ճանաչի, թե չէ... (էջ 110):

Սանասարը հոգատար մարդ է՝ հային հատուկ մարդասիրական զգացումներով: Նա հոր ու եղբոր հոգատարություն է ցուցաբերում խմիչքի սիրահար Ժորիկի ու նրա եղբոր՝ Սուրիկի հանդեպ:

Սանասարի կյանքը, նրա անցած ուղին օրինակելի հայ մարդու կենսագրություն է: Նա կիրթ է, որը զարդարվում է աշխատասիրությամբ, ընկերասիրությամբ, ազգային արժանապատվությամբ: Ժողովրդի մեջ տարածվում է հաճելի լուրն այն մասին, որ Սանասարի օրինած մոմը գորավոր է, որ նա կատարում էր հեռավից եկած պառավ հայուհիների խնդրանքը: Մի անգամ պառավ կանանցից մեկը խնդրել էր. «Օրհնի, որ բալես սաղ-սալամաթ հետ գա»: Այստեղ մոկտում է Սանասարի ցաված սիրտը: «Հա, քույրիկ ջան, թող ոչ մեկի երեխան չգոհվի,- ասաց Սանասարն ու պառավի չորուկ մատներից վերցնելով դեղին բարախիկ մոմը՝ մոտեցրեց անթրաշ դնչին ու մրմնջաց. «Անփորձանք»: Եվ հետո լռեց ու մոմը ետ տվեց:

Ու հաջորդ օրերին մոմ բերող մարդկանց թիվը կրկնապատկվեց, բազմապատկվեց: Ինչպես վկայում է գրողը՝ «Սանասարը չգիտեր հայիոյի՞, թե՞ օրհնի: Հայիոյում էր իրեն սուրբ հռչակածներին, օրհնում էր բանակում ծառայողների համար բերած մոմերը, նաև հիվանդների բուժման համար մոմերը...» (էջ 119):

Օրերն անցնում էին սանասարավարի: Նա նստում է ճամփեզրի եզրաքարին, քորում է ճաղատ գլուխը, բարևում անցորդներին, երբեմն այդ տեղում օրհնում մոմերը, ու մենակ պահին սիրտն ուզում է մի լավ քրֆի, բայց միտքը քըրք կտրում է ուզածը, ու մտքի ծերով անցնում է. «Էս ա կյանքը, էս ա կյանքը: Ու վերջապես Սանասարը մոտորում է. «Սուրբ ըլնելը ծանր լուծ ա, բա՛» (էջ 121):

Ըմբռնվելով էդ. Միլիտոնյանի «Սանասարի մոմը» պատմվածքը՝ անմիջական հաճելի տպավորության տակ մոտորում ես. «Մեր ժողովուրդը երևի իր դժվարին ու վտանգված ճանապարհին Սանասարի նման հայորդիների շնորհիվ է հասել 21-րդ դարի վտանգված օրերին: Եվ էլի կապրի ազգը, քանզի դեռ ապրում ու գործում են մեր Սանասարները»: Այս մոտորումները ամենաբարձր գնահատականն են Էդվարդի ստեղծագործությանը:

Էդ. Միլիտոնյանի «Քարկապ» ժողովածուի պատմվածքների շարքն ավարտվում է երկու համառոտ գործերով՝ «Հոգետուն» և «Մյուռնոթիններն ու թվերի հեքիաթը» խորագրերով: Զուտ գիտական թեմաների սահմաններում, որոնց թեմատիկ-գաղափարական հիմքը ներկայացնում ենք ըստ հեղինակի. «Արարիչը ստեղծել է ավարտուն անսահմանություն: Մարդն ստեղծում է անավարտ անվերջություն: Աստված հավերժ է, մարդը՝ մահկանացու, և հենց այդպես են երկուսը լրացնում իրար» (էջ 129):

Արդարամիտ մի դիտարկում: Եթե ստացվի, որ Աստվածն ու Մարդը կարողանան լրացնել միմյանց, երևի իրարից կմնան գոհ, Աստված մշտապես կօրհնի Մարդուն, իսկ Մարդը կհասնի Աստծուն Գրիգոր Նարեկացու մաղթանքով: Բայց ավաղ, այդպես չէ: Կամ Աստվածն է անտարբեր Մարդու հանդեպ, կամ Մարդն է դառնում Աստվածամերժ, թե չէ՝ գնալով Մարդը չէր հակադրվի իր նմանին, ազգերը չէին զինվի՝ միմյանց ոչնչացնելու չարամտությամբ:

Էդ. Միլիտոնյանի արձակն իր դարապատկեր հյուսվածքով, գաղափարական հագեցվածությամբ, կյանքի լուսավոր ու ստվերոտ կողմերի նկարագրությամբ, հումորի ու երգիծանքի համոզիչ օգտագործմամբ, կոմպոզիցիոն ու սյուժետային ձևերի ու միջոցների բազմազանությամբ, լեզվառճական ինքնատիպությամբ նոր երևույթ է նորագույն շրջանի հայ գրականության գանձարանում:

ПРОЗА Э. МИЛИТОНЯНА - СОКРАТ ХАНЫАН - данной статье представляется проза известного поэта, детского писателя, неоднократного лауреата международных и отечественных литературных конкурсов, Эдварда Милитоняна. Отмечается, что повести знаменитого писателя, включенные в сборник «Теснина», отличаются идеологической насыщенностью, многообразностью композиционных форм, искусством создания образов, стилистическими особенностями. Проза Эдварда Милитоняна – новое явление в сокровищнице современной армянской литературы.

Ключевые слова: Эдвард Милитонян, поэзия, проза, сборник «Теснина», традиция, новаторство, самобытность, научно-художественный идеал, образность.

THE PROSE OF EDWARD MILITONYAN - SOKRAT KHANYAN-The present article discusses the prose of the well-known poet, children's writer, multiple laureate of international and local literary contests Edward Militonyan. It is stated that the novels of the well-known writer included in the collection "Gorge" are distinguished by ideological complexity, multiple imagery of compositional forms, artful creation of new images and stylistic features. The prose of Edward Militonyan is a new phenomenon in the thesaurus of Modern Armenian literature.

Key words: Edward Militonyan, poetry, prose, collection of novels "Gorge", tradition, innovation, originality, scientific and artistic ideal, imagery.

ЕЛЕНА ГРИГОРЯН

АННА БАЛАЯН

АРМЕНИЯ ГЛАЗАМИ СЕРГЕЯ ГОРОДЕЦКОГО И ВАСИЛИЯ ГРОССМАНА

*“Чем длинней история народа, тем больше в
ней войн, вторжений, скитаний, тем больше разнообразие лиц...”*

Василий Гроссман

В статье мы попытались представить Армению глазами таких русских писателей 20в., как Сергей Городецкий и Василий Гроссман. Были сделаны попытки проанализировать произведения этих двух писателей: «Добро вам!» Василия Гроссмана и «Ангел Армении» Сергея Городецкого, показать их типологические сходства.

Армения для писателей – не просто объект для наблюдения. Именно в Армении писатели видят каплю, отражающую океан. Через Армению они хотят и умеют сказать о мире.

Ключевые слова: *Армения, глубокие впечатления, образ, вершина лирики, будущая проза, читатель–армянин, литературный статус, печатная судьба, преображение, литературное достоинство.*

Армянская культура, в частности, литература, своей глубиной и тематическим разнообразием не оставили равнодушными большинство выдающихся русских писателей. Сплетение исторических судеб, близость мировосприятия, духовное притяжение, взаимоуважение, глубокая и искренняя симпатия... Пожалуй, именно так можно охарактеризовать те отношения, которые уже на протяжении многих веков связывают русский и армянский народы. Валерий Брюсов и Хачатур Абован, Сергей Городецкий и Ованес Туманян, Вера Звягинцева и Сильва Капутикян, Михаил Дудин и Левон Мкртчян, и многие другие российские и армянские писатели, поэты и художники внесли свой вклад в развитие диалога культур. Каждый из них ввел в русскую культуру собственный образ Армении – образ неповторимый.

Меняются времена, но неизменной остается духовная связь между русским и армянским народом, которая в первую очередь “устанавливается через литературу”. Несмотря на социальные катаклизмы, продолжается процесс духовной и культурной интеграции двух народов.

Упоминания об Армении встречаются в произведениях русских писателей на разных этапах, однако внимание к ней возрастает в начале 20 в. Неоценима в этом деле миссия поэта-переводчика Валерия Брюсова, издавшего в 1916 г. антологию “Поэзия Армении с древнейших времен до наших дней”.

С того времени об Армении написано множество научных и литературных произведений. Вспомнить всех, кто тепло, с любовью говорил и писал об Армении – попытка объять необъятное. Попытаемся представить вниманию читателя произведения Сергея Городецкого (“Ангел Армении”) и Василия Гроссмана (“Добро вам!”).

Писатели интересны нам, так как не схожи между собой. Факты, способные объединить различных авторов, относятся к внешним обстоятельствам их творчества и судеб. Эти две книги нельзя пречислить к определенному жанру. У Гроссмана “Добро вам!” – проза, изданная в Москве в 1967г. История публикации книги, как и многих гроссмановских произведений не проста. Книга “Добро вам!” по жанру и по стилю повествования сильно отличаются от других произведений автора. Лишь немногие критики, которые обратили внимание на публикацию, давали повести высокие оценки. И дело было не только в ее жанровом и стилевом своеобразии, но и в том, что это произведение, стоя особняком в творчестве Гроссмана, с точки зрения философского содержания тесно связано со всеми его значимыми литературными работами. При этом “Добро вам!” вписывается и в общий контекст русской литературы 20в, в которой тема Армении выделяется в отдельный небольшой блок. В сборнике не только путевые заметки об Армении, в нем есть еще несколько рассказов, которые дополняют сборник. Здесь Гроссман затрагивал острые и для его времени, и для эпохи перестройки, в которую состоялась первая полная публикация повести.

В книге “Добро вам!” по-новому раскрывается образ автора. Повествование не только автобиографично, но и автопсихологично. Главная мысль книги Гроссмана, присутствующая на каждой странице – мысль о единстве людей. Автор доказывает ее тем, что среди армян, русских, евреев встречаются лица, отличающиеся от привычного типа, присущего той или иной нации, и тем, что в самых разных уголках земли неожиданно возникают свои знакомые понятия, традиции, предметы.

В своей повести Гроссман, как нам кажется, сумел соединить “самовыражение” и оценку исторического опыта страны. Здесь мы имеем право выделить два плана повествования: внешний (поездка автора по Армении) и сюжет авторской мысли.

В книге “Добро вам” Гроссман рассказал о своих впечатлениях, о своем видении Армении – и не только ее. Это книга – размышление об увиденном и произошедшем. Например, он вдруг пишет: “Нет, они не религиозные люди, армяне. Я их не ощутил как верующих. Я видел людей, которые выполняют обряд. Я видел язычников, в чьих добрых сердцах жил Бог доброты ”.¹

Гроссман приехал в Армению как переводчик, целью которого было трудиться от зари до зари.

А Городецкий? Хотя об армянах и Армении он знал и раньше по своим предыдущим поездкам, преданным другом армянского народа он стал после знакомства с Ованесом Туманяном. Патриарх армянской поэзии говорил: “Вы – поэт. Поэзия- это и есть познание жизни. Иначе они не нужны. Вы увидите жизнь страшную, жизнь народа

¹ А. Бочаров. *Время собирать камни. “Малая проза” Василия Гроссмана// Вопросы литературы. 1989 г.*

на краю смерти. Напишите про то, что увидите, - это и будет поэзия".²

Под впечатлением увиденного и пережитого, Городецкий написал ряд произведений, объединенные в книгу "Ангел Армении". Она была посвящена Ованесу Туманяну.

Еще одним пунктом, объединяющим авторов, является перемена, случившаяся с ними: между теми, кто когда-то приезжал в Армению и писал о своем пребывании здесь, и теми, кого мы сегодня читаем.

Василий Гроссман приехал в Ереван в 1961г. не знаменитым писателем, а скромным переводчиком.

Сложной была печатная судьба книги "Добро вам!", которая после всяких перипетий появилась в журнале "Литературная Армения". Об истории этой публикации подробно рассказала Наталья Гончар.³

Решительные перемены произошли с именем и творчеством Сергея Городецкого. Впервые он побывал в Армении в 1916г. корреспондентом газеты "Русское слово". Он стал очевидцем погромов армянского населения, развернул деятельность по оказанию медицинской помощи беженцам, организации приютов для сирот.

Широкому читателю творчество Городецкого открыли статьи "Про Армяниан" и "Последний крик". А в статье "Карабах" он раскрыл значение края для Армении. У каждой страны, у каждой нации есть свои заветные твердыни. Когда судьба преследует нацию, они бывают оплотом национальной жизни, островом надежд, залогом возрождения. Будучи единым этнографически, хозяйственно и по языку, Карабах сделался цитаделью Армении, восточным ее флангом. Таким он был в прошлом, таков он сейчас, таким он будет и всегда, ибо сердце Армении, долину Арарата, нельзя защищать, не владея Карабахом. Скованный своей культурой и бытом, Карабах и в наши дни не посрамил своей старинной славы.

Таково значение Карабаха для Армении. Несомненно, если б она его утратила, идея самоопределения наций потерпела бы сильное ущемление. И, наоборот, обладая Карабахом, Армения получит богатый приток энергичной культурной силы.

Каждый народ ищет теперь свое. Все будущее возрожденных наций зависит от того, найдут ли они в самих себе достаточное количество, так сказать, дрожжей своей национальной культуры. При таких условиях все центры, где по тем или иным причинам сконцентрировалась культурная жизнь, приобретают исключительное значение. Таково же значение и Карабаха для Армении.⁴

И Гроссману, и Городецкому Армения, несомненно, пришлось по душе. У них множество страниц, передающих полноту чувств.

Именно прямота чувств притягивает читателя-армянина к тому или иному писателю. Мы чувствуем, что с нами не лукавят, и это избавляет нас от подозрительности. Отрицая или опровергая какую-либо конкретную мысль писателей, будем помнить, что

² И. Роднянская. Автор // Краткая литературная энциклопедия. 1970 г.

³ "Литературная Армения", 1989 г.

⁴ Газета "Закавказское слово", 23., 1919г

“неуместная” манера подтверждает, насколько серьезно относятся они к Армении.

Гроссман и Городецкий не смотрят на Армению глазами наблюдателя. Они пишут об Армении. Но у Гроссмана, например, описательный период не самооценен. Это не вещь в себе, а подступ к философскому выводу, касаемому и армянина, и русского, потому что книга Гроссмана “Добро вам” всякий раз по-новому утверждает истину.

Так, внешность армян сама собой подводит писателя к абзацу, напоминающему стихи: “Чем длиннее история народа, тем больше в ней войн, вторжений, скитаний, тем больше разнообразие лиц...”⁵

Именно в армянах и Армении писатель видит каплю, отражающую океан, через Армению он хочет и умеет сказать о мире. Недаром его мысли, высказанные по случаю, оказываются ответвлениями идеи о благе человека, а ноты доброты готовят такой слышный аккорд: “Барев дзес-добро вам, армянам и не армянам”.

Книга Гроссмана “Добро вам!”- это вершина его прозы, где уместились не все впечатления автора.

Цикл «Ангел Армении» был издан в Тифлисе в 1918г. отдельной книжкой с посвящением армянскому поэту Ованесу Туманяну, которому автор преподнес с дарственной надписью: «Вам, светлый друг, я посвятил эту книгу не только потому, что я до корня сердца очарован вашей личностью, но и потому, что ваше имя – это идея, прекрасная идея армянского воскресения в дружбе с моей родиной».⁶

Городецкий понимал свое назначение. И, наверное, не думал, что его стихи и прозу ждет нынешнее забвение в России. Вот, что он пишет в одном из трех текстов, посвященных Ованесу Туманяну: « Я считаю себя продолжателем славного дела Валерия Брюсова. Он еще более сдружил Россию с Арменией. Я укрепил эту дружбу стихами и работой на фронте... Дела двух русских поэтов подтвердили идею Ованеса Туманяна об исторической неразрывной связи армянского народа с русским».⁷ Также пророчески и современно звучит окончание стихотворения «Ангел Армении»(1918г.). Разгневанный злом, содеянным с Арменией, Ангел обращается к истерзанной стране:

***-Встань страна, из праха и руин!
Своих сынов, рассеянных сомкни
В несокрушимый круг восторженных дружин!
Я возвещаю новой жизни дни.***

Книга имела большой успех и не только в армянской среде. Она схожа с мозаикой: из множества стихотворений складывается законченная картина. Вот строки из первого стихотворения этой книги:

***Узнать тебя! Понять тебя! Обнять любовью,
Друг другу золотые двери отворить!
Армения, звенящая огнем и кровью,***

⁵ Карабах// “Кавказское слово”, 1919г.

⁶ «Ангел Армении», 1918г.

⁷ Ким Бакши. Духовное сокровище Арцаха (Серия «Библиотека русско-армянского содружества»).М.,Книжный мир, 2012г., стр. 3-13.

Армения, тебя хочу я полюбить.⁸

Городецкий больше других пишет именно об Армении. Армения у Городецкого выступает в качестве конкретного примера абстрактной идеи – примера благодарного и благодатного, к которому автор проникся искренней любовью. Узнав несколько десятков армянских слов, познакомился с географией Армении, физической и исторической, открыл для себя армянскую трагедию.

Армянская поэзия Городецкого исполнена чувства, пропущена через сердце. Вот, что пишет поэт во время поездки в Армению: “Я был уже груб сердцем... от впечатлений войны, но, когда горное солнце озарило беженцев, я не смог удержаться, и слезы хлынули у меня из глаз. Я вдруг понял, что значит народное бедствие. Та минута навсегда сроднила меня с Арменией”.⁹

Городецкий всю свою последующую жизнь сохранил теплые чувства к Армении и армянскому народу – ведь он видел не только геноцид армян, беженцев и сирот, он дожил и до воскресения Армении, стал очевидцем ее возрождения в мощную республику в союзе с великой Россией. В лучших традициях русской литературы написаны произведения С. Городецкого об Армении. И как дань уважения к большому другу армянского народа явилось издание в 1980г. его сборника «Об армянской культуре» на армянском языке (в переводе А. Сагняна, Хачатуряна и др.). Произведения С. Городецкого на армянские мотивы не потеряли своей идейно-художественной ценности и в наши дни.¹⁰

Как и для Городецкого, Армения не стала для Гроссмана только литературным эпизодом. Тема сегодняшней Армении неоднократно возникала в его публицистике.

В заключении отметим еще одно обстоятельство, объединяющее двух писателей. Их армянская поэзия и проза продиктована первым впечатлением. Оно, может быть, не всегда самое глубокое, но всегда – самое яркое и самое сильное. Что касается глубины, то ее нашим авторам не занимать. Нет нужды говорить о любви с первого взгляда.

Сергей Городецкий и Василий Гроссман полюбили Армению и написали о ней проникновенно и с тем проникновением в суть, какое мало кому доступно и обеспечивает их книгами долгую жизнь в литературе.

Рассмотренные нами образцы русской поэзии и прозы 20в проникнуты глубоким состраданием, пережитым армянским народом.

Перечисляя работы русских поэтов-переводчиков и литературных критиков, можно убедиться, что творчество В. Гроссмана и В. Городецкого было достойно оценено. Темы, воспетые ими, близки читателям, которые проявляли большой интерес не одно десятилетие. Творчество писателей можно сравнить с большим и очень прочным мостом дружбы, ибо она не только привлекла, но и объединила вокруг себя

⁸ С. Городецкий: “Заветный Ван и синий Ахтамар”//Армянский музей Москвы и культура наций.

⁹ Нрj.asj-oa.am.

¹⁰ www.fms.kursk.ru// Мир Дружба, 2011г.

выдающихся русских поэтов-переводчиков, которые своим трудом продолжили традицию литературных связей, сложившихся между Россией и Арменией в 20 столетии.

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՍԵՐԳԵՅ ԳՈՐՈԴԵՅԿՈՒ ԵՎ ՎԱՍԻԼԻ ԳՐՈՍՄԱՆԻ ԱԶՔԵՐՈՎ - ԵԼԵՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ, ԱՆՆԱ ԲԱԼԱՅԱՆ - Հոդվածում փորձ է արվել ներկայացնել Հայաստանը՝ 20-րդ դարի այնպիսի ռուս գրողների աչքերով, ինչպիսիք են Սերգեյ Գորոդեցկին և Վասիլի Գրոսմանը: Հետազոտվել են Վասիլի Գրոսմանի «Բարև ձեզ» և Սերգեյ Գորոդեցկու «Հայաստանի Հրեշտակը» ստեղծագործությունները, ինչպես նաև ցույց տրվել նրանց տիպաբանական նմանությունները:

Հայաստանը գրողների համար միայն դիտարկման բնագավառ չէր: Հենց Հայաստանում ռուս գրողները տեսնում են այն կաթիլը, որը արտացոլում է ամբողջ օվկիանոսը: Հայաստանի միջոցով նրանք կարողացել են ներկայացնել ամբողջ աշխարհը:

Բանալի բաներ՝ Հայաստան, խորը տպավորություն, կերպար, քնարերգության գազաթնակետ, ապագա արձակ, հայ ընթերցող, գրական կարգավիճակ, գրական ժառանգության ճակատագիր, արտացոլում, գրական արժանապատվություն:

ARMENIA THROUGH THE EYES OF VASILY GROSSMAN AND SERGEY GORODETSKY-YELENA GRIGORYAN, ANNA BALAYAN - In this article, Armenia is presented through the eyes of such 20th century Russian writers as Vasily Grossman and Sergey Gorodetsky.

In this regard, some attempts were made to analyze the works of these two writers: "Kindness to you" by Grossman and "Angel of Armenia" by Gorodetsky, in order to show their typological similarities.

Armenia is not only an object of observation for writers. It is especially in Armenia that writers see a drop reflecting the ocean. Through Armenia, the writers want and can speak about the world.

Key words: *Armenia, deep impression, character, peak of lyric poetry, future prose, Armenian reader, literary status, printed fate, transfiguration, literary dignity.*

ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՇԵՐՏԻ ԲԱՌԵՐԸ ՍՅՈՒՆԻՔ-ԱՐՑԱԽ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԱՊԱՇԱՐՈՒՄ

(«Տարածական հարաբերություններ՝ տեղ, ձև, չափ» թեմատիկ խմբի
մի քանի բառերի շուրջ)

*Մյունիք-Արցախի բարբառային տարածքի բառապաշարում պահպանվել են բազմաթիվ բառեր, որոնք ծագում են հնդեվրոպական մայր լեզվից: Բնիկ բառերը բավականին շատ են տարածական հարաբերություններ արտահայտող թեմատիկ խմբում: Առանձնապես քննված են **յատակ < ատակ, կուլօն > կըլօնդակ, թաղել > թըղ-աղուսկ, օնջ և քյննջ, սայր-սէռ, կյուն** բառերը, որոնք հնչյունական և իմաստային աղերսներ ունեն հնդեվրոպական լեզվի համապատասխան ձևերի հետ:*

Փաստորեն՝ հազարամյակներ առաջ Կուր-Արաքս հովտում ձևավորված և մինչև օրս պահպանված Մյունիք-Արցախի բարբառախմբում պահպանվել են բառային հնագույն ձևեր, որոնք կարող են հարուստ տեղեկություններ հաղորդել պատմահամեմատական լեզվաբանությանը:

Բանալի բառեր՝ *Մյունիք-Արցախ, բարբառախումբ, ստուգաբանություն, թեմատիկ խումբ, տարածական հարաբերություն, պատմահամեմատական լեզվաբանություն, բնիկ բառեր, հնդեվրոպական, բառապաշար:*

Մյունիք-Արցախի բարբառային բառապաշարի քննությունը շարունակում է մնալ արդիական ոչ միայն պատմահամեմատական և բարբառագիտական բազմաթիվ հարցերի, այլև աշխարհաքաղաքական տեսանկյունից: Այո՛, լեզվաբանության ուսումնասիրության նպատակը պետք է լինի ոչ միայն մարդկային լեզվի զարգացումը, նրա օրինաչափությունների ամբողջությունը, շեղումներն ու ընդհանրությունները, այլև ազգերի և ժողովուրդների պատմական անցյալի հարցերը, որոնք լավագույնս չեն արտացոլվում միայն նյութական մշակութային արժեքների միջոցով: Սույն ուսումնասիրությունը կարող է լրացնել գիտական ասպարեզում եղած այն բոլոր աշխատությունների շարքը, որոնք ներկայացնում են հայ ժողովրդի մի հատվածի և նրա ամենամեծ բարբառախմբի՝ հազարամյակներ առաջ Կուր-Արաքս հովտում ձևավորվելը, զարգանալը և մինչև մեր օրեր հասնելը:

Մյունիք-Արցախի բարբառային տարածքի բառապաշարի հնագույն շերտի բառերի մեծ մասը հիմնականում ծագում է հնդեվրոպական վաղնջականության շրջանից և ունի համապատասխան զուգահեռներ ոչ միայն հայերենի տարբերակներում, այլև հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող լեզուներում:

Հնդեվրոպական ծագմամբ բառերի թեմատիկ խմբերի բաժանումը և քննությունը բառապաշարի ծագումնաբանական քննության լավագույն մոտեցումներից մեկն է, որ կիրառել են շատ հեղինակներ: Սույն աշխատանքում քննել ենք բառիմաստային

միայն մեկ՝ «տարածական հարաբերություններ՝ տեղ, ձև, չափ» արտահայտող խումբը, որ ըստ էության կազմում է Դ. Բաքի և Գ. Ջահուկյանի Հնդեվրոպական թեմատիկ խմբերի ուսումնասիրության շարունակությունը: Նշված հեղինակների աշխատանքներում կարելի է գտնել բառամիավորների վերականգնված ձևերը, իսկ այնպիսիք, որոնք բացակայում են արդեն շրջանառված ցուցակներից, լրացվում և համապատասխան քննության են ենթարկվում:

Այսպես՝ Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարի՝ տարածական հարաբերություններ արտահայտող հնդեվրոպական ծագմամբ բառերն են՝

Ձևի բառիմաստային ենթախմբին առչվող բառեր՝ տեղ, տիրք || դիրք, տինել, տեղավորել, նըստել, (ան-)կողին ? , տաժրել, հանգիստ, տեղ (անել), կամ, մընալ, թողալ, խաղալ,

Ձևի և գործողության բառիմաստային ենթախմբին առնչվող բառեր՝ տեզել, կյուն(անել), թեղ, թեղ տալ, կըլունձրակ, հար-, զօթել, պաճել || պանալ, կյաղել, կյմուանալ, թըխկըցնել, թըղ-աղ-ուսկ,

Տեղի բառիմաստային ենթախմբին առնչվող բառեր՝ պանցմը, -(պըցըր)-պեցմը, ներք-է (նի), ցածում?, քաշ, տիլեր, անդունդ(ք), վընդ-ա-տակ, ան-տակ ?, հիմն, տափ, կետ, սեռ, կօխք (դօ?), միչակ, մէշ,

Տեղի, ձևի և չափի բառիմաստային ենթախմբին առչվող բառեր՝ աշ, մօտի, հօփ || հօպ || հուպ, քիփ, հեռ-,

Չափի բառիմաստային ենթախմբին առչվող բառեր՝ ծիվ || ձև, արթ-ակ, աճել, մեծ, տի(-կնի), մանդըր, էրգան || էրկան, ծիպ-լի,

Չափի և ձևի բառիմաստային ենթախմբին առնչվող բառեր՝ լեն , Անձկայք ?, հաստ, լըմբատ, լըմփօշ, բըխբըխօտել, պիլօրանալ, թանձըր, մած-, թավ, թըխկ(-ըհանել), տոօզ, ցանցառ,

Տեղի և ձևի բառիմաստային ենթախմբին առչվող բառեր՝ կյօք || ցմըրգ, կըռա-կօր, ծօռ, շիլ (շըղըհարել), կեռ, կյափ ?, անցմուն, խաշ, օնջ,

Ձևի և առարկայական նշանակության բառեր՝ պիլօր-, հիլօր, կըլօր ?, հիլօր? , օղ, կըռկվել¹?, հօլ, բուլդի ?, տօղ ?, սօրան,

Ձևի և վիճակի նշանակության բառեր՝ սըրսըմնել² ?, ըլյայվել, շաղվել, հեւ-ք³:

Այս բաժանումը, իհարկե, կատարյալ չէ, և չեն բացառվում հնարավոր փոփոխությունները՝ համեմատական լեզվաբանության բնականոն զարգացմանը զուգընթաց: Ենթախմբերում ընդգրկվածներից որոշները, որ բացակայում կամ վերապա-

¹ «Կուշ գալ, փայտանալ, չովել» (նշված չէ Գ. Ջահուկյանի ստուգաբանականում՝ բարբառային տարբերակների շարքում (**Ջահուկյան Գ.**, Հայերեն ստուգաբանական բառարան, «Ատոդիկ» հրատ., Երևան, 2010, այսուհետև՝ ՆՄԲ), տե՛ս՝ Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, ՆՄՄՀ ԳԱ հրատ., Երևան, 1972, էջ 288-289): Գործիսի բարբառում նույն իմաստով կա **կըղըվէրել** // **կտըղվէրել** (կէղ արմատից):

² ***K er-** «սարսափ» արմատից, բարբառախմբում՝ «կուշ գալ, կծկվել» (արմատի կրկնությամբ՝ **սըր-սը-մն-**):

³ Բաժանումը կատարվել է ըստ Դ. Բաքի և Գ. Ջահուկյանի համապատասխան աշխատությունների օրինակով (**Buck C. D.**, *A Dictionary of selected synonyms in the principal Indo-European languages* (A contribution to the history of ideas), University of Chicago press, Chicago & London, 1988, **Ջահուկյան Գ. Բ.**, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, ԳԱ հրատ., Երևան, 1987):

հույսամբ են դրվում նախորդ հեղինակների կողմից կազմված թեմատիկ խմբերում, բայց հանդիպում են Սյունիք-Արցախ բարբառային տարածքի բառապաշարում, ենթարկվել են համաժամանակյա և տարաժամանակյա քննության: Որոշ բառեր էլ քննվում են, մատնանշվում են դրանց հնդեվրոպական հնարավոր աղերսները, բայց չեն ընդգրկվում թեմատիկ խմբում՝ ծագումնաբանորեն անհաստատ տարրեր կրելու պատճառաբանությամբ:

Յատակ < ատակ «հատակ, գետին, հող» բառը ծագում է հ.-ե. ***pedo-** «ոտք» բառից: Բարբառախմբում պահպանվել է **-ան-տակ** («1. անհատակ, 2. տակ չունեցող») կազմության և **ատակ անել** «հիմնահատակ ավերել» հարադրության մեջ: Քիչ հավանական է, որ **ատակ**-ը լինի միջ. պրսկ. **ատակ** «կարող, ընդունակ, ձեռնահաս» (ատակել, ատա լինել), ռուս. *атака* «հարձակում» (հմմտ.՝ ֆր. *attaquer*, իտ. *estaccare* (*stacca*), գերմ. *Attacke*, հին անգլ. *staca*) բառերից, քանի որ բարբառախմբում պահպանված դարձվածքային կառույցներում հստակվում է ատակ-հատակ («գետին» և այլն) իմաստը, հմմտ.՝ **ատակը անց կենալ || ատակը ինգել || ատակը ընցնել** «անհետանալ, կորչել, գետնի տակն անցնել» (հումանիշ՝ գյծբագյծո ինել), ատակը դժօխք անել (շինել, սարքել) «վիճաբանել, կռվել» և այլն: Ընդ որում՝ հայ հին մատենագրության մեջ **հատակ** բառին գուգահեռ, բայց սակավ է գործածվել **ատակը** (հմմտ. միջ. իռլ. **ined** (***eni-pedo-**) «տեղ, հետք», հին իռլ. (չեզ.) **ad** «ժամանակ, միջոց»), որն էլ, հավանաբար, այն բանի վկայությունն է, որ **-ակ** ածանցով հարադրությունը ստորին ձայնադարձով ինքնուրույն է ծագել հ.-ե. ***(p>0)edo-** կաղապարից, հետագայում ստացել **-ակ** ածանցը (նկատի առնելով այս ածանցի փոխառյալ լինելը), կամ հին մատենագրության մեջ սակավ գործածվող **ատակ**-ն է, որ հնագույն ձևով պահպանվել է բարբառախմբում (այլապես պիտի լիներ **հատակ** (յ > հ, հմմտ. յավատ > հավաղ կամ **հատակ**):

Չ.ե. ***glendh-** հիմքից բարբառախմբում վկայվում են **կըլօնձ || կուլօնձ > կըլօնդրակ || կուլօն(ը)րակ** «1. կլորածն ինչ-որ բան, 2. կղկղանքի կտոր»: Այս արմատից է նաև **կըլօլակ** «մսի գունդ»:

Թաղել՝ *tel- (*tol-) բառից է **թըղ-աղ-ուսկ**-ը՝ արմատի կրկնությամբ: Այս արմատի բարբառային բաղադրություններն ու տարբերակներն են՝ **տըրմընթըղաղուսկ, տըրմընթըղաղուսկ անել** «դարմանի տակ թաքցնել», **թաղվասկ, թըղաղվուց, թըղաղուտ** և այլն:

Սյունիք-Արցախ բարբառախմբում «անկյուն» իմաստով բառերը առանձնապես շատ չեն: Հաճախականությամբ աչքի են ընկնում **օնջ** և **քյննջ** բառերը, որ, կարծում ենք, նույն հիմքից են սերում՝ հ.-ե. ***udhos-** «տակ, ցած, ներքո» նախաձևից, որի լիաձայն տարբերակն է ***ondhio-**⁴, հմմտ.՝ **քյննջըբորջ, քյննջնալօ/ուճախ** «բոլոր անկյունները, բոլոր տեղերը», այստեղից՝ **քյունջըպօճախ անել** «ամբողջովին մաքրել», Արց. **քյունջըպօճախ օտօղ** «վատնող»: Գործիսի բարբառում **օնջ** բառն ունի «անկյուն, քարատակ (հասկացվում է նաև անկյունի սարդոստայնը՝ **օնջը մաքրել** «անկյունի սարդոստայնները մաքրել»)» իմաստները: Առկա է մնում **քննջ** բառերի **ք-**նախահավելվածի առկայության հարցը: Կարծում ենք՝ այն առաջացել է սովորական բաղադրությունից՝

⁴ ՀՄԲ, էջ 750:

քար և **օնջ** բառերի միակցությամբ, քանի որ բարբառախմբում **ք-օնջ**-ը արտահայտում է հիմնականում «քարատակ, քարանկյուն» հասկացությունները՝ **քարի օնջ > քունջ**: Ընդ որում՝ այստեղից կարելի է եզրակացնել, որ **օնջ**-ը բարբառախմբում **ունջ**-ի տարբերակն է և հաջորդել է այդ ձևին, ինչպես նկատում ենք բարդության կազմությունից: **Օնջ**-ը ունի նաև «1. մուր, 2. երկաթի ժանգ, 3. սարդոստայն»⁵ իմաստները, այստեղից՝ **օնջուտ-ունջուտ** «ունջով պատած, ժանգոտած», որ Քարահունջ տեղանվան բաղադրիչն է կազմում ըստ՝ տեղանվան ծագման տեսակետներից մեկի: Տեղանվան ծագմանը վերաբերող մյուս տեսակետի համաձայն՝ **օնջ**-ը բաղադրության մեջ հանդես է գալիս «տակ, հատակ», այլև «անցք»⁶ նշանակությամբ: Քարահունջ տեղանվանը վերաբերող տեսակետները բավականին շատ են, և այդուհանդերձ, հատկանշական է, որ նրա բարբառային տարբերակները վկայում են **քունջ** և **օնջ** բառերի ընդհանրությունները՝ հմմտ.՝ **Քարահունջ-քրքաունջ-քրքունջ- քունջ**: «Անկյուն, նեղացող մաս» իմաստների օգտին է նաև Գորիսի Քարահունջ պատմական հնավայրի անվանումներից մեկը՝ Անձկայք, որ, կարծում ենք, **անձուկ** բառի հատկանվան տարբերակներից մեկն է⁷: Այսպիսով՝ **քունջ** բառի ու քմայինի առայությունը հենց ասվածի ապացույցներից մեկն է, որ առաջացել է բաղադրության հետևանքով՝ (քար)**ունջ (օնջ) > քունջ**, քանի որ **ունջ** բառով մյուս բարդություններում **ունջ** է, այլ ոչ թե **քունջ**, հմմտ. **ունջաճճր, ունջըթաթախ, ունջըկալի** և այլն:

Սայր-սեռ ընդհանրությունը բացատրվում է ոչ միայն իմաստային, այլև հնչյունական հնարավոր փոփոխություններով՝ **այ > է, ք > ռ**: Այս առիթով դիպուկ է նկատում Հ. Աճառյանը, որ «սայր բառի բուն իմաստը պետք է դնել ոչ թե «սուր կողմ», այլ «ծայր»⁸, որն էլ հաստատվում է Գ. Զահուկյանի կողմից՝ ***k'əi-ri-՝ *k'ə(i)-⁹**:

Ցածում || **ցածումը** կազմությունը, հավանական է, նոր գրական հայերենի վաղ շրջանից փոխանցում է բարբառախմբին: Մեր օրերում գործածական է: Բարբառախմբում, սակայն, առավել տարածված են **տըվեր**, սրան հականիշ **տիյեր** բառերը, որոնք ընդգրկվում են ցուցակում: Սրանք բաղադրություններ են՝ **տը-վեր՝ ընդ-վայր** (հմմտ.՝ **տը՝ տէս < ընդ այս, տէտ < ընդ այդ, տմբմբ (կյան)** > **ընդ իրեար, վայր**¹⁰՝ **այ > է՝ հայր > հեր**, հմմտ.՝ ի վայր՝ սանս. **avara** «ստորին, հետին» > **ava + ra**¹¹), **տի-յեր՝ ընդ վեր**

⁵ **Հախվերդյան, Ս., Քումունց, Մ., Ստ. Օրբելյանի հիշատակած մի քանի տեղանունների ստուգաբանության և տեղադրության հարցեր**, Լեզու և լեզվաբանություն, № 1-2, էջ 66:

⁶ **Աղաբեկյան Մ.Ա.**, Քարահունջ. ստուգաբանական դիտարկումներ, Զահուկյանական ընթերցումներ (Հ. Աճառյանի ծննդյան 135-ամյակին նվիրված հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումներ), Երևան, 2011, էջ 47-52:

⁷ Այս մասին մանրամասն տե՛ս՝ **Հախվերդյան Ս., Քումունց, Մ., Ստ. Օրբելյանի հիշատակած մի քանի տեղանունների ստուգաբանության և տեղադրության հարցեր**, Լեզու և լեզվաբանություն, № 1-2, Երևան, 2006, էջ 65-66:

⁸ **Աճառյան Հր.**, Հայերեն արմատական բառարան, Երևանի համալսարանի հրատ., հատ. IV, Երևան, (1926-1935) էջ 170 (այսուհետև՝ ՀԱԲ):

⁹ ՀԱԲ, էջ 666:

¹⁰ **Վայր բառից՝ վըրինի, իվի/երի, վրեր**:

¹¹ **Benfey T.**, A Sanskrit-English dictionary: with references to the best editions of Sanskrit authors and etymologies and comparisons of cognate words, chiefly in Greek, Latin, Gothic, and Anglo-Saxon, Longmans, London, 1866. p. 58.

(նույն՝ **ընդ-վայր**-ի համաբանությամբ):

Կյուն արմատը ինքնություն գործածություն չունի, ձևիմաստային տարբերակներ հայտնի չեն մատենագրական վկայություններում, բարբառային փոխառություններում¹²: Ըստ այդմ՝ ենթադրվում է բառի ծագման վերաբերող երկու վարկած՝

1. Կյուն անել-ը «վառված ածուխի կամ փայտի մնացուկը հավաքել, իրար վրա լցնել» իմաստով աղերսակից է ***gheu-** «պարպել, թափել, լցնել, ձուլում, թափում»-ին, որից ածանցված է նշվում ***gheu-mn** «զոհ, զոհաբերություն, կրակի մեջ մատուցվող զոհ» տարբերակը: ***Gheu-** արմատից է նշվում հայերենի **ծոյլ, ձեւ**, ապա և վերապահությամբ՝ **ծոբ**¹³: Հիմնավորվում են հ.-ե. երկբարբառի առկայությունը՝ **ոյ > ու** (հմմտ. **բույն > պուն, բոյթ > պուլթ**), վերջադիր **ն-ն**՝ **> -mn** կաղապարից մնացուկ լինելը, սակայն առկա է մնում ***gh > q** փոփոխությունը: Հնարավոր է արդյոք նախալեզվի շրջանից մի հին փոխառություն լինի, որ անցել է կրակի, մոխրի հետ կապված ծիսական արարողությունների հետ:

2. Կյուն (անել) բառի ծագումնաբանական հիմքեր կան հ.-ե. ***g^when-** «կոհակ, ալիք, ուռուցք, ուռեցում, բարձրացում, աճում, 2. ուռչել, ցցվել, ավելանալ, մեծանալ, հպարտանալ, խոժոռել, ուռեցնել, ավելցնել, մեծացնել, փքացնել, աստիճանաբար բարձրացնել» բառում, որի տարբերակներից մեկը համարվում է հին հայերենի **յոզն (յոզուք, յոքն)** «շատ, բազում» բառը (**i + *o-g^whon-** կամ ***o-g^whno-**),¹⁴: Հնչյունական կազմով և իմաստով հ.-ե. ***g^when-** հիմքին առավել մոտ է **կյուն-ը (*g^whon-) < գուն** «ավելցնել, մեծացնել, աստիճանաբար բարձրացնել», հմմտ.՝ հուն. **εὐθενής** «առատ, առատորեն, շատ»:

Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարում ընդգրկված տարածական հարաբերություններ արտահայտող հնդեվրոպական աղերսներ ունեցող բառերի ուսումնասիրությունը այսքանով չի սահմանափակվում: Բառաքնական սույն փորձը ընդգրկում է միայն բարբառային մի քանի միավորների շուրջ կանխադրվող կարծիքները, որոնք հետագայում կարող են հարստանալ, վերանայվել:

¹² **Կյուն** արմատի հնարավոր ընդհանրություններ թերևս նկատվում են **գյում անել** «կորցնել, անհետացնել», **գյում ինել** «անհետանալ, չքանալ կորչել» բառերում: Ընդ որում՝ հ.ե. ***gheu-mn** «զոհ, զոհաբերություն, կրակի մեջ մատուցվող զոհ» բառի ձևիմաստային աղերսները նկատվում են նաև **անգյուման** «1. անհետ, 2.անհույս, 3. անտեղյակ» բառի հետ, որ նշվում է որպես իրանական **գուման** «կարծիք, կասկած» բառից կազմված բաղադրություն (ՀԱԲ I, էջ 590): Ա. Սրազայանը նույնպես այն նշում է բարբառախմբի բառապաշարի պրսկ. փոխառությունների մեջ (**Մարգարյան Ա. Յ.**, Ղարաբաղի բարբառի բառարան, Արցախի Պետական Համալսարան, Երևան, 2013, էջ էջ 109), որի հնարավոր տարբերակները տեղ են գտել ՀԱԲ-ում (ՀԱԲ I, էջ 590): Բարբառախոսում ունի **գյուման** «1. կասկած, 2. իրազեկ, 3. հույս», որի ձևիմաստային առնչակցությունից կարելի է ենթադրել, որ **կյուն**-ի հետ ընդհանուր նախաձև են ունեցել, որոնցից մեկը անցել է հայերենին միջնորդությամբ, իսկ մյուսը՝ բնիկ ձևով և իմաստով:

¹³ **Pokorny J.**, *Indogermanisches etymologisches Wörterbuch, I. bend*, München: Francke Verlag, Bern, 1959, p. 447-448 (այսուհետև՝ Pok. IGW).

¹⁴ Սյւ մասին տե՛ս՝ Pok. IGW, p. 491, ՀԱԲ III, էջ 402, ՀԱԲ, էջ 554:

ИНДОЕВРОПЕЙСКИЕ СЛОВА В ЛЕКСИКЕ СЮНИКСКО-АРЦАХСКОГО ДИАЛЕКТА (Пространственные отношения: место, форма, размер о нескольких словах тематической группы) - **МГЕР КУМУНЦ**- Многие слова из индоевропейского родного языка сохранились в лексике Сюникско-Арцахского диалекта. Родных слов довольно много в тематической группе, выражающей пространственные отношения. Особо исследованы слова **յատակ** (ятак) < **ատակ** (атак), **կուլոնձ** (кулондз) > **կլոնդրակ** (клондрак), **թաղել** (тахел) > **թղ-աղ-ուկ** (тых-ах –уск), **օնջ** (ондж) и **քյունջ** (кюндж), **սայր-սէր** (сайр-сер), **կյուն** (кюн), имеющие фонетико-семантическое сходство с соответствующими формами индоевропейского языка.

Фактически, Сюникско-Арцахская диалектная группа, сформировавшаяся тысячи лет назад в долине Кура-Аракса и сохранившаяся до сих пор, сохраняет древние словесные формы, которые могут предоставить богатую информацию для историко-сравнительной лингвистики.

Ключевые слова: Сюник-Арцах, диалектная группа, этимология, тематическая группа, пространственные отношения, историко-сравнительное языкознание, родные слова, индоевропейский язык, лексика.

WORDS OF INDO-EUROPEAN LAYER IN SYUNIK-ARTSAKH DIALECTAL VOCABULARY (Expanding relations: place, shape, size around a few words in the thematic group)- **MHER KUMUNTS**- Many words derived from the Indo-European mother language have been preserved in the vocabulary of the Syunik-Artsakh dialectal area. There are quite native words in the thematic group which are express expanding relations. The words **յատակ** (*yatak*) < **ատակ** (*atak*), **կուլոնձ** (*kulondz*) > **կլոնդրակ** (*kylondrak*), **թաղել** (*taghel*) > **թղ-աղ-ուկ** (*tygh-agh-usk*), **օնջ** (*ondj*) and **քյունջ** (*qiundj*), **սայր-սէր** (*sair-ser*), **կյուն** (*kiun*) are especially examined and have phonetic-semantic similarities with the corresponding forms of the Indo-European language.

In fact, the Syunik-Artsakh dialect group, formed thousands of years ago in the Kur-Araks valley and still preserved, have ancient verbal forms that can provide rich information to historical-comparative linguistics.

Key words: Syunik-Artsakh, dialect group, etymology, thematic group, spatial relations, historical-comparative linguistics, native words, Indo-European, vocabulary.

**Դ.ՎԱՐՈՒԺԱՆԻ ԵՎ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԼԵԶՎԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՅԱՅՔՆԵՐԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Ապրելով ու ստեղծագործելով 20-րդ դարի սկզբում՝ Դանիել Վարուժանն ու Հովհաննես Թումանյանը մտահոգ էին նոր լեզվի՝ աշխարհաբարի մշակման հարցերով: Եթե արևելահայ հաստվածում գրապայքարի արդյունքում աշխարհաբարի հաղթանակն արձանագրվեց ավելի վաղ, ապա արևմտահայ հաստվածում այն ավելի երկար տևեց, ուստի Դ. Վարուժանի հոդվածներում ու նամակներում արծարծված հարցերն ավելի լայն շրջանակ են ընդգրկում: Կարելի է առանձնացնել 5 հիմնական ուղղություններ, որոնց անդրադարձել և լուծման իր տարբերակներն է առաջարկել Վարուժանը. 1. աշխարհաբար գրական լեզվի ձևավորում, 2. արևելահայ և արևմտահայ գրական լեզուների մշակում, 3. աշխարհաբարի մաքրում գրաբարաբանություններից, 4. աշխարհաբարի մաքրում օտարաբանություններից, 5. գրական լեզվի հարստացում բարբառային նյութով:

Ինչ վերաբերում է Հ. Թումանյանին, ապա նա աշխարհաբարի ձևավորումը համարում է արդեն ավարտված, իսկ լեզվի մշակման հիմնական աղբյուրներ նշում է առաջին հերթին բարբառները, ապա նաև գրաբարն ու օտար լեզուներից կատարվող փոխառությունները:

Բանալի բառեր՝ Դանիել Վարուժան, Հովհաննես Թումանյան, գրապայքար, արևելահայերեն, արևմտահայերեն, գրաբարաբանություններ, օտարաբանություններ, բարբառային բառեր, լեզվի մշակում, լեզվի մաքրում:

Թե՛ Դ. Վարուժանի, թե՛ Հ. Թումանյանի լեզվագիտական հայացքներին անդրադարձներ եղել են, և առանձին հարցերում նրանց մոտեցումների նմանությունը հիմք է տալիս դիտարկելու երկու մեծություններին զուգադրական հարթության մեջ:

Այս թեմային կրկին անդրադառնալու պահանջը նրանց բարձրացրած խնդիրների արդիականությունն է, օտարաբանություններով խճողված առօրյա խոսքը և այն գրական հայերեն տեղափոխելու միտումը:

Զիլնելով լեզվաբաններ՝ աշխարհաբարի երկու ճյուղերի ներկայանալի դեմքերը հանդես եկան գրեթե նույն ժամանակահատվածում, գրեթե նույն վերնագրով հոդվածներով (Դ. Վարուժանը 1911 թ. գրեց «Հայ լեզվի խնդիրը», իսկ Հ. Թումանյանը 1916 թ.՝ «Հայ գրական լեզվի խնդիրը»): Վարուժանն ավելի լայն շրջանակներ ընդգրկեց, Թումանյանը՝ նեղ:

Նկարագրական, զուգադրական, վերլուծական մեթոդները թույլ կտան վեր հանել առանցքային խնդիրները, որ երկուսի մտահոգության առարկան էին: Կարելի է ուրվագծել 5 հիմնական կետեր, որոնք կարևորվում են Դ. Վարուժանի հոդվածում, դրանցից որոշներին վերաբերում է նաև Հ. Թումանյանի հոդվածը: Մտահոգությունները և առաջարկվող լուծումները վերաբերում են հետևյալ հարցերին.

1. Աշխարհաբար գրական լեզվի ձևավորում.
2. Արևելահայ և արևմտահայ գրական լեզուների մշակում.
3. Աշխարհաբարի մաքրում գրաբարաբանություններից.
4. Աշխարհաբարի մաքրում օտարաբանություններից.
5. Գրական լեզվի հարստացում բարբառային նյութով:

Ինչ վերաբերում է առաջին կետին, Հ. Թումանյանն այն համարում է «վաղուց վերջացած» և, իրավամբ, քանի որ արևելահայ հատվածում գրապայքարն ավարտվել էր ավելի վաղ: Վարուժանը դեռ խնդիրներ է տեսնում արևմտահայ հատվածում, որտեղ գրապայքարն ավելի տևական ընթացք ունեցավ: Պետականությունից զուրկ Արևմտահայաստանում բնականաբար աշխարհաբարը պետք է բախվեր յուրօրինակ խնդիրների:

Այս երևույթը միանգամայն ճշգրիտ բնութագրում է Խաչատուր Աբովյանը. «Եվ երբ մի ժողովուրդը դժբախտություն է ունենում իր երկիրն ու ինքնուրույնությունը կորցնելու և իրեն իր սեփական հայրենիքում որպես ստրուկ զգալու... այլևս կարո՞ղ է նա ի վիճակի լինել մտահոգվելու նրանով, որ զբաղվի գրականությամբ ու գիտությամբ, չէ՞ որ դրա համար անհրաժեշտ է որպես հիմնական պայման արտաքին խաղաղություն, բարեկեցություն և անդուլ խնամք կառավարության կողմից»¹:

Վարուժանը նախ ուրվագծում է աշխարհաբարի ձևավորման ընթացքը. «Արդի աշխարհաբարը անընդհատ բարեշրջումով մը անջատվեցավ իր աղբյուրեն՝ Միջնաշխարհի լեզվեն, սկսավ նախ կամաց-կամաց միտիլ դեպի գրաբարը»², - գրում է Վարուժանը: Ապա գավառի մտավորական ու գրական շարժման՝ սև գրաքննության ենթարկվելու պատճառով լեզուն սկսեց մշակվել Պոլսում, բայց այստեղ էլ ուրիշ վտանգ կար. «Պոլիսը մաքրելով հանդերձ լեզուն գրաբարի մեր հիշած ձևերեն՝ գայն խաթարեց ֆրանսաբանություններով»³:

Լեզուն սկսում է «օտարանալ և ստրկանալ կարգ մը գիշներու տակ», որոնք տաղանդ չունեցան պահպանելու այն ձևերը, որ իրենց հանձնեցին Պ. Դուրյանը, Գ. Օտյանը, Հ. Պարոնյանը:

Եվ Վարուժանը ցավով է արձանագրում, որ գավառը՝ գունագեղ ու հարուստ, մեծ իդեալներով, իր «ժողովրդի մեծ սրտի տիեզերական բաբախյունով» դուրս մնաց նորանշակ լեզվից:

Տարբերություն է նկատվում նաև արտասահմանում մշակված հայ լեզվի և Պոլսի լեզվի միջև. առաջինն աչքի ընկավ «ուժգին և բարբարոս շեշտով, որ արդյունք էր ազատ միջավայրի», բայց դարձյալ գերծ չէր օտարաբանություններից:

Գոհացնող չէր նաև գիտական լեզուն, որտեղ գերիշխում էին գրաբարի ձևերը և Վարուժանը եզրակացնում է. «Մեզի կը պակսի նաև գիտական բառերու պաշարը»⁴:

¹ Տե՛ս Աբովյան Խ., *Նախաշավիղ, Հայպետհրատ, Եր., 1939, էջ XI*:

² Տե՛ս Վարուժան Դ., *Երկերի լիակատար ժողովածու, երեք հատորով, հ. 3, Եր., Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 1987, էջ 122*:

³ Տե՛ս Նույն տեղում:

⁴ Տե՛ս Նույն տեղում, էջ 125:

Վարուժանը տալիս է լեզվի կատարելության իր ընկալումը. «Մենք ազգի մը լեզուն ճոխ ու կատարյալ կը համարենք այն ատեն միայն, երբ ան ընդունակ է հաջող կերպով պատկերելու այդ ազգին մեծամասնության հոգեբանությունն իր բոլոր երանգներով, երբ մյուս մասամբ կը պահե իր մեջ նկարագիրը այն նախնիներուն, որոնց բերնին մեջ կազմավորված է իր նախնական ձևը»⁵:

Այնուհետև Վարուժանը վեր է հանում արևելահայերենի ու արևմտահայերենի խոստորումները: Ռուսահայ լեզուն ծայրահեղորեն ժողովրդական եղավ, երբ ռուսահայ վիպագիրները ձգտում էին ժողովրդին նկարագրել և նրան հասկանալի լինել, իսկ թրքահայ վիպագրությունը հակառակ ծայրահեղությանը գնաց՝ անմատչելի մնալով ժողովրդի մեծամասնությանը և հեռացավ գավառից: Երկու պարագայում էլ լեզուն տուժեց:

Վարուժանը համոզված է. «Լեզվի մը բոլոր հատկությունները ուղիղ կը համեմատին միջավայրի ազդեցության և ժողովուրդի մը քաղաքական շարժումին հետ: Արևելյան և արևմտյան աշխարհաբարները և իրենց գրականությունները խորունկ դրոշմը կը կրեն այդ ազդեցության և այդ շարժումին»⁶:

Ապա շարունակում է. «Ահա արևմտյան աշխարհաբարը, գրեթե մաքրված գրաբարի մզանքներեն, բայց անոր շատ մոտ իր ներքին արժեքով, բառերով ու ոճերով, իր ձևերուն մեջ այլազան և բազմատարազ. վեպին մեջ մեղկ, ստեպ սահուն. հզոր՝ քերթողներու և հրապարակագիրներու գրչին տակ և ընդհանրապես ջղուտ:

Իսկ ահա արևելյան աշխարհաբարը՝ մյուսեն գրեթե հակոտնյա իր մշակումով. վեպերուն մեջ բնական, ժողովրդական ու գերազանցորեն քաղցրահնչուն. իր քերթողության և լրագրության մեջ ավելի հոետորական, քան թե հզոր, ավելի վարդապետական, քան թե իտեալական»⁷:

Մատնանշելով խնդիրները՝ Վարուժանն ուրվագծում է նաև դրանց լուծումները: Աշխարհաբարի մշակումն ըստ Վարուժանի կարող է ընթանալ երկու ուղղությամբ՝ «պայմանադրապես» և «բարեշրջումով», իսկ այդ ամենը պետք է կատարեն քերականներն ու կարող գրագետները, որոնց լուրջ գործակցության շնորհիվ պետք է վերջնականապես մաքրել լեզուն գրաբարի և գավառաբարբառի քերականական ձևերից: Ըստ էության Վարուժանը դնում է գրական լեզվի մշակման և համագործածական դարձնելու պահանջ՝ շեշտադրելով ու կարևորելով լեզվի քերականական նորմերի հստակեցումն ու հաստատումը, որը պետք է գերծ լինի «ամեն գրողի քմահաճույքեն»:

Ինչ վերաբերում է բարեշրջմանը, ապա ըստ Վարուժանի «ան իր մեջ պիտի որդեգրե գավառին բառերը, ոճերը, լեզվական երանգները, բայց այդ բոլորը գերծ պիտի ըլլան թրքաբանություններե, և պիտի հպատակի իր ձևերուն մեջ միակ քերականության մը. . . .»⁸:

⁵ Տե՛ս Նույն տեղում, էջ 121:

⁶ Տե՛ս Նույն տեղում, էջ 127:

⁷ Տե՛ս Նույն տեղում:

⁸ Տե՛ս Նույն տեղում, էջ 125:

Աշխարհաբարը գրաբարաբանություններից մաքրելու Վարուժանի պահանջը, սակայն, չի ենթադրում գրաբարից լիովին հրաժարում. «Ինչպես արդի սերունդին ուղևորելու ծուծը պետք է կազմե մեր նախնիներուն նկարագիրը, այդպես ալ արդի լեզվին մեջ հարկ է, որ կանգնի գրաբարի միջնասյունը»⁹:

Ավելին. «Գրաբարի դեռ շատ մը ասացվածքները ու ոճերը իրենց հնաբույր աղվորությամբ կրնան վերանորոգվիլ, աշխարհաբարանալ ու մեր արդի լեզվին տալ կենեղուտ առուգություն մը»¹⁰:

Հիմքում ունենալով գրաբարը՝ զարգացնել աշխարհաբարը՝ ժողովրդական հարուստ նյութն օգտագործելով և հրաժարվելով օտարաբանություններից. ահա Վարուժանի գծած ուղին:

Դիտարկենք Թումանյանի մոտեցումը. «Մեր լեզուն դեռ կազմակերպվելու ջրջանի մեջն է, և ամեն գրող ընտրում է իրեն համար մի ճանապարհ: Նրանց առջև են և՛ գրական լեզուն, և՛ գրաբարը, և՛ բարբառները, և՛ օտար լեզուները... Գրողը իր լեզուն հարստացնելու, կազմելու համար ազատ է օգտվելու եղբուր աղբյուրներից, միայն թե պետք է իմանա շնորհքով, խելացի օգտվել և տեղը գործածել»¹¹:

Թումանյանը դեմ չէ փոխառություններին, մանավանդ երբ «անճիշտ կամ անշնորհք թարգմանությունները ավելի շատ են վնասում լեզվին, քան ուղղակի փոխառությունները»¹²:

Այս հարցում նկատելի է Թումանյանի անհամաձայնությունը պոլսահայերի լեզվամշակման քաղաքականությանը, որոնք անվերապահորեն ամեն բառ թարգմանելու «շինելու» գիծն էին բռնել:

Ինչ վերաբերում է օտար բառերի ու արտահայտությունների անհարկի ներմուծմանը, Թումանյանը վճռականորեն դեմ էր դրան և կանգնած առողջ մոտեցման կողմը՝ լեզվի մշակման ու հարստացման հիմնական աղբյուր համարելով ժողովրդական լեզուն՝ չխորշելով նաև գրաբարից ու բարբառներից:

Միանգամայն բնական ու համարժեք համեմատությամբ Թումանյանը հակադարձում է ժողովրդական լեզուն գեղեցիկ ու հարուստ չհամարողներին՝ ասելով. «Այո՛, գեղեցիկ ու հարուստ չէր և ինքը՝ հայոց ազգային ոգու մարմնացումը, Սասունցի Դավիթը, քանի որ մի արհամարհված նախրապանի վիճակի մեջ էր և կոշտ լեռնականի պարզությամբ նախիր էր արածեցնում ու չգիտեր, թե ինչ ուժ կա թաքնված իրեն մեջ կամ ինչ ապագա՝ պահված իր առջև. մինչև որ խորհրդավոր ժամը հասավ, ունեցավ իր ուժի գիտակցությունը, մտավ արդարությամբ իրեն վերապահված իրավունքի մեջ, հագավ հայրական զինավառությունը, հեծավ Քուռիկի-Ջալալին, ձեռքն առավ Թուր Կեծակին ու... միանգամից վերջացավ ամեն վեճ ու ամեն տարակուսանք:

⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 126:

¹⁰ Տե՛ս նույն տեղում:

¹¹ Տե՛ս Թումանյան Շ., *Երկերի լիակատար ժողովածու, 10 հատորով, հ. 6, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 237:*

¹² Տե՛ս Թումանյան Շ., *Երկերի լիակատար ժողովածու, 10 հատորով, հ. 7, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1995, էջ 289:*

Մինչև էս պապենական հոգևոր զենք ու գրահով՝ հայ ժողովրդի կենդանի խոսքով չգինավառվի հայ գրողը, միշտ պիտի մնա սրա նրա դռանը՝ փոխառություններ ու թարգմանություններ որսալով, ինչպես Դավիթն էր մի ժամանակ լոր որսում պառավի արտում»¹³:

Եվ մեկ անգամ չէ, որ հիշատակում է այդ խիստ անհրաժեշտ աղբյուրը՝ չմոռանալով մյուսների մասին. «Էս հանգամանքներում մի ազգային ընդհանուր գրական լեզվի խնդիրը առաջնակարգ խնդիր է: Իսկ էդ լեզուն ստեղծելու համար պետք է հավաքել բարբառների բառամթերքը, կազմել հայոց կենդանի լեզվի բառարանը, բոլոր բարբառների բառերի ու ոճերի գանձարանը: (Գրաբարին էլ իր կարգին, հարկավ)»¹⁴:

Լեզվի մշակման ու կատարելագործման հարցում կարևորելով գրողների դերը՝ Վարուժանը առանձնահատուկ ակնածանքով է խոսում Ատոմ Յարճանյանի մասին («Յարճանյանի քերթողությունը»): Համարժեք պատասխան տալով բոլոր մեղադրանքներին՝ Վարուժանը գրում է. «Յարճանյանի լեզուն գրաբարեն սերած Փոքր Հայքի լեզուն է, իսկական աշխարհաբարը, զոր թրքահայ գրագետներուն մեծամասնությունը կը կիրարկե»¹⁵: Դա Պոլսի հայերենը չէ, ինչպես կարծում են շատերը, «այն աշխարհաբարը, որ կ'արտահոսի տիկ. Զապել Եսայանի, Ռուբեն Զարդարյանի, Արտ. Հարությունյանի, Նոր Մխիթարյաններուն և մյուս թրքահայ գրագետներուն գրիչեն հեռի է պոլսահայերեն ըլլալեն. ան Եփրատեն Ալիս և Ալիսեն մինչև Վոսփոր տարածվող հայության մը բարբառն է գրաբարի արմատներեն ընձյուղած»¹⁶:

Ինքն իր մասին խոսելիս Վարուժանը շեշտում է. «Գաղափարիս մեջ կ'ընտրեմ Պայրընը կամ Նիցչեն, բայց արվեստիս մեջ կը նախընտրեմ Քուչակը (իհարկե, ավելի սանտրված ու մաքուր)»¹⁷:

Այս տեսակետից Վարուժանը բարձր է գնահատում Խ. Աբովյանի սխրանքը՝ հիացմունք տածելով եվրոպական մտքի և հայկական ոգու համադրման՝ նրա տաղանդի հանդեպ: «Եթե Ձեզ հավասար թափով կը սիրեմ Աբովյանը,- գրում է նա Չոպանյանին,-իր ցուլացիկ հայությունն է՝ կրթված և եվրոպականացված կենդանացնող ոգիի մը շուրջը: Ո՛ր էր նա տաճկահայերուս նոր գրականությունն ալ ունենար այդպես հայադրոշմ հիմնադիր մը»¹⁸:

Հայերենի հանդեպ իր անպարագիծ սերը Վարուժանը ցուցադրել է մեկ արտահայտությամբ. «Ես կը սիրեմ շովինիզմը հանդեպ իմ լեզվիս ու իմ ինքնությունությանս»¹⁹:

Վարուժանի լեզուն ու ավյունն էլ անտեսանելի չեն մնացել և նրա՝ 1972 թվակիր ֆրանսերեն ժողովածուի մեջ կարող ենք կարդալ ֆրանսիացի Լուի Անդրե

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 295-296:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 333:

¹⁵ Տե՛ս Վարուժան Դ., *Երկերի լիակատար ժողովածու, երեք հատորով, հ. 3, Եր., Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 1987, էջ 162*:

¹⁶ Տե՛ս նույն տեղում:

¹⁷ Տե՛ս Վարուժան Դ., *Նամականի, Եր., 1965, էջ 63*:

¹⁸ Տե՛ս նույն տեղում:

¹⁹ Տե՛ս Վարուժան Դ., *Երկերի լիակատար ժողովածու, երեք հատորով, հ. 3, Եր., Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 1987, էջ 125*:

Մարտելի խոսքերը. «Վարուժանը առյուծների զարմից է: Նրա լեզուն հմայում է ամեն ինչ համախմբելու իր զորությամբ»²⁰:

Ամփոփելով կարող ենք ընդհանրացնել, որ Դ. Վարուժանն աշխարհաբարի մշակումը տեսնում էր հետևյալ կերպ. հիմնասյուն ունենալով գրաբարը (գերծ վերջինիս քերականական ձևերից ու ասույթի կաղապարներից)՝ ներմուծել բարբառների հարուստ պաշարը, մաքրել օտարաբանություններից, իսկ դա կարող են անել «ճաշակով գրագետները»:

Իսկ Թումանյանն աշխարհաբարի մշակման հարցում ավելի լոյալ գտնվեց՝ մեծ տեղ հատկացնելով ժողովրդական բառ ու բանին, չխորշեց նաև փոխառություններից:

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ЛИНГВИСТИЧЕСКИХ ВЗГЛЯДОВ Д. ВАРУЖАНА И О. ТУМАНЯНА-ЛИАНА САНТРЯН- Живя и творя в начале XX века, Даниел Варужан и Ованес Туманян были озабочены развитием нового языка - ашхарабара. Если в результате грапайкара (борьба языков) победа ашхархабара в восточноармянской части была зафиксирована раньше, то в западноармянской части она длилась дольше, поэтому вопросы, затронутые в статьях и письмах Д. Варужана, охватывают более широкий спектр. Можно выделить 5 основных направлений, к которым обратился Варужан, предложив свои способы решения: 1. формирование литературного языка ашхарабар, 2. разработка восточноармянского и западноармянского литературного языка, 3. очищение ашхархабара от древнеармянского, 4. очищение ашхархабара от заимствований, 5. обогащение литературного языка диалектным материалом.

Что касается Туманяна, он считает формирование ашхарабара уже завершенным и в качестве основных источников разработки языка упоминает в первую очередь диалекты, затем грабар и заимствования из иностранных языков.

Ключевые слова: *Даниил Варужан, Ованес Туманян, грапайкар, восточноармянский, западноармянский, древнеармянский, иноязычные слова, диалектные слова, развитие языка, чистка языка.*

COMPARATIVE EXAMINATION OF LINGUISTIC VIEWS D. VARUZHAN AND H. TUMANYAN-LIANA SANTRYAN- Living and creating at the beginning of the 20th century, Daniel Varuzhan and Hovhannes Tumanyan were concerned about the development of a new language Ashkharabar. If as a result of the grapaykar (the struggle of languages) in the East-Armenian part the victory of Ashkharhabar was registered earlier, in the West-Armenian part it lasted longer, so the issues raised in D. Varuzhan's articles and letters cover a wider spectrum. There are 5 main directions that Varuzhan turned to offering his own

²⁰ Տե՛ս Գաբրիելյան Վ., Դանիել Վարուժան՝ մեծագույն փառքերից մեկը մեր նոր քնարերգության, (Դանիել Վարուժանի 125-ամյակը), Եր., 2009, էջ 344:

solutions: 1. the formation of the literary language Ashkharabar, 2. the development of the East-Armenian and West-Armenian literary languages, 3. the cleansing of Ashkharhabar from Grabar, 4. the cleansing of Ashkharhabar from borrowings, 5. the enrichment of Ashkharabar with dialect material.

As for Tumanyan, he considers the formation of Ashkharabar already completed and as the main sources for the development of the language he mentions first of all dialects, then Grabar and borrowings from foreign languages.

Key words: *Daniel Varuzhan, Hovhannes Tumanyan, grapykar, East-Armenian, West-Armenian, Old Armenian, words of foreign languages, dialect words, language development, language cleansing.*

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՁ

Ժամանակակից կրթության զարգացումը համաշխարհային մակարդակի, բազմակողմանի, լայնամասշտաբ գործընթաց է: Կրթությունը անընդհատ վերափոխվում է, կատարելագործում բովանդակությունը՝ ձգտելով մոտենալ տեխնիկական և տեխնոլոգիական հեղափոխության արդի դարաշրջանի սոցիալական, քաղաքական և մանկավարժական պահանջներին: Համաշխարհային մանկավարժության և դպրոցի զարգացման կարևոր դրական միտումներից են՝ կրթության հումանացումը, անձնակողմնորոշված մոտեցման ապահովումը:

Ճգնաժամային երևույթների հաղթահարումը և առաջխաղացումը կրթության բնագավառում տեղի են ունենում հնի վերափոխման, նոր սկզբունքային մոտեցումների դրսևորման, ինչպես նաև մանկավարժությանն ու կրթությանը այլ բովանդակություն հաղորդելու միջոց

Բանալի բառեր՝ տեխնոլոգիական հեղափոխություն, սոցիալական, մանկավարժական պահանջներ, համաշխարհային մանկավարժություն, դպրոցի զարգացում, դրական միտումներ, կրթության հումանացում, անձնակողմնորոշված մոտեցման ապահովում, ժամանակակից կրթության զարգացում:

Կրթության վերաբերյալ ավանդական պատկերացումներն այսօր արմատական փոփոխություններ են կրում: Ընդլայնվում է կրթական տարածքը, կրթական գործընթացի մեջ են ներառվում ազգաբնակչության ստվար զանգվածներ, կյանք են մտնում տեղեկատվության նոր աղբյուրներ, ստեղծվում են ժամանակակից հայեցակարգեր և այլն: Այդ ամենը անհրաժեշտություն է առաջացնում կրթական գործընթացների քննարկումը առավել լայն սոցիալական և մեթոդաբանական համատեքստում:

Այսօր շատ կարևոր է անդրադառնալ կրթության ժամանակակից խնդիրներին, գիտատեխնիկական հեղափոխության դարաշրջանում կրթության սոցիալ-քաղաքական և գիտամանկավարժական պահանջներին և այլ հարցերի, որոնք վկայում են դրանց հրատապության մասին:

Կրթության դերի արմատական վերափոխումն արդի հասարակական կյանքի զարգացման կարևոր պայմանն է: Կրթությունը, որպես սոցիալական ինստիտուտ, մարդու մեջ ձևավորում է ոչ միայն գիտելիքներ աշխարհի մասին, այլև զարգացնում է անձի համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային այլ կարևոր որակներ: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է տակավին վերափոխել կրթության բովանդակությունը և այն համահունչ դարձնել զարգացող հասարակության կենսական պահանջներին:

Այսօր մանկավարժության արդի խնդիրների մեջ կարևորում է կրթության «անձնակողմնորոշիչ» հասկացությունը՝ այն համարվում է ակտիվ քաղաքացիական դիրքորոշում ունեցող անհատի կարևոր հատկանիշը, ուսումնական նպաստավոր միջավայրի կարևոր պայմաններից մեկը: Այսօր կրթական ոլորտում քննարկվում են նաև կրթական համակարգին և ուսուցման գործընթացում նրա բարեփոխումներին, անձի ստեղծագործական մտածողության առանձնահատկություններին առնչվող հարցեր:

Այսօր ուսուցումն ու դաստիարակությունը դիտարկվում է որպես կրթության հումանացման գործընթաց, որն ուղղված է անձի մշակութային և հոգևոր կերպարի զարգացմանը: Հասարակական հարաբերությունների ամբողջ համակարգի հումանացումը դիտարկվում է որպես ժամանակակից հասարակության զարգացման գերակա գործոն¹: Հումանիզմը մարդու՝ որպես անհատի արժեքը, ազատ զարգանալու և սեփական ընդունակությունները բացահայտելու հանրագումարն է: Հումանացումը մարդասիրության՝ որպես մարդկանց կենսագործունեության իրական հիմքի ամրապնդումն է, որն առնչվում է համամարդկային արժեքների գերակայության, մարդու ընդունակությունների ազատ զարգացման իրավունքի ընդունման հետ:

Կրթության հումանացումը ենթադրում է կրթության բովանդակության մեջ մշակութային բաղադրիչի զարգացում, որը նպատակաուղղված է հասարակական հարաբերություններում և կրթական համակարգում կենտրոնական տեղ գրավող անձի կատարելագործմանը, նրա ճանաչողական և ստեղծագործական ընդունակություններին, ինքնուրույնության զարգացմանը, շարունակական կրթության ձգտման խթանմանը: Մանկավարժությունը, հետևելով մարդասիրական ուղղվածությանը, մասնագիտական գործունեությունը դիտարկում է որպես երեխայի անձի դաստիարակության և ինքնազարգացման միջոց²:

Մանկավարժի պահանջներն ու նպատակները պետք է համատեղվեն սովորողների ցանկությունների ու նպատակների հետ: Մանկավարժական կրթությունն այսօր դիտարկվում է որպես հումանիտար կրթություն, որը հնարավորություն է տալիս շրջանավարտին աշխատել, համագործակցել մարդկանց հետ, փոխանցելով մշակութային արժեքային համակարգ, ինքնադրսևորման ձևեր: Ուստի ժամանակակից մանկավարժական ուսումնական հաստատությունն ավարտած շրջանավարտը տիրապետում է ոչ միայն մասնագիտական ոլորտին, այլ նաև կարող է գործել ավելի լայն շրջանակներում՝ աշխատել «մարդ-հասարակություն-մարդ» համակարգում:

Մանկավարժական ոլորտում շատ կարևոր է աշխատանքի արժեքային համակարգի և բարոյական նորմերի ընդունումը: Այսօրվա մանկավարժը պետք է օժտված լինի մարդկանց հասկանալու, ընդունելու, աջակցելու կարողությամբ: Եվ ինչպես

¹ Թովուզյան Ս.Օ., Երեխայի ինքնազարգացման հումանիստական պայմանները, մանկավարժական միտք, Ձանգակ-97, Երևան, 2005, N4, 125 էջ:

² Թովուզյան Ս.Օ. Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրը մանկավարժության մեջ «Լինգվա» հր: Երևան: 2009, էջ 224:

Վ.Ա. Սուխումլիսկին էր նշում.-«Երեխայի համար ամենալավ ուսուցիչը նա է, ով հոգեպես շփվելով նրա հետ մոռանում է, որ ինքն ուսուցիչ է, և իր աշակերտների մեջ տեսնում է ընկերոջ, համախոհի: Այդպիսի ուսուցիչը գիտի իր սաների սրտի ամենամիտրական անկյունները»³:

Կրթության դերն անընդհատ աճում է, և այն «վերաճում է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժեքավորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային որակներ»: Այսօր անհրաժեշտ է, որ մարդն ունենա ոչ միայն գիտելիքների որոշակի պաշար, այլև կարողանա այդ գիտելիքները համապատասխանաբար կիրառել: Արդի հասարակության մեջ ապրող մարդուն անհրաժեշտ են հաղորդակցվելու, համագործակցելու, ուրիշի կարծիքը լսելու և գնահատելու, իր տեսակետը հիմնավորելու, ինքնուրույն դիրքորոշում ունենալու, իր որոշումները գնահատելու ու դրանց համար պատասխանատվություն կրելու կարողություններ ու հմտություններ: Ժամանակակից աշխարհում կրթությունը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժեքավորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային անհրաժեշտ որակներ:

Մանկավարժության արդի հիմնախնդիրների մեջ անձնակողմնորոշված մոտեցումը, գրավում է ուրույն տեղ: Նրա նպատակն է ձևավորել այնպիսի անհատ, քաղաքացի, որն ունի ակտիվ քաղաքացիական դիրքորոշում, համակարգային և քննադատական մտածողություն, սոցիալական ու էկոլոգիական կողմնորոշում, արդյունավետ հաղորդակցվելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու կարողություններ: Անձնակողմնորոշված մոտեցումը դարձել է կրթական նորմատիվային փաստաթղթերի նոր սերնդի հիմքը: Անձնակողմնորոշված մոտեցումը, բնականաբար, փոխում է նաև ուսուցչի գործառույթները: Ուսուցչի գլխավոր խնդիրն է դառնում սովորողի անձի զարգացման համար համապատասխան պայմանների՝ ուսումնական միջավայրի ստեղծումը⁴:

Կրթության հիմնական նպատակներն ուղղված են անձի ձևավորմանն ու զարգացմանը: Կրթության մեջ անձի զարգացման նկատմամբ անձնակենտրոն մոտեցումն առավել լիարժեքորեն է արտացոլում դպրոցական կրթության ժամանակակից նպատակները:

Այսպիսով, կրթական համակարգը կոչված է ձևավորել այնպիսի անհատներ, որոնք ի վիճակի կլինեն կատարելագործել ու զարգացնել հասարակությունը, այսինքն՝ ձևավորել լիարժեք զարգացած անձնավորություն:

Անհատի կատարելագործումն ու զարգացումը ենթադրում են նախ և առաջ նրա բարոյական և հոգևոր հիմքերի զարգացում: Մարդն իր բնությամբ հասարակական ազատ էակ է: Իր ազատությունից ճիշտ օգտվել կարողանալու համար նա պետք է

³ Միմոնյան Յ., Հայ մանկավարժության պատմություն: Երևան: <<Արարատ>> հր: 2006: էջ 186:

⁴ Թովուզյան Ա.Օ., Միջավայրի հումանացումը որպես երեխայի լիարժեք զարգացման կարևոր բաղադրիչ, Կանթեղ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, Աստղիկ, 2008, N4, (37), 211-226 էջ:

ենթարկվի որոշակի կարգ ու կանոնի, հասարակության մեջ արժանապատվորեն ապրելու համար պետք է ունենա որոշակի բարոյական սկզբունքներ, իսկ առավել լիակատար ու լիարժեք զարգացման համար մարդուն որոշակի մտավոր և բարոյական հիմքեր են անհրաժեշտ⁵:

Կրթական բարեփոխումների համատեքստում այսօր շեշտը դրվում է թե՛ կրթության, թե՛ ինքնակրթության, ինքնազարգացման ու ինքնակատարելագործման վրա: Ուստի դպրոցը պետք է կարողանա դառնալ սովորողների ինքնազարգացող, ինքնակատարելագործող համայնք, ինչը կնպաստի երեխաների զարգացնող կրթության համար համապատասխան միջավայրի ստեղծմանը: Աշակերտն աշխատում է լայն տեղեկատվական դաշտում, տեղեկատվության տարբեր տեսակետների հետ, որի արդյունքում ձևավորվում է սեփական տեսակետը, ստեղծագործական մտածողությունը, որն էլ մարդուն հնարավորություն է տալիս կանխատեսել այս կամ այն երևույթի, իրադարձության զարգացումը, նոր գաղափարներ ստեղծել, սեփական տեսակետն ու դիրքորոշումը հիմնավորելու համար փաստեր ու փաստարկներ գտնել, ձեռք բերած գիտելիքները կիրառել այլ՝ ոչ ստանդարտ իրավիճակներում, մտավոր փորձաքարություն անել:

Սովորողի ինքնուրույն մտածողության զարգացումը նույնպես լիարժեք չի կարող ձևավորվել կենսափորձի սակավության պատճառով: Մրա զարգացումն էլ պետք է շարունակական ու անընդհատ լինի:

Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների և մեթոդների վերանայում և հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ որպես հանրային կրթության հիմնական օղակի, նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում: Որպես պետականության կայացման երաշխիք, այսօր կրթական համակարգի պահպանումը, նրա հետագա զարգացումը, մրցունակության ապահովումը միջազգային ասպարեզում համարվում է ազգային կարևորության խնդիր: Արդի պայմաններում այդ խնդրի իրագործումը հնարավոր է հանրակրթական ոլորտի բարեփոխումների միջոցով⁶: Կրթության համակարգի բարեփոխումների անհրաժեշտությունը կանխորոշվում է երկրի փոփոխվող սոցիալ-քաղաքական, տնտեսական վիճակով, հասարակության զարգացման մակարդակով: Յուրաքանչյուր հասարակություն իր վրա պարտավորություն է վերցնում ապահովել վաղվա իր քաղաքացու ձևավորման և զարգացման գործընթացը, որի համար և հաշվետու է դառնում հետագա սերունդների առջև: Գաղտնիք չէ, որ վաղվա քաղաքացու ձևավորման գործընթացի իրականացման ու պատասխանատվության առավել գործնական մասը պատկանում է դպրոցին:

Կրթության համակարգի բարեփոխումները պահանջում են վերանայել ոչ միայն կրթության կառուցվածքը, գործառության կազմակերպական հիմքը, այլև

⁵ Միմոնյան Յ., *Հայ մանկավարժության պատմություն*: Երևան: <<Արարատ>> հր: 2006: էջ 186:

⁶ Վարդումյան Ս., *Քսանմեկերորդ դարի մանկավարժական տեսություններ*, Երևան : <<Նոյան Տապան>> հր: 2005: էջ 84:

ամենակարևորը՝ հանրակրթության բովանդակությունը: Այն բխում է կրթության նպատակներից և խնդիրներից, իսկ կրթության նպատակներն ու խնդիրները սահմանվում է հասարակական զարգացման յուրաքանչյուր փուլին համապատասխան: Բարեփոխվող դպրոցը ենթադրում է կրթության բովանդակության վերանայում, օրինաչափ վերակառուցում, շարունակական գործընթաց⁷:

Այսօր դպրոց պետք է գա այն ուսուցիչը, ով տիրապետում է զարգացնող ուսուցման նորագույն տեխնոլոգիաներին, ով կարող է պահպանել և զարգացնել աշակերտների հետ բարոյական-արժեքային հարաբերություններ, որը և թույլ կտա բավականին ուժեղացնել նրա աշխատանքի զարգացնող և դաստիարակող ուղղվածությունը:

Ճգնաժամային երևույթների հաղթահարումը և առաջխաղացումը կրթության բնագավառում տեղի են ունենում հնի վերափոխման, նոր սկզբունքային մոտեցումների դրսևորման, ինչպես նաև մանկավարժությանն ու կրթությանը այլ բովանդակություն հաղորդելու միջոցով:

Ավանդականությունը աջակցում է կրթության, որպես մշակութային արժեքների վերաթողարկողի, պահպանողականության գործառնությունների դերի պահպանման գաղափարներին: Կրթությունը դիտարկվում է որպես երիտասարդ սերունդներին անցյալի մշակույթի և արժեքային համակարգի փոխանցման յուրահատուկ գործիք: Ավանդականության ներկայացուցիչները նպատակադրված են նոր կյանք տալ համակարգված ակադեմիական կրթությանը:

Այսօր հասարակությունը փորձում է մարդակենտրոն մոտեցումը, համաձայն որի սոցիալական գործընթացները պտտվում են մարդու շուրջ և զարգանում նրա միջոցով: Հաստատվում է այն գիտակցությունը, որ մարդու ինքնորոշումը և զարգացումը հասարակության գլխավոր նպատակն է և նրա գոյության հիմնական արդարացումը: Միաժամանակ անձի զարգացումն իր մեջ կրում է հասարակությանն անհրաժեշտ ստեղծագործական ակտիվության մեծ լիցք և օգտակար գործողության ընդարձակ հնարավորություն: Բացի այդ, կյանքը մշտապես ստեղծում է իրավիճակներ, երբ յուրաքանչյուր անձի իրավունքներն ու արժեքները ստանում են առաջնային նշանակություն⁸:

Շատ մանկավարժներ արդեն հասկանում են, որ երկրում տեղի ունեցող սոցիալ-մշակութային իրավիճակների փոփոխությունը մարդուց պահանջում է այնպիսի արժեքներ և անձնային որակներ, ինչպիսիք են ինքնուրույնությունը, անկախությունը, կամքի ազատությունը, ակտիվ կենսադիրքորոշումը, հանդուրժողականությունը, ամեն ինչ քննության առնելու, տարբեր իրավիճակներում ընտրություն

⁷Թովուզյան Ս.Օ., դաստիարակության հայեցակարգ (նախագիծ) Մանկավարժություն, գիտամեթոդական վերլուծական ամսագիր, Երևան, 2008, 7-8, 128էջ:

⁸ Վարդումյան Ս., Քսանմեկերորդ դարի մանկավարժական տեսություններ, Երևան: <<Նոյան Տապան>> հր: 2005, էջ 84:

կատարելու, ապագան նախագծելու, փոփոխություններն զգալու և դրանց արագորեն հարմարվելու, ժամանակի մարտահրավերներին դիմակայելու կարողությունները: Այսօր աշխարհը թե՛ տնտեսական, թե՛ մշակութային առումով բազմազան է ու բազմամակարդակ: Համաշխարհային կրթական քաղաքականության կայացման, գիտության և կրթության ժողովրդավարացման, գլոբալիզացիայի և միջազգայնացման, նոր մանկավարժական, տեղեկատվական և թվանիշային տեխնոլոգիաների և մուլտիմեդիական կրթական միջոցների զանգվածային ներդրման պայմաններում ի հայտ է գալիս միասնական կրթական տարածքի և միջավայրի ստեղծման անհրաժեշտություն և միտում:

Համաշխարհային կրթական ընկերության առջև գլոբալ խնդիր է դրված՝ որոշել կրթության հիմնախնդիրների և առաջնությունների ստորակարգությունը՝ ելնելով համամարդկային արժեքներից: Հայաստանի կրթությունը, լինելով կրթական համաշխարհային տարածքի բաղկացուցիչ մաս, պարտավոր է ներառվել դրանում՝ միաժամանակ պահպանելով իր կրթության, մշակույթի ազգային առանձնահատկությունները և ավանդույթները: Մեր երկիրը համաշխարհային գործընթացների մեջ մշտապես մրցունակ պահելու, այլ երկրների ու ժողովրդների հետ փոխըմբռնման և արդյունավետ հաղորդակցման մթնոլորտում ապրելու համար կարևորվում է ժողովրդավարական արժեքներին նվիրված և այդ արժեքները կրող բազմամշակույթ, բազմալեզու անձի դաստիարակությունը: Եվ այս ամենը, բնականաբար, փոխում են մասնագիտական և մշակութային պատկերացումները կրթության, մանկավարժական գործընթացի մասին⁹:

«Հանրակրթության պետական կարգում» նշվում է, որ կրթության դերն աճում է. միաժամանակ կրթությունը վերաճում է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժեքումանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային որակները: Այս իմաստով, դպրոցական կյանքի ժողովրդավարացման և հումանացման գաղափարներն այսօրվա հայտնագործությունն չեն: Երեխայի անձի հոգևոր, մտավոր, ֆիզիկական բոլոր ուժերի ամբողջական և ազատ բացահայտմանն ուղղված ուղիների ու միջոցների փնտրտուքը միշտ էլ եղել է դաստիարակության նշանավոր տեսաբանների և պրակտիկ մանկավարժների ուշադրության կենտրոնում¹⁰:

Ժամանակակից մանկավարժությունը, հենվելով մանկության բարձրարժեքության մասին մանկավարժ-հումանիստների տեսակետների վրա, գտնում է, որ մանկությունը հենց ինքը կյանքն է և ոչ թե կյանքին նախապատրաստելու շրջան: Մանկության բարձրարժեքության ընդունումը դարձել է հումանիստական դաստիարակության ժամանակակից հայեցակարգի անկյունաքարային գաղափարներից մեկը: Երեխան, նրա հետաքրքրությունները և պահանջմունքները դրված են մանկավարժի և

⁹ Джуринский А. Н. Развитие образование в современном мире, М.изд. центр ВЛАДОС 2013., ст. 158:

¹⁰ Зубова Л.В. и др. Антропологические основания образования /Оренбург ООИУУ, 1998, ст. 52:

երեխայի փոխհարաբերությունների հիմքում, որը ուսումնադաստիարակչական գործընթացում դիտվում է որպես դաստիարակության լիիրավ սուբյեկտ:

Այսօր հնարավոր չէ բավարարվել միայն երեխային «ճանաչելու» դաստիարակչական գործունեությամբ, անհրաժեշտ է առաջ գնալ և անցնել երեխային «հասկանալու» գործունեության, որն էլ մանկության հումանացման և երեխայի անձի լիարժեք զարգացման երաշխիքն է: Աշխարհի շատ երկրներ բարեփոխում են իրենց կրթական համակարգը: Բնչում է կայանում դպրոցը վերափոխելու գործընթացը: Մեր կարծիքով, առաջին հերթին այն պայմանավորված է ուսումնադաստիարակչական գործընթացում երեխայի ազատության հիմնախնդրի լուծմամբ: Գաղտնիք չէ, որ մշտական ստիպողականությունը երեխայի հոգու մեջ առաջացնում է ընդվզում և ուսուցիչ-աշակերտ հարաբերություններում դառնում բազմաթիվ կոնֆլիկտների պատճառ: Դպրոցում երեխան ազատ չէ: Դեռևս իշխում է ուսուցչի կամքը, որը ձգտում է հսկել և վերահսկել երեխայի մտքի և զգացմունքների բոլոր դրսևորումները, նրանից պահանջում է խոսել, գրել, ասել, ընկալել միայն այն, ինչը պիտանի է ավագի, մեծի, ուսուցչի համար: Այս իմաստով, կարող են օգտակար լինել երեխայի ազատության մասին անվանի մանկավարժների տեսական և գործնական եզրահանգումները:

Մարդու ինքնազարգացման ներուժը բացառիկ է և անկրկնելի: Որպեսզի բացահայտվեն երեխայի մեջ թաքնված նախադրյալները, և ինքնաիրացման ընդունակությունը դրսևորվի, անհրաժեշտ է խուսափել մեծերի և փոքրիկների միջև հակասությունից, ստեղծել համագործակցության մթնոլորտ՝ նրանց նկատմամբ դրսևորելով վստահություն: Նման մթնոլորտում փոխվում է անձի ինքն իրեն ճանաչելու և ընկալելու ձևը, նա դառնում է ավելի գործունակ, կարողանում է իրատեսորեն գնահատել սեփական հնարավորությունները, և ինքն է գտնում իր ինքնադրսևորման ուղիները: Այդ դեպքում նա կարող է ինքնաիրացվել: Միաժամանակ նա ավելի լավ է ընդունում իր շրջապատի մարդկանց, ավելի բաց է նրանց առջև, վստահում և դառնում է ինքնավստահ: Մանկավարժի կողմից նման հոգեբանական մթնոլորտը երեխային դարձնում է առավել ինքնակառավարվող, ստեղծագործող: Ճիշտ կառուցված աշակերտ-ուսուցիչ հարաբերությունները, երկուսն էլ պայմաններ են ստեղծում երեխաների անձնային որակների, ակտիվության զարգացման, ստեղծագործական մասնակցության, ինքնակատարելագործման պահանջմունքի առաջացման և բավարարման, ունակությունների ձևավորման համար: Դաստիարակության մեջ հենց նման մոտեցում է ապահովում սուբյեկտ-սուբյեկտային հարաբերությունների զերակայությունը: Այսինքն՝ դաստիարակի՝ ղեկավարող և նրա սանի ենթարկվող դիրքը վերափոխվում է համագործակցող մարդկանց հավասար հարաբերությունների: Անհրաժեշտ են առաջնորդող դաստիարակներ, ովքեր առաջնորդում, օգնում, ակտիվացնում, խթանում են երեխայի զարգացման ձգտումը, պայմաններ են ստեղծում ինքնաառաջընթացի համար¹¹:

¹¹Сластенина В.А. , Колесниковой И.А. Воспитательная деятельность педагога: учеб. пособие для студ. высш. учеб. заведений / под общей редакцией. – Москва: Изд.-во «Академия», 2005, ст. 186, 204:

РАЗМЫШЛЕНИЯ ОБ ОСНОВНЫХ ПРОБЛЕМАХ СОВРЕМЕННОГО ОБРАЗОВАНИЯ- ЭЛЛАДА БАГДАСАРЯН -Развитие современного образования это мирового уровня, многогранный, широкомасштабный процесс. Образование постоянно преобразовывается, усовершенствуя содержание, пытаясь приблизиться к современным социальным, политическим и педагогическим требованиям технической и технологической революции. Гуманизация образования и обеспечение подхода направленного на личность являются важными, позитивными тенденциями развития мировой педагогики и школы.

Преодоление критических явлений и продвижение в сфере образования происходят на основе преобразования старого, представления новых принципиальных подходов, а так же при помощи внедрения иного смысла в педагогику и образование.

Ключевые слова: *развитие современного образования, мировой уровень, широкомасштабный процесс, технологическая революция, социальный, педагогические требования, мировая педагогика, развитие школы, положительная тенденция, гуманизация образования, обеспечение подхода направленного на личность, Развитие современного образования*

THOUGHTS ON MODERN PROBLEMS OF THE EDUCATION-ELLADA BAGHDASARYAN - The development of the modern education is a world-level, multisided, large-scale process. The education changes permanently, improves the content trying to approach to modern, social, political and pedagogical demands of technical and technological revolution. Humanization of the education and assurance of an approach directed to a person are among the positive tendencies of the development of world pedagogic and school.

The overcoming of critical facts and development in education take place on the improving of old one, presenting of new principal approaches, as well as providing new meaning into pedagogics and education.

Key words: *world level, large-scale process, technological revolution, social, pedagogical demands, world pedagogic, development of school, positive tendencies, humanization of the education, assurance of an approach directed to a person, development of the modern education.*

ՀԵՌԱՎԱՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

XXI դարում թվային տնտեսության զարգացումը պահանջում է այնպիսի հասարակության ձևավորում, որի համատեքստում պետական կարևորագույն խնդիր է կրթության համակարգի մրցունակության ապահովումը: Հեռավար ուսուցումը ժամանակակից կրթության բաղկացուցիչ մասն է, որը հիմնված է տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման վրա: Հայաստանում համավարակի պայմաններում օնլայն կրթությունը դարձավ հրատապ իրողություն:

Բանալի բառեր՝ համավարակ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, թվային տնտեսություն, հեռավար ուսուցում, էլեկտրոնային ուսուցում, օնլայն դասընթացներ, հեռավար կրթության հարթակներ, ZOOM հարթակ, Google Meet հարթակ, Moodle համակարգ:

Կրթության ոլորտն առանցքային նշանակություն ունի յուրաքանչյուր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համատեքստում: Այն գիտելիքահենք տնտեսության կառուցման անկյունաքարն է: Կրթության ոլորտը այն յուրահատուկ ոլորտներից է, որը չնայած ակադեմիական կայունությանն ու պահպանողականությանը՝ ամենադինամիկ զարգացողներից մեկն է համաշխարհային տնտեսությունում:

Աշխարհում նոր տեսակի կորոնավիրուսի (COVID 19) բռնկումը մեծ փոփոխություններ բերեց սոցիալական փոխհարաբերություններում և դրանց կազմակերպման գործընթացում: Կրթական հաստատությունները ևս բացառություն չկազմեցին: Կորոնավիրուսի տարածումով պայմանավորված՝ ճգնաժամային իրավիճակը թե՛ ամբողջ աշխարհի, թե՛ Հայաստանի կրթական համակարգի համար դարձավ իսկական մարտահրավեր: UNICEF-ը և UNESCO-ն հայտարարեցին, որ աշխարհն այսօր առերեսվում է ոչ միայն առողջապահական, այլ նաև՝ կրթական լուրջ ճգնաժամի հետ:

Նախ՝ քննարկենք **«հեռավար ուսուցում»** եզրույթը: «Հեռավար ուսուցում» տերմինը առաջին անգամ կիրառվել է 1892թ. ԱՄՆ Վիսկոնսի նահանգի համալսարանի հեռակա դասընթացների կատալոգում: Հեռավար ասելով, նկատի են ունեցել ուսուցում հեռավորության վրա, հոմանիշ է եղել «տնային ուսուցում» տերմինը¹: Ժամանակակից աշխարհում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները, որպես ուսուցման գործընթացի կազմակերպման արդյունավետ միջոց, ներդրվել են կրթական բոլոր մակարդակներում՝ նախադպրոցականից մինչև բուհական և հետբուհական: Թվային տնտեսությունում ժամանակակից տեղեկատվական հասարա-

¹ Вайндорф-Сысоева, М. Е. Методика дистанционного обучения : учеб. пособие для вузов / М. Е. Вайндорф Сысоева, Т. С. Грязнова, В. А. Шитова ; под общ. ред. М. Е. Вайндорф-Сысоевой. — М. : Издательство Юрайт, 2017. — с. 11.

կությունը պահանջում է որակապես նոր կրթություն, որի բարեփոխման կարևոր պայմաններից են տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրումն ու կիրառումը: Վերջինս հանդես է գալիս և՛ որպես կրթական համակարգը լրացնող գործիք, և՛ որպես կրթության զարգացման հիմք:

Ներկայումս կրթական հաստատությունները կիրառում են ժամանակակից համակարգչային և հեռահաղորդակցական տեխնոլոգիաներ: Նորագույն տեխնոլոգիաների կիրառումը կրթության ոլորտում իրականացվում է ինչպես *էլեկտրոնային*, այնպես էլ *հեռավար* ուսուցման միջոցով²:

Հեռավար կրթությունը լայն հասկացություն է և ենթադրում է տեխնոլոգիաների ամբողջություն, ինչը թույլ է տալիս ստեղծել հատուկ ուսումնական միջավայր աշխարհի ցանկացած վայրում: «Հեռավար ուսուցում» եզրույթը բնութագրվում է, որպես «կրթական կամ ուսուցողական գործընթաց, որտեղ սովորեցնողն ու սովորողը աշխարհագրականորեն և ժամանակային առումով տարանջատված են, կամ որտեղ սովորողները տարանջատված են միմյանցից կամ ուսումնական նյութերից»:

Ե. Պոլատը հեռավար ուսուցումը դիտարկել է որպես ուսուցման ինքնուրույն ձև, որի դեպքում ուսուցչի և սովորողի միջև կապը հաստատվել է հեռավար ձևով, միաժամանակ պահպանելով ուսումնական պրոցեսի բոլոր գործիքակազմը՝ նպատակ, բովանդակություն, մեթոդներ, կազմակերպչական ձևեր, ուսուցման առանձնահատուկ ձևեր: Այս ամենը իրականացվելու է ինտերնետ-տեխնոլոգիաների կամ այլ ինտերակտիվ տեխնոլոգիաների միջոցով⁴:

Հեռավար ուսուցումը, լինելով ժամանակակից կրթության բաղկացուցիչ մաս, ունի ինչպես առավելություններ, այնպես էլ թերություններ: Հեռավար ուսուցման համակարգի առավելություններից են.

- ուսանողի կողմից ժամանակի արդյունավետ օգտագործումը,
- միջանկյալ և վերջնական քննությունների հանձնումը թեստային եղանակով, որոնց արդյունքներն ամփոփվում են անմիջապես,
- լաբորատոր ու գործնական պարապմունքների կազմակերպումը հարցերի և թեստերի միջոցով՝ համակարգում ներառված համապատասխան ծրագրերից օգտվելով,
- հնարավորություն է տալիս բացահայտել ուսուցման արդյունավետությունը հենց գործընթացի մեջ,
- ավելի մեծ թվով ուսանողների ներգրավումն ուսումնական համակարգում և այլն:

Այս առավելությունները թույլ են տալիս ապահովել կրթական պրոցեսի անընդհատությունը կորոնավիրուսի համավարակի պայմաններում:

Թերություններից են՝

² Информационные и коммуникационные технологии в дистанционном образовании, под редакцией М. Г. Мура. Институт ЮНЕСКО по информационным образованиям, М., 2006, с. 18.

³ Michael Grahame Moore, William G. Anderson, Handbook of distance education, 2003, page 17-18

⁴ Теория и практика дистанционного обучения : учеб. пособие для пед. вузов / Е. С. Полат, М. Ю. Бухаркина, М. В. Моисеева ; под ред. Е. С. Полат. М. : Академия, 2004. С. 12.

- դասախոսի ու ուսանողի միջև անմիջական կապի բացակայությունը, ինչը կարող է հանգեցնել ուսանողի իրական գիտելիքների դժվար վերահսկողությանն ու գնահատմանը,
- գիտելիքների ստուգման ժամանակ սովորողի ինքնության պարզելը,
- որոշ գործնական հմտություններ կարելի է ձեռք բերել միայն անմիջական շփման դեպքում, բայց ոչ օնլայն,
- հեռավար սովորելու ցանկություն ունեցողներից ոչ բոլորն ունեն անհատական համակարգիչ և համացանց, դժվար է ապահովել անընդհատ մուտք դեպի տեղեկատվական աղբյուրներ, ինչպես նաև տեխնիկական պատրաստվածություն՝ հեռավար ուսուցման միջոցների կիրառման համար և այլն⁵:

Հեռավար կրթության անհրաժեշտությունը ստեղծված իրավիճակում և ապագայում ստիպում են վերանայել ուսուցման թերություններն ու առավելությունները՝ հաշվի առնելով, որ Հայաստանի բոլոր կրթական հաստատությունները մոտ ապագայում ևս կանցկացնեն հեռավար ձևաչափով:

Հեռավար ուսուցման հարթակը համակարգչային ծրագրերի փոխկապակցված համալիր է, որոնք նախատեսված են կազմակերպելու և իրականացնելու հեռավար ուսուցում: Ժամանակակից հեռավար հարթակներում ուսուցումը սովորաբար կոչվում է ուսուցման կառավարման համակարգեր: Հեռավար կրթության նկատմամբ աճող պահանջարկին ի պատասխան զարգանում են թվային ուսուցման բազմաթիվ հարթակներ և գործիքներ, որոնք, ֆունկցիոնալ նշանակությունից ելնելով, կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ հեռավար կրթության կառավարման համակարգեր (ինչպիսիք են, օրինակ՝ Google Classroom և Moodle), բջջային հեռախոսներով ուսուցման համար նախատեսված համակարգեր, բաց առցանց դասընթացների հարթակներ (EdX, Coursera, Udemy), ինքնուսուցման միտված համակարգեր և այլն⁶:

Գոյություն ունեցող առցանց ուսուցման համակարգերից ամենատարածվածն թերևս Moodle համակարգն է: Moodle-ը բաց կոդով էլեկտրոնային ուսուցման միջավայր է և հայտնի է որպես ուսուցման կառավարման Learning Management Systems համակարգ:

Moodle համակարգի առավելություններն են՝

- բաշխված է բաց կոդով,
- կենտրոնացնում է համատեղ ուսուցման տեխնոլոգիաների վրա,
- հաղորդակցման լայն հնարավորություններ ունի,
- ստեղծում և պահում է յուրաքանչյուր սովորողի անձնական տվյալները,

⁵ Մանուկյան Ա., Հեռավար ուսուցումը որպես գիտակրթական համակարգի բաղադրիչ, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի *հիմնադրման 25-ամյակին* նվիրված «Գառավարման ժամանակակից հիմնախնդիրները» միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., 2019, էջ 62-71:

⁶ UNESCO. Distance learning solutions.

<https://en.unesco.org/covid19/educationresponse/solutions>.

- հնարավորություն է տալիս ցանկացած վարկանիշային համակարգի օգտագործումը,
- նյութը կարող է ներկայացվել ցանկացած դեպքում,
- ընտրված հաջորդականություն,
- թույլ է տալիս կազմակերպել դասընթացներ, որպեսզի ուսանողները կարողանան օգտագործել դրանք իրական ժամանակում, առանց դասավանդողի⁷:

Հակիրճ ներկայացնենք հեռավար ուսուցման իրավական հիմքը: «Կրթության մասին» ՀՀ օրենքում սահմանվում են կրթության ձևերը, մասնավորապես. «Մոլորող-ների կարողություններին և պահանջմունքներին համապատասխան՝ կրթական ծրագրերն իրականացվում են առկա (ստացիոնար), հեռակա, հեռավար (դիստանցիոն) և դրսեկության (ընտանեկան և ինքնակրթության) ձևերով»⁸, և միայն «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում է նշվում, որ դա համակարգված ուսուցման ձև է, երբ անմիջական և ոչ անմիջական գործընթացն ուսանողի կամ ունկնդրի և դասախոսի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաներով և հեռահաղորդակցության միջոցներով⁹: Բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական ծրագրերը կարող են ներդրվել ուսուցման տարբեր ձևերում՝ առկա (ստացիոնար), հեռակա, հեռավար (դիստանցիոն) և դրսեկություն (էքստենսատ): Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու առկա և այլ ձևերի գույակցումը չի արգելվում: ՀՀ կառավարությունը սահմանում է հեռավար (դիստանցիոն) և դրսեկության (էքստենսատի) ձևերով ուսուցման կարգերը, ինչպես նաև այն մասնագիտությունների ցանկը՝ ըստ որի բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալ չի թույլատրվում հեռակա, հեռավար (դիստանցիոն) կամ դրսեկության (էքստենսատի) ձևերով:

ՀՀ կառավարությունը միայն 2010 թ.-ին հաստատեց «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության հեռավար (դիստանցիոն) ձևով ուսուցման կարգը», որի հիման վրա՝ նաև հեռավար (դիստանցիոն) ձևերով ուսուցում չթույլատրվող բարձրագույն կրթության մասնագիտությունների ցանկը, ապա՝ հեռավար ուսուցման կազմակերպման մեթոդական ուղեցույցը: Բայց սրանք դեռևս բավարար հիմք չեն՝ ապահովելու որակյալ հեռավար կրթություն: ՀՀ կառավարության 2010 թ. փետրվարի 11-ի «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների հեռավար (դիստանցիոն) ձևով ուսուցման կարգը հաստատելու մասին» N 124-Ն որոշման մեջ ասվում է. «Հեռավար (դիստանցիոն) ուսուցումը համակարգված ուսուցման ձև է, երբ սովորողի և դասախոսի միջև անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացն իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով: Հեռավար (դիստանցիոն)

⁷ The MOODLE project, <https://moodle.org/>

⁸ «Կրթության մասին» ՀՀ օրենք, Ընդունված 14.04.1999 թ.:

⁹ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենք, Ընդունված 18.01.2005 թ.:

ուսուցման կիրառման նպատակն ուսումնառողներին բնակության վայրերում կրթական ծրագրերի յուրացման հնարավորություն ընձեռելն է»¹⁰:

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների հեռավար (դիստանցիոն) ձևով ուսուցման կազմակերպման մեթոդական ուղեցույցի» համաձայն՝ ուսումնական հաստատությունների կողմից հեռավար կրթական տեխնոլոգիաների միջոցով կրթական ծրագիրը համարվում է իրականացված, եթե ուսումնական պլանով նախատեսված ժամաքանակների (կրեդիտների) 70%-ը սովորողները յուրացնում են հեռավար տեխնոլոգիաների միջոցով: Ընդ որում, մասնագիտական կրթական ծրագրերի ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական դասընթացների առնվազն 80%-ն է իրականացվում հեռավար տեխնոլոգիաներով¹¹:

Կառավարության 2020 թվականի մարտի 16-ի՝ **«Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին»** N 298-Ն որոշմամբ, արտակարգ դրության ամբողջ ընթացքում դադարեցվեց պետական, համայնքային և ոչ պետական հանրակրթական (այդ թվում՝ նախադպրոցական), նախնական մասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում, արտադպրոցական դաստիարակություն իրականացնող կազմակերպություններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում գործող միջազգային ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացը, **բացառությամբ հեռավար ուսուցման**¹²:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը ելնելով ստեղծված իրավիճակից, հանրակրթական դպրոցներում ուսումնական գործընթացն օնլայն կազմակերպելու նպատակով գործարկեց հեռավար կրթության հարթակ՝ heravar.armedu.am: Հեռավար ուսուցման համալիր կայքէջը ընդգրկում է ուսումնական և ուսումնամեթոդական հիմնական ֆոնդը: Միաժամանակ ՀՀ հանրային հեռուստա-ընկերության **«Հանրային դաս»** ծրագրով հեռարձակվեց հեռուստատեսային դասեր՝ ըստ հրապարակվող դասացուցակի:

«Հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կրթության,

¹⁰ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների հեռավար (դիստանցիոն) ձևով ուսուցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2010 թվականի փետրվարի 11-ի N 124-Ն որոշում:

¹¹ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների հեռավար (դիստանցիոն) ձևով ուսուցման կազմակերպման մեթոդական ուղեցույց» ՀՀ կրթության և գիտության նախարարի 27.08.2010թ. N 1348-ՄՔ հրաման:

¹² ՀՀ-ում հեռավար կրթության (ուսուցման) իրականացման միտումները և խորհրդատվական, վերահսկողական գործիքների կիրառման անհրաժեշտությունը, <http://www.eib.am/online-education/>

գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020թ. մայիսի 20-ի N 09-Ն հրամանի համաձայն՝ կարգավորվում են հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման և իրականացման հետ կապված հարաբերությունները, սահմանվում են դրա կիրառման դեպքերը:

Հեռավար կրթությունը կրթական ծրագրի իրականացման ձև է, որի շրջանակներում անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը սովորողի և ուսուցչի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով և հիմնական հանրակրթական ծրագրերի կազմակերպման ընթացքում կարող է կիրառվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով և դեպքերում՝ որոշակի ժամկետով¹³: Հեռավար կրթության միջոցով ուսուցումը համարվում է իրականացված, եթե ուսումնական պլանով նախատեսված ժամաքանակների 70%-ը աշակերտների՝ ոչ պակաս քան 90%-ը յուրացնում է S2S միջոցով:

Նշենք, որ հեռավար կրթության հարթակ Հայաստանում ստեղծվել է դեռ 2011թ.՝ այն գործում է Moodle առցանց միջավայրի հիման վրա և տրամադրում է հեռավար կրթության համար անհրաժեշտ բոլոր հնարավորություններն ու գործիքները (կայքը՝ <http://elearning.armedu.am/>: <http://elearning.armedu.am/> և <https://heravar.armedu.am/> կայքերը հիմնականում ապահովում են դպրոցների աշակերտների և ուսուցիչների համար բովանդակության հասանելիությունը: Բուհերը հեռավար կրթությունն իրականացնում են իրենց կողմից հաստատված ուսումնական պլանների շրջանակներում՝ որպես հարթակ օգտագործելով բավականին լայն տարածում ստացած թվային լուծումներից մի քանիսը՝ ZOOM, Google Meet, Microsoft teams և այլն:

Այսպիսով՝ ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետության կրթության բնագավառում առկա են մի շարք փոխկապակցված խնդիրներ, որոնց դեռևս լուծում չի տրվել, հեռավար կրթությունը (ուսուցումը) իրականացվում է չկանոնակարգված ձևով և հիմնականում անվերահսկելի տիրույթում, առաջնային լուծման անհրաժեշտություն ունեն հեռավար դասերի օպտիմալ տևողության, ավարտական, պետական ավարտական քննությունների կազմակերպման ու անցկացման, կրթական գործընթացի կազմակերպման բազմաթիվ այլ հարցեր: Իրավիճակի բարդությունն ընդգծվում է նաև նրանով, որ հայտնի չէ, թե ինչ ժամանակահատվածում կվերանան արտակազ դրության հիմքերը, և երբ կրթական գործընթացը բնականոն ընթացք կստանա: Ուսումնական հաստատություններն անցկացնում են հեռավար պարապմունքներ, իսկ թե որքանով են իրականացվում կրթության պետական չափորոշիչների պահանջները, պարզ չէ: Արտակարգ իրավիճակում գիտելիքների գնահատման, ամփոփիչ ատեստավորման, քննությունների կազմակերպման և անցկացման կարգերը ևս սահմանված չեն:

Ըստ UNICEF-ի՝ հեռավար կրթության ոլորտում հայաստանյան հիմնախնդիրներն

¹³ «Հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020թ. Մայիսի 20-ի N 09-Ն հրաման, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=142945>

են.

- Խոցելի խմբերում գտնվող երեխաների համար ԿԳՄՄՆ կազմակերպեց համակարգիչների հավաքագրում, սակայն դեռ հազարավոր աշակերտներ և ուսուցիչներ մնում են հեռավար կրթության համակարգից դուրս: Այդ խնդրի լուծմանը փոքր-ինչ նպաստում է դասընթացների հեռարձակումը որոշ հեռուստաալիքներով,
- Հեռավար կրթության համակարգից դուրս շարունակում են մնալ հատուկ պայմանների կարիք կամ հաշմանդամություն ունեցող երեխաները,
- Առկա է թվային տեխնոլոգիաներից օգտվելու հմտությունների զարգացման խնդիր՝ թե՛ ուսուցիչների և թե՛ աշակերտների մոտ,
- Արդիական է դառնում կիրառական տեխնոլոգիաների խնդիրը:

Այսպիսով՝ եթե մինչ համավարակը Հայաստանում հեռավար ուսուցումը բուհերի մրցունակության կարևոր չափանիշներից մեկն էր, ապա այժմ հեռավար ուսուցման ներդրումը կրթական գործընթացում՝ կրթության այլընտրանքային ուղի է, որը պայմանավորված է համաշխարհային պանդեմիայով:

ОСОБЕННОСТИ ДИСТАНЦИОННОГО ОБУЧЕНИЯ В УСЛОВИЯХ ПАНДЕМИИ- АРУТЮН ГРИГОРЯН -В XXI веке развитие цифровой экономики требует формирования общества, в котором важнейшей проблемой государство является конкурентоспособность образования. Дистанционное обучение является составной частью современного образования, основанного на развитии информационных и коммуникационных технологий. В Армении в условиях эпидемии онлайн-образование стало реальностью.

Ключевые слова: *эпидемия, информационные технологии, цифровая экономика, дистанционное обучение, Электронное обучение, онлайн курсы, платформы дистанционного обучения, Платформа ZOOM, Платформа Google Meet, Система Moodle.*

FEATURES OF DISTANCE EDUCATION IN CONDITION OF PANDEMIC- HARUTYUN GRIGORYAN- In the XXI century, the development of the digital economy requires the formation of a society in which the most important problem of the state is to ensure the competitiveness of education. The distance learning is a component of the modern education, which is based on the development of the information and communication technologies. With the epidemic, online education has become an urgent reality.

Key words: *epidemic, information technologies, digital economy, distance learning, E-learning, online courses, distance education platforms, ZOOM platform, Google Meet platform, Moodle system.*

ՎԱՀՐԱՄ ԲԱԼԱՅԱՆ

**ԴԻԶԱԿԻ ԲԵՐԴԱՊԱՀ ԳՅՈՒՂԵՐԸ (ԽԾԱԲԵՐԴ, ՍՊԻՏԱԿԱՇԵՆ,
ԱՐՓԱԳԵՏԻՎ, ՀԻՆ ԹԱՂԵՐ, ԽԱՆՁԱՁՈՐ).**

Պատմության ուրվագծեր

Ադրբեջանը Թուրքիայի և միջազգային ահաբեկչական խմբավորումների գործուն անդամներն են 2020թ. սեպտեմբերի 27-ին լայնածավալ ռազմական գործողություններ սկսեց Արցախի Հանրապետության դեմ: 44 օր ընթացած պատերազմական գործողությունների արդյունքում, դեռևս չբացահայտված մի շարք հանգամանքների պայմաններում հազարավանդների ընթացքում բազում զոհվածություններ հաղթահարած Դիզակը և նրա բերդապահ գյուղերը անցան հակառակորդի հսկողության տակ:

Ավելին, Ադրբեջանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության ղեկավարների 2020թ. նոյեմբերի 10-ի համատեղ հայտարարությունից հետո հայկական զորքերի հսկողության տակ գտնվող Խծաբերդը և Հին Թաղեր գյուղերը անբացատրելի պայմաններում հանձնվեցին Ադրբեջանին:

Այսպիսով, Խծաբերդ, Սպիտակաշեն, Արփագետիկ, Հին Թաղեր, Խանձաձոր գյուղերը, որոնք հազարավանդներ շարունակ կարևոր դերակատարություն են ունեցել Արցախի քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքում, դեռևս վերջնական գնահատականի չարժանացած հանգամանքներում, 2020թ. վերջերին լրացրեցին հայկական զերյալ բնակավայրերի ցանկը:

Բանալի բառեր՝ բերդապահ, Դիզակ, սահմանապահ, զինված ջոկատներ, ապստամբություն, բնակավայր, ազատագրական պայքար, կոլտնտեսություն, ազգաբնակչություն, զերյալ բնակավայրեր:

Խծաբերդ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում, Հադրութի շրջանում, նախկինում Դիզակ գավառում, Դիզափայտ լեռան հարավային կողմի լանջի վրա, որտեղից լայն հովիտ է բացվում դեպի Հակարու գետը:

Գյուղի շրջակայքում գտնվող Սլկիան սարի, Մուրբ խութի, Եղցուն ձորի միջնադարյան բնակավայրերը, Օձաբերդի, Հազարափրկչի, Ամուտեղի, Ղալավի ամրոցները, կիսավեր եկեղեցիները, մատուռները վկայում են, որ Խծաբերդը հազարամյակների պատմություն ունի:

Գոչավանքի վանահայր Առաքել Կոստանյանն իր «Պատմություն Արցախի» աշխատության մեջ Խծաբերդը Օձաբերդ է անվանել¹:

¹ Մատենադարան, ձեռագիր 7822:

1828-1829թթ. Ղարադաղի Նեփեշտ գյուղից մի քանի ընտանիքներ նույնպես հաստատվում են Խծաբերդում և նոր համ ու հոտ տալիս Արցախի հնագույն բնակավայրին:

Բազում դարերի ընթացքում խծաբերդցիներն, պայքարելով օտար նվաճողների դեմ, ավելի է կառչում իր հողին և բնակավայրը օրեցօր առավել շենացնում:

1823թ. Խծաբերդում ապրում էր 18 ընտանիք,² 1886թ.՝ 50 ընտանիք, 336 բնակիչ,³ 1912թ.՝ 57 ընտանիք, 624 բնակիչ,⁴ 1918թ.՝ 120-130 ընտանիք⁵:

19-րդ դարում մի քանի գերդաստաններ տեղափոխվում և հաստատվում են Քարին տակ գյուղում իրենց հետ տանելով նաև իրենց նախնիների համառությունն ու երկաթյա կամքը:

20-րդ դարը նոր անակնկալներ բերեց Խծաբերդի հայությանը:

1918թ. Թուրքիան, իսկ 1918թ. հունիսից նոր կազմավորված մուսավաթական Ադրբեջանը ամեն կերպ ձգտում էին տիրանալ Արցախին:

Խծաբերդը, որպես սահմանապահ գյուղ, թշնամիների համար այդպես էլ անխոցելի մնաց:

1918թ. մարտի 16-ին թուրքերը գրոհով փորձեցին գրավել Խծաբերդը: Գյուղի պաշտպանները համառորեն դիմադրել են թշանուն: Նրանց օգնության հասավ Դիզակի մարտական ուժերի պատասխանատու Արտեմ Լալայանը: Կենտրոնացնելով ուժերը՝ նրանք անցան հակահարձակման, մեծ կորուստներ պատճառեցին թուրքերին և նրանց քշեցին գյուղի սահմաններից⁶:

1919թ. մայիսի 28-ին Խծաբերդը գրավելու փորձ կատարեց այս անգամ թուրք սպա, Աղդամի նախկին կոմենդանտ Քեազըմ բեյի զլխավորած Ադրբեջանի մի քանի հազարանոց զինված ուժերը, որոնց ուղեկցում էր թալանին սովոր խուժանը:

Խծաբերդցիներին նորից օգնության հասան Արտեմ Լալայանի և Արշակ Շահնազարյանի զինված ջոկատները: Մայիսի 28-ին և 29-ին մի քանի անգամ կասեցնելով թուրքերի գրոհը, մայիսի 30-ին հայ մարտիկները հակազորի են անցնում և լիովին նրանց ջախջախում:

Թուրքերը ռազմի դաշտում են թողնում 200 սպանված, իսկ նրանց հրամանատար Քեազըմ բեյը ռազմի դաշտից ձողոպրում է⁷:

1921թ. ամռանը մինչև Կապան անցնելը Թևան Ստեփանյանի համար Խծաբերդը դարձել էր վերջին անմատչելի հենակետը:

Արցախի ազատագրության և անկախության համար պարզած դրոշը Խծաբերդի հայությունը բարձր պահեց նաև խորհրդային տարիներին:

1930թ. զենքը ձեռքին նրանք ապստամբեցին Ադրբեջանի իշխանությունների

² Описаніѣ Карабагской провинціи составленное в 1823г., по распоряженію главноуправляваго въ Грузіи Эрмоловымъ, действительномъ статскимъ совѣтникомъ Могилевскимъ и полковникомъ Ермоловымъ 2-мъ, Тифлисъ, 1866, с. 183.

³ Сводъ статистическихъ данныхъ о населеніи Закавказскаго края, IV отдѣл, Тифлис, 1893.

⁴ Приложение к памятной книгѣ Елисаветпольской губерніи, на 1914г., Тифлис, 1914, с. 126.

⁵ Բշխանեան Ե., Լեռնային Ղարադ (1917-1920), Երևան, 1999, էջ 420:

⁶ Բշխանեան Ե., նշվ. աշխ., էջ. 420-421:

⁷ Բշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 420-421:

դեմ: Արցախի հարևանությամբ գտնվող շրջաններում տեղակայված կարմիր բանակը փորձել է ճնշել այն, բայց սկզբում չի հաջողվել: Բաքվից ստիպված մեծ քանակությամբ զորքեր են տեղափոխել և ճնշել ապստամբությունը⁸:

Խորհրդային տարիներին, ինչպես Արցախի մյուս գյուղերում, Խժաբերդում ևս 1932թ. կոլտնտեսություն է կազմավորվել:

Տարբեր տարիների այն ղեկավարել են Հարություն Պետրոսյանը, Շ. Բաղդասարյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Վիլա Գրիգորյանը, Ներսես Սարգսյանը, Սաշա Առուստամյանը, Գրիշա Գևորգյանը, Ասլան Գևորգյանը, Շուրկա Բաղդասարյանը, Միշա Քարամյանը: 1998թ. հողերի սեփականաշնորհումից հետո Խժաբերդի բնակիչները դարձան մենատնտեսներ:

Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել է 155 մարդ, զոհվել է 84-ը: Զոհվածների հիշատակին կանգնեցված է հուշարձան:

Արցախյան շարժման առաջին տարիներին գյուղում Նարվիկ Գևորգյանի գլխավորությամբ կազմակերպվել է կամավորական ջոկատ: Մարտական գործողություններին մասնակցել է 43 մարդ, զոհվել է 7 ազատամարտիկ և 2 խաղաղ բնակիչ:

1889թ. գյուղում բացվել է եկեղեցական-ծխական դպրոց, որտեղ սովորում էր 25 աշակերտ, դասավանդում 1 ուսուցիչ⁹: Դպրոցը փակվել է 1896թ. և վերաբացվել 1908-1909 ուսումնական տարում: Այն միդասյա երկսեռ էր, ուներ 3 բաժանմունք: Ուսուցիչն էր Կարապետ Սահրադյանը:

1930թ. գյուղում գործում էր յոթամյա դպրոց: 1980-ական թվականներին դպրոցում սովորում էր 6-7 աշակերտ: 1990-ական թվականներին նախկին խժաբերդցիների գյուղ վերադառնալուց հետո վիճակը կայունացավ: 2004թ. կրթական հաստատությունը ստացավ հիմնական դպրոցի կարգավիճակ: 2006-2010թթ. դպրոցում արդեն սովորում էր 62 աշակերտ, դասավանդում՝ 16 ուսուցիչ: Բնակչության նոր արտահոսքի պատճառով, 2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 16 աշակերտ:

Ներկայումս դպրոցի տնօրենն է Վարսիկ Հայրապետյանը:

Ծնունդով խժաբերդցի են բանաստեղծ Արտաշես Պողոսյանը, ֆիզմաթ գիտությունների դոկտոր Ալեքսան Եգանյանը, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդիկ Մկրտչյանը:

Գյուղում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ միջնադարյան գյուղատեղիների և գերեզմանոցների մնացորդներ, Եղսաձորի եկեղեցին (16-17-րդ դարեր), Օձաբերդ, Հազարափրկիչ, Ամուտեղ, Ղալավլի ամրոցները, Թեղին սուրբ սրբատեղին, Տեմին սըռ հնավայրը:

Խժաբերդի աղբյուրներն են՝ Տեղուն, Պոտունց, Քուլանեն, Զիմանեն, Խաչուն, Կետեն:

Գյուղում ապրում են Պոտունց, Աշուղանց, Ղարասաքունց, Քարամանց, Թիմրազանց, Հուռունց, Բաբադայունց ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը,

⁸ Մարուր, Կացությունը Ադրբեջանի մեջ, «Դրոշակ», հմ. 4, 1930, էջ 120:

⁹ «Նոր դար», թերթ, հմ. 1, 1886:

ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը հասանելի են բնակչությանը:

Համայնքում գործում է գյուղապետարան, ակումբ, բուժկետ, դպրոց, առևտրի մեկ կետ:

Խծաբերդի համայնքի կազմի մեջ ընդգրկված են նաև Սպիտակաշեն, Արփագետիկ, Պետրոսաշեն գյուղերը:

Խծաբերդում 1987թ. կար 52 տուն, 154 բնակիչ¹⁰, 2010թ.՝ 47 տուն, 132 բնակիչ¹¹, 2018թ.՝ 30 տուն, 117 բնակիչ¹²: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

Մախտակաշեն

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում, Հաղրուքի շրջանում, նախկինում Արցախի Դիզակ գավառում: Բնակավայրը տեղաբաշխված է Ղարաբաղյան լեռնաշղթայի հարավ արևմտյան լեռնաճյուղերից դեպի հարթավայր ձգվող մասում:

17-րդ դարի սկզբներին պարսից շահ Աբաս Ա-ի կազմակերպած մեծ գաղթաշարժի ժամանակ տեղահանվել էին նաև Հարարի բնակիչները: Մի քանի տասնամյակ անց չհամակերպվելով Պարսկաստանում գտնվող նոր բնակավայրին, նրանք նորից վերադարձել էին Արցախ: Վերադարձածների մեծ մասը հաստատվել էր Հարարում: Նրանցից մի քանի ընտանիքներ էլ նախընտրեցին հիմնավորվել Զինգյանակապ գետի վերին հոսանքում գտնվող իրենց բնակավայրի հանդամասերում:

Այդպիսով՝ 17-րդ դարի կեսերին Հարարի բնակիչները հիմնեցին Արփազյաղուկ, Պետրոսաշեն, Սպիտակաշեն, Թեզխարաբ, Փարաջանց, Քոհնաշեն գյուղերը:

Մալիտակաշենի արևմտյան մասով ձգվող լեռնաբազուկի վերջավորության վրա է գտնվում Մաքրունց սարի եղջեն, որի կառուցման դարաշրջանն անհայտ է:

Վերոհիշյալ գյուղերի համար ծանր շրջան հանդիսացավ՝ 1905-1906 և 1917-1920 թվականների ժամանակահատվածը:

Այդ գյուղերը, թաթարներով և քրդերով բնակեցված բնակավայրերի հարևանությամբ գտնվելով, մշտապես հարձակումների էին ենթարկվում:

ՀՅԴ «Ապառաժ»-ի կառույցին հաջողվել էր տեղում եղած ուժերը համախմբել և պաշտպանել ժողովրդի անվտանգությունը:

Խորհրդային տարիներին 1930թ. Սպիտակաշենում կոլտնտեսություն էր կազմակերպվել: Խոշորացման տարիներին այն միացվել էր Խծաբերդի կոլտնտեսությանը: 1998թ. հողերի սեփականաշնորհումից հետո ստեղծվել են մասնավոր տնտեսություններ:

Խորհրդային տարիներին Սպիտակաշենում գործում էր դպրոց, ակումբ, բուժկետ:

Գլուղի երիտասարդությունը մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին:

Արցախահայության ազատագրական պայքարի տարիներին Սպիտակա-

¹⁰ Մելքոնյան Ս., Հեռնային Ղրաբադ, Երևան, 1990, էջ 259:

¹¹ ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

¹² ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ, Ստեփանակերտ, 2018, էջ 2:

շենում կամավորական ջոկատ էր ստեղծվել, որը ԱՀ ՊԲ ստորաբաժանումների կազմում մասնակցել է երկրամասի սահմանների պաշտպանության գործին:

1991թ. մայիսին «Օդակ» ռազմագործողության ժամանակ գյուղը հայաթափվել էր: Հաղորդվում գործող կամավորական ջոկատներին հաջողվել էր 1992թ. սկզբներին թշնամուն դուրս մղել գյուղից:

Արցախի հարավային թևում հակառակորդը նոր ուժեր կուտակելով՝ 1992թ. ամռանը նորից Սպիտակաշենը գրավել էր: 1993թ. ԱՀ ՊԲ ստորաբաժանումների հարվածների տակ Սպիտակաշենը վերջնականապես ազատագրվել է:

Բնակավայրի վերականգնողական աշխատանքները ծավալվել են հետպատերազմյան տարիներին:

Սպիտակաշենը էլեկտրաֆիակցված է: Հեռուստատեսությունը, ռադիոն, բջջային և անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը բնակչությանը հասանելի են:

Սպիտակաշենում 2010թ. կար 2 տուն, 11 բնակիչ¹³, 2018թ.՝ 2 տուն, 8 բնակիչ¹⁴: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

Արփագետիկ

Գյուղը գտնվում է ԱՀ հարավ-արևմտյան հատվածում, Հաղրութի շրջանում, նախկինում Դիզակի գավառում, Հագարի գետի ձախափնյակում: Գյուղի տարածքով են հոսում Հագարիի վտակներ՝ Զնգանա և Մեծ ձորի սակավաջուր գետերը:

Գյուղը տարբեր հեղինակների մոտ ներկայացված է Արփագյաղուկ,¹⁵ Արփագետիկ¹⁶, Քարինգ¹⁷ ձևերով: Գյուղի հարևանությամբ կա նաև Արփագետիկ անունով լեռ:

Գյուղի մերձակայքում պահպանվել են 10-13-րդ դարերի գյուղատեղի, միջնադարյան Հլմնա ուրթի գերեզմանատան մնացորդները:

Ավանդությունը պատմում է, որ 18-րդ դարում հարևան հայկական գյուղից Դավիթ անունով մի մարդ տեղափոխվում և հաստատվում է ներկայիս Արփագետիկի տարածքում ու այդպես նոր բնակավայր է հիմնադրում: Նա ունեցել է 7 որդի, որից 6-ի անունը մեզ հայտնի է՝ Ավանես, Պետրոս, Պողոս, Բեգլար, Մկրտիչ, Հարություն:

20-րդ դարի սկզբներին Արփագետիկը, Սպիտակ շենը և Թիս-Խարաբ գյուղերը հայ-թաթարական ընդհարումների ժամանակ Արցախի հարավային հատվածները պահող սահմանամերձ բնակավայրերի դերակատարություն էին ստանձնել: Այդ առաքելությունը նրանք պատվով կատարեցին:

Արփագետիկի հայությունը Թևան Ստեփանյանի գլխավորած ազատագրական բանակի շարքերում, Արցախի անկախությունն ու ազատությունը պահ-

¹³ ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

¹⁴ ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:

¹⁵ Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 263:

¹⁶ Ալիշան Ղ., Միսակյան, Վենետիկ, 1893, էջ 270, 271: Էփրիկյան Հ., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ.1, Վենետիկ, 1903-1905, էջ 343:

¹⁷ Մկրտչյան Շ., Լեռնային Դրաքաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1985, էջ 122:

պանելու համար, մարտնչել են թուրք-բոլշևիկյան միացյալ ուժերի դեմ:

Խորհրդային տարիները, եթե մի շարք բնակավայրերի զարգացման համար դրական դերակատարություն են ունեցել, ապա Արփագետիկի հետ կապված կործանարար հետևանքներ ունեցան: Տարեցտարի բնակչության թիվը պակասում էր:

1933թ. գյուղում ստեղծվեց կոլտնտեսություն, որի վարչության նախագահն էր Ավետիս Մկրտչյանը:

Խորհրդային իշխանության առաջին տարիներին գյուղում կար 64 տնտեսություն:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 72 մարդ, զոհվել՝ 35-ը:

Արցախյան ազատագրական պայքարի տարիներին գյուղը ծանր կորուստներ ունեցավ: 1991թ. մայիսի 15-ին, Արցախի հայաթափման «Օղակ» գործողության ընթացքում, ադրբեջանցի օմոնականները խորհրդային զորքերի ուղեկցությամբ մտան Արփագետիկ և դաժանաբար սպանեցին գյուղի 7 խաղաղ բնակիչների:

1993թ. գյուղը ազատագրվելուց հետո միառժամանակ անտերության էր մատնված:

2008թ. ԱՀ իշխանությունները նախաձեռնեցին գյուղի վերակենդանացման գործը: Կառուցվեցին նոր տներ, որտեղ հաստատվեց 5 ընտանիք:

Խորհրդային տարիներին Արփագետիկում գործել էր յոթամյա դպրոց: 1973թ. այն փակվել է աշակերտներ չունենալու պատճառով: Գյուղը վերաբնակեցվելուց հետո այստեղ բացվել է Խժաբերդի հիմնական դպրոցի մասնաճյուղ, որտեղ 2018-2019 ուսումնական տարում սովորում էր 7 աշակերտ:

Ծագումով Արփագետիկից են ԱՀ 3-րդ նախագահ Բակո Սահակյանը, բանաստեղծ, բանասիրական գիտությունների դոկտոր Վարդան Հակոբյանը, գեներալ լեյտենանտ, ԱՀ պաշտպանության նախարար Կարեն Աբրահամյանը, գեներալ մայոր Արմեն Աբրահամյանը:

Արփագետիկում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ միջնադարյան գյուղատեղի, գերեզմանոց, Եղցան ձոր եկեղեցին (16-17-րդ դարեր), խաչքարեր:

Գյուղի աղբյուրներն են՝ Քարաղբյուրը, Ակվանց, Մայկոնանց, Սահականց, Դերին, Քչարունց, Ղզղան, Կոլխոզի նավ:

Արփագետիկի նշանավոր ազգատոհմերն են՝ Դվութանք (Փոլադանք), Զառունք, Մարգարանք, Ուրութանք, Թունունք: Նրանց ներկայացուցիչներն այսօր Արփագետիկում չեն ապրում:

Գյուղը էլեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը հասանելի են բնակչությանը: Նորակառույց տներից մեկը օգտագործվում է որպես դպրոց:

1987թ. Արփագետիկում կար 7 տուն, 33 բնակիչ¹⁸, 2019թ.՝ 5 տուն, 19 բնակիչ¹⁹: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

¹⁸ Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 263:

¹⁹ ԱրՊՀ հայագիտական կենտրոն:

Հին Թաղեր

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում, Հաղբուրթի շրջանում, նախկինում Դիզակ գավառում: Գյուղի թիկունքում է գտնվում Դիզափայտ լեռը:

Հին Թաղերի շրջակայքում է գտնվում Կուրկակալերի, Կուլառի, Առվակի անտառները:

Գյուղի տարածքով հոսող 3 գետակները Հակարիի վտակներն են, որի ջրերը հասնում են Արաքսին:

Հին Թաղերը Արցախի հին բնակավայրերից մեկն է: Գյուղի կազմավորման ստույգ դարաշրջանը այնքան էլ հայտնի չէ: Սակայն հայտնի է, որ ներկայիս բնակավայրի տարածքում կային ութ գյուղեր՝ Ղըլաց ձորի, Թուղուտների, Պուզտուն ձորի, Կուրկուկալերի, Հրկյավերի, Կոզառի, Սոփուլուի և Հին Թաղեր:

Մոտավորապես 16-րդ դարի վերջերին և 17-րդ դարի սկզբներին, պաշտպանական նկատառումներից ելնելով, վերոհիշյալ գյուղերի բնակիչները հաստատվեցին ներկայիս բնակավայրի տարածքում: Գյուղը կրեց վերոհիշյալ բնակավայրից մեկի՝ Հին Թաղերի անունը: Գյուղը ուներ նաև Քյոհնա Թաղեր կամ Հին Թաղլար անունը:

Ընտրված աշխարհագրական դիրքը իրապես նշանավոր էր ինչպես Արցախի հարավային սահմանները պաշտպանելու, այնպես էլ՝ գյուղի բնակչության անվտանգությունը ապահովելու տեսանկյունից: Թշնամիները՝ հատկապես թուրքերը, տարբեր դարաշրջաններում բազմիցս փորձել են գրավել Հին Թաղերը, բայց միշտ էլ անհաջողության են մատնվել:

Նման կեցվածքը նպաստել է, որպեսզի տեղաբնիկները ունենան ինքնատիպ բնավորություն:

Այս տեսանկյունից Եղիշե Իշխանյանը Հին Թաղերում 1918թ. կատարված մի դեպքի մասին է պատմում: «Հին թաղլարցիների հասկացողությամբ, գրել է Եղիշե Իշխանյանը, գողությունը նոյնքան անպատիվ գործ էր, որքան մարդասպանությունը: Միջակ ունեւոր գիւղացիներից մեկի այծը գողացել էր և իբրև գող կասկածւել, միջակ ունեւորից ցած, կարելի է ասել չունեւոր գիւղացիներից մեկը: Կասկածւած գողը ներկայացավ մեզ՝ ասելով. «Մեր գիւղը հիմնւելու օրւանից մինչև այսօր, չէ պատահել, որ մէկը մեղադրւած լինի, իբրև գող. իզուր տեղը զրպարտում են ինձ, թէ իբր ես եմ գողացել այծը: Ես չեմ ուզում կեղտոտ և զգւելի գող անուն տան ինձ: Դա մեծ ամօթ է, ինչով կուզէք, երդւեմ, որ ես գող չեմ և վստահ եմ, որ գողը մեր գիւղացի չէր: Ես պատրաստ եմ իմ ունեցած այծերից մէկը տալ գողացւածի փոխարէն, բայց երբեք յանձն չեմ առնի մի յանցանք, որը ես չեմ գործել: Ես խնդրում եմ, որ խիստ քննութիւն կատարեք»: ... Շատ չանցած, իրողութիւնը պարզւեց: Հարևան Խծաբերդ գիւղում յայտնաբերւեց, թէ ով էր գողը»²⁰:

1917-1921 թվականներին Հին Թաղերի ազգաբնակչությունը անգիջում պայքարեց Արցախի ազատության և անկախության համար:

²⁰ Իշխանեան Ե., նշվ. աշխ., էջ 122:

1921թ. ապրիլի կեսերին կարմիր բանակի դեմ Թևան Ստեփանյանի գլխավորությամբ վերջին դաժան մարտերը ծավալվեցին Հին Թաղերի և Խճաբերդի ուղղությամբ²¹:

1991թ. մայիսին, երբ «Օդակ» ռազագործողության ժամանակ ադրբեջանցի օմոնականները խորհրդային զորքերի աջակցությամբ տեղահանեցին Հադրութի շրջանի 15 գյուղերի բնակիչներին, և Դիզափայտի ստորոտում Հին Թաղերը և Խճաբերդը մնացել էին պաշարված վիճակում, ժողովուրդը միահամուռ պայքարեց և անառիկ պահեց հայրենի օջախը:

Արցախում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, 1931թ. գյուղում կազմավորվել է կոլտնտեսություն: Այն ղեկավարել են՝ Եփրեմ Բաբայանը, Սուրեն Այվազյանը, Եղիշե Ալթունյանը, Օհան Գասպարյանը, Ռուբեն Շաղյանը, Շահեն Սարգսյանը, Հրանտ Ամիրյանը, Վալերի Ալավերդյանը, Իլիչ Շաղյանը: Համեմատության համար նշենք, որ կոլտնտեսության ժամանակ գյուղն ուներ 5000 գլուխ ոչխար, 700 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 300 գլուխ խոզ, 3000 թև թռչուն: Ներկայումս կա 20 գլուխ մանր, 120 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 400 թև թռչուն:

1998թ. կոլտնտեսության լուծարումից հետո գյուղացիները վարում են իրենց անհատական տնտեսությունները:

Հայրենական մեծ պատերազմին գյուղից մասնակցել է 220 մարդ, որից 101-ը զոհվել է: Նրանց հիշատակին կառուցվել է հուշարձան:

Արցախյան շարժման առաջին տարիներին գյուղում Էրիկ Այվազյանի գլխավորությամբ կազմավորվել է «Վրիժառու» ջոկատը, որը պաշտպանության բանակի շարքերում մասնակցել է բազմաթիվ ռազմագործողությունների: Նրանցից 11 ազատամարտիկ զոհվել են:

ԱՀ «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանով պարգևատրվել են Գրիշա Շաղյանը՝ հետմահու Էդիկ Այվազյանը, Ավետիք Հայրապետյանը, Հայկ Շաղյանը:

19-րդ դարի վերջերին Հին Թաղերում բացվել է եկեղեցական-ծխական դպրոց: 1927թ. դպրոցը միջնակարգի կարգավիճակ ուներ: 1928թ. գյուղում նոր դպրոցական շենք է կառուցվել: 1950-60-ական թվականներին դպրոցում սովորում էր շուրջ 280 աշակերտ: Այստեղ էին սովորում նաև Արևշատի, Խանձաձորի, Խճաբերդի, Պետրոսաշենի, Արփագետիկի, Սպիտակաշենի բարձր դասարանի աշակերտները:

1988-1992թթ. դպրոցում սովորում էր 122 աշակերտ, 1994-2004թթ.՝ 28 աշակերտ, դասավանդում էր 12 ուսուցիչ:

2018-2019 ուսումնական տարում Հին Թաղերի հիմնական դպրոցում սովորում է ընդամենը 8 աշակերտ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել՝ Տիգրան Ամիրյանը, Գուրգեն Արզումանյանը, Սմբատ Ալավերդյանը, Գրիշա Շաղյանը, Վահան Ալթունյանը, Ալվարդ Բաբայանը, Մելիակ Գասպարյանը, Մարինա Աբաղյանը, Արարատ

²¹ Բալայան Վ., Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, Ստեփանակերտ, 2012, էջ 145:

Աբաղյանը:

Գյուղում և նրա շրջակայքում պահպանվում են պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ գյուղամիջյան եկեղեցին (1607թ.), Սբ. Ամենափրկիչ եկեղեցին, միջնադարյան գյուղատեղիների, գերեզմանոցների մնացորդներ, Կատարո վանքը (17-րդ դար), Սոփուլու տարածքում Հանգած եղցե եկեղեցին, Ղլաց ձոր, Թուղուտնե, Խաչին պռակ, Կուրկակալ, Բալուն նալ, Ըկըթավեր, Կոզառ, Սոփուլու, Սանդին ձոր, Բերդ տեղամասերի միջնադարյան խաչքարերը:

Գյուղի աղբյուրներն են Դերունց ծորին, Թաղուն, Երե թաղեն, Ներքե թաղեն, Շատ, Կիզարեն:

Հին Թաղերի հանդամասերն են՝ Կուլառի, Առվակի աղբյուրի, Քոլերի խութի, Խոր չխութի, Դեղին լենջի, Բողքի ձորի, Աերողրոմի, Սուրբեն խութ, Չլեն հութ, Շատաղբյուրների:

Գյուղում շարունակում են ապրել՝ Շաղյանների, Աբաղյանների, Ալթունյանների, Այվազյանների, Համբարձումյանների, Ամիրյանների, Մաֆարյանների, Ծատրյանների ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էկեկտրաֆիկացված է: Ունի խմելու ջրագիծ: Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունը հասանելի են բնակչությանը:

Համայնքում գործում է գյուղապետարան, ակումբ, բուժկետ, հանդիսությունների սրահ, դպրոց, առևտրի մեկ կետ:

Հին Թաղերը 1920թ. ունեցել է 400 բնակիչ, 1987թ.՝ 76 տուն, 198 բնակիչ²², 2018թ.՝ 35 տուն, 101 բնակիչ²³: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

Խանձաձոր

Գյուղը գտնվում է ԱՀ հարավային հատվածում, Հաղորթի շրջանում, նախկինում Դիզակ գավառում:

Գյուղը 3 կողմից շրջափակված է լեռներով: Հյուսիսում Դիզափայտի լեռնազանգվածն է, հարավ արևմուտքից հյուսիս արևմուտք ձգվում է Խմապեց, Լոբուն մաններ, Կոնգլա խութ, իսկ հարավ արևելքից և արևելքից Թոխ քար, Մեծլումեն խութ, Հարսնաքար, Հաչա քար, Ծով քար լեռները:

Բնակավայրի մերձակայքում կան անտառներ (Ծմրկիոնջ, Թեժ սար, Կրավ տված, Մեծ Ղուզե):

Խանձաձորն Արցախի հնագույն բնակավայրերից է: 20-րդ դարի 20-ական թվականներից թուրքերը հայկական այս բնակավայրին անվանել են նաև Աղջաքենդ:

Գյուղը գոյություն ունի վաղ միջնադարից: Առ այսօր Խանձաձորի շրջակայքում պահպանվում են հին բնակավայրերի, սրբավայրերի, ամրացված վայրերի մնացորդներ, մասնավորապես Թուփ ծառ, Շնատեղ, Եղծուն ձոր, Խաչեր, Լոլու արտ, Արաբաց արտ, Ջնալի վայրերի գյուղատեղիները:

²² Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 254:

²³ ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:

1921-1940 թվականներին հակաթուրքական, հակաբոլշևիկյան պայքարի համար 40 խանձաձորցիների աքսորեցին կամ էլ գնդակահարեցին:

1931թ. Խանձաձորում կազմակերպվեց կոլտնտեսություն: 1998թ. հողերի սեփականաշնորհումից հետո ստեղծվեցին անհատական տնտեսություններ:

Տարբեր տարիների կոլտնտեսությունը ղեկավարել են Գ. Դավթյանը, Վ. Համբարձումյանը, Ս. Աբգարյանը, Ռ. Գրիգորյանը, Ծ. Ղահրամանյանը, Ս. Համբարձումյանը, Բ. Գրիգորյանը, Ն. Հայրյանը, Գ. Գրիգորյանը, Մ. Համբարձումյանը, Շ. Սարգսյանը, Է. Այվազյանը:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 91 մարդ, զոհվել 49-ը: Նրանց հիշատակին 1977թ. գյուղում հուշարձան է կառուցվել:

Արցախյան ազատագրական պատերազմի ժամանակ գյուղից 30 հոգի զինվորագրվեց: 5 ազատամարտիկներ զոհվեցին:

ԱՀ «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանի հետմահու արժանացել է Համբարձում Այվազյանը: ԱՀ «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանով պարգևատրվել է նաև գումարտակի հրամանատար Վահան Բադալյանը:

1886թ. Խանձաձորում բացվել է եկեղեցական ծխական դպրոց, որտեղ սովորում էին 22 աշակերտ, դասավանդում 1 ուսուցիչ²⁷:

1896թ. դպրոցը փակվել և 1908թ. հոկտեմբերին վերաբացվել է: Ուսուցիչն էր Եփրեմ Տեր-Մանվելյանը:

Ի դեպ, նույն տոհմի ներկայացուցիչ Խանձաձորի եկեղեցու վանահայր Հովհաննես Տեր Մանվելյանի զավակները նախնական կրթությունը ստացել են վերոհիշյալ դպրոցում, այնուհետև ավարտել Դորպատի համալսարանը: Նրանցից Միքայել Տեր Մանվելյանը որպես կենսաբանության մասնագետ վերադառնում է հայրենիք և 1930-կան թվականներին պայքարում Հաղորդում մոլեգնող խղերայի դեմ, ինքն էլ դառնում այդ չարիքի զոհը: Հաղորդի շրջանային հիվանդանոցը անվանակոչվեց Միքայել Տեր Մանվելյանի անունով:

Խորհրդային տարիներին գյուղում գործել է տարրական դպրոց: 1989-1990 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 25 աշակերտ, դասավանդում 8 ուսուցիչ:

1991թ. գյուղը տեղահանվելուց հետո, դպրոցական պարապմունքները կազմակերպվել է Հաղորդի մանկապարտեզի շենքում:

1996թ. դեկտեմբերին շահագործման է հանձնվել դպրոցական նոր շենքը:

2018-2019 ուսումնական տարում դպրոցում սովորում էր 17 աշակերտ, դասավանդում 14 ուսուցիչ:

Տարբեր տարիների դպրոցի տնօրեններ են աշխատել՝ Ս. Գրիգորյանը, Գ. Ավազյանը, Ն. Հայրյանը, Ս. Հովհաննիսյանը, Ա. Այվազյանը, Գ. Համբարձումյանը, Լ. Սկրտչյանը:

Խանձաձորում և նրա շրջակայքում պահպանվել են պատմամշակութային նշանակության հուշարձաններ՝ Սբ. Աստվածածին եկեղեցին (1698թ.), Կատարո վանք

²⁷ Մատենադարան, ֆ.56, ց.1, գ.78, թ.1-2:

(17-րդ դար), միջնադարյան գյուղատեղիների, գերեզմանոցների մնացորդներ, Կարմիր քար, անանուն երկու ամրոցներ, խաչքար, (17-րդ դար):

Գյուղի աղբյուրներն են՝ Քար, Սանգյար, Արգուման, Հորդ, Ակնեն, Համբարձումեն, Տանձուտեն, Շլուրտանեն, Թթոտեն, Կիզապատեն, Ցուլ, Սնախի, Տզըփաղա, Քոչի, Արջի, Թունգ:

Գյուղի հանդամասերն են՝ Գյոգին, Թուփ ծառ, Արվեն հոնջ, Ներքե հանդ, Մրգյարան, Տանձուտ, Շենատեղ, Ութտող, Լուլու արտ, Մաչի յուրդ:

Խանձաձորում շարունակում են ապրել Փահրաղանց, Ալեքսանանց, Միսարանց, Հումանց, Այվազանց, Քարամյանների ազգատոհմերի ներկայացուցիչները:

Գյուղը էլեկտրաֆիկացված է, ունի խմելու ջրագիծ:

Հեռուստատեսությունը, ռադիոն, անլար հեռախոսակապը, ինտերնետ ծառայությունները բնակչությանը հասանելի են:

Համայնքում գործում են գյուղապետարան, մշակույթի տուն, բուժկետ, դպրոց:

Խանձաձոր համայնքի կազմի մեջ ընդգրկված է նաև Հայկավան գյուղը: Խանձաձորում 1987թ. կար 54 տուն, 150 բնակիչ²⁸, 2018թ.՝ 20 տուն, 108 բնակիչ²⁹: Նրանց հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

Վերջաբանի փոխարեն

2020 թվականը Դիզակի և նրա բերդապահ գյուղերի համար պատրաստել էր դժգույն ճակատագիր:

Ադրբեջանը Թուրքիայի և միջազգային ահաբեկչական խմբավորումների գործուն աջակցությամբ 2020թ. Սեպտեմբերի 27-ին լայնածավալ ռազմական գործողություններ սկսեց Արցախի Հանրապետության դեմ: 44 օր ընթացած պատերազմական գործողությունների արդյունքում, դեռևս չբացահայտված մի շարք հանգամանքների պայմաններում հազարամյակների ընթացքում բազում դժվարություններ հաղթահարած Դիզակը և նրա բերդապահ գյուղերն անցան հակառակորդի հսկողության տակ:

Ավելին, Ադրբեջանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի դաշնության ղեկավարների 2020թ. նոյեմբերի 10-ի համատեղ հայտարարությունից հետո հայկական զորքերի հսկողության տակ գտնվող Խձաբերդ և Հին Թաղեր գյուղերը անբացատրելի պայմաններում հանձնվեցին Ադրբեջանին:

Այսպիսով՝ Խձաբերդ, Մալիտակաշեն, Արփագետիկ, Հին Թաղեր, Խանձաձոր գյուղերը, որոնք հազարամյակներ շարունակ կարևոր դերակատարություն են ունեցել Արցախի քաղաքական, տնտեսական, ու մշակութային կյանքում, դեռևս վերջնական գնահատականի չարժանացած հանգամանքներում, 2020թ. վերջերին լրացրեցին հայկական գերյալ բնակավայրերի ցանկը:

²⁸ Մելքումյան Ս., նշվ. աշխ., էջ 260:

²⁹ ԱՀ առկա բնակչության թվաքանակը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ, էջ 2:

ОЧЕРКИ ИСТОРИИ ФОРПОСТНЫХ СЕЛ ДИЗАКА (ХЦАБЕРД, СПИТАКАШЕН, АРПАГЕТИК, ХИН ТАХЕР, ХАНДЦАДЦОР)- **ВАГРАМ БАЛАЯН** - Азербайджан при интенсивной поддержке Турции и международных террористических группировок 27 сентября 2020 года начал широкомасштабные военные действия против НКР.

В результате 44 дневных боевых действий еще при невыясненных обстоятельствах в течении тысячелетий преодолевший многочисленные вызовы Дизак и прилегающие к нему крепостные села перешли под влияние противника.

Более того после подписания 10 ноября совместного трехстороннего заявления лидерами Азербайджана, Армении и России находящиеся под контролем армянской стороны села Хин тахер, Хцаберд при непонятных условиях были переданы Азербайджану.

Таким образом, села Хцаберд, Спитакашен, Арпагетик, Хин тахер, Хандцадзор, которые в течении многих лет играли огромную роль в политической, экономической и культурной жизни Арцаха заполнили список заложников-поселений. И этот факт так и не получил политической оценки.

Ключевые слова: Охранник крепости, дизак, пограничник, вооруженный отряд, восстание, место жительства, освободительная борьба, сельское хозяйство, население, плененный населенный пункт

ESSAYS ON THE HISTORY OF OUTPOST VILLAGES OF DIZAK (KHSABERD, SPITAKASHEN, ARPHAGETIK, HIN TAGHER, KHANDZADZOR) - **VAHRAM BALAYAN** - In 2020 on 27th of September, Azerbaijan, with active support of Turkey and international terrorist groups has started large-scale hostilities against the Republic of Artsakh.

As a result of the 44-day war, under a number of undiscovered circumstances, Dizak, which overcame many difficulties over millennia's, and its fortified villages came under the control of the enemy.

Moreover, after a joint declaration of the leaders of the Republic of Azerbaijan, the Republic of Armenia and the Russian Federation, signed in 2020 on 10th of November, the villages of Khtsaber and Hin Tagher, which were under the control of the Armenian troops, were handed over to Azerbaijan in inexplicable conditions.

Thus, the villages of Khtsaber, Spitakashen, Arpagetik, Hin Tagher, Khandzadzor, which have played a significant role in the political, economic and cultural life of Artsakh for thousands of years, at the end of 2020, under the circumstances that have not yet received a final assessment, these villages joined to the list of Armenian settlements, captured by Azerbaijan.

Keywords: Fortress guard, dizak, border guard, armed detachments, rebellion, inhabitation, liberation struggle, collective farm, population, captive settlements.

**ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ
ՊԱՏՄԱԽՐԱՎԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՆ ԱՐԴԻԱԿԱՆ ՈՐՈՇ
ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՅՄԻ ՆԵՐՔՈ:
ՊԱՏՄԱԽՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

*«Historia est magistra vitae». «Պատմությունը
կյանքի խորհրդատուն է՝ ուսուցիչը» (Հին Հռոմ)*

Հոգիվածում հեղինակն անդրադառնում է Մոսկվայի՝ 1921թ. մարտի 16-ի և Կարսի նույն թվականի հոկտեմբերի 13-ի պայմանագրերին, որոնցով հայկական բնապատմական մի շարք տարածքներ՝ Կարսի մարզ, Նախիջևան են հանձնվեցին Թուրքիային և նրա դաշնակից Ադրբեջանին: Հեղինակն ընդգծում է այն հանգամանքը, որ Հայաստանի մասով այդ պայմանագրերն անիրավաչափ են՝ մասնավորապես այն առումով, որ Մոսկվայի պայմանագրով, որը կնքվել էր Ռուսաստանի և Քեմալական Թուրքիայի միջև, Ռուսաստանը պարտավորվում էր, ըստ էության, **պարտադրել** Հայաստանին համաձայնվելու այդ թալանչիական պայմաններին՝ բնիկ հայկական ազգային-պատմական տարածքների զավթմանն ու անեքսիային՝ որով և խախտվել է միջազգային իրավունքով ճանաչված միջազգային պայմանագրերի կնքման համար պարտադիր կողմերի իրավահավասարության, ազատ կամահայտնության սկզբունքը: Ըստ հեղինակի՝ Կարսի պայմանագիրը, որի տակ դրված է նաև Խորհրդային Հայաստանի ստորագրությունը, Հայաստանի մասով պետք է անվավեր ճանաչվի ՀՀ ԱԺ-ի կողմից և ոչ թե 2020թ. նոյեմբերի 9-ի հայտնի համաձայնագրի՝ որի տակ դրված է ՀՀ վարչապետ Փաշինյանի ստորագրությունը, պահանջով Հայաստանի տարածքով բացվի Թուրքիա-Նախիջևան-Ադրբեջան ճանապարհը, որը փաստորեն ոչ այլ ինչ է, բայց եթե պանթուրքիզմի, պանթուրանիզմի ծրագրի սկիզբը... որը ոչ միայն լուրջ սպառնալիք է Հայաստանի, այլև ամբողջ տարածաշրջանի՝ հատկապես Ռուսաստանի համար. առավել ևս, որ Ղարաբաղի՝ Արցախի հայկական Հանրապետության դեմ ուղղված ադրբեջանաթուրքական ագրեսիայի արդյունքով Թուրքիայի ագրեցությունն ու ներկայությունն Անդրկովկասում ակնհայտ է... Հոգիվածում հեղինակը շոշափում է նաև առնչվող մի շարք այլ հարցեր:

Բանալի բառեր՝ Մոսկվայի պայմանագիր, Կարսի պայմանագիր, Հայաստան, Ռուսաստան, Թուրքիա, Ադրբեջան, Նախիջևան, Արարատ, Սուրմալու, Կարսի մարզ:

Պատմական համառոտ ակնարկ: Կարսի մարզը ռուսական պետության՝ Ցարական Ռուսաստանի կազմում որպես մարզ՝ վարչական միավոր, ստեղծվել է

1877թ. նոյեմբերի 1-ին՝ ռուս-թուրքական 1877-1878թթ. պատերազմի ընթացքում՝ ունեցել է շուրջ 19 հազ. կմ² տարածք: Ավելի վաղ ժամանակներում այդ տարածքը գտնվել է հայկական թագավորությունների կազմում՝ բնիկ հայկական՝ ազգային-պատմական տարածք է, որպիսին է նաև, ինչպես հայտնի է, այսօր Ադրբեջանի հովանավորության՝ պրոտեկտորատի, տակ գտնվող Նախիջևանը՝ այսպես կոչված Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը: Ի դեպ, մի կարճ ժամանակահատված Կարսն ու Նախիջևանն ազատագրվել և գտնվել են նաև Հայաստանի առաջին Հանրապետության (1918-1920թթ.) կազմում: 1920թ. սեպտեմբերի 23-ին Օսմանյան թուրքերը ներխուժելով Հայաստանի Հանրապետության սահմաններից ներս. սեպտեմբերի 29-ին գրավեցին Սարիղամիշն ու Կադվանը, հոկտեմբերի 30-ին՝ **Կարսը**, նոյեմբերի 7-ին՝ Ալեքսանդրապոլը (Լենինական, Գյումրի), նոյեմբերի 12-ին Ադինը (ՀԽՍՀ Անիի շրջանում) և երկու ուղղություններով գրոհը զարգացրին դեպի Երևան: Մոսկվայի՝ 1921թ. մարտի 16-ի, և Կարսի՝ 1921թ. հոկտեմբերի 13-ի պայմանագրերը նախապատրաստելու և կնքելու ժամանակ այդ տարածքները թուրքերի ձեռքին էին, իսկ Նախիջևանը՝ մուսաֆաթական «Ադրբեջանի» վերահսկողության տակ: Այստեղ նշենք նաև, որ Թուրքիայի հետ 1920թ. դեկտեմբերի 2-ի՝ հետագայում չվավերացված Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանին մնում էր շուրջ 10 հազ. կմ² տարածք. ի դեպ այդ պայմանագրով Հայաստանի կառավարությունն անվավեր էր համարում՝ հայտարարում նաև Սևրի պայմանագիրը՝ Հայաստանի մասով:

Ինչպես հայտնի է, 1920թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի առաջին Հանրապետության ղեկավարությունը կործանման եզրին կանգնած Հայաստանի իշխանությունը հանձնեց բոլշևիկներին՝ այսինքն՝ Հայաստանը խորհրդայնացվեց: Մի փոքր ժամանակահատված՝ 1921թ. փետրվարի 18-ից մինչև ապրիլի 2-ը, դաշնակցական կառավարության զինված հեղաշրջման հետևանքով խորհրդային իշխանությունը երկրում տապալվեց, որից հետո, սակայն, այն նորից վերականգնվեց և գոյություն ունեցավ մինչև այսօրվա՝ Երրորդ Հանրապետության ստեղծումը:

Հիշատակված պայմանագրերի կնքման շրջանում Խորհրդային Ռուսաստանը և Քեմալական Թուրքիան բավական մերձավոր հարաբերությունների մեջ էին. հավատալով, թե չհավատալով, որ Թուրքիան և նրա հովանավորության տակ գտնվող Արևելակովկասյան իսլամական Հանրապետությունը (հետագայում Խորհրդային Ադրբեջանը) միջազգային իմպերիալիզմի դեմ պայքարի ֆորպոստն են Մերձավոր Արևելքում. Ռուսաստանը 1920թ. նույնիսկ զգալի օգնություն՝ զենքով, ոսկով ևն, ցույց տվեց Թուրքիային Անտանտի դաշնակից «իմպերիալիստական» Հունաստանի դեմ պայքարում: Այդ շրջանի թուրք-ռուսական՝ բոլշևիկյան «սիլի-բիլիներ»-ը բավական նման են այսօրվա Էրդողան-Պուտին «սիլի-բիլիներ»-ին... (Որոնք, ի դեպ, կարծում եմ, շատ երկար չեն տևի, ինչպես այն ժամանակ...): Հայաստանի բուրժուական Հանրապետությունը դիտվում էր որպես իմպերիալիստական Անտանտի՝ Անգլիա, Ֆրանսիա, դաշնակից և քեմալական Թուրքիան իր գիշատչական ծրագրերը Հայաստանի նկատմամբ քողարկում էր

այդ կեղծ կարգախոսով՝ հաճոյանալով բոլշևիկյան Ռուսաստանին: Իհարկէ Թուրքիան կոմունիստական-բոլշևիկյան դառնալու որնէ իրական ցանկություն չուներ (ինչպէս որ այսօր նա՝ Թուրքիան, ռուսների հետ եղբայրանալու իրական ցանկություն չունի և չի էլ կարող ունենալ. Թուրքիայի պանթուրքիստական մտադրություններն ամենից շատ հենց Ռուսաստանին են վնաս. իսկ ինչ վերաբերում է Ադրբեջանին՝ որն իր պետական ակտերում թե՛ ցարական և թե՛ բոլշևիկյան Ռուսաստանին համարում է օկուպանտներ, Ռուսաստանն այլևս չի կարող անջատել՝ կտրել իր եղբայր Թուրքիայից՝ եթէ նույնիսկ ոչ միայն Երևանը, այլև Մոսկվան էլ տա թուրքերին. կարծում եմ՝ ռուսները բոլորովին էլ հիմար չեն, դա հասկանում են...): Թուրքերը, հենց ինքը Մուստաֆա Քեմալը, քանիցս **երկրի ներսում** իրենց խոսքում ընդգծել են, որ իրենք բնավ էլ բոլշևիկ՝ կոմունիստ, դառնալու մտադրություն չունեն, որ թուրքական ազգի կյանքի ու ապագայի երաշխիքները կապված են ազգային իդեալների ու սկզբունքների հետ¹:

Մոսկվայի «Բարեկամության» և «Եղբայրության» պայմանագիրը Թուրքիայի և ՌՍՖՍՀ-ի միջև կնքվեց 1921թ. մարտի 16-ին. պայմանագրով ոչ միայն Կարսի մարզն էր թողնվում Թուրքիային, այլև նրան էր հանձնվում Սուրմալուի գավառը՝ մեր ազգային-պատմական խորհրդանիշ Արարատ-Մասիսով՝ որպէս փոխհատուցում Բաթումի մարզը Վրաստանին տալու դիմաց, իսկ Նախիջևանը՝ նույն նկատառումով որպէս ինքնավար տարածք հանձնվում էր Ադրբեջանի հովանավորությանը (Պատմության մեջ երևի նման զավեշտալի օրինակ չկա, քան **Ադրբեջանի կազմում ադրբեջանական**՝ գերազանցապէս՝ այսօր 100%-ով, ադրբեջանցիներով բնակեցված Նախիջևանի ինքնավարությունը... Այն կարող է ինքնավար լինել Հայաստանի և ոչ թէ Ադրբեջանի կազմում): Ուշագրավ է, որ Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածով Ռուսաստանը պարտավորվում էր Անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ դիմել քայլերի, որպէսզի Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրերում **անպատճառ** (պարտադիր՝ անպայման) ճանաչվեն Մոսկվայի պայմանագրի իրենց վերաբերվող կետերը, այսինքն Հայաստանը պետք է առանց առարկության ճանաչի Կարսի մարզի, Սուրմալուի գավառի և Նախիջևանի կորուստները՝ դրանց ապօրինի զավթումը Թուրքիայի և Ադրբեջանի կողմից. բնականաբար, փաստորեն, Ռուսաստանի հարկադրմամբ Թուրքիայի՝ մի կողմից, մյուս կողմից Խորհրդային Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Ռուսաստանի մասնակցությամբ կնքված «Բարեկամության» պայմանագրով նախատեսված մեզ վերաբերվող հոդվածները նույնությամբ ընդունվեցին Կարսի պայմանագրով²: Մոսկվայի պայմանագրի 15-րդ կետը՝ բնագիրը. «Россия обязуется предпринять в отношении Закавказских Республик шаги, необходимые для **обязательного признания** этими Республиками в договорах, которые будут заключены ими с Турцией, статей настоящего договора, непосредственно их касающихся».

¹ Տե՛ս օր.՝ **Երվանդ Մարգարյան**, *Դավադիր գործարք. Հայաստան-Ռուսաստան-Թուրքիա*, Երևան, 1995, էջ 152-153 և հտ.:

² Տե՛ս **Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում**, «Հայաստան» հրատ., Երևան, 1972, էջ 499-507, 517-527:

(ընդգծումը մերն է.-Մ.Թ.):³

Կարսի պայմանագիրը, որով Թուրքիային անցավ շուրջ 28 հազ. կմ² տարածք, այսինքն մոտավորապես այնքան, ինչքան ներկայիս ՀՀ-ի տարածքն է, վավերացվել է **Խորհրդային Հայաստանի** կողմից՝ 1922 թվականին, վավերագրերը փոխանակվել են Երևանում^{*}։ Ուստի ՀՀ-ը հաշվի առնելով այդ հանգամանքը և այն, որ պայմանագրի կնքման ժամանակ խախտվել է պայմանագրի կողմերից մեկի՝ Հայաստանի նկատմամբ **իրավահավասարության** պայմանագրի կողմերի ազատ կամահայտնության միջազգային հիմնարար սկզբունքը, այդ պայմանագիրը կարող է անվավեր ճանաչել։ Ըստ որում՝ դրա համար որևէ «հոբելյանական» ժամկետ՝ 10 տարի, 100 տարի (որն, ի դեպ, լրանում է այս տարի)՝ ժողովրդի մեջ շրջանառվող, սահմանված չէ. **պարզապես պետք է զգույշ լինել, որ այն «չվերավավերացվի»**՝ «մեծ պետությունների» հերթական խաղերի արդյունքում... **Եվ այսօր պետք է ոչ թե Թուրքիա-Նախիջևան-Ադրբեջան ճանապարհը բացել, այլ Կարսի պայմանագիրն անվավեր ճանաչել...** (Իսկ Նախիջևանն էլ ամբողջ աշխարհում ընդունված նորմերին համապատասխան կարող է ինքնավար լինել Հայաստանի կազմում և ոչ թե Ադրբեջանի. վերջին դեպքում, դա նույնն է՝ օր.՝ եթե Բաքուն կամ Ապշերոնյան տարածաշրջանն ինքնավար ճանաչվի Ադրբեջանի կազմում...): Այդ պայմանագիրն ակնհայտ թալանչիական էր, բայց ինչպես հետագայում նշում են նաև իրենք՝ բոլշևիկյան ղեկավարները, նրանք չէին ցանկանում բախվել թուրքերի հետ՝ «փչացնել» հարաբերությունները նրանց հետ, մի բան, որը ձեռնտու կլիներ Անգլիային և Ֆրանսիային։ Ամեն ինչ կարծես այսօրվա նման է՝ Ռուսաստանը չի ցանկանում հարաբերությունները «փչացնել» Թուրքիայի հետ, այլապես դա ձեռնտու կլիներ Անգլիային, ԱՄՆ-ին ու Ֆրանսիային. արդյունքն այն է, ինչ առկա է՝ բոլորին հայտնի... Այդ կտրվածքով՝ այսօրվա իրողությունների լույսի ներքո՝ հատկապես այսօր ամեն ինչից շատ մեզ մտահոգող Արցախի հարցում և ընդհանրապես ազգօգուտ որևէ դրական արդյունքի հասնելու համար մենք պետք է կարողանանք նրբորեն օգտվել այդ հակասություններից... Իսկ ընդհանրապես՝ եթե խոսքը վերաբերվում է Հայրենիքին, ապա հանուն դրա՝ ի օգուտ Հայրենիքի, սատանայի հետ էլ կարելի է դաշինք կնքել... Ռուս-ամերիկյան հարաբերությունների որոշակի լարվածության (նաև թուրք-ամերիկյան, թուրք-ֆրանսիական հարաբերությունների լարվածության) ֆոնի վրա Թուրքիան նմանվում է դեռևս գեղեցկության նախկին հմայքը լրիվ չկորցրած այն մարմնավաճառուհուն կամ գոնե՝ առնվազն Դյումայի «Կամելիազարդ տիկինը» վեպի հայտնի հերոսուհուն, որին երկու կողմերից ոչ մեկը չի ցանկանում կորցնել... Բայց Թուրքիան խորամանկ մարմնավաճառուհի է՝ նա կարող է ինքը բոլոր կողմերին օգտագործել ի օգուտ իրեն և արդյունքը ստանալուց հետո հրաժարվել բոլոր կողմերից, կամ անցնել կողմերից մեկի կողմը՝ ըստ որում անտեսելով նրա հետ իր նախորդ «եղբայրությունը»... նրանք այնպես հավատարիմ

³ Մոսկվայի և Կարսի պայմանագրերի մասին տե՛ս նաև՝ *ДВП СССР, т.3, ст. 597-604, т.4, ст. 420-499.*
^{*} Ընդ որում ըստ տեղեկությունների Մոսկվայի և Կարսի պայմանագրերն անվավեր ճանաչելու հարցը քննարկվել է ՀԽՍՀ ԳԽ-ի կողմից՝ 1989-91թթ.։ Տե՛ս **Լենդրոշ Խորշուդյան**, Հայկական հարցը, Ե., 1995, էջ 70-71. սակայն արդյունքները մեզ հայտնի չեն – Մ.Թ.։

չեն, ինչպես մենք՝ ռուսներին... Մեր խնդիրն այն է, որպեսզի այդ վիճակից ըստ հնարավորին օգտվենք մենք և ոչ թե Թուրքիան՝ որին, ինչպես նաև **Ադրբեջանին կարծես թե լիովին չի բավարարում նույնիսկ նոյեմբերի 9-ի թալանչիական համաձայնագիրն ու ռուսների մուտքն Ադրբեջան...** Այսպիսի՝ առկա պայմաններում հատկապես առավել քան հրատապ է դառնում ձախողված Փաշինյանի ու նրա կառավարության անհապաղ հեռացումն իշխանությունից ու երկրում իմաստուն կառավարում սահմանելը: Դա անհրաժեշտ է որպեսզի երկիրը դուրս գա այս դեպրեսիվ վիճակից, նոր լիցք ստանա ու անհապաղ ձեռնամուխ լինի իր առջև ծառացած ներքին և արտաքին ոչ դյուրին խնդիրների լուծմանը:

Այսպիսով՝ Մոսկվայի և Կարսի պայմանագրերն այսպես կոչված «Մեծ պետությունների» միջև շահերի բախման արդյունքն են, ինչպես և նոյեմբերի 9-ի և 11-ի համաձայնագրերը և այստեղ՝ իմ վերը բերած մարմնավաճառու օրինակի հետ կապված, ավելի շատ կարելի է խոսել ոչ թե Թուրքիայի, այլ այդ պետությունների «անառակության» մասին, որի շնորհիվ, ի դեպ, **Փոքր Ասիայում միջնադարում հայտնվեց Թուրքիա պետությունը, որն այսօր էլ մնում է որպես մի չարորակ ուռուցք քաղաքակիրթ մարդկության մարմնի վրա...** Բայց մենք չպետք է անտեսենք նաև մյուս կողմից՝ այդ թվում մեր «բարեկամներից» եկող վտանգը... (Ինչպես Ա.Ս.Պուշկինն էր ասում. «Աստված ազատիր բարեկամներից, թշնամիներից ես ինքս կազատվեմ...»):

Այսօր՝ Արցախյան հիմնախնդրի հետ կապված, Թուրքիան և նրա փոքր եղբայր Ադրբեջանն Անդրկովկասը դարձրին աշխարհաքաղաքական խաղերի մի եռագող կաթսա՝ ոչ հեռավոր ապագայում, հղի անախադեպ ծանր հետևանքներով. Արցախյան հիմնախնդիրը՝ Արցախում մնացած մի բուռ հայերի սոսկ իրական վիճակը քողարկելու առիթ է այնպես որ իրական վտանգները դեռ առջևում են... **Այսօր, առավել քան երբևէ մեզ համար չափազանց վտանգավոր են նաև թուրքաադրբեջանական այն կարգախոսները, թե իբրև հայերն ու թուրքերը կարող են հաշտ ու խաղաղ՝ բարեկամաբար ու հարևանությամբ ապրել... Թուրքը եկել է գրավել հայի օջախը, մտել նրա տունը և ասում է՝ ես պատրաստ եմ քեզ հետ՝ քո կնոջ, քո երեխայի, որի եղբոր գլուխը նոր եմ կտրել, հետ խաղաղ ապրել՝ ինչ կա դրանում զարմանալի...** Այս կարգախոսի քաղաքական շրջոնքն էլ այն է, որ՝ ռուսներ գնացե՛ք, հեռացե՛ք Ադրբեջանից (նոր են գլխի ընկել՝ ինչ սխալ են թույլ տվել՝ ռուսներին Ադրբեջան բերելով...): մենք դարբերով ապրել ենք հայերի հետ ու կշարունակենք նրանց հետ հաշտ ու խաղաղ ապրել. մտքով կույր պետք է լինել դրա **իրական**, մեզ համար աղետալի վտանգը չընկալելու, պատմության դասերից հետևություններ չանելու համար...

Ես բարեկամության կողմնակից եմ և նույնիսկ մի քանի անգամ պ-ն Ալիևին այդ կտրվածքով նամակներ եմ գրել (Բհարկե, հասել է, թե չի հասել, չգիտեմ...): Բայց **իրատես** պետք է լինել. հաշտ ու խաղաղ ապրելու կոչ անող Ալիևը պահում է մեր գերիներին, նվաստացնում, նույնիսկ տանջում, նոր գերիներ վերցնում՝ «որպես ահաբեկիչների», Արցախը «մաքրում» հայերից, իսկ պ-ն Էրդողանը կամ Ռեջեփ

փաշան Հայաստանի արևմտյան և արևելյան հատվածներում հայերին կոտորած էնվերին ու նրա խորթ եղբայր Նուրի փաշային է աստվածացնում..., էլ չեմ ասում շուրջ 2 միլիոն հայ կոտորելու համար անգամ ներողություն չի խնդրում... Դե արի ու այդ մարմնավաճառներին հավատա... (Չնայած Փաշինյանը «դյուրահավատ է», հավանաբար հավատում է... թուրքերին ճանապարհ* է տալիս Հայաստանով, դրա դիմաց դեռևս նրանց մոտ գտնվող գոնե մեր գերիներին ու պատանդներին, անգամ նրանցից մեկին էլ չի ազատում... Հույս է հայտնում, որ այդ հարցը կլուծվի իր եղբայր Ալիևի հետ իրենց հետագա հանդիպումներում... Սա, իհարկե, ի դեպ):

Մեր բախտը մեր ձեռքին է՝ այն հաջողությամբ տնօրինելու համար մենք պետք է պատմությունից դասեր քաղենք. **արմատապես** փոխենք երկիրը, մեր ռազմական հզորությունը հնարավորինս ամենակարճ ժամկետում հասցնենք աննախադեպ բարձր մակարդակի, ստեղծենք ճկուն դիվանագիտություն, երկիրն ազատենք զանազան բախտախնդիրներից նն, նն... Փաստորեն, մենք ունակ չէինք պատմությունից դասեր քաղելու, եթե ունակ լինեինք դրան, ապա 1918-20 թվականները չէինք կրկնի... (Որը, ցավոք, դեռ ավարտված չէ...):

ИСТОРИКОПРАВОВЫЕ ОБСТОЯТЕЛЬСТВА ЗАКЛЮЧЕНИЯ МОСКОВСКОГО И КАРССКОГО ДОГОВОРОВ 1921 ГОДА В СВЕТЕ НЕКОТОРЫХ СОВРЕМЕННЫХ СОБЫТИЙ - МАЛИК ТЕЛУНЦ - В статье автор вернувшись к Московским и Карским договорам 1921 года, по которым некоторые армянские естественноисторические, исконно армянские земли были переданы Турции и Азербайджану: Карская область, Нахиджеван и др., автор подчеркивает то обстоятельство, что эти договора по части Армении явно противоречат международно признанному принципу равноправия, свободного воле изъяснения сторон при заключении международных договоров: это, в частности, выразилось в том, что по Московскому договору, заключенному между Россией и Турцией 16 марта 1921 года, Россия обязалась предпринять меры чтобы Армения (и другие Закавказские советские республики) обязательно приняла захватнические, хищнические условия Турции: т.е. узаконили аннексию исконно армянских земель... По мнению автора Карсский договор по части этих армянских земель, должен быть признан недействительным решением Национального собрания Республики Армения, а между тем; вместо того, чтобы аннулировать Карсский договор 13 октября 1921г. по части захвата исконных армянских земель, по известному соглашению или заявлению 9 ноября 2020 года, Армения (в лице

* Ի դեպ, նույնիսկ նման առաջարկության համար Կարեն Դեմիրճյանը ծագած վիճարանության ժամանակ ապտակում է Հեյդար Ալիևին՝ Բլիսմի հորը՝ այն ժամանակ ԽՍՀՄ մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ, և ԽՍՀՄ կենտրոնի քաղաքապետի անդամ... Կարեն Մերոբիչը նման բանի համար Պուտինին էլ կապտակեք, որովհետև տղա էր, տղամարդ էր ու մեծ հայրենասեր (անձամբ նրան լավ եմ ճանաչում՝ գիտեմ)։ Բսկ էր խեղդատակ-ցմփոր Փաշինյանն ինչ կարող էր անել... Ամոթ է մեր 5 հազարամյա ժողովրդին՝ արդեն շուրջ 30 տարի է 10 միլիոնից մի խելքը գլխին ղեկավար էլ չի կարողանում ընտրել... **Բսկ այսօր միայն սեփական զենքի ուժով, միայն զերմարդկային ճիգերով կարող ենք փրկել մեր Հայրենիքը...**

руководителя правительства Пашиняна) еще и согласилась через территорию РА открыть дорогу связывающую Турцию-Нахиджеван и Азербайджан; т.е. заложить дорогу, поставить практическое начало, направленные на осуществление агрессивных планов Турции: Пантюркизма, Пантуранизма. По мнению автора это серьезная угроза не только для Армении, но и для всего региона; особенно для России... тем более, что по результатам азербайджано-турецкой агрессии против Карабаха: Арцахской Армянской республики, влияние, присутствие Турции в Закавказье налицо... В статье автор затрагивает и некоторые другие вопросы, связанные с обсуждаемой проблемой.

Ключевые слова: Московский договор, Карсский договор, Армения, Россия, Турция, Азербайджан, Нахичеван, Арарат, Сурмалу, Карсская область.

HISTORICAL AND LEGAL CIRCUMSTANCES OF SIGNING THE MOSCOW AND KARS AGREEMENTS UNDER THE LIGHT OF SOME NOWADAYS FACTS-HISTORICAL AND LEGAL BRIEF ANALYSIS-MALIK TELUNTS- In the article, the author refers to the Treaty of Moscow of March 16, 1921 and Kars of October 13 of the same year, by which a number of Armenian natural historical territories, Kars region, Nakhijevan were surrendered to Turkey and its ally Azerbaijan. The author emphasizes the fact that these agreements with Armenia are illegal, using the fact that the Moscow agreement, which was signed between Russia and "Kemalist Turkey", Russia had to force Armenia to agree to these looting conditions of seizing and neglecting indigenous Armenian national-historical territories, which violated the principle of jurisdiction of the obligatory parties to the conclusion of international agreements on equality, the principle of free expression of his will. According to the author, the Treaty of Kars, under which the signature of Soviet Armenia is placed, should be declared invalid by the National Assembly of Republic of Armenia, but not under the well-known agreement of November 9, 2020 under which the signature of RA Prime Minister Pashinyan is placed, forces to open Turkey-Nakhijevan-Azerbaijan road through Armenia, which is in fact nothing but the beginning of the program of Pan-Turkism, Pan-Turanism ... which is not only a serious threat to Armenia, but also to the whole region, especially Russia... Moreover, as a result of the Azerbaijani- Turkish aggression against Karabakh, against the Armenian Republic of Artsakh, Turkey's influence and presence in Transcaucasia is obvious, the author of the article also touches upon a number of other related issues.

Key words: Moscow agreement, Treaty of Kars, Armenia, Russia, Turkey, Azerbaijan, Nakhijevan, Ararat, Surmalu, Kars Province.

ՎԼԱԴԻՄԻՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՈՎՔԵՐ ԵՆ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԸ՝
ԺՈՂՈՎՈՒՐԴ, ԹԵ՞ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ

«Ժողովուրդն է տարածքի բախտը որոշողը,
եւ ոչ թե տարածքը՝ ժողովրդի»

Հարդի Դիլարդ

ՄԱԿ-ի Միջազգային արդարադատության
դատարանի դատավոր

Ադրբեջանի կողմից Արցախի դեմ սանձազերծաց պատերազմը մղվում է ոչ միայն կռվի դաշտում, այլև՝ տեղեկատվական ճակատում: Ադրբեջանն ապատեղեկատվության միջոցով փորձում է միջազգային հանրությանը ապացուցել, որ Արցախի հայերը ոչ միայն տեղաբնիկ չեն, այլև ազգային փոքրամասնություն են հանդիսանում, որի ուժով Արցախը չի կարող որևէ պետականություն ունենալ: Հոգվածում լուսաբանվում են, թե ինչպիսի հանրություն է Արցախի բնակչությունը և միջազգային իրավական ինչպիսի չափանիշներ են տարածվում նրա վրա: Այդ առումով ցույց է տրվում ազգային փոքրամասնություն և սփյուռք եզրույթների էությունը, ինչպես նաև լուսաբանվում է միջազգային փաստաթղթերով ժողովրդին տրված բնութագրականները՝ դրանք համոզիչ կերպով տարածելով Արցախի ժողովրդի վրա:

Հոգվածում բացահայտվում է նաև ժողովուրդների ինքնորոշման և տարածքային ամբողջականության սկզբունքների հարաբերակցությունը, որի շրջանակներում Արցախի ժողովուրդն իր իրավունքներն համապատասխանեցրել է միջազգային իրավունքի պահանջներին՝ իր առժանի տեղը զբաղեցնելով միջազգային հանրության ժողովուրդների ընտանիքում:

Բանալի բառեր՝ պետություն, պատմական տարածք, ժողովուրդ, բնակչություն, ազգ, տեղաբնիկ ազգային փոքրամասնություն, հակամարտություն, կարգավիճակ, ժողովրդի ինքնորոշում:

Արհեստածին ձևավորված «Ադրբեջան» կոչվող պետությունն ընդամենը մեկ-դարյա պատմություն ունի: Այն սկսվում է 1918 թվականի մայիսի 28-ից, երբ Անդրկովկասյան ֆեդերացիայի քայքայումով Կովկասի մուսուլմանների ազգային խորհուրդը Անդրկովկասի արևելյան մասը հռչակեց որպես արևելյան մուսուլմանական հանրապետություն, որին Թուրքիայի խորհրդով տրվեց Ադրբեջան հորջորջումը¹: Այդ պե-

¹ Ա. Միմոնյան, *Զանգեզուրի գոյապայքարը 1917- 1920 թ.թ.*, Երևան, 2017, էջ 78:

տությանը 1920 թվականի ապրիլի 28-ին հաջորդեց Խորհրդային Ադրբեջանը, իսկ ԽՍՀՄ-ի լուծարումից հետո՝ ժամանակակից Ադրբեջանի Հանրապետությունը:

Սեփական հայրենիք և մշակույթ ունենալու մոլուցքով տարված, վերջին 100 տարվա ընթացքում Ադրբեջանն իրականացնում է պետության կազմի մեջ գտնվող բնիկ ազգերի և ազգությունների ոչնչացման պետական քաղաքականություն: Այդ քաղաքականության գլխավոր թիրախը եղել և մնում է հայ ժողովուրդը, որի դեմ տեղեկատվական պատերազմը ոչ մի վարկյան չի դադարում: Նման պայմաններում դարաբաղյան հակամարտության ֆոնի վրա Ադրբեջանի ղեկավարությունը միշտ էլ հեզնանքով շեշտում է, թե «Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը հասկացություն գոյություն չունի: Կա Լեռնային Ղարաբաղի բնակչություն, որ մինչև հակամարտությունը բաղկացած էր ադրբեջանցիներից եւ հայերից, որոնք հավասար իրավունքներ ունեին»:

Բոլոր միջազգային ատյաններում, Ադրբեջանի նախագահը, քաջ գիտակցելով, որ տեղեկատվական-հոգեբանական պատերազմում հակառակորդին բարոյալքելու հնարքներից մեկն էլ ապատեղեկատվության քարոզչությունն է, ուստի եւ բառախաղերի միջոցով փորձում է Արցախի ժողովրդին վերածել «տեղական բնակչության» կամ «ազգային փոքրամասնության», դրանով իսկ, աղավաղելով Արցախի ժողովրդի արդեն իսկ իրականացրած ինքնորոշման իրավունքը, առանց որեւէ իրավական հիմքի միջազգային հանրությանը ներկայացնել, թե իբր հակամարտությունը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ է, այլ ոչ թե Ադրբեջանի եւ Արցախի²:

Իրականում ինչպիսի՞ հանրություն են արցախցիները՝ ժողովուրդ, թե՞ բնակչություն: Սրանք առօրյա խոսք ու զրույցում հաճախակի կիրառվող հասկացություններ են, որոնց միջեւ առկա տարբերությանը շատ հաճախ ուշադրություն չենք դարձնում:

Հայոց լեզվի բառարաններում «Ժողովուրդ» բառի հոմանիշներ են հանդիսանում՝ ազգ, ազգություն, ածու, էթնոս, ազգաբնակչություն, բնակչություն, ցեղ և այլ հասկացությունները: Միջազգային իրավունքի բազմաթիվ փաստաթղթերում հանդիպում ենք ժողովուրդ բառահոլովածի, բայց դրանցից ոչ մեկում էլ տրված չէ այդ հասկացության ծավալուն բնորոշումը: Հարցին առավել մոտ բնորոշումը տրվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի զեկույցներից մեկում, ըստ որի՝ ժողովրդի (ազգի) բնութագրիչներն են՝ մշակութային միատարրությունը, լեզվական միասնությունը, ընդհանուր պատմական ավանդույթը, ազգային ինքնությունը, կրոնական միասնությունը եւ ընդհանուր տնտեսական կյանքը:

Միջազգային-իրավական բառապաշարում, 1957 թվականից սկսած հայտնվեց «բնիկ, տեղաբնիկ ժողովուրդ» եզրույթը, որի տակ նկատի է ունեցվում այն ժողովուրդներին, որոնք վաղնջական ժամանակներից կազմում են տվյալ տարածքի բնակչությունը եւ որոնց ավանդույթներն ու մշակույթը համահունչ են այն տարածքին, որտեղ

² 2019 թվականի հոկտեմբերի 3-ին Սոչիի «Վալդայ» միջազգային ակումբում ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանի և Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի բանավեճը:

նրանք ապրում են: Համաձայն միջազգային իրավունքի նորմերի՝ հաճախ տեղաբնակությունը համարվում է պետական անկախության կամ պետության մեջ հատուկ իրավունքների ձեռքբերման պայմանագրերի գլխավոր նախապայման: Այդ համատեքստում, 2007թ. սեպտեմբերի 13-ին ՄԱԿ-ի ընդունած «Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին» Հռչակագիրը (որի ընդունմանը ձեռնպահ է մնացել Ադրբեջանը), կարելու է իրավական փաստաթուղթ է ադրբեջանա-արցախյան հակամարտության կարգավորման համար: Մասնավորապես, Հռչակագրի 3-րդ եւ 4-րդ հոդվածներում արձանագրված են, որ բնիկ ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք, որի ուժով նրանք ազատորեն հաստատում են իրենց քաղաքական իրավիճակը եւ ազատորեն իրագործում իրենց տնտեսական, սոցիալական եւ մշակութային զարգացումը³:

Այստեղից պարզ է, թե ինչու Ադրբեջանը ձեռնպահ է մնացել Հռչակագրի ընդունմանը: Ավելին, Ադրբեջանն անընդհատ թմրեկահարում է՝ հայերի՝ Կովկասում իբր թե բնիկ չլինելու եւ Իրանի ու Թուրքիայի խորքերից ադրբեջանական հողերում վերաբնակվելու մասին թեզը: Բայց կեղծարարությունն էլ երեւի թե սահմաններ ունի: Մի կողմ թողնենք Աքեմենյան Պարսկաստանի արքա Դարեհ Ա Մեծի (հայկական աղբյուրներում՝ Դարեհ Վշտասայան) տիրապետության օրոք գրված Բիսիթունի արձանագրությունը (մ.թ.ա. 520-518 թվականներ), հայ եւ օտար պատմիչների աշխատությունները, պատմական Հայաստանում սփռված վիմագրերը եւ զանք 18-րդ դար, երբ մի շարք թյուրքական խաշնարած, վաչկատուն ցեղեր՝ թյուրքալեզու ջավանշիր ցեղի քոչվորական ծագմամբ առաջնորդ Փանահ Ալիի գլխավորությամբ, օգտվելով Արցախի որոշ մելիքների, հատկապես Վարանդայի Մելիք-Շահնազար 2-րդ մելիքի պառակտիչ, դավաճանական պահվածքից եւ Պարսկաստանում տիրող խառնաշփոթից, որ սկիզբ էր առել Նադիր շահի սպանությունից (1747թ.) հետո, կարողացան ներթափանցել Ղարաբաղի (Արցախի) կուսակալության տարածք եւ Շուշի բերդաքաղաքը դարձնել, այսպես կոչված, «խանական» նստավայր: Ինչպես հայտնի է, հայկական հողերի վրա «խանական» կառավարումը վերացվեց 1822թվականին՝ փոխարինվելով ռուսական վարչակազմով⁴:

Արցախահայության տեղաբնիկ լինելը վկայում են թեկուզ եւ հենց վերջին տարիներին միջազգային հնագիտական արշավախմբերի կողմից կատարված պեղումները, որոնց համաձայն՝ հայությունը մարդաբանական տեսակետից տեղաբնիկ ժողովուրդ է եւ հայերը հետնորդներն են այն բնակչության, որ այստեղ ապրում է 6-7 հազար տարի շարունակ:

Ազգությունը նույնպես մարդկանց պատմական ընդհանրություն է, որն ունի միասնական լեզու, տարածք, սովորույթներ եւ մշակույթ: Բայց ժողովուրդը գտնվում է հասարակության զարգացման ավելի բարձր մակարդակի վրա, քան ազգությունը:

Քննարկվող հարցի կապակցությամբ պետք է տարբերակել նաև «ազգային փոքրամասնություն» եւ «սփյուռք եզրույթները»: Առաջինն ազգային խմբեր են, որոնց պատմական հայրենիքը գտնվում է տվյալ պետության սահմաններից դուրս եւ, ի

³ ՄԱԿ-ի 13.09.2007 թ. «Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին» հռչակագիրը

⁴ Լեո, հատոր 3, Երևան, 1973, էջ 206-275:

տարբերությունն բնիկ ժողովուրդների, չունեն միջազգայնորեն ճանաչված իրավունքներ: Իսկ երկրորդը բավարար չափով տարածված է ամբողջ աշխարհում եւ նշանակում է ժողովրդի (ազգի) մի մաս, որն ապրում է պատմական հայրենիքի սահմաններից դուրս: Հենց այդպիսի ճակատագիր է վիճակված հայ ժողովրդի մեծ հատվածին:

Այսպիսով, միջազգային փաստաթղթերով ժողովրդին տրված բնութագրականները լիովին համապատասխանում են Արցախի ժողովրդի չափորոշիչներին: Արցախի ժողովրդի մեծամասնությունը հայեր են, ում մայրենի լեզուն հայերենն է, իսկ կենցաղում կիրառում են հայոց լեզվի դարաբաղյան (արցախյան) բարբառը, դավանում են քրիստոնեություն, կրում են հայ ժողովրդի հնագույն մշակութային արժեքները, ունեն ազգային ինքնություն եւ պատմական տարածք, որը կամայականորեն հայտնվել է Ադրբեջանի կազմում: «Արցախի ժողովուրդ» եզրույթը նշանակում է նաեւ, որ հանրապետության սահմաններում բնիկ մեծամասնություն կազմող հայ ժողովրդի հետ մեկտեղ, խաղաղ եւ փոխշահավետ գոյատևում են տարբեր ազգային խմբեր՝ ռուսներ, հույներ, ադրբեջանցիներ եւ այլն: Այդ են վկայում մարդահամարի վերաբերյալ վերջին հարյուր քսան տարվա վիճակագրական տվյալները: Ռուսական կայսրության բնակչության առաջին մարդահամարի՝ 1897թ. տվյալներով, Շուշիի գավառում (որին անհիմն կցված են եղել նաեւ Ադդամի եւ Աղջաբեդու շրջանները) բնակվում էր 138.771 մարդ, որից 58,2%-ը՝ հայեր, մնացածը՝ այլազգիներ: Նույնիսկ այն ժամանակ, երբ Ադրբեջանի, քեմալական Թուրքիայի եւ բոլշևիկյան Ռուսաստանի սիրախաղերի արդյունքում երրորդ երկրի նորմատիվ իրավական ակտի ուժ չունեցող կուսակցական որոշմամբ Արցախը հայտնվեց Խորհրդային Ադրբեջանի կազմում եւ նրա մի մասին տրվեց մարզային ինքնավարություն (1923թ.), հայերը կազմում էին ինքնավար մարզի բնակչության 94%-ը: Փաստորեն այլազգիներն այնքան քիչ էին, որ համաձայն ԱդրԽՍՀ Կենտգործկոմի՝ «Հիմնարկությունների ազգայնացման վերաբերյալ» 1923թ. հուլիսի 31-ի որոշման, եթե Խորհրդային Ադրբեջանի հիմնարկ-ձեռնարկություններում եւ կազմակերպություններում գործավարությունը պետք է տարվեր թուրքերեն, ապա Լեռնային Ղարաբաղում՝ հայերեն լեզվով: Տեղին է հիշեցնել, որ ցարական Ռուսաստանում կովկասաբնակ մահմեդականներին անվանում էին մուսուլմաններ կամ կովկասյան թաթարներ, Խորհրդային Միության կազմավորումից հետո՝ թուրքեր, իսկ հետագայում՝ «ժողովուրդների մեծ հայր» Ստալինի ցուցումով, նրանք կոչվեցին ադրբեջանցիներ:

Խորհրդային Ադրբեջանի կազմի մեջ կամայականորեն հայտնված Արցախի կարգավիճակի վերաբերյալ որևէ փաստաթուղթ ունենալու հարցը բազմիցս քննարկվել է Ադրբեջանի կուսակցական և պետական մարմիններում և վերջնական հաշվով «խորհրդային տեսքի բերված» փաստաթղթին տրվել «Սահմանադրություն» հորջորջումը (1924թ.): Ինչևէ, հենց այդ փաստաթղթից նկատելի է, որ Լեռնային Ղարաբաղը ոչ թե գտնվել է Ադրբեջանի կազմում, այլ նրա «մի բաղկացուցիչ մասն» կազմել եւ ներկայացված էր Ադրբեջանի բոլոր մարմիններում՝ համեմատական չափի սկզբունքով: Իսկ դա նշանակում է, որ Խորհրդային Ադրբեջանի տարածքում պետական իշխանության կրողներից մեկն էլ Արցախի հայ ժողովուրդն էր իր պատմական

տարածքով: Փաստաթղթում նենգամտորեն նշվել է, որ «Ինքնավար Լեռնային Ղարաբաղում ամբողջ գործավարությունը, դատավարությունը եւ դպրոցներում ուսուցումը կատարվում է մայրենի լեզվով»⁵: Դժվար չէ կոտակել, որ հեռագնա նպատակային ենթատեքստ ունի «մայրենի լեզու» առեղծվածային հասկացությունը: Մինչդեռ ինքնավար մարզ կազմավորելու մասին Ադրբեջանի Կենտրոնականի դեկրետում նշված էին «հայ-մուսուլմանական» «հայերի եւ մուսուլմանների», «Լեռնային Ղարաբաղի հայկական մաս» բառակապակցությունները, որոնցից հասկանալի է, որ բառակապակցության առաջին մասը վերաբերում է հազարամյակների խորքից եկող բնիկ տերերին՝ հայ ազգությանը, իսկ «մուսուլման» հասկացությունը կոնկրետ ազգ կամ ազգություն չի ենթադրում, այլ միայն նշանակում է իսլամի հետեւորդներ:

Երբ Խորհրդային Միության մայրամուտին Ադրբեջանը դուրս եկավ ԽՍՀՄ կազմից (30.08.1991), Արցախին այլ բան չէր մնում, քան հրաժեշտ տալ Խորհրդային Ադրբեջանին: Երկրամասի ազատասեր ժողովուրդը կարողացավ բռնկեցվել եւ ազգային ազատագրական պայքարի միջոցով թոթափել գաղութային լուծը, ինքնորոշման իրավունքի հիման վրա հռչակել իր պետական անկախությունն ու Արցախի ժողովրդի անունից ընդունել եւ հռչակել իր Մայր օրենքը՝ Սահմանադրությունը⁶: Եվ պատահական չէ, որ հանրապետության Սահմանադրությունը սկսվում է «Արցախի ժողովուրդը» եզրույթով: Իսկ դա արտացոլում է օբյեկտիվ իրականությունը եւ ցուցաբերում երկրի արժանապատվությունը:

Սահմանադրության մեջ 7 անգամ օգտագործված է «Ժողովուրդ» եզրույթը (նախաբան, հոդվ. 2 մաս 1 և 2, հոդվ. 91, 110, 131, 132)՝ որպես երկրի տարածքի բնակիչների մի ամբողջություն: Այս համատեքստում արցախցի (ղարաբաղցի) ասելով, սկզբունքորեն պետք է նկատի ունենալ հանրապետության տարածքում բնակվող ցանկացած ազգության բնակչի:

Ինչ վերաբերում է «բնակչություն» եզրույթին, ապա միջազգային իրավունքում դրա տակ նկատի է առնվում պետության տարածքում բնակվող բոլոր անձանց համակեցությունը, որոնք գտնվում են տվյալ պետության իրավագործության ներքո: Այդ հասկացության տակ մտնում են պետության քաղաքացիները, երկքաղաքացիները եւ քաղաքացիություն չունեցող անձինք: Դրանց տակ չեն ընկնում դիվանագիտական գործակալները, հյուպատոսական աշխատողները, հատուկ առաքելության աշխատակիցները եւ նրանց ընտանիքների անդամները:

Բնակչությունն ավելի շուտ վիճակագրական եւ նրա հետ կապված ժողովրդագրական տերմին է: Այդ առումով կարելի է տարանջատել գյուղի, քաղաքի, մարզի, տարածաշրջանի, աշխարհամասի եւ նույնիսկ Երկիր մոլորակի բնակչությունը:

Ժամանակը ցույց է տվել, որ Արցախի ժողովուրդը, որպես կուռ միասնություն, իր իրավունքների եւ ազատությունների ու համազգային գաղափարների համար պայ-

⁵ «Կոմունիստ» հայատառ թերթ, 6 հուլիսի 1924թ.:

⁶ ԼՂՀ պաշտոնական տեղեկագիր, 28 փետրվարի 2017թ., N04:

քարել գիտի: Չի կարելի Արցախը վերածել տարածքի, իսկ ժողովրդին՝ բնակչության, հակամարտության սուբյեկտից՝ օբյեկտի: Իրականությունն այն է, որ.

- Արցախի ժողովուրդը պետության սահմանադրականության տարրն է, նրա սուբյեկտը,

- Արցախի ժողովուրդն իշխանության աղբյուրն է,

- Արցախի ժողովուրդը կոնկրետ ազգություն ունի, բնակչությունը՝ ոչ,

- Արցախի ժողովուրդն ազգային եզրույթ է, բնակչությունը՝ ոչ,

- Արցախի ժողովուրդը պատմականորեն ձևավորված մարդկանց ընդհանրություն է՝ արմատապես ու գիտակցականորեն կապված իր երկրի հողի հետ, իսկ բնակչությունը վիճակագրական ամփոփագիր է,

- ժողովուրդը համընդհանուր հասկացություն է, իսկ բնակչությունը կոնկրետ կետի (գյուղ, շրջան, քաղաք եւ այլն) բնակիչներն են:

ՄԱԿ-ի համապատասխան փաստաթղթերով եւ արդարադատության Միջազգային դատարանի վճիռներով աներկբա ճանաչված է ժողովուրդների ինքնորոշման իրավունքը: Այդ փաստաթղթերի իրավական բովանդակությունից բխում է, որ Արցախի ժողովուրդն ինքնորոշման իր իրավունքն իրականացրել է հանրաքվեի միջոցով՝ ժողովրդի ազատ կամարտահայտության հիման վրա՝ առանց որեւէ ճնշման, հարկադրման կամ դրսի միջամտության: Այդ իրավունքը հնարավորություն է ընձեռնել ընտրելու իր կառավարման ձեւը, պետական եւ սոցիալ-տնտեսական կառուցվածքը եւ քաղաքական ռեժիմը ու կառուցելու իր հարաբերությունները միջազգային հանրության հետ⁷:

Ամեն պարագայում՝ պետք է հաշվի նստել իրականության հետ՝ ժողովրդի ինքնորոշման իրավունքի միջազգային սկզբունքի հրամայականին համապատասխան, փոխադարձ համաձայնության պայմաններում հանգուցալուծելով Արցախի եւ Ադրբեյջանի հանրապետությունների միջեւ առկա հակամարտությունը:

КТО АРЦАХЦЫ: НАРОД ИЛИ ЖИТЕЛИ? - ВЛАДИМИР ОСИПЯН - Развязанная со стороны Азербайджана война против Арцаха ведется не только на поле боя, но и на информационном поле. Посредством дезинформации Азербайджан пытается доказать международному сообществу, что армяне Арцаха не только не местные, но и составляют национальное меньшинство, силой которого Арцах не может иметь какую-либо государственность. В статье освещено то, каким сообществом является население Арцаха и какие международно-правовые показатели распространяются на него. В связи с этим показано национальное меньшинство и сущность термина «диаспора», а также освещены характеристики, данные народу международными документами, распространяя их на арцахский народ. В статье также раскрывается соотношение принципов территориальной целостности и самоопределения народа, в рамках которого права арцахского народа соответствовали

⁷ ՄԱԿ-ի 1960թ. րանաձևը՝ «Գաղութային երկրներին» և ժողովուրդներին անկախություն շնորհելու մասին:

требованиям международного права, занимая свое достойное место в семье народов международного сообщества.

Ключевые слова: государство, историческая территория, народ, население, нация, местное национальное меньшинство, конфликт, статус, самоопределение народа.

WHO ARE ARTSAKHIANS? PEOPLE OR POPULATION? - VLADIMIR HOVSEPYAN - *The war unleashed by Azerbaijan against Artsakh is being waged not only on the battlefield, but also on the information front. Through misinformation, Azerbaijan is trying to prove to the international community that the Armenians of Artsakh are not only indigenous but also a national minority, by virtue of which Artsakh cannot have any statehood. The article covers what kind of society the population of Artsakh is, what international legal standards apply to it. In that sense, the essence of the terms "national minority" - "Diaspora" is shown, as well as the descriptions given to the people by international documents, convincingly spreading them over the people of Artsakh. The article reveals the relationship between the principles of self-determination of peoples and territorial integrity, within the framework of which the people of Artsakh have brought their rights in line with the requirements of international law, occupying their rightful place in the family of peoples of the international community.*

Key words: Statehood, historical area, people, population, nation, indigenous national minority, conflict, status, self-determination of the people.

ԼՂՀ ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Հոդվածում Արցախի անկախության լույսի ներքո ցույց է տրվում պետության ինքնիշխանության, ազգերի և ժողովուրդների ինքնորոշման և պետության տարածքային ամբողջականության սկզբունքների հարաբերակցությունը: Այդ համատեքստում վերլուծվում է ԽՍՀՄ Միութենական հանրապետության կազմից ինքնավար վարչաքաղաքական միավորի դուրս գալու իրավական հիմքերը, որոնցովն ղեկավարվել են Արցախի պետական իշխանության ներկայացուցչական մարմինները: Հոդվածագիրը ԼՂՀ անկախության հիմքերի մեջ առաջին պլան է մղում ԼՂ մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների ժողովրդական պատգամավորների 1988 թվականի փետրվարի 20-ի որոշումը՝ Ադր. ԽՍՀ կազմից դուրս դուրս գալու մասին, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն հռչակելու և պետական իշխանության ու կառավարման նրա ժամանակավոր մարմինների կազմավորելու մասին» 1991 թվականի սեպտեմբերի 2-ի որոշումը, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հիմունքների մասին» սահմանադրական օրենքը: Հոդվածում միանշանակ արձարծվում է այն միտքը, որ ԼՂՀ անկախության իրավական հիմքերը՝ միջազգային իրավունքի տեսանկյունից անխցելի են:

Բանալի բառեր՝ ինքնիշխան պետություն, ինքնորոշում, իրավահավասարություն, տարածքային ամբողջականություն, անկախության հռչակում, հռչակագիր, ինքնավար միավոր, Գերագույն խորհուրդ, միջազգային հանրություն, հանրաքվե, ագրեսիա:

Պետության ինքնիշխանությունը, ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, միության մեջ մտնելու կամավորությունը և լիակատար իրավահավասարությունը հանդիսացել են ԽՍՀՄ բազմազգ պետական կառույցի սահմանադրական սկզբունքներ, որոնք հիմք են հանդիսացել ազգամիջյան հարաբերություններում ծագած վեճերի լուծման համար: Ավելին, այդ սկզբունքների համալիր գործառնության տեսանկյունից ցանկացած ազգային-պետական միավորում իրավունք ուներ ինքնուրույն որոշելու իր ճակատագիրը՝ Միության կազմից դուրս գալու, մեկ այլ միավորման մեջ մտնելու առումով՝ ղեկավարվելով ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքով: Այդ իմաստով ինքնորոշման և կամավոր միության սահմանադրական սկզբունքների կիրառում է նշանակում ԼՂԻՄ ժողովրդական դեպուտատների 1988 թվականի փետրվարի 20-ի որոշումը՝ Ադրբեջանական ԽՍՀ-ից դուրս գալու և ՀԽՍՀ հետ վերամիավորվելու վերաբերյալ, որն էլ փաստում է այդ որոշման օրինականությունը, սակայն խեղաթյուրված ձևով Ադրբեջանը մատուցում է միջազգային հանրությանը, որ ԼՂ անկախության ձգտումը, ոչ թե ժողովուրդների ինքնորոշման ձգտում է, այլ տարածքային հավակնություն, որով խախտվում է Ադրբեջանի տարածքային

ամբողջականությունը: Բոլոր ուսումնասիրություններում շատ քիչ է շեշտադրվում այն հարցը, որ իր իսկ տարածքում բնակվող ժողովուրդը չի կարող պահանջարկել իր տարածքի հարցը՝ այն դարձնելով արյունահեղ կոնֆլիկտի կռվան:¹

Ցանկացած պետության ինքնիշխանության աղբյուրը և կրողը նրա բոլոր քաղաքացիներն են, որոնք, որպես կանոն, որոշակի ժամանակաշրջանում, որոշակի պայմաններում ինքնիշխանությունը հանձնում են իրենց ներկայացուցիչներին, որպեսզի ժողովուրդի անունից ընդունեն օրենքներ, որոշումներ: Պետության ինքնիշխանությունը նշանակում է, որ տվյալ տարածքում բարձրագույն իշխանությունը պատկանում է պետությանը. իրավունքի տեսանկյունից այն բարձր է կանգնած տվյալ պետության տարածքում գտնվող որևէ այլ իշխանությունից: Պետության որոշումները պարտադիր են բոլոր քաղաքացիների, կազմակերպությունների և հիմնարկների համար: Միայն պետությանն է պատկանում ամբողջ հասարակության կյանքը նորմավորելու, նրա համար պարտադիր օրենքներ, հրամանագրեր, կարգադրություններ և իրավական այլ ակտեր հրապարակելու իրավունքը:

Պետության ինքնիշխանությունը ենթադրում է նաև, որ մյուս պետությունները իրավունք չունեն միջամտելու նրա ներքին ու արտաքին գործերին: Չմիջամտելու սկզբունքը ամրագրված է միջազգային կազմակերպությունների միջպետական պայմանագրերով և մի շարք պետությունների ներքին իրավական ակտերով:

Պետական ինքնիշխանության ամրապնդմանն էր ուղղված նաև 1991 թվականի սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցած ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանում ընդունված հռչակագիրը՝ ԼՂԻՄ և դրան կից Շահումյանի շրջանի սահմաններում Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն /ԼՂՀ/ հռչակելու մասին:²

Այդ հռչակագրի ընդունմանը նախորդել է 1991 թվականի օգոստոսի 30-ի Ադրբեջանական ԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի ընդունած հռչակագիրը³՝ Ադրբեջանի Հանրապետության պետական անկախության վերականգնման մասին, ինչպիսի սահմաններ այն ունեցել է 1918-1920 թվականներին: Այդ ակտով, փաստորեն, Ադրբեջանի Հանրապետությունը՝ հռչակելով իր անկախությունը՝ հրաժարվել է Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդը լինելուց:⁴ Իսկ դա նշանակում է, որ Ադրբեջանի կազմում չէր ներառվելու Լեռնային Ղարաբաղը՝ որպես ինքնավար մարզ: Մյուս կողմից, Ադրբեջանը մտադիր էր այդ քայլով չիրավականացնել Ղարաբաղի կարգավիճակը և շարունակեց վարել ցայսօր տևող քաղաքականությունը՝ Լեռնային Ղարաբաղը իր տարածքային ամբողջականություն համարելու կեղծ հիմնավորմամբ: Փաստորեն, Ստեփանակերտը, 1991թ. սեպտեմբերին ընդունելով «Անկախության մասին» հռչակագիրը, նպատակ ուներ միջազգային հանրությանը ներկայացնել

¹ Լ. Մ. Կարապետյան «ԼՂԻՄ հիմնախնդրի լուծման սահմանադրական սկզբունքները», «Բանբեր Երևանի համալսարանի» ամսագիր, 2 (71), Երևան 1990թ., էջ 4:

² «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 03 սեպտեմբերի, 1991թ.:

³ «Бакинский рабочий» газета от 31 августа 1991 года:

⁴ «Нагорный Карабах правовые аспекты», Шаген Авакян, Тигран Мец, Ереван 2014-104 стр, стр. 18:

իրավական տեսակետից անխոցելի և առարկություն չընդունող «անկախության հայտ»: Եվ այդ հայտի գլխավոր իրավական փաստարկն այն էր, որ Լեոնային Ղարաբաղի Հանրապետությունը հռչակվում է այնպիսի տարածքներում, որոնց հետ Ադրբեջանական Հանրապետությունը իրավական որևէ առնչություն չունի և չի պատկանել անկախ Ադրբեջանին:⁵

Ազգային ազատագրական շարժման մեջ շրջադարձային փուլ դիտվող այդ հռչակագրի համար իրավական հիմք հանդիսացավ 1990 թվականի ապրիլի 3-ին ընդունված՝ «Միութենական հանրապետության՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու վերաբերյալ հարցերի կարգավորման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքի 3-րդ հոդվածը, որի համաձայն՝ իր կազմում ինքնավար հանրապետություններ, ինքնավար մարզեր ու ինքնավար օկրուգներ ունեցող միութենական հանրապետություններում հանրաքրվե անցկացվում է յուրաքանչյուր ինքնավարությունում առանձնաբար: Ինքնավար հանրապետություններն ու ինքնավար կազմավորումներն իրավունք ունեն ինքնուրույնաբար վճռելու միության մեջ կամ նրա կազմից դուրս եկող միութենական հանրապետությունում մնալու հարցը, ինչպես նաև կարգավորելու սեփական պետական իրավական կարգավիճակի խնդիրը:

Այս ամենին գուզընթաց, Ադրբեջանի Հանրապետությունը, կիրառելով պատերազմական, քրեական տարրեր պարունակող գործողություններ, ամեն կերպ փորձում էր խոչընդոտել արցախահայության ինքնիշխանության հաստատումը: Ստեղծված բարդ իրավիճակում, երբ Ադրբեջանում հակահայկական, հակաարցախյան մոլուցքը դուրս էր գալիս իր սահմաններից, Բաքվի «Ազադլըզ» /«Ազատություն»/ հրապարակում Ազգային ճակատի կողմից անցկացվող հանրահավաքներում Արցախը հողին հավասարեցնելու կոչեր էին հնչում: Ազգային ճակատի «Գորշ գայլեր» կազմակերպությունը կոչ էր անում համամուսուլմանական ճակատ ստեղծել հայերի դեմ և միանալ Թուրքիային:⁶ ԼՂՀ իշխանությունները, բացի երկրամասի պաշտպանությունը կազմակերպելուց և բնակչության անվտանգությունն ապահովելուց, ունեին մեկ այլ կարևոր խնդիր՝ արագացնել հանրապետության կայացման գործընթացը: Այս առումով կարևոր նշանակություն ունեցավ 1991 թվականի նոյեմբերի 26-ին տեղի ունեցած ԼՂՀ ժողովրդական պատգամավորների Գործադիր Խորհրդի նստաշրջանը, որը որոշում ընդունեց ԽՍՀՄ Գերագույն Խորհուրդի 1990 թվականի ապրիլի 3-ի որոշման հիման վրա Լեոնային Ղարաբաղում հանրաքվե անցկացնելու մասին: Այն նշանակվեց դեկտեմբերի 10-ին՝ մարդու իրավունքների պաշտպանության օրը, ինչպես նաև Ադրբեջանում համանուն հանրաքվեի անցկացումից մեկ շաբաթ շուտ: Միննույն ժամանակ <ընդունվեց ժամանակավոր կանոնադրություն՝ ԼՂՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների վերաբերյալ, իսկ մինչև սահմանադրության ընդունումը, հանրապետությունում

⁵ «Լեոնային Ղարաբաղ. Ինչպես է դա եղել...», Ալ. Մանասյան, Ա. Ղևոնդյան, ՀՀ նախագահի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ Երևան 2010-120 էջ, էջ 111:

⁶ Կանթեղ. Գիտական հոդվածների ժողովածու, № 2, ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիա Հումանիտար գիտությունների բաժանմունք, «Ատոլիկ» հրատարակչություն, Երևան 2002, էջ 174:

կիրարկման մեջ դրվեցին ԽՍՀՄ օրենքները:⁷

Այսպիսով՝ ըստ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրաքվեի անցկացման մասին ժամանակավոր կանոնակարգի»՝ 1991 թվականի դեկտեմբերի 10-ին Լեռնային Ղարաբաղում կայացավ անկախության մասին համահանրապետական հանրաքվե:

Ընտրելու իրավունք ունեցող 132328 /հարյուր երեսուներկու հազար երեք հարյուր քսանութ/ հոգուց քվեարկությանը մասնակցեց 108736-ը /հարյուր ութ հազար յոթ հարյուր երեսունվեց/ (82,2 %), անկախությանը «կողմ» քվեարկեց 108615 /հարյուր ութ հազար վեց հարյուր տասնհինգ/ (քվեարկողների 99,89 %-ը), «դեմ»՝ 24 /քսանչորս/ (0,02 %) հոգի, 96 քվեաթերթիկ անվավեր ճանաչվեց:⁸

ԼՂՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հանրաքվեի անցկացման համար անհրաժեշտ պայմաններ էր ստեղծել հանրապետության ամբողջ տարածքում, ներառյալ նաև ադրբեջանաբնակ բնակավայրերը:

Քվեաթերթիկները կազմվել են հայերեն, ադրբեջաներեն և ռուսերեն լեզուներով և պարունակում էին հետևյալ հարցը. «Համաձայն եք Դուք, որպեսզի հռչակված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը լինի անկախ պետություն, ինքնուրույն որոշելով համագործակցության ձևը ուրիշ պետությունների և ընկերակցությունների հետ»: Համաձայն ԼՂՀ Ժողովրդական պատգամավորների խորհրդի կողմից հաստատված կանոնակարգի՝ հանրաքվեի դրված հարցն ընդունված էր համարվում, եթե դրա օգտին քվեարկեք ընտրողների առնվազն 2/3-ը՝ 50%-ից ոչ պակաս մասնակցության դեպքում:

Հանրաքվեի անցկացման ընթացքին հետևում էր անկախ դիտորդների խումբը, որը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հանրաքվեի արդյունքների վերաբերյալ իր եզրակացությունն ամփոփեց համապատասխան ակտում: Քվեարկության գործընթացի լուսաբանման համար ԼՂՀ էին ժամանել «Радио России», «Эхо Москвы», «Известия», «Московские новости», «Мегаполис-экспресс», «Столица», «Панорама», «Литературная газета», «Le Quotidien de Paris», «France-Presse», մի շարք այլ պարբերականների ու գործակալությունների, ինչպես նաև Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Բուլղարիայի հեռուստաընկերությունների լրագրողներ և թղթակիցներ:⁹

ԼՂՀ ադրբեջանական բնակչությունը հրաժարվեց մասնակցել հանրաքվեին: Փոխարենը՝ նրանք սատարեցին Արցախի դեմ ադրբեջանական իշխանությունների սանձազերծած ագրեսիային՝ ակտիվ մասնակցություն ունենալով դրանում: Հանրաքվեի օրը, Ստեփանակերտը և հայկական այլ բնակավայրեր ենթարկվեցին գնդակոծության, որի հետևանքով զոհվեց 10, վիրավորվեց 11 խաղաղ բնակիչ:

Հանրաքվեից հետո արցախցիները ձևավորեցին Գերագույն Խորհուրդը: Ադրբեջանական պարտադրված պատերազմի ժամանակ տեղի ունեցավ նաև Գերագույն

⁷ Արշակյան Ա.Ե. , «Արցախյան Գոյապայքար /1985-1992թ.թ./» Վ. Բրյուսովի անվան ՊԼՀ, Երևան «ԼԻՆԳՎԱ», 2004-246 էջ, էջ 204:

⁸ «Советский Карабах» ежедневная общественно-политическая газета, 18.12.1991, N 215(2925):

⁹ Редколлегия, Нагорно-Карабахская Республика: Становление государственности на рубежи веков, «Институт политических исследований» ГНКО, Ереван 2009-60стр, стр 14:

խորհրդի, որն անվանվեց ԼՂ խորհրդարան, իսկ հետագայում՝ Ազգային ժողով, ընտրությունները:

1992 թվականի հունվարի 6-ին, 51 պատգամավորներից 48-ի /ճանապարհի փակ լինելու պատճառով Ստեփանակերտ չեն կարողացել հասնել 3-ը/ և 80 դիտորդների, լրագրողների ներկայությամբ «Հայր մեր» աղոթքով ԼՂՀ Գերագույն Խորհրդի նստաշրջանը սկսեց իր աշխատանքը: Առաջին նիստում ընդունվեց «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության հռչակագիրը», որով ԼՂՀ-ն հայտարարվեց անկախ պետություն, որի տարածքում պետք է գործեն միայն ԼՂՀ Սահմանադրությունն ու օրենքները¹⁰: Նույն օրն ընդունվեց նաև «Լեռնային Ղարաբաղի անկախության հիմունքների մասին» սահմանադրական օրենքը, որը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը նույնպես հռչակեց որպես անկախ, ժողովրդական պետություն: Նշյալ օրենքի ուժով ԼՂՀ-ն ինքնուրույն է վճռում հանրապետությունում քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային, շինարարության, նրա վարչատարածքային կառուցվածքին առնչվող բոլոր հարցերը: Օրենքն ամրագրեց իշխանության երեք ճյուղերի տարանջատման սկզբունքը:

Ելնելով միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից՝ կարելի է ամրագրել, որ ժողովուրդների ինքնորոշման իրավունքը պարտադիր է և մշտական, իսկ տարածքային ամբողջականության սկզբունքը՝ հարաբերական և փոփոխական: Հետևաբար, պետությունների տարածքային ամբողջականությունը պետք է հիմնվի ժողովուրդների ինքնորոշման վրա, որը, սակայն, չի նշանակում սուվերենության խախտում: Դա նշանակում է, որ միայն տվյալ ժողովուրդը, որպես ազատ ինքնորոշման և իր ճակատագրի տնօրինման իրավունքի սուբյեկտ, իրավասու է լուծելու իր սոցիալ-քաղաքական, իրավական և տարածքային կարգավիճակը: Հարկ է նշել նաև, որ Ադրբեջանի Հանրապետությունը շարունակաբար անտեսում է այդ սկզբունքի էությունը, բոլոր միջոցներով խոչընդոտելով մեր պետական անկախության իրավական հիմքերի ամրապնդումը, որի վառ ապացույցն այս տարվա՝ սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին, Արցախի դեմ սանձազերծած ագրեսիան էր:

ОСНОВЫ ПРАВОВОЙ НЕЗАВИСИМОСТИ НКР - СОНА АМБАРЦУМЯН -
Исходя из реалий независимости Арцаха в статье показано соотношение принципов территориальной целостности и суверенитета государства, самоопределение народов и наций. В связи с этим анализируются правовые основы выхода автономной политической единицы от СССР, которыми руководили представительные органы государственной власти Арцаха. На первый план автор статьи выдвигает решение от 20 февраля 1988 г о выходе из состава Азербайджанской ССР в основе независимости НКР решение районных советов народных депутатов регионального и Шаумянского района НК, провозглашая независимость Нагорного Карабаха и о формировании временных органов государственной власти и его управления решением 2 сентября 1991г

¹⁰ Սրբաշին Ա.Ե., «Արցախյան Գոյապայքար /1985-1992թ.թ./» Վ. Բրյուսովի անվան ՊԼՀ, Երևան «ԼԻՆԳՎԱ», 2004-246 էջ, էջ 209:

конституционного закона о независимости нагорно-карабахской республики.

В статье однозначно рассматривается та мысль, что основы правовой независимости НКР неуязвимы с точки зрения международного права.

Ключевые слова: суверенное государство, самоопределение, правовое равенство, территориальная целостность, провозглашение независимости, декларация, автономная единица, Верховный совет, международное сообщество, референдум, агрессия.

*THE LEGAL BASES OF NKR INDEPENDENCE - **SONA HAMBARDZUMYAN**- In the light of Artsakh's independence, the article shows the relationship between the principles of state sovereignty, self-determination of nations and state territorial integrity. In this context is analyzed the legal basis of leaving from the USSR Union Republic as autonomous administrative unit, from which were guided the Artsakh state government's representatives. The article on the basis of NKR independence pushes forward the decision of councils of Nagorno-Karabakhian and Shahumyan people's Deputies in February 20, 1988, which are the decision to leave the Azerbaijani Soviet Union and on the proclamation of the Nagorno Karabakh Republic, the formation of state power and its temporary governing bodies " in September 1991,² and "the Foundations of the Independence of the Nagorno Karabakh Republic " constitutional law. The article unequivocally mentions the idea that the legal bases of NKR independence are invulnerable from the point of view of international law.*

Key words: Sovereign State, Self-Determination, equality, territorial Integrity, bird of independence, bird letter, autonomous unit, Supreme Council, international community, referendum, aggression.

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ
ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Կրթությունը մարդու հիմնական իրավունքներից է, իսկ դրա իրականացումը՝ մարդկանց միջև հավասարության և ազատության հասնելու գործուն միջոց:

Կրթությունը ոչ միայն անձնական, այլև պետական, հասարակական արժեք է: Կրթությունն իր ազդեցությունը, պահանջներն ու ստեղծագործական ազդակներն է տարածում երկրի տնտեսական, քաղաքական, սոցիալական, հոգևոր և այլ ոլորտների կազմակերպման ու զարգացման վրա:

Հողվածում մանրամասն անդրադարձ է կատարվում կրթության իրավունքի երաշխավորման հիմնահարցերին և ներկայացվում է այն դիրքորոշումը, որ հեռավար ուսուցման օրենսդրական հիմքերի ամրագրումը լրացուցիչ երաշխիք է կրթության իրավունքի իրացման և կրթության շարունակականության ապահովման համար:

Բանալի բառեր՝ սահմանադրություն, օրենք, մարդու իրավունքներ, կրթություն, երաշխիք, ապահովում, պետություն, անհատ, հասարակություն, հիմնախնդիր, հեռավար ուսուցում:

Կրթությունը հասարակական կյանքի շարունակականության, պետությունների առջև ծառացած խնդիրների լուծման ու նպատակների իրականացման հիմնական միջոցներից է: Միայն ժամանակի պահանջներին համահունչ կրթական համակարգի միջոցով է հնարավոր երաշխավորել յուրաքանչյուրի կրթության իրավունքի իրացումը և կայուն հիմքեր ստեղծել հասարակության ու պետության առաջընթացի, մարդու կենսական կարևոր շահերի ապահովման համար:

Կրթությունը հոգևոր մշակույթի ամենակազմակերպված ոլորտն է, համակարգ, որն ուղղակի կամ անուղղակի ձևով իր ազդեցությունը, պահանջներն ու ստեղծագործական ազդակներն է տարածում երկրի տնտեսական, քաղաքական, սոցիալական, հոգևոր և այլ ոլորտների կազմակերպման ու զարգացման վրա:

Կրթությունը հստակ պատկերացում է տալիս այն մասին, թե ինչպիսին են տվյալ հասարակությունն ու պետությունը, վերջիններս ինչպիսի վերաբերմունք ունեն իրենց ներկայի ու ապագայի նկատմամբ, ինչպես են պատկերացնում անհատի ձևավորման ու ինքնադրսևորման հնարավորությունները, ինչպիսի պայմաններ են ստեղծում ինքնաճանաչման, անհատ-հասարակություն փոխհարաբերության ձևավորման համար:

Նախքան կրթության իրավունքի երաշխավորմանն անդրադառնալը՝ կարևոր է մեկնաբանել «կրթություն» հասկացությունը: Այս հասկացության բնորոշման հարցը գտնվում է մանկավարժության՝ որպես գիտության հետազոտման առարկայի տիրույ-

թում: Մանկավարժության մեջ կրթության բնորոշման վերաբերյալ բանավեճերն հիմնականում նրանում ներառվող հատկանիշների շուրջ են:

Մանկավարժական գիտությունների դոկտոր Վ. Ս. Լեոնյովը կրթությունը բնորոշում է հետևյալ կերպ. «Կրթությունը սոցիալապես նշանակություն ունեցող փորձը նախորդ սերունդներից հաջորդ սերունդներին փոխանցման հանրորեն կազմակերպվող ու կարգավորվող, ինչպես նաև անհատի կայացման կենսաբանասոցիալական մշտական գործընթաց է: Այդ գործընթացի արդյունքը անհատի ձևավորումն է կամ նրա կրթվածությունը: Կրթական գործընթացին բնորոշ են ճանաչողությունը, դաստիարակությունը, ֆիզիկական ու մտավոր զարգացումը»¹:

ՅՈՒՆԵՍԿՕ-ն կրթությունը դիտարկում է որպես սոցիալական կյանքի ամբողջական գործընթաց, որի միջոցով անհատները և սոցիալական խմբերը սովորում են սեփական շահի համար՝ զարգացնելով իրենց անձնական ընդունակություններն ու գիտելիքները:

Նշենք, որ «Կրթության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, կրթությունը բնորոշվում է՝ որպես անձի, հասարակության, պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց, որը նպատակամղված է գիտելիքները պահպանելուն ու նոր սերունդներին փոխանցելուն»:

Այս բնորոշումից ակնհայտ է, որ կրթության օբյեկտն անձն է, դրա արդյունքը՝ անհատի կրթվածությունը (գիտելիք, դաստիարակություն, զարգացում):

Խոսելով կրթության մասին՝ անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ երեք մոտեցումը.

- կրթությունը՝ որպես պետական արժեք,
- կրթությունը՝ որպես հասարակական արժեք,
- կրթությունը՝ որպես անձնական արժեք:

Առաջին երկուսն արտացոլում են մշակութային այս երևույթի խմբային նշանակությունը, ինչը հայրենական կրթության համար առաջնային է:

Որպես պետական արժեք՝ կրթությունը երկրի առաջադիմության, մշակույթի պահպանման, զարգացման անհրաժեշտ պայմանն է: Կրթությունը (մասնավորապես՝ բարձրագույն մասնագիտական) երկրի սոցիալական և տնտեսական առաջընթացի հիմնական գործոնն է: Վիճակագրության տվյալների վերլուծությունը վկայում է, որ ուղղակի կապ կա բնակչության կրթության մակարդակի և աղքատության միջև: Կրթության ձախողումը ապագայում առաջ է բերում սոցիալական և ֆինանսական շատ ավելի մեծ ծախսեր պետության համար:

Որպես հասարակական արժեք՝ կրթությունը ոչ միայն մշակութային երևույթ է, այլև հասարակության սոցիալական ենթակառուցվածքներից է: Կրթության բովանդակությունն արտացոլում է հասարակության վիճակը, պայմանավորում մի կարգավիճակից մյուսին անցումը: Կրթության զարգացումը պայմանավորված է հասարակության գործունեության բոլոր գործոններով և պայմաններով՝ տնտեսական, քաղաքական, սոցիալական, մշակութային և այլն: Տեղին է նշել հայտնի լուսավորիչ

¹ Леднев В. С., Содержание образования. М., 1989, 48-58 էջեր:

Դյուինի խոսքերը. «Ձևավորելով մատաղ սերունդը՝ հասարակությունը կերտում է իր սեփական ապագան»:

Որպես անձնական/անհատական արժեք, որպես սուբյեկտիվ հնարավորություն՝ կրթության իրավունքն անհատի զարգացման գործընթացն է՝ ուղղված գիտելիքների, հմտությունների ձեռքբերմանը, աշխարհի նկատմամբ արժեքային վերաբերմունքի ձևավորմանը:

Այս առումով պետության գլխավոր խնդիրը պետք է լինի վերոնշյալ արժեքների երեք մոտեցումների ներդաշնակության ապահովումը, ինչը հնարավորություն կընձեռի պատրաստելու երկրի կայուն զարգացման համար անհրաժեշտ, իրական արժեքներով առաջնորդվող բարձրագույն որակավորմամբ մասնագետներ:

Կրթության իրավունքը մարդու հիմնական իրավունքներից է, իսկ դրա իրականացումը՝ մարդկանց միջև հավասարության և ազատության հասնելու գործունե միջոց:

Ելնելով դրանից՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, Երեխայի իրավունքների մասին դաշնագիրը հռչակում են յուրաքանչյուր մարդու կրթության իրավունքը:

Հայաստանի Հանրապետությունը հռչակում և երաշխավորում է կրթության բնագավառի առաջանցիկ զարգացումը՝ որպես պետականության ամրապնդման կարևորագույն գործոն: Կրթության իրավունքի երաշխիքներն ամրագրված են ՀՀ Սահմանադրության 15-րդ, 38-րդ հոդվածներում և 86-րդ հոդվածի 13-րդ կետում:

Նախ նշենք, որ հաճախ «երաշխիք» ասելով հասկանում են անհրաժեշտ բարենպաստ պայմաններ, իսկ երաշխավոր՝ այդ գործունեությունը երաշխավորող սուբյեկտ, որը ստեղծում է այդ պայմանները²: Ինչ-որ երևույթի կամ գործընթացի ապահովումն ընդունված է կապել դրա իրականացման համար անհրաժեշտ պայմանների հետ, որոնք էլ հենց երաշխիքներն են:

«Երաշխավորել» եզրույթի փոխարեն իրավագիտության մեջ առավել հաճախ օգտագործում են «ապահովել» հասկացությունը³: Ա. Ս. Մորդովեցը «ապահովում» տերմինը դիտարկում է որպես պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների, պաշտոնյաների և քաղաքացիների գործունեություն՝ ուղղված իրենց գործառնությունների, իրավասությունների, պարտավորությունների կատարմանը, իրավական կարգադրությունների անշեղ իրականացմանը, իրավունքների և ազատությունների օրինաչափ իրականացման համար լավագույն պայմաններ ստեղծելուն⁴:

Ա. Վ. Ստրեմոուխովի բնորոշմամբ՝ ապահովումը (իրավական պաշտպանության հետ մեկտեղ) մարդու իրավունքների իրականացման բաղադրիչ մասն է: Նա տվյալ

² Головкин А.Г., Взаимодействие органов внутренних дел с другими субъектами правоохранительной системы в сфере обеспечения прав и свобод (вопросы теории), Ростов на Дону, 1999, с. 44.

³ Копейчиков В.В., Реализация субъективных прав граждан//Советское государство и право, 1984, №3, с. 15-19.

⁴Мордовец А.С., Социально-юридический механизм обеспечения прав человека и гражданина/Монография, Саратов, 1997, с. 85.

կատեգորիայի բովանդակությունը կապում է բարենպաստ պայմանների (երաշխիքների) ստեղծման հետ, ինչն անհրաժեշտ է մարդու իրավունքների օրինաչափ և անշեղ իրականացման, իրավական պաշտպանության համար⁵: Նման եզրակացության է հանգել նաև Ե. Վ. Տուտինասը⁶:

Այս առումով համամիտ ենք Ա.Վաղարշյանի՝ ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածում ամրագրված՝ «Պետությունը խթանում է մշակույթի, կրթության և գիտության զարգացումը» սահմանադրական կարգի հիմունքի առնչությամբ արված դիրքորոշման հետ, այն է՝ «...սահմանադրական այս իրավադրույթում «խթանում» եզրույթի օգտագործումը ճիշտ չէ, քանի որ պետության գործառույթ են համարվում ընդհանրապես կրթության զարգացումը ու նաև գիտատեխնիկական առաջադիմությունը՝ որպես խնդիրներ, ապա Սահմանադրության մեջ տեղին կլինեք օգտագործել «ապահովել» (կամ «իրականացնել») եզրույթը: Վերջինը ենթադրում է պետության ցանկացած գործառույթ կենսագործելու բոլոր հնարավոր ձևերը (կազմակերպական և իրավական), ինչպես նաև գործառույթ իրականացնելու բոլոր մեթոդները (օրինականություն, տեղեկությամբ, համոզում, խրախուսում, խթանում, անմիջական կառավարում, հարկադրում և այլն): Այսպիսով՝ պետության գործառույթների իրականացման ընթացքում խթանումը մեթոդներից մեկն է, մինչդեռ քննարկվող գործառույթի իրականացման համար պետությունը պետք է կիրառի իր գործունեության ձևերի ու մեթոդների ողջ զինանոցը»⁷:

Այսպիսով՝ տվյալ պարագայում «ապահովում» եզրույթն ամրագրելն ավելի ճիշտ է, քանի որ այն ավելի լայն է և իրենից ներկայացնում է **որոշակի պայմանների ամբողջություն՝ երաշխիքների ձևով, որոնք ծառայում են անձի իրավունքների իրականացմանը**:

Կրթության ոլորտում կարևորագույն երաշխիք է ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածը, որում ամրագրված է. «Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Պարտադիր կրթության ծրագրերը և տնտեսությունը սահմանվում են օրենքով: Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է: Յուրաքանչյուր ոք օրենքով սահմանված դեպքերում և կարգով ունի մրցութային հիմունքներով պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում անվճար կրթություն ստանալու իրավունք»:

Այսօր շատ կարևոր է կրթության իրավունքի ապահովման ոլորտում հավասար հնարավորությունների ստեղծումը, որպեսզի կրթությունը կապվի մարդու ընդունակությունների, այլ ոչ թե՝ նյութական վիճակի հետ: «Կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության իրավունք՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից

⁵ Стремоухов А.В., Человек и его правовая защита: Теоретические проблемы// Монография, М., 1996, с. 22-23.

⁶ Тугинас Е.В., Права личности и межнациональные конфликты. Ростов на Дону. 2000, с. 42.

⁷ Վաղարշյան Ա., Կրթության սահմանադրական կարգավորման էվոլյուցիան Հայաստանի Հանրապետությունում; http://ysu.am/files/02A_Vagharshyan.pdf, էջ 31:

կամ այլ հանգամանքներից: Մասնագիտական կրթության իրավունքի սահմանափակումները նախատեսվում են օրենքով: Պետությունը կրթության իրավունքն ապահովում է կրթության համակարգի բնականոն գործառնությամբ և կրթություն ստանալու համար սոցիալ-տնտեսական պայմանների ստեղծմամբ...» (հոդված 6):

2015թ. փոփոխություններով՝ Սահմանադրության 75-րդ հոդվածով ամրագրվեց շատ կարևոր իրավադրույթ, այն է՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են դրանց արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր ու ընթացակարգեր: Այդ ընդհանուր պարտավորության կրողը օրենսդիր մարմինն է: Սահմանադրությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին պարտավորեցնում է իրենց իրավասությունների և հնարավորությունների շրջանակում իրագործել Սահմանադրության 86-րդ հոդվածով սահմանված պետական քաղաքականության հիմնական նպատակները (87-րդ հոդվածի 1-ին մաս): Նշված հոդվածում թվարկված նպատակներից մեկն էլ անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթության զարգացումն է:

Անկախությունից ի վեր, ՀՀ-ն ընդունել է մի շարք օրենքներ⁸, իրականացրել կազմակերպչական մի շարք միջոցառումներ՝ կրթության իրավունքի երաշխավորման, կրթության ոլորտի կարգավորումը նոր պայմաններում ապահովելու ուղղությամբ: Կրթության ոլորտում պետական քաղաքականության խնդիրներն էականորեն փոխվել են: Եթե անկախության առաջին տարիներին գլխավոր խնդիրը տնտեսական ճգնաժամի ու շրջափակման պայմաններում գոյություն ունեցող կրթական համակարգի պահպանումն էր, հետագայում կրթական համակարգի զարգացման ապահովման խնդիրը, ապա, կորոնավիրուսի (Covid-19) համավարակով պայմանավորված, Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին 2020թ. մարտի 16-ի N 298-Ն Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման ընդունումից հետո, կրթության ոլորտում պետական քաղաքականության լրջագույն խնդիրներից էր՝ հավասար հնարավորությունների ստեղծմամբ, կրթության շարունակականության ապահովումը:

«Կրթության մասին» ՀՀ օրենքում սահմանվում են կրթության ձևերը, մասնավորապես. «Սովորողների կարողություններին և պահանջունքներին համապատասխան՝ կրթական ծրագրերն իրականացվում են առկա (ստացիոնար), հեռակա, հեռավար (դիստանցիոն) և դրսեկության (ընտանեկան և ինքնակրթության) ձևերով» (հոդված 12): Բնականաբար, տվյալ իրադրությունում խնդրի միակ լուծումը

⁸ ՀՀ օրենքը «Կրթության մասին» (ընդունվել է 14.04.1999), ՀՀ օրենքը «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» (ընդունվել է 14.12.2004), ՀՀ օրենքը «Նախադպրոցական կրթության մասին» (ընդունվել է 15.11.2005), ՀՀ օրենքը «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» (ընդունվել է 25.05.2005), ՀՀ օրենքը «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» (ընդունվել է 08.07.2005), ՀՀ օրենքը «Կրթության պետական տեսչության մասին» (ընդունվել է 15.11.2005), ՀՀ օրենքը «Հանրակրթության մասին» (ընդունվել է 10.07.2009):

հեռավար ձևաչափով ուսուցման կազմակերպումն էր:

«Հեռավար ուսուցում» հասկացությունն ամրագրված է 2004թ. ընդունված «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 10-րդ կետում, ըստ որի՝ հեռավար (դիստանցիոն) ուսուցումը համակարգված ուսուցման ձև է, երբ անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը սովորողի և դասախոսի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով: Իսկ ՀՀ կառավարության 2010 թվականի փետրվարի 11-ի N 124-Ն որոշմամբ՝ հաստատված «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասնագիտությունների հեռավար (դիստանցիոն) ձևով ուսուցման կարգի» 1-ին կետով, հստակ սահմանվում է. «Հեռավար ուսուցումը կարող են կազմակերպել միայն համապատասխան կրթական ծրագրի իրականացման լիցենզիա ունեցող ուսումնական հաստատությունները՝ հիմնական և (կամ) լրացուցիչ մասնագիտական, ինչպես նաև հետբուհական կրթական ծրագրերով»:

Չնայած այն հանգամանքին, որ դեռևս 2010 թվականից օրենսդրական հիմքեր կային հեռավար կրթության կազմակերպման և իրականացման համար, սակայն արտակարգ դրության հայտարարման պահին հեռավար ուսուցում իրականացնելու թույլտվություն ուներ միայն ՀՀ պետական կառավարման ակադեմիան՝ ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի հետ համատեղ կրթական ծրագրով:

Բուհերն ու դպրոցները կանգնեցին փակուղու առջև, քանի որ հեռավար ուսուցման իրականացման և լիարժեք կրթություն ապահովելու համար անհրաժեշտ էր վերապատրաստված դասախոսական և ուսուցչական կազմ, հեռավար ուսուցման միասնական հարթակ: Բացի այդ, եթե բուհերի պարագայում օրենքով կարգավորվում էր հեռավար ուսուցման իրականացման հետ կապված հարաբերությունները, ապա «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով հեռավար ուսուցման իրականացման օրենսդրական հիմքեր չկային:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններն անմիջապես անցում կատարեցին հեռավար ձևաչափով ուսուցման կազմակերպմանը: Թեպետ՝ «Հեռակա, ինչպես նաև հեռավար (դիստանցիոն) ձևերով ուսուցում չթույլատրվող բարձրագույն կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի N 692-Ն որոշման 2-րդ հավելվածով հստակ սահմանվում է հեռավար (դիստանցիոն) ձևով ուսուցում չթույլատրվող բարձրագույն կրթության մասնագիտությունների ցանկը, այնուամենայնիվ, գրեթե բոլոր բուհերն անցան հեռավար ուսուցման, ինչը, մեր կարծիքով, անթույլատրելի էր՝ հաշվի առնելով տվյալ բուհերում ուսուցանվող մասնագիտությունների առանձնահատկությունները (բուժական գործ, ստոմատոլոգիա, պարարվեստ, դիզայն, կինոարվեստ, գեղանկարչություն, քանդակագործություն և այլ ոլորտներ):

Սակայն փաստենք, որ այդպիսի ուսուցումը ավելի շուտ առցանց հանդիպում էր, վեբինար, որի միջոցով արտակարգ դրության պայմաններում փորձ էր արվում ապահովելու կրթության շարունակականությունը:

Ինչ վերաբերում է դպրոցներին, ապա առաջնահերթ անհրաժեշտ էր օրենսդրական հիմքեր ապահովել հեռավար ուսուցման իրականացման համար: 2020 թվականի մարտի 6-ին ընդունված «Հանրակրթության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով «Հանրակրթության մասին» 2009 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-160-Ն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացվեց հետևյալ բովանդակությամբ 6.1 կետով. «Հեռավար (դիստանցիոն) կրթություն՝ կրթական ծրագրի իրականացման ձև, որի շրջանակներում անմիջական և ոչ անմիջական ուսուցման գործընթացը սովորողի և ուսուցչի միջև իրականացվում է հիմնականում տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության միջոցներով, սակայն հիմնական հանրակրթական ծրագրերի կազմակերպման ընթացքում կարող է կիրառվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով՝ բացառիկ դեպքերում և որոշակի ժամկետով»:

Նույն օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը լրացվեց 26.5-րդ կետով, համաձայն որի՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմինն է սահմանում հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման կարգը:

Հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 26.5-րդ կետը՝ ԿԳՄՍ նախարարի 2020թ. մայիսի 20-ի N 09-Ն հրամանով հաստատվեց «Հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման կարգը», որի 8-րդ կետով հստակ սահմանվեց, թե որ դեպքերում կարող է իրականացվել հեռավար ուսուցում:

Կրթության շարունակականությունն ապահովելու համար հանրակրթական հիմնական կրթական ծրագրերով հեռավար ուսուցումը կարող է կազմակերպվել՝

1) եթե հաստատությունը չունի համապատասխան առարկայի մասնագետ՝ մինչև սահմանված կարգով մրցութային հիմունքներով ուսուցչի թափուր տեղի համալրումը,

2) արտակարգ և ֆորս մաժորային իրավիճակներում (եղանակային անբարենպաստ պայմաններ, սուր վարակիչ հիվանդությունների տարածում, տարերային աղետ և այլն),

3) դիվանագիտական աշխատանքի անցած ծնողների (օրինական ներկայացուցիչների) կամ օտարերկրյա պետություններում ծնողների (օրինական ներկայացուցիչների) հետ ժամանակավոր գտնվող երեխաների համար՝ եթե կրթության իրավունքը չի իրացվել տվյալ երկրում,

4) այն երեխաների համար, որոնք ունեն առկա ուսուցումն անհնարին դարձնող երկարատև բուժման կարիք,

5) այն երեխաների համար, որոնք առարկայական կամ սպորտային միջազգային օլիմպիադաների կամ մրցաշարերի մասնակիցներ են և հաճախ են բացակայում երկրից,

6) այն անձանց համար, որոնք պետք է մասնակցեն էքստեռն կարգով ավարտական քննություններին՝ հիմնական կամ միջնակարգ կրթության ավարտական փաստաթուղթ ստանալու նպատակով:

7) Մփյուռքում բնակվող, ինչպես նաև Մփյուռքում բնակվող և Հայաստանի Հանրապետություն վերադառնալ ցանկացող ընտանիքների երեխաների համար, ովքեր լրացուցիչ կրթության միջոցով մտադիր են յուրացնել հիմնական ծրագրեր՝ ՀՀ-ում հանրակրթության մեջ ընդգրկվելու համար:

Հեռավար ուսուցման օրենսդրական հիմքերի ամրագրումը լրացուցիչ երաշխիք է կրթության իրավունքի ապահովման, ինչպես նաև, վերը թվարկված հանգամանքների պարագայում, կրթության շարունակականության ապահովման համար: Հեռավար ուսուցումն ապահովում է կրթության մատչելիությունը և հասանելիությունը: Այն նաև ապահովում է ֆիզիկական սահմանափակ կարողություններով անձանց, տարբեր սոցիալական խմբերի կրթություն ստանալու հնարավորությունը, ինչը բոլոր զարգացած պետությունների սոցիալական քաղաքականության գերակա ուղղություններից է:

Կրթության իրավունքի երաշխավորման համատեքստում հեռավար ուսուցման զարգացումը ժամանակի հրամայական է: Բացի այդ, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումն ինքնին թելադրում է կրթության կազմակերպման գործընթացում նորարարական մոտեցումներ ներդնելու պահանջներ:

АКТУАЛЬНЫЕ ПРИНЦИПЫ ОБЕСПЕЧЕНИЯ ПРАВА НА ОБРАЗОВАНИЕ- АСМИК СТЕПАНЯН, АРУТЮН ГРИГОРЯН-Образование - одно из основных прав человека, и его реализация - эффективный способ достижения равенства и свободы среди людей.

Образование - это не только личная, но и государственная, общественная ценность. Только через систему образования, отвечающую требованиям времени, можно гарантировать реализацию права каждого на образование, создать прочную основу для прогресса общества и государства, обеспечить жизненные интересы человека.

В статье рассматриваются вопросы обеспечения права на образование, излагается позиция о том, что создание законодательной базы дистанционного обучения является дополнительной гарантией реализации права на образование, обеспечивающей непрерывность образования.

Ключевые слова: Конституция, закон, права человека, образование, гарантия, положение, государство, личность, общество, проблема, дистанционное обучение.

CURRENT PRINCIPLES OF GUARANTEEING THE RIGHT TO EDUCATION- HASMIK STEPANYAN, HARUTYUN GRIGORYAN- Education is one of the basic human rights, and its implementation is an effective way to achieve equality and freedom among people.

Education is not only a personal, but also a state, public value. Only through an education system in line with the requirements of the time is it possible to guarantee the

realization of everyone's right to education, to create a stable basis for the progress of society and the state, to ensure the vital interests of man.

The article addresses the issues of guaranteeing the right to education, presents the position that the establishment of the legislative basis of distance learning is an additional guarantee for the realization of the right to education, ensuring the continuity of education.

Key words: *Constitution, law, human rights, education, guarantee, provision, state, individual, society, issue, distance learning.*

**ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԹԱՏՐՈՆԻ ԱՎԱՆԴՈՒՅԹԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄԸ
ԼՈՒԻՋԻ ՊԻՐԱՆԴԵԼՈՅԻ
«ՎԵՑ ՊԵՐՍՈՆԱԺ ՀԵՂԻՆԱԿ ՈՐՈՆԵԼԻՍ» ՊԻԵՍՈՒՄ**

Commedia dell'arte (La Commediadell'arte) - իտալական պրոֆեսիոնալ թատրոնի անվանումն է, որի անբաժան մասն էին դիմակները, մնջախաղը, լացցին և իմպրովիզային տեսարանները: Հոդվածագրի նպատակն է ցուցադրել Commedia dell'arte- ի հիմնական ավանդույթը և դրա արտահայտումը Լուիջի Պիրանդելոյի «Վեց պերսոնաժ հեղինակ որոնելիս» պիեսում: Ուշադրության կենտրոնում են իտալական ազգային թատրոնից եկող 3 հիմնական հասկացությունները՝ դիմակ, խառնաձիկ, իմպրովիզ: Միաժամանակ հոդվածում ներկայացվում է, թե ինչպես է Պիրանդելոն սույն հասկացությունները մեկնաբանում ժամանակակից իրականության համատեքստում՝ առավել սերտորեն կապվելով դրանք 20-րդ դարի մարդու տեսլականին:

Բանալի բառեր՝ կոմեդիա դել արտե, Պիրանդելո, դիմակ, իմպրովիզ, խառնաձիկ, իտալական ազգային թատրոն, հեղինակ, հանպատրաստից խաղ, ռեժիսոր, լացցի:

20-րդ դարը բեմական արվեստի պատմության մեջ ուղենշային էր այնքանով, որքանով որ այն ազդարարում է թատերական հեղափոխության սկիզբ: 20-րդ դարում մի խումբ դրամատուրգներ փորձում են գտնել թատերական արտահայտչամիջոցների նոր եղանակներ: Նոր եղանակների փնտրման ճանապարհին հետաքրքիր էր նրանց հղումը հին թատերական ձևերին, մասնավորապես, կոմեդիա դել արտեին: Կոմեդիա դել արտեն (La Commedia dell'arte) իտալական պրոֆեսիոնալ թատրոնի անվանումն է, որի անբաժան մասն էին կազմում դիմակները, մնջախաղը, իմպրովիզ ենթադրող հատվածները: Թատրոնի այս տեսակը ուղղված էր հասարակության լայն շրջաններին: Թատերական գործունեության սկիզբը համարվում է 16-րդ դարը¹: Այդ շրջանի հետ են կապվում առաջին փաստաթղթերը և հիշատակումները թե Իտալիայում, և թե Եվրոպայում:

Կոմեդիա դել արտեն թատերական այն հազվադեպ ձևերից էր, որը շեշտը դնում է դիմակի, դերասանի հանպատրաստից խաղի, մարմնի պլաստիկայի վրա: Հենց այս գլխավոր հատկանիշներն էլ գրավում են 20-րդ դարի դրամատուրգների ուշադրությունը:

Իտալական թատրոնում կոմեդիա դել արտեի ավանդների վերաիմաստավորումը իրականացնում են գրոտեսկի թատրոնի հեղինակները: Թատրոնի ավանդույթը դառնում է միջոց մարդկային կրթերի բացահայտման համար: Լ. Կյարելլին, Պ. Մ. Ռոկ-

¹ Rudlin J. *Commedia Dell'Arte: An Actor's Handbook*, England, 2002, p. 25.

կո դի Սան Մեկոնդոն, Լ. Անտոնելլին, հրաժարվելով արտաքին իրադարձությունների նկարագրությունից, փորձում են խորանալ մարդու ներաշխարհի մեջ, բացահայտել հոգու շարժը և զգացմունքային ելևէջները²:

Պիրանդելոն թատրոնի համար սկսում է գրել 1910-ականներին: Իր ստեղծագործությունների հիմնական թեման է դառնում իրականության և պատրանքի, դեմքի և դիմակի կոնֆլիկտը:

Հռոլվաձագրի գլխավոր նպատակն է ցուցադրել, թե ինչպես են Կոմեդիա դել արտեի ավանդույթի հիմնական տարրերը՝ դիմակը, խամաճիկի գաղափարը և իմպրովիզային կոմեդիայի մեթոդը, հանդես գալիս նորարարական կոնտեքստում՝ իրենց դրսևորումը ստանալով Լ. Պիրանդելոյի «Վեց պերսոնաժ հեղինակ որոնելիս» պիեսում: Այդ պիեսում հատուկ սրությամբ ընդգծվում են մարդու օտարության և ինքնարտահայտման անկարողության թեմաները, «դիմակի» և «դեմքի», իրականության և երազանքի, հարաբերական ճշմարտության խնդիրները³:

Դիմակի գաղափարը որպես այդպիսին շղթայի նման անցնում է Պիրանդելոյի մեկ պիեսից մյուսը, սակայն իմաստային ամենալայն ընդգրկումը այն ստանում է «Վեց պերսոնաժ հեղինակ որոնելիս» (1921) և «Հենրի IV» (1921) պիեսներում: Դիմակը կարող է հաճախ լինել բառացի, ինչպես «Վեց պերսոնաժ հեղինակ որոնելիս» կամ ստանալ կոստյումների տեսք, դիմահարդարման, ինչպես «Հենրի IV»-ում, այն կարող է նաև լինել մետաֆորիկ հայեցակարգ⁴:

Բաժանելու համար դերասաններին և կերպարներին միմյանցից, Պիրանդելոն օգտագործում է իմպրովիզային կոմեդիայի մեթոդը և «հագցնում է» կերպարների դեմքին դիմակներ, որոնք արտահայտում են նրանցից յուրաքանչյուրի էությունը: Պիրանդելոն նպատակադրված իրար է բախում երկու հակադիր պլաններ. իրականը (դերասանները, պիեսի փորձերը) և ոչ իրականը, ֆանտաստիկը (չգրված կոմեդիայի կերպարները): Երևակայությամբ ստեղծված կերպարները, ըստ Պիրանդելոյի, այնքան իրական են, որքան և դերասանները, և ավելի իրական, քան հենց կյանքն է. «Ով որ ցանկանա բեմադրել այս ներկայացումը բեմի վրա, նա պետք է ջանքեր գործադրի, որպեսզի վեց պերսոնաժները չխառնվեն բեմի մնացյալ դերասաններին: Հասկանալի է, որ նման բաժանմանը կարող են նպաստել տարբեր լուսային էֆեկտները: Սակայն ամենահարմար և ճշմարիտ միջոցը կերպարների համար կլինի հատուկ դիմակների օգտագործումը <...> Այս դիմակները կոչված են, մնացյալ ամեն բանից զատ, որքան հնարավոր է ամբողջապես արտահայտելու կոմեդիայի էությունը»⁵:

Կոմեդիա դել արտեում յուրաքանչյուր կերպար, կրելով դիմակ, ստանում էր կայուն հատկանիշներ, կայուն բնավորության գիծ, որը բնորոշ է լոկ տվյալ դիմակը կրող կերպարին: Դերասանը, կրելով կոնկրետ դիմակ, իր վրա էր վերցնում ստույգ

² Володина И. «Маски» и «лица» персонажей Пиранделло (послесловие). Луиджи Пиранделло. Избранные произведения, антология. Москва, 1994. 558 с.

³ Володина И. «Маски» и «лица» персонажей Пиранделло (послесловие). 559 с.

⁴ Fisher J. An Author in Search of Characters: Pirandello and Commedia dell'arte, Modern Drama, Canada, 1992, p. 550.

⁵ Pirandello L. Sei personaggi in cerca d'autore. Ediz. Integrale, Roma, Newton Compton, p. 6.

ինչ-որ կերպարի գործառույթ և հատկանիշներ, կամ այլ կերպ ասած՝ նա վերցնում էր այդ կերպարի ինքնությունը: Այդ պահից սկսած, բեմական գործընթացում, դերասանը նույնանում էր այդ կերպարին, նա ոչ այլ ոք էր, եթե ոչ իր կրած դիմակը:

Ավելի կոնկրետ, մենք կերպարներին տարբերում ենք ըստ իրենց կրած դիմակների, տեսնում ենք դիմակը և հասկանում, թե ում հետ պետք է գործ ուենանք ներկայացման ընթացքում, անգամ բնավորության գծերից շատերը երևում են դիմակի օգնությամբ: Միևնույն հատկանիշը մենք տեսնում ենք «Վեց պերսոնաժ հեղինակ որոնելիս պիեսում»: Կերպարները հանդես են գալիս ընդհանրական անվանումներով (Հայր, Մայր, Որդի և այլն) և նրանցից յուրաքանչյուրը առանձին մի ապրումի կրողն է. «...Այդ ֆիգուրներից յուրաքանչյուրը կարտահայտի մեկ անփոփոխ, միայն իրեն բնորոշ զգացում. Հայր՝ խղճի խայթ, Խորթ՝ աղջիկ՝ վրեժխնդրություն, Որդի՝ արհամարհանք, Մայր՝ տառապանք»⁶:

Սույն պիեսում ետին պլան է մղվում դիմակի հասարակական-սոցիալական ընկալումը, ինչպես օրինակ «Հենրի IV»-ում էր: Եթե Հենրի IV-ում դիմակի առաջնային գործառույթը ինքնության կոծկումն էր՝ հասարակության նորմերից խուսափելու համար, ապա «Վեց պերսոնաժ հեղինակ որոնելիս» պիեսում առաջին պլանում հայտնվում է հերոսների ինքնության որոնման դրաման: Ընդ որում, ինքնությունը նույնանում է հեղինակին: Այսինքն՝ վերջիններիս համար հեղինակի որոնումը ոչ այլ ինչ է, եթե ոչ սեփական ինքնության որոնումը:

«Վեց պերսոնաժ հեղինակ որոնելիս» հերոսները փորձում են իրենց համար գտնել հեղինակ, սա ենթադրում է, որ նրանք փորձում են իրենց ինքնությունը գտնել, քանի հեղինակը ինչ-որ իմաստով հանդես է գալիս որպես արարիչ վերջիններիս համար: Բոլոր հերոսները կրում են դիմակներ և փորձում են կոծկել իրենց էությունը դիմակից այն կողմ: Նրանք անգամ չունեն անուններ: Ավելին, նրանք չեն կարողանում հասնել իրենց ես-ին, քանի դեռ ռեժիսորը նրանց չի տվել կյանք և ինքնություն ունենալու հնարավորություն:

Կոմեդիա դել արտեից եկող հաջորդ ազդեցությունը երևում է խամաճիկի գաղափարի յուրացման մեջ: Պիրանդելլոյի գրավում է հակասության պրոբլեմը տեսանելիության («դիմակի») և էության («ըմբի») միջև Կյարելլիի «Դիմակ և դեմք» և Ռոսսո դի Սան Սեկոնդոյի «Խամաճիկներ, այնպիսի կրքեր» պիեսներում, ինչպես նաև մարդկանց կերպարների յուրացումը խամաճիկների կողմից՝ զրկված սեփական անհատականությունից (Ռոսսոյի մոտ հերոսները կոչվում են «Մոխրագույն հագուստով պարոնը», «Երգչուհին» և այլն):

Այս տեսանկյունից հատկանշական է Էդվարդ Կրեյգի մոտեցումը կոմեդիա դել արտեի ավանդույթին և վերջինից Պիրանդելլոյի կրած ազդեցությունը: Կրեյգը կարծում էր, որ չկա այնպիսի հասկացողություն, ինչպիսին հանճարեղ դերասանն է: Դրա փոխարեն նա մեծ կարևորություն է տալիս ռեժիսորի աշխատանքին: Ըստ վերջինիս՝ դերասանը լավն է այնքանով, որքանով որ նա կարողանում է յուրացնել բեմական տեխնիկայի ձևերը, որոնք թելադրվում են ռեժիսորի կողմից: Այլ կերպ ասած՝

⁶ Տե՛ս՝ նույն տեղում, էջ 8:

փոթորկվող կրքերը»¹¹: Սա հենց կազմում է սցենարի մի մասը. ստեղծել այնպիսի տպավորություն, ըստ որի՝ դերասաններից յուրաքանչյուրը չի խաղում, այլ իր սեփական կյանքն է ներկայացնում բեմի վրա. «Հայրը-Նա ասում է (որդին), որ մեր դրամայում ոչ մի դեր չի խաղում, բայց սա հենց վերջինիս բանալին է»¹²:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ կոմեդիա դել արտեի ավանդույթը իր համամարդկային բնույթի շնորհիվ կարողացավ մնալ կենսունակ անգամ 20-րդ դարում: Ազգային թատրոնի տեսակ լինելուց զատ՝ այն վերածվեց թատերական տեսության, որն իր շրջանակներում ամփոփեց դերասանական խաղի, բեմադրության տեխնիկայի ողջ տեսականը:

Պիրանդելոն՝ որպես դրամատուրգ կատարեց ֆենոմենալ աշխատանք այդ ճանապարհին: Սեփական փիլիսոփայությունը կերտելու ուղում՝ նա պահպանեց իր թատրոնում կոմեդիա դել արտեի ազգային նկարագիրը՝ հարստացնելով այն 20-րդ դարի եվրոպացի դրամատուրգների գաղափարներով: Դրա արտացոլումը «Վեց պերսոնաժ հեղինակ որոնելիս» պիեսն է, որտեղ նա կերտում է դիմակ-կերպար, խամաճիկ-դերասան, իմպրովիզ-կյանք զուգահեռները: Օգտագործելով կոմեդիա դել արտեի ողջ ներուժը՝ Պիրանդելոն բացահայտում է ստեղծագործական գործընթացը. ցույց տալիս՝ ինչպես է ստեղծվում գեղարվեստական գործը, և թե ինչպես են այդ գործընթացում հարաբերվում երևակայությունը և իրականությունը, արվեստը և կյանքը:

ОТРАЖЕНИЕ ТРАДИЦИИ ИТАЛЬЯНСКОГО НАЦИОНАЛЬНОГО ТЕАТРА В ДРАМЕ Л. ПИРАНДЕЛЛО «ШЕСТЬ ПЕРСОНАЖЕЙ В ПОИСКАХ АВТОРА» - АНИ АМБАРЦУМЯН - Комедия дель арте (La Commediadell'arte) —название итальянского профессионального театра, использовавшего маски, пантомиму, буффонаду, сценки, именовавшиеся «лацци» («лаццо»), активно прибегавшего к импровизации. В данной статье рассматриваются основные традиции комедии дель арте и их выражения в произведении Луиджи Пиранделло "6 персонажей в поисках автора". В центре авторского внимания 3 основных понятия: маска, марионетка, импровизация, а также их проявления в пьесе Л. Пиранделло. В статье также представлено и то, как в театре Пиранделло данные понятия выступают в современном контексте, наиболее сближаясь с психологическим восприятием человека 20-ого тысячелетия.

Ключевые слова: *комедия дел арте, пиранделло, маска, импровизация, игрушка, итальянский национальный театр, автор, неподготовленная игра, режиссер, плач.*

¹¹ Տե՛ս՝ նույն տեղում, էջ 28:

¹² Տե՛ս՝ նույն տեղում, էջ 30:

THE REFLECTION OF THE TRADITION OF THE ITALIAN NATIONAL THEATER IN L. PIRANDELLO'S "SIX CHARACTERS IN SEARCH OF AN AUTHOR" DRAMA - ANI HAMBARDZUMYAN - Commedia dell'arte is a form of theatre characterized by masked "types", improvised performances based on sketches or scenarios, lazzi and pantomime. The article refers to the tradition of comedia del arte and its expression in the play "Six Characters in Search of an Author" by Luigi Pirandello.

The author concentrates on three basic topics: mask, puppet and improvisation, and its expression in the play of L. Pirandello. At the same time, the author shows how the above-mentioned topics are represented in the modern context in L. Pirandello's theatre becoming closer to psychological perception of the 20th century man.

Key words: *Comedy del Arte, Pirandello, mask, improvisation, puppet, Italian National Theater, author, ready-made play, director, lazzi.*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՄԱԼՅԱ** – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի Արևմտահայերենի, հայագիտության գիտահետազոտական Լուտովիկա և Յակոբ Այնթապլեան կենտրոնի տնօրեն, Որակի ապահովման պատասխանատու
2. **ԲԱԼԱՅԱՆ ԶԻՆԱԴՆԱ** - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի պաշտոնակատար
3. **ԽԱՆՅԱՆ ՍՈԿՐԱՏ** – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ
4. **ԳՐԻԳՈՐՅԱՆ ԵԼԵՆԱ** - Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի օտար լեզուների ամբիոնի դասախոս
5. **ԲԱԼԱՅԱՆ ԱՆՆԱ** - Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի օտար լեզուների ամբիոնի դասախոս
6. **ՔՈՒՄՈՒՆՑ ՄՇԵՐ** –բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Մյունխենի հայագիտական հետազոտությունների կենտրոն
7. **ՄԱՆԹՐՅԱՆ ԼԻԱՆԱ** - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Շուշիի տեխնոլոգիական համալսարան
8. **ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ ԷԼԼԱԴՆԱ** – մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի մանկավարժության ամբիոնի դասախոս
9. **ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ** - «Հայաստանում Ֆրանսիական Համալսարանի Հիմնադրամ»-ի բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանող
10. **ԲԱԼԱՅԱՆ ՎԱՀՐԱՄ** – պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
11. **ԹԵԼՈՒՆՑ ՄԱԼԻԿ** - իրավագետ, պատմաբան՝ պատմական գիտությունների թեկնածու, իրավագիտության դոցենտ
12. **ՀՈՎՍԵՓՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ** - Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի իրավագիտության ամբիոնի վարիչ, Հանրապետության վաստակավոր իրավաբան
13. **ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ ՍՈՆԱ** – ԱՀ կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս
14. **ՍՏԵՓԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ** – իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
15. **ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ ԱՆԻ** - ԵՂՀ ասպիրանտ և Բոլոնյայի համալսարանի մագիստրոս

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ

1. **ГРИГОРЯН АМАЛИЯ** - кандидат филологических наук, доцент, директор западно-армянского арменоведческого научно-исследовательского центра «Нарекаци», ответственная по обеспечению качества
2. **ЗИНАИДА БАЛАЯН**- к.ф.н., доцент, исполняющий обязанности кафедры армянского языка и литературы степанакартского университета "Григор Нарекаци"
3. **ХАНИЯН СОКРАТ** – доктор, профессор филологических наук, заслуженный научный деятель НКР
4. **ГРИГОРЯН ЕЛЕНА** - преподаватель русского языка и литературы кафедры иностранных языков степанакартского университета "Григор Нарекаци"
5. **БАЛАЯН АННА** - преподаватель русского языка и литературы кафедры
6. **КУМУНЦ МГЕР** - кандидат филологических наук, доцент. Центр сюникского арменоведческого исследования
7. **САНТРЯН ЛИАНА**- кандидат филологических наук, доцент, шушинский технологический университет
8. **БАГДАСАРЯН ЭЛЛАДА** - кандидат педагогических наук, доцент, преподаватель педагогической кафедры степанакартского университета "Григор Нарекаци"
9. **ГРИГОРЯН АРУТЮН** - студент 4 курса бакалавриата Французского университета в Армении
10. **БАЛАЯН ВАГРАМ** - доктор исторических наук, профессор
11. **ТЕЛУНЦ МАЛИК** -правовед, историк, кандидат исторических наук, доцент Правоведени
12. **ОСИПЯН ВЛАДИМИР** - заведующий юридической кафедрой степанакартского университета "Григор Нарекаци", заслуженный юрист республики иностранных языков степанакартского университета "Григор Нарекаци"
13. **АМБАРЦУМЯН СОНА** - руководитель комитетом сотрудников юридического отдела кадастра и государственного имущества, преподаватель юридической кафедры университета "Григор Нарекаци"
14. **СТЕПАНИЯН АСМИК** -кандидат юридических наук, доцент
15. **АМБАРЦУМЯН АНИ** -аспирант ЕГУ, магистрант болонского университета

INFORMATION ABOUT AUTHORS

1. **AMALYA GRIGORYAN** - Candidate of Philological Sciences, Docent, Director of Lutovica and Agob Aintablean Western-Armenian and Armenology Research Centre at Stepanakert «Grigor Narekatsy» University, in charge of Quality Assurance
2. **ZINAIDA BALAYAN** - Candidate of Philological Sciences, Associate Professor, Acting Head of the Chair of Armenian Language and Literature of Stepanakert Grigor Narekatsi University
3. **SOKRAT KHANYAN** - Doctor of Philology, Professor, Honored Scientist of NKR
4. **YELENA GRIGORYAN** - Lecturer of the Chair of Foreign Languages of Stepanakert Grigor Narekatsi University
5. **ANNA BALAYAN** - Lecturer of the Chair of Foreign Languages of Stepanakert Grigor Narekatsi University
6. **MHER KUMUNTS** - Candidate of Philological Sciences, Associate Professor, Armenian Studies center of Syunik
7. **LIANA SANTRYAN** – Candidate of Philological Sciences, Associate Professor, Shushi Technological University
8. **ELLADA BAGHDASARYAN** - Candidate of Pedagogical Sciences, Associate Professor, Lecturer of the Department of Pedagogy of Stepanakert Grigor Narekatsy University
9. **HARUTYUN GRIGORYAN**- 4th year undergraduate student of the "French University in Armenia"
10. **VAHRAM BALAYAN** - Doctor of Historical Sciences, Professor
11. **MALIK TELUNTS** - Lawyer, Historian - Candidate of Historical Sciences, Associate Professor of Law
12. **VLADIMIR HOVSEPYAN** -Head of the Chair of Law of Stepanakert Grigor Narekatsi University, Honored Lawyer of the Republic
13. **SONA HAMBARDZUMYAN** - Head of the Legal Department of the Staff of the State Property Management Committee of the Republic of Artsakh, lecturer of the Chair of Law of Stepanakert Grigor Narekatsi University
14. **HASMIK STEPANYAN** - PhD of Law, Associate Professor
15. **ANI HAMBARDZUMYAN** - YSU post-graduate student and Master of Bologna University

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ»

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴՊՐԱՏՈՒՆ 1(11)-2021

Հասարակական գիտությունների հանդես

СТЕПАНАКЕРТСКИЙ УНИВЕРСИТЕТ

«ГРИГОР НАРЕКАЦИ»

ДПРАТУН 1(11)-2021

Журнал социальных наук

STEPANAKERT «GRIGOR NAREKATSY»

UNIVERSITY

DPRATUN 1(11)-2021

Journal of Social Sciences

Տպագրությունը՝ օֆսեթ
Թուղթը՝ օֆսեթ
Չափսը՝ 60x84 1/8
Ծավալը՝ 17 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 300